

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ



Հայագիտություն ՀԱՐՑՆԵՐ

ISSN 1829-4030

3 (12)

ԵՐԵՎԱՆ - 2017

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

YEREVAN STATE UNIVERSITY
INSTITUTE FOR ARMENIAN STUDIES

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ՀԱՆԴԵՍ

3 (12)

ARMENOLOGICAL ISSUES

BULLETIN

ԵՐԵՎԱՆ – YEREVAN
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ – YSU PRESS
2017

Հանդեսը լույս է տեսնում տարեկան երեք անգամ
Հրատարակվում է 2014 թվականից

The Bulletin is published thrice a year.
It has been published since 2014

Գլխավոր խմբագիր՝ Միմոնյան Ա. Հ.

Խմբագրական խորհուրդ՝

Ավագյան Ա. Ա.

*Ավետիսյան Լ. Վ. (գլխավոր
խմբագրի տեղակալ)*

Ավետիսյան Հ. Գ.

Ավետիսյան Յու. Ս.

Բայրամյան Հ. Ս.

Բարդակչյան Գ. (ՄՄՆ)

Դեդեյան Ժ. (Ֆրանսիա)

*Դրոսթ-Աբգարյան Ա. Գ.
(Գերմանիա)*

Ջաքարյան Ս. Ա.

Հայրունի Ա. Ն.

Հովհաննիսյան Մ. Ս.

Հովսեփյան Լ. Ս.

Ղարիբյան Ա. Ա.

Մարգարյան Հ. Գ.

Մինասյան Է. Գ.

Մուրադյան Ս. Պ.

*Պողոսյան Վ. Ա. (պատասխա-
նատու քարտուղար)*

Սայադով Ս. Մ. (Ռուսաստան)

Սաֆարյան Ա. Վ.

Տազեյան Ա. (Լիբանան)

Editor-in-chief: **Simonyan A.**

Editorial Board:

Avagyan A.

Avetisyan H.

*Avetisyan L. (Deputy editor-in-
chief)*

Avetisyan Y.

Bardakchian G. (USA)

Bayramyan H.

Dakessian A. (Lebanon)

Dedeyan G. (France)

Drost-Abgaryan A. (Germany)

Gharibyan A.

Hayruni A.

Hovhannisyan M.

Hovsepyan L.

Margaryan H.

Minasyan E.

Muradyan S.

*Poghosyan V. (Executive
Secretary)*

Safaryan A.

Sayadov S. (Russia)

Zakaryan S.

ՀՈԴՎԱԾՆԵՐ

ՀԱՄԼԵՏ ՍԱՐԳՍՅԱՆ

ԲԱՔՎԻ ՆԱՀԱՆԳԻ ԷԹՆՈԺՈԴՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՆԹԱՑՆԵՐԸ 1859-1916 ԹԹ.

***Բանալի բառեր** – բնակչության թիվ, էթնիկ և դավանական կազմ, բնակչության շարժընթաց, միգրացիայի սաղոմ/հաշվեկշիռ, բնական շարժ, վերարտադրություն, բնական աճի գործակիցներ, բնակչության տեղաբաշխում/տարաբնակեցում, բնակչության խտություն*

Ռուսական կայսրությանը միացվելուց ի վեր՝ Անդրկովկասի տարածքը ենթարկվում էր վարչական փոփոխությունների: Այս հարցում կարևոր դեր խաղաց նաև Կովկասի նորանշանակ փոխարքա, իշխան Մ. Վորոնցովը, ում նախաձեռնությամբ 1846 թ. վերջերին Անդրկովկասում կազմավորվեց չորս նահանգ՝ Քութայիսի, Թիֆլիսի, Շամախիի և Դերբենդի: Իշխանությունների կարծիքով, Անդրկովկասի տարածքի վարչական միավորների խոշորացումը դյուրին կդարձներ կառավարումը: Շամախիի նահանգի (կենտրոնը՝ ք. Շամախի) կազմում էին Բաքվի, Լենքորանի, Նուխիի, Շամախիի և Շուշիի գավառները¹:

Շամախի անվամբ նահանգը երկար կյանք չունեցավ. 1859 թ. հուլիսին Շամախի քաղաքը խիստ տուժեց երկրաշարժից, ուստի նահանգի կենտրոնը տեղափոխելու հարց առաջացավ: Որպեսզի բարձրացվի առևտրական ու ռազմական նշանակություն ունեցող Բաքվի վարչական դերը, իշխանությունները որոշեցին Բաքուն դարձնել նահանգի կենտրոն, որն էլ իրականացվեց նույն տարվա դեկտեմբերին: 1860 թ. Դերբենտի նահանգից անջատվեց Ղուբայի գավառը և միացվեց Բաքվի նահանգին, իսկ 1868 թ. նորաստեղծ Ելիզավետպոլի նահանգը համալրելու նպատակով Բաքվի նահանգից անջատվեցին Նուխիի և Շուշիի գավառները: XIX դարի վերջերին Բաքվի նա-

¹ Ст'я Шахатуян А., Административный передел Закавказского края. Тифлис, 1918, с. 88-92; Списки населенных мест Российской империи (այսուհետև՝ СНМРИ). По Кавказскому краю, LXV. Бакинская губерния. Список населенных мест по свед. 1859 по 1864 г. Сост. Н. Зейдлиц, Тифлис, 1870, с. 83:

հանգը բաղկացած էր Բաքվի, Գյոքչայի, Ջավաթի, Ղուբայի, Լենքորանի և Շամախիի գավառներից¹:

Պետք է նշել, որ ցարական Ռուսաստանում, մասնավորապես Անդրկովկասում, վարչատարածքային բաժանումներն իրականացվում էին առանց հաշվի առնելու տնտեսաաշխարհագրական պայմանների, բնակչության էթնիկ կազմի ու տեղաբաշխման առանձնահատկությունները, որոնք շատ հաճախ հանգեցնում էին տնտեսական ու քաղաքական լուրջ խնդիրների:

Բաքվի նահանգի բնակչության թվի, կազմի ու տեղաբաշխման վերաբերյալ վիճակագրական բազմաթիվ տվյալներ են պարունակում ցարական Ռուսաստանում հրատարակված տարեգրքերն ու պարբերականները (Кавказский календарь, Сборник сведений о Кавказе, Списки населенных мест по Кавказскому краю, Свод статистических данных о населении Закавказского края, извлеченных из посемейных списков 1886 года, Сборник статистических сведений по Закавказскому краю, Первая всеобщая перепись населения Российской империи, 1897 г. և այլն): Սակայն Բաքվի նահանգին վերաբերող համապարփակ ուսումնասիրությունները սակավ են: Դրանցից կարելի է առանձնացնել «Списки населенных мест Российской империи. Бакинская губерния» աշխատանքը, որի հիման վրա էլ շարադրել ենք Բաքվի նահանգի դիրքին, սահմաններին, բնակչության էթնիկ կազմին ու տեղաբաշխմանը նվիրված հատվածը:

Բաքվի նահանգի տարածքը հյուսիսից հարավ ունի 394.7 կմ, իսկ արևելքից արևմուտք 245.3 կմ երկարություն: Այն ընդգրկում է 39.3 քառ. կմ մակերես, ընդ որում Բաքվի գավառի մակերեսը կղզիների հետ կազմում է ամբողջ նահանգի տարածքի 10.2%-ը, Ջավաթ գավառինը՝ 28.7, Գյոքչայինը՝ 12.2, Շամախունը՝ 16.7, Լենքորանինը՝ 13.8 և Ղուբայի գավառինը՝ 18.4%²: Նահանգը հյուսիսից սահմանակից էր Դաղստանի մարզի Կյուրինի և Սամուրի օկրուգներին, արևմուտքից՝ Ելիզավետպոլի նահանգի Նուխիի և Շուշիի գավառներին, ինչպես նաև Պարսկաստանի Ուջարուդ-Նամինի, հարավից՝ Արդաբիլի և Գիլանի շրջաններին, իսկ արևելքից՝ Կասպից ծովին³:

Նորաստեղծ նահանգի բնակչության էթնիկ կազմի և տեղաբաշխման մասին համառոտ պատկերացում կազմելու համար ներկայացնենք հիմնական էթնոսները:

Հայերը 1869 թ. կազմել են Բաքվի նահանգի գյուղական բնակչության շուրջ 4%-ը, նրանք հիմնականում տեղաբաշխված էին Շամախի քաղաքից արևմուտք գտնվող ավելի քան քառասուն բնակավայրերում, ևս երկու բնակավայր ուներ խառը բնակչություն, որտեղ կեսից ավելին հայեր էին⁴: Շամա-

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 93; Кавказский календарь (այսուհետև՝ КК) на 1893 г., Тифлис, 1892, отд. I, с. 156:

² Տե՛ս СНМ РИ, с. 2:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 1:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 92-93:

իսի քաղաքի շրջակայքում բազմաթիվ հայկական գյուղերի առկայությունը խոսում է այն մասին, որ անցյալում Բաքվի նահանգի տարածքում հայեր են ապրել: Ինչպես իր աշխատանքում նշում է Գ. Ստեփանյանը, ուսումնասիրվող տարածքում վաղնջական ժամանակներից հայ էթնոսի առկայության մասին բազմաթիվ նյութեր կան տարատեսակ աղբյուրներում և ուսումնասիրություններում, որոնցից կարելի է առանձնացնել Եսայի Հասան Զալայանցի, Սիմոն Երևանցու, Լեոյի, Ե. Գեղամյանցի, ինչպես նաև օտարագիրներ Յու. Գազենեյստերի, Ն. Զեյդլիցի և այլոց աշխատությունները¹:

XVIII դարի սկզբներին հայկական բնակավայրերի բնակչությունը մահմեդական վերնախավի կողմից հալածանքների էր ենթարկվում, իսկ հայաշատ Շամախիի հայերին ստիպելով կրոնափոխ էին անում: Ավելին, հայերը և հրեաները պետք է կրեին դեղին տարբերանշաններ, որպեսզի մահմեդականները նրանց հանդիպելիս չողջունեին:

Նշված ժամանակաշրջանում Դաղստանի լեզգիների ասպատակությունների ենթարկվեց Շամախիի և Շաքիի գավառների հայաբնակ գյուղերի անպաշտպան բնակչությունը: Հայ բնակչության նկատմամբ բռնությունների, մահմեդականացման, լեզվական ուժացման գործընթացները նոր թափով շարունակվեցին XVIII դ. երկրորդ կեսերից, երբ թյուրքալեզու ցեղերը սկսում էին անցնել նստակեցության. արդյունքում հայերի թիվը զգալի նվազեց, սակայն դարավերջին Արցախից և Սյունիքից արտագաղթածների հաշվին նրանց թվաքանակը որոշ չափով ավելացավ²:

Լինում էին դեպքեր, երբ ջարդերից խուսափելու նպատակով հայերը ստիպված էին լինում լքել իրենց օջախները: Այսպես, Ղուբայի գավառում հայերի թիվը XVIII դ. վերջին բավականին մեծ էր: Սակայն այն նվազեց, երբ կոմս Վ. Զուբովի նահանջող ջոկատին միացավ հայերի 500 ընտանիք ու շարժվելով դեպի հյուսիս՝ հաստատվեց Ղզլարում և Աստրախանում:

Ռուսներ. Բաքվի նահանգի ռուս բնակչության թիվը ըստ 1859 թ. Կամերալ ցուցակագրումների կազմել է 12.6 հազ. մարդ կամ նահանգի ամբողջ բնակչության 2.7%-ը: Չնայած ռուսների փոքր քանակին, նրանք նահանգի տնտեսության մեջ իրենց լուրջ ունեին: Ռուսական գյուղերը շատ արագ էին զարգանում, յուրացնելով տափաստանները՝ նրանք զբաղվում էին հողագործությամբ, տարածում արհեստներ, զարգացնում առևտուրը, քաղաքներին մատակարարում էին գյուղատնտեսական մթերք: Նրանք դրեցին փոստային առաքման հիմքը, որը եզակի էր Անդրկովկասում:

Ռուսական առաջին բնակավայրերը նահանգի տարածքում հիմնադրվել են սկսած 1834 թվականից: Ռուս բնակչությունը (այդ թվում՝ ուղղափառներ և աղանդավորներ) գաղթել էր Ռուսական կայսրության մերձվոլգյան շրջան-

¹ Տե՛ս **Ստեփանյան Գ.**, Բաքվի նահանգի հայությունը XIX դարի երկրորդ կեսին, Երևան, 2010, էջ 20-21:

² Տե՛ս նույն տեղում, էջ 32, 34-35, 42-43:

ներից, հիմնականում՝ Սարատովի, Վորոնեժի, Տվերի, Տամբովի, Օրենբուրգի նահանգներից, ինչպես նաև Բեսարաբիայի մարզից և Ենիսեյի նահանգից: 1830-1840-ականներին նահանգի տարածքում հիմնվեց 16 բնակավայր՝ բաղկացած 1537 ծխից, իսկ 1840-1860 թթ. կար 22 բնակավայր՝ 2139 ծխով: Նշենք նաև, որ ծխերի թիվն ավելին կլիներ, եթե գյուղացիների մի մասը չտեղափոխվեր քաղաքներին մոտիկ հիմնված մոլոկանների բնակավայրեր (слобода)¹:

Թյուրքալեզու էթնիկ խմբեր (բնագրում՝ թուրքական ցեղեր). նահանգի ամենաբազմամարդ խումբն է՝ 210.2 հազ. մարդ, որը կազմում էր ամբողջ բնակչության 44.9%-ը: Այս խմբերի մեջ դժվար է տարբերել էթնիկ պատկանելիությունը, քանի որ նրանց համար կարևոր ցուցիչը համարվում էր դավանանքը: Համենայն դեպս իրենց *թաթար* անվանողների թիվը գերակշռող էր նահանգի մահմեդական բնակչության մեջ: Թաթարները ծագել են թուրքական բազմաթիվ ցեղերից (սելջուկներ, մոնղոլներ, կարա-կոյունլու և ադ-կոյունլու ցեղեր, թուրքմեններ և այլն), որոնք տարբեր դարաշրջաններում այս տարածքներ են ներխուժել ու ձուլվել տեղացիներին: Բացառությամբ Լենքորանի գավառի հարավային մասում գտնվող թալիշների՝ նահանգի մեծ մասում գերակշռող էր թուրք-թաթարական լեզվի աղբյուրաբանական խոսվածքը, որը շփման հիմնական միջոց էր²:

Բաքվի նահանգում քանակապես առանձնանում էր նաև *շահսևան* թուրքական ցեղը, որը մի քանի հարյուրամյակ առաջ գաղթել է Պարսկաստանի տարածք: Սրանք քոչվոր կյանք են վարել. ամռանը՝ Սավալանի լանջերին (Արդաբիլի մոտ), իսկ աշնան վերջին տեղափոխվել են Մուղանի տափաստան՝ ձմեռելու: Հետագայում անցնելով նստակեցության՝ Լենքորանի գավառում հիմնել են քսանից ավելի գյուղեր:

Նահանգի տարածքի բնակավայրերի որոշ անվանումներ վկայում են բնակչության էթնիկ ծագման մասին: Դրանց մի մասը մինչ օրս էլ պահպանվել է՝ Կենգերլու, Պաղար, Կաջար, Բայաթ, Կարա-կոյունլու և այլն:

Պարսկական (իրանական) ցեղեր. սրանք ամբողջ բնակչության ավելի քան 25%-ն են կազմել և բաղկացած էին երկու տարբեր էթնիկ հանրություններից՝ թաթեր և թալիշներ: Թաթերը տեղաբաշխված էին Բաքվի գավառում՝ կազմելով բնակչության 65.8%-ը (այդ թվում՝ քաղաքային բնակչությունը), Շամախիի գավառում՝ ավելի քան 10% և Ղուբայի գավառում՝ 30.5%³:

Կյուրինցիների կամ լեզգիների թիվն անցնում էր 28.6 հազարից, կազմում էր նահանգի բնակչության շուրջ 6%-ը, իսկ Ղուբայի գավառի բնակչության 21.3%-ը, և համարվում էին միակ նստակյաց էթնիկ խումբը: Նրանք

¹ Տե՛ս CHM РИ, с. 84:

² Տե՛ս նույն տեղում, էջ 85-87; Этнографическое обозрение Кавказа. Сост. А. П. Берже, СПб., 1879, с. 6, 9:

³ Տե՛ս CHM РИ, էջ 89; Этнографическое обозрение Кавказа..., с. 5:

զբաղեցնում էին Սամուր գետի աջակողմյան տարածքները կամ Բաքվի նահանգի հյուսիսային հատվածները, որտեղ տեղաբաշխված էին նրանց ավելի քան յոթանասուն գյուղերն ու գյուղակները¹:

Նահանգի փոքրաթիվ էթնիկ հանրություններից էին *խինալուղները, կրիզները, ջեկերը, բուղուղները և հափութլիները*: Սրանց ընդհանուր թիվը 16.3 հազար էր, որը կազմում էր ամբողջ բնակչության 3.4%-ը, որոնք հիմնականում տեղաբաշխված էին Ղուբայի գավառում:

Հրեաները ապրում էին Շամախիի և Ղուբայի գավառներում, իսկ նահանգի տարածքում ապրում էր 6046 մարդ:

Առանձին էթնիկ խումբ էին կազմում *արաբները*, որոնց մեծ մասը քոչվորական կյանք էր վարում Բաքվի, Շամախիի, Ջավաթի, Գյոքչայի, Ղուբայի գավառներում, և խոսում էին թաթարերեն: Ընդհանուր առմամբ նահանգի քոչատեղերի և գյուղերի բնակչության թիվը կազմել է 9881 մարդ²:

Բաքվի նահանգի բնակչության տեղաբաշխման առանձնահատկությունների մասին կարելի է ասել հետևյալը. հարթավայրային ռելիեֆ ունեցող Ջավաթի գավառի մեծ մասը զբաղեցված էր թյուրքալեզու բնակչությամբ (բացառությամբ՝ փոքրաթիվ ռուս եկվորների): Հետաքրքիր է, որ մյուս գավառներում հարթավայրերը զբաղեցրել էին թյուրքալեզու էթնիկ խմբերը, իսկ բարձրադիր վայրերը՝ էթնիկ այլ հանրություններ: Այսպես, Գյոքչայի գավառի հարթավայրային մասերում ապրում են թյուրքալեզու էթնիկ խմբերը, նախալեռներում՝ հայերը, լեռներում՝ թաթերը: Գրեթե նույն պատկերն էր Շամախիի գավառում, որտեղ լեռնային ընդարձակ տարածքները զբաղեցրել էին ռուս աղանդավորները: Այս առումով առավել հետաքրքիր է Ղուբայի և Լենքորանի գավառների պատկերը: Մեծամասնություն կազմող թյուրքալեզու էթնիկ խմբերը զբաղեցնում են Ղուբայի գավառի ծովափնյա նեղ շերտը: Գավառի լեռնային մասերը զբաղեցնում են թաթերը և լեզգիական լեզվախմբին պատկանող հանրությունները: Լենքորանի գավառի հյուսիսային հարթավայրային մասերը զբաղեցնում են թյուրքալեզու էթնիկ խմբերը, իսկ հարավային լեռնային մասերը՝ բացառապես թալիշները: Բաքվի գավառի բլրապատ տարածքի կեսը զբաղեցնում էին թյուրքալեզու էթնիկ խմբերը, իսկ մյուս կեսը՝ թաթերը: Ապշերոնի թերակղզին բնակեցված էր թաթերով, իսկ հյուսիսարևմտյան ծովափնյա մասերը՝ թյուրքալեզու էթնիկ խմբերով³:

Ըստ 1859-1863 թթ. կամերալ ցուցակագրումների՝ Բաքվի նահանգի բնակչության թիվը կազմել է 467926 մարդ (253010 տղամ., 214916 կին)⁴:

¹ Տե՛ս СНМ РИ, с. 91:

² Տե՛ս նույն տեղում, էջ 93-94:

³ Տե՛ս Шахатуния А., նշվ. աշխ., էջ 63-64:

⁴ Տե՛ս СНМ РИ, с. 99-100:

Ամփոփելով նորաստեղծ Բաքվի նահանգի տարածքում ապրող էթնոսների ու նրանց տեղաբաշխման օրինաչափություններն ու առանձնահատկությունները՝ ներկայացնենք վիճակագրական տվյալներ բնակչության թվի ու կազմի վերաբերյալ (տե՛ս աղ. 1):

Աղյուսակ 1

Բաքվի նահանգի բնակչության թիվն ու սեռային կազմը 1859-1863 թթ.¹

Վարչական միավոր	Ծխերի թիվը	Տղամարդ	%	Կին	%	Ընդամենը	Ընտանիքի անդամների միջին թիվը
<i>Գավառի կենտրոններ</i>							
ք. Բաքու	2264	6690	54.8	5501	45.2	12191	5.4
ք. Լենքորան	827	2098	56.5	1641	43.5	3739	4.5
ք. Ղուբա	1292	4955	49.0	5213	51.0	10168	7.8
ք. Շամախի	4972	13999	55.7	11088	44.3	25087	5.0
գ. Սալյան	1397	5650	53.3	4984	46.7	10634	7.6
<i>Ընդամենը</i>	<i>10752</i>	<i>33392</i>	<i>54.0</i>	<i>28427</i>	<i>46.0</i>	<i>61819</i>	<i>5.7</i>
<i>Գ ա վ ա ռ ն ե ռ</i>							
1. Բաքվի	7658	20799	53.0	18462	47.0	39261	5.1
2. Գյոքչայի	9990	27509	55.0	22544	45.0	50053	5.0
3. Լենքորանի	11157	41574	55.3	33594	44.7	75168	6.7
4. Ղուբայի	16764	63197	52.8	56414	47.2	119611	7.1
5. Շամախու	10854	38354	53.8	32862	46.2	71216	6.5
6. Ջավաթի	11850	28185	55.5	22613	44.5	50798	4.3
<i>Ընդամենը</i>	<i>68273</i>	<i>219618</i>	<i>54.0</i>	<i>186489</i>	<i>46.0</i>	<i>406107</i>	<i>5.9</i>
Ընդամենը նահանգում	79025	253010	54.0	214916	46.0	467926	5.9

Աղյուսակի տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ նահանգի քաղաքային բնակչությունը նշված տարեթվերին կազմել է ամբողջ բնակչության 13.2%, իսկ գյուղական բնակչությունը՝ 86.8%: Նահանգում բնակչության թվով առանձնանում են Ղուբայի՝ 27.8%, Շամախիի՝ 20.6% և Լենքորանի՝ 16.9% գավառները:

1859-1863 թթ. նահանգի բնակչությանը բաժին էր ընկնում 1557 գյուղ՝ 79025 ծխով, կամ միջին հաշվով յուրաքանչյուր գյուղն ուներ 300 բնակիչ և 50 ծուխ: Հատկանշական է, որ նահանգի յուրաքանչյուր գյուղական ծուխ միջին հաշվով բաղկացած էր՝ Բաքվի գավառում՝ 5.13 մարդ, Ջևադի գավառում՝ 4.28, Գյոլչայի՝ 5, Շամախիի՝ 6.57, Լենքորանի՝ 6.78 և Ղուբայի գավառում՝ 7.15 մարդ²:

Բնակչության թվով նահանգի բոլոր գավառներում տղամարդիկ գերազանցում էին կանանց: Ըստ ազգային կազմի՝ պատկերն այսպիսին էր.

¹ Տե՛ս Бакинская губерния. Города, с. 1-2; уезды, с. 3-72:

² Տե՛ս նույն տեղում, էջ 101-102:

100 ռուս տղամարդուն բաժին էր ընկնում 98.33 կին, հայերի համար այդ ցուցանիշը կազմում էր 85.96 կին, թաթերի և թալիշների համար՝ 85.04, թաթարների և շահսանների՝ 83.43, կյուրիների՝ 93.01, դապտուլիների ու ջեկերի՝ 90.01, բուդուղների՝ 97.12, խինալուղների՝ 94.70, հրեաների՝ 85.22, իսկ ամբողջ նահանգում այդ ցուցանիշը կազմել է 85.45 կին: Ներկայացված թվերից երևում է, որ սեռերի միջև փոքր տարբերությամբ աչքի են ընկնում ռուսները, իսկ մեծ տարբերություններով՝ թաթարները: Ինչ վերաբերում է Բաքվի գավառի փոքրաթիվ գյուղական բնակչության զգալի տարբերությանը, ապա դա բացատրվում է տղամարդ բնակչության՝ դեպի Բաքու և այլ քաղաքներ կատարվող արտահոսքով¹:

Նշված ժամանակահատվածում Բաքվի նահանգի բնակավայրերն ըստ տիպերի այսպիսի տեսք ունեին. Բաքվի գավառում կար 1 քաղաք, 45 գյուղ, 1 քոչատեղ, Ջավաթի գավառում՝ 100 գյուղ, 81 քոչատեղ, 31 գյուղակ (նորաշեն), Գյոքչայի գավառում՝ 115 գյուղ, 59 քոչատեղ, 2 գյուղակ, Շամախիի գավառում՝ 1 քաղաք, 157 գյուղ, 14 քոչատեղ, Լենքորանի գավառում՝ 1 քաղաք, 267 գյուղ, 23 քոչատեղ, 92 գյուղակ, Ղուբայի գավառում՝ 1 քաղաք, 291 գյուղ, 198 գյուղակ: Այսպիսով, նահանգն ուներ 4 քաղաք, 974 գյուղ, 178 քոչատեղ, 323 գյուղակ: Բաքվի նահանգում կար 416.1 հազ. նստակյաց բնակիչ (224.1 հազ. տղմ., 192.0 հազ. կին) կամ ամբողջ բնակչության 88.8%-ը, քոչվորական կյանք էր վարում 52.1 հազ. մարդ (28.9 հազ. տղմ., 23.2 հազ. կին) կամ 11.2%-ը²:

Աղյուսակ 2

Բաքվի նահանգի բնակչության թվի շարժընթացը 1858-1867 թթ.³

Գավառներ	1858 թ.	1862 թ.	1864 թ.	1865 թ.	1867 թ.
1. Բաքվի	45491	51340	52245	48788	51406
2. Լենքորանի	88180	102084	89122	111136	108342
3. Ղուբայի	117569	119635	136383	138656	139910
4. Նուխիի	153420	137583	140699	126292	144368
5. Շամախու	161493	174832	182318	170456	222329
6. Շուշիի	194907	195833	202700	253314	222362
Ընդամենը	761060	781307	803467	848642	888717

Ուսումնասիրվող ժամանակահատվածում Բաքվի նահանգի բնակչության թվաքանակի շարժընթացին անդրադառնալիս հաշվի ենք առել այն

¹ Տե՛ս Бакинская губерния, с. 105:

² Տե՛ս նույն տեղում էջ 73, 77:

³ Տե՛ս Записки Кавказского отдела императорского русского географического общества, кн. V, Тифлис, 1862, с. 146; КК на 1865 г., Тифлис, 1864, с. 117-118; КК на 1866 г., Тифлис, 1865, с. 132; КК на 1867 г., Тифлис, 1866, с. 312; КК на 1868 г., Тифлис, 1867, с. 436; Сборник статистических сведений о Кавказе, т. I, отд. II, Тифлис, 1869, с. 11; КК на 1870 г., Тифлис, 1869, с. 396-399:

հանգամանքը, որ նահանգի վարչատարածքային միավորները մինչև 1867 թվականը և նրանից հետո ենթարկվել են փոփոխությունների, ուստի դրանք դիտարկել ենք երկու մասով՝ 1858-1867 թթ. և 1868-1916 թթ.: Այժմ ներկայացնենք Բաքվի նահանգի բնակչության թվի փոփոխությունները 1858-1867 թթ. ըստ գավառների (տե՛ս աղ. 2):

Նահանգի բնակչության թվի իննամյա շարժընթացը դիտարկելիս պարզվում է, որ ընդհանուր առմամբ այն աճել է 16.8%-ով, տարեկան միջին աճը կազմել է 14.2 հազ. մարդ կամ գրեթե 1.8%, որը տվյալ ժամանակահատվածի համար կարելի է բարձր ցուցանիշ համարել: Զիտրանալով առանձին գավառների բնակչության շարժընթացի ցուցանիշներին՝ նշենք, որ դրանք միատարր չեն: Բնակչության աճը պայմանավորող գործոնների մասին պատկերացում կազմելու համար դիմենք բնական աճն արտացոլող վիճակագրական տվյալներին (տե՛ս աղ. 3,4):

Աղյուսակ 3

Բաքվի նահանգի բնակչության բնական շարժը 1859-1860 թթ.¹

Գավառներ	1859 թ.				1860 թ.			
	Ծնունդ	Մահ	Աճ	Պսակ	Ծնունդ	Մահ	Աճ	Պսակ
1. Բաքվի	1500	990	510	203	2114	1662	452	246
2. Լենքորանի	3950	3019	931	416	3881	2799	1082	3086
3. Ղուբայի	2446	1955	491	560	2320	1932	388	552
4. Նուխիի	4763	2730	2033	1836	4734	3238	1496	1922
5. Շամախու	5213	2813	2400	1389	6800	3973	2827	2011
6. Շուշիի	5988	3764	2224	1505	5748	4407	1341	1467
Ընդամենը	24637	15271	9366	5909	25597	18011	7586	9284

Ներկայացված աղյուսակներին կարող ենք ավելացնել նահանգի բնակչության բնական աճի ընդհանրացված պատկերը 1867 թ., ըստ որի՝ Բաքվի նահանգում ծնվել է 36172 մարդ (արական՝ 19139 մարդ, իգական՝ 16979), մահացել է 19678 մարդ (արական՝ 10137, իգական՝ 9541), պսակադրվել է 6912 զույգ: Բնական աճը կազմել է 16494 մարդ (արական՝ 9002, իգական՝ 7438)²: Աղյուսակ 3-ի վերլուծությունը ցույց է տալիս, որ 1859 և 1860 թթ. բնակչության բնական վերարտադրությունը ունեցել է դրական ցուցանիշներ, այսինքն՝ աճ է արձանագրվել: Այսպես, 1859 թ. 1000 բնակչի հաշվով ծնունդները կազմել են 32.4 մարդ կամ 32.4%, մահացությունը՝ 20.0%, իսկ բնական աճը՝ 12.4%, 1860 թ. համապատասխանաբար՝ 33.2%, 23.4%, 9.8%:

Իսկ աղյուսակ 4-ի դիտարկումից պարզվեց, որ նահանգի բնակչությունը 1864 թ. ունեցել է շատ բարձր ծնելիություն՝ 50.5%, բարձր մահացություն՝ 38.0%, և ոչ բարձր բնական աճ՝ 12.5%: Արտառոց ցածր ցուցանիշներ են

¹ Տե՛ս ԿԿ на 1861 г., Тифлис, 1860, отд. III, с. 43; ԿԿ на 1862 г., Тифлис, 1861, отд. III, с. 322:

² Տե՛ս Статистический временник Российской империи. Вып. 8, СПб., 1872, с. 6-7:

գրանցվել Լենքորանի գավառում, որտեղ բնական աճը կազմել է – 23.6%: Մեր կարծիքով՝ նման երևույթի պատճառ կարող էին լինել բնակչության ակտիվ տեղաշարժերը, թերի տվյալները կամ այդ վայրերում հաճախ հանդիպող համաճարակային հիվանդությունները:

Աղյուսակ 4

Բաքվի նահանգի բնակչության բնական շարժը 1864 թ. (մարդ)¹

Գավառներ	Բնակչության ընդհանուր թիվը		Ծնունդների թիվը		Մահացած. թիվը		Աճը կամ նվազումը		Պսակ. թիվը
	Ար.	Իգ.	Ար.	Իգ.	Ար.	Իգ.	Ար.	Իգ.	
Բաքվի	27295	24950	858	727	651	470	207	257	284
Լենքորանի	43357	45765	2292	1206	2999	2602	-707	-1396	890
Ղուբայի	71694	64689	2583	3562	1548	1876	1035	1686	720
Նուխիի	71150	69549	2604	2198	2401	2063	203	135	1561
Շամախու	96280	86038	5484	5175	1298	4601	4186	574	1669
Շուշիի	108488	94212	7467	6484	5990	4066	1477	2418	2047
Ընդամենը	418264	385203	21288	19352	14887	16578	785	6466	7171
	803467		40640		30565		10075		

Ինչ վերաբերում է 1867 թ. տվյալներին, ապա իրավիճակն այսպիսին էր. նահանգում արձանագրվել է բարձր աճ՝ 18.6‰՝ պայմանավորված շատ բարձր ծնելիությամբ՝ 40.7‰ և բարձր մահացությամբ՝ 22.1‰:

Որպեսզի նահանգի բնակչության էթնոժողովրդագրական զարգացումների պատկերն ամբողջական լինի, համառոտ անդրադարձ կկատարենք բնակչության էթնիկ և դավանական կազմերին: Ըստ 1865 թ. տվյալների՝ նահանգի բնակչության էթնիկ կազմն այսպիսի պատկեր ուներ. հայերը կազմել են նահանգի բնակչության 17%-ը, թյուրքալեզու էթնիկ խմբերը՝ 76.1, ռուսները՝ 1.7, հրեաները՝ 0.8 և այլք՝ 4.4%-ը: Ըստ դավանական կազմի՝ հայ առաքելականները կազմել են ամբողջ բնակչության 17%-ը, մահմեդականները՝ 80.3, ռուս աղանդավորները՝ 1.5, հրեականը՝ 0.8, այլք՝ 0.4%-ը:

1868 թ. հետո տեղի ունեցած ժողովրդագրական զարգացումների մասին Կովկասի վիճակագրական կոմիտեի գլխավոր խմբագիր Ն. Զելդիցն իր կազմած Կովկասի երկրամասի բնակչության, տարածքի և տարաբնակեցման աղյուսակին կից բացատրականի մեջ² գրում է, որ աղյուսակում ներկայացված թվերը հիմնականում վերաբերում են 1873-1874 թթ., որոնք վերցված են կամերալ ցուցակներից, կամ ինչպես ներկայացված է բնագրում՝ ժողովրդական մարդահամարից:

Այս թվերին նախապատվություն տալը հեղինակը բացատրում է այն հանգամանքով, որ ոստիկանական իշխանությունների տվյալներին հավատ չի

¹ Ст' u KK на 1866 г., Тифлис, 1865, отд. III, с. 132:

² Ст' u նույն տեղում, էջ 328-329:

ընծայում ու համարում է հորինված: Իսկ այն գավառներում ու օկրուգներում, որտեղ կատարվել են սահմանների փոփոխություն, հիմք են ընդունվել բնակավայրերի ցուցակների տվյալները: Մակայն կամերալ ցուցակները չեն տալիս բնակչության ամբողջական պատկերը: Քիչ թե շատ ամբողջական են ներկայացված հարկատու խավին վերաբերող թվերը: Ավելին, ծխերում ապրող կանանց թիվը հիմնավորված չէ, ոչ հարկատու խավի թվաքանակն ամբողջական չէ: Հատկապես թերի են ժամանակավոր կամ չգրանցված բնակիչների, զինվորականների ու նրանց ընտանիքների մասին եղած տվյալները: Հեղինակը մտահոգված է, որ բնակչության մասին հավաստի տվյալներ ստանալը մեծ խնդիրների հետ է կապված, ուստի հարկավոր է անցկացնել մեկօրյա մարդահամար: Մեկ այլ աշխատանքի նախաբանում խոսելով վերը բերված խնդիրների մասին՝ նա գրում է, որ բնակչության բնական շարժի վերաբերյալ ամենից հավաստի տվյալներ ստացել են լյութերական և ուղղափառ հոգևորականներից: Պակաս հավաստի են եղել հայ, այնուհետև մահմեդական հոգևորականների ներկայացրած թվերը, իսկ ռուս աղանդավորները Անդրկովկասի վիճակագրական կոմիտեին ոչ մի փաստաթուղթ չեն ուղարկել¹:

Նույն խնդրին է անդրադարձել նաև ցարական Ռուսաստանի կայսերական բնակի տեղագրական ծառայության պետ, գեոդեզիստ Ի. Ստեֆնիցկին, ըստ որի՝ բնակչության թվին ու կազմին վերաբերող վիճակագրական տվյալները այնքան էլ արժանահավատ չեն: Նա նշել է, որ վիճակը համեմատաբար բարվոք է այն վայրերում, որտեղ նոր են կատարվել կամերալ ցուցակագրումներ, և ժամանակին ու խնամքով են լրացրել չափաբերական մատյանները. դրանցից առանձնացրել է կազակներին և ընդհանրապես քրիստոնյաներին վերաբերող թվերը: Ի. Ստեֆնիցկին Կովկասի օրացույցի խմբագրությանը քննադատել է 1860-ականների վերաբերյալ ոչ հավաստի տվյալներ ներկայացնելու համար²:

Քանի որ խոսեցինք վիճակագրական տվյալների հավաստիության մասին, ապա հարկ ենք համարում նշել, որ XIX դարի պաշտոնական հրատարակություններում բնակչության թվին ու կազմին, բնական աճի ցուցանիշներին վերաբերող տվյալներում տեղ են գտել բազմաթիվ անճշտություններ, որոնք հետևանք են նաև թվաբանական ոչ ճիշտ գործողությունների: Այսինքն՝ այդ տվյալների/աղյուսակների հետ աշխատելիս անհրաժեշտ է հանգամանորեն ստուգել, վերահաշվարկել, նոր ընդհանրացումներ ու վերլուծություններ կատարել:

¹ Ст'ю Сборник сведений о Кавказе (այնուհետև՝ ССК), т. IX, Тифлис, 1885, с. I-II:

² Ст'ю КК на 1867 г., Тифлис, 1866, отд. III, с. 315-316:

**Բաքվի նահանգի բնակչության թվի և կազմի շարժընթացը 1868-1916 թթ.
(հազ. մարդ)¹**

Տարեթիվ	Տղամարդ	%	Կին	%	Ընդամենը	Տարեկան միջին աճը
1868	255.3	52.5	230.9	47.5	486.2	-
1870	268.7	53.0	238.1	47.0	506.8	10.3
1871	272.4	53.0	241.1	47.0	513.5	6.7
1873	295.2	54.5	245.5	44.5	540.7	13.6
1878	290.2	54.5	248.4	44.5	546.7	1.2
1882	309.6	54.8	255.4	44.2	565.0	4.5
1883	313.5	55.0	256.5	44.0	570.0	5.0
1884	340.3	55.5	272.2	44.5	612.5	42.5
1885	386.7	56.6	296.6	43.4	683.3	70.8
1886	401.2	56.3	311.5	43.7	712.7	29.4
1888	406.9	56.4	314.7	43.6	721.6	4.4
1891	429.2	55.2	348.3	44.8	777.5	18.6
1893	431.1	55.5	353.9	44.5	785.0	7.5
1896	451.4	55.4	363.4	44.6	814.8	9.9
1897	458.1	55.4	368.6	44.6	826.7	11.9
1900	466.1	54.5	389.1	44.5	855.2	9.5
1902	476.6	55.1	388.3	44.9	864.9	4.8
1910	634.3	56.4	488.8	43.6	1123.1	32.2
1912	648.3	55.2	526.7	44.8	1175.0	25.9
1914	655.3	55.4	527.5	44.6	1182.8	3.9
1915	675.1	54.8	557.3	45.2	1232.4	49.6
1916	701.5	54.7	580.0	45.3	1281.5	49.1

¹ Տե՛ս Սвод материалов по изучению экономического быта государственных крестьян Закавказского края (աղյուսակներ՝ СМІЭБГКЗК), т. II, Тифлис, 1887, с. 120-121; ССК, т. II, Тифлис, 1872, с. 351-353; **С. Эсадзе**. Историческая записка об управлении Кавказом, т. II, Тифлис, 1907, с. 308; ССК, т. V, Список населенных мест Кавказского края, ч. I, б/с.; КК на 1870 г., Тифлис, 1869, отд. III, с. 406-407; КК на 1875 г., Тифлис, 1874, отд. III, с. 219; КК на 1878 г., Тифлис, 1877, отд. II, с. 327; КК на 1879 г., Тифлис, 1878, отд. II, с. 329; КК на 1881 г., Тифлис, 1880, Приложение, с. 22-23; КК на 1884 г., Тифлис, 1883, отд. III, с. 356; КК на 1885 г., Тифлис, 1884, отд. III, с. 232-233, 289-290; КК на 1886 г., Тифлис, 1885, отд. III, с. 210-211; Свод статистических данных о населении Закавказского края, извлеченных из посемейных списков 1886 года (աղյուսակներ՝ ССДНЗКИПС), Тифлис, 1893, б/с.; КК на 1889 г., Тифлис, 1888, отд. II, с. 143-146; КК на 1895 г., Тифлис, 1894, отд. V, с. 28-31; КК на 1896 г., Тифлис, 1895, отд. III, с. 28-31; КК на 1898 г., Тифлис, 1897, отд. III, с. 30-33; КК на 1899 г., Тифлис, 1898, отд. III, с. 21-23, 32-35, 46-47; КК на 1900 г., Тифлис, 1899, отд. III, с. 46; Обзор Бакинской губернии за 1889 г., Баку, 1890, Ведомость № 3; Обзор бакинской губернии за 1902 г., Баку, 1903; Первая всеобщая перепись населения Российской империи (աղյուսակներ՝ ПВПНИ), 1897 г., Бакинская губерния, СПб., 1905, с. 1-3, 52-53; Энциклопедический словарь, т. XIII, Исторический журнал – Калайдович, СПб., 1895, Кавказский край, с. 819, 837; ССК, т. VII, Тифлис, 1880, с. XXII-XXV; Известия Кавказского отдела императорского русского географического общества (աղյուսակներ՝ ИКОИРГО), под ред., Д. И. Коваленского, т. I, Тифлис, 1872-1873, с. 63-64; **Ишханян Б.**, Народности Кавказа, Петроград, 1916, с. 23, 34 և մեր հաշվարկները:

Բաքվի նահանգի առկա և ժամանակավոր բնակչության
տեղաբաշխումը 1897 թ.¹


Վարչական միավորներ	Տղամարդ	%	Կին	%	Ընդամենը	%	Այդ թվում՝ ժամանակավոր բնակիչ
<i>Քաղաքային բնակչություն</i>							
ք. Բաքու	66893	59.8	45011	40.2	111904	71.8	3392
ք. Լենքորան	4661	53.5	4072	46.5	8733	5.6	45
ք. Ղուբա	8160	53.3	7203	46.7	15363	9.8	257
ք. Շամախի	10463	52.3	9544	47.7	20007	12.8	50
<i>Ընդամենը քաղաքներում</i>	<i>90177</i>	<i>57.8</i>	<i>65830</i>	<i>42.2</i>	<i>156007</i>	<i>100.0</i>	<i>3744</i>
<i>Գյուղական բնակչություն</i>							
1. Բաքվի գավառ	41555	58.6	29438	41.4	70993	10.6	3743
2. Գյոքչայի գավառ	64133	54.8	53572	45.2	117705	17.5	822
3. Լենքորանի գավառ	67831	55.5	54423	44.5	122254	18.2	645
4. Ղուբայի գավառ	88611	52.8	79268	47.2	167879	25.1	738
5. Շամախու գավառ	54269	53.3	47566	46.7	101835	15.2	137
6. Ջավաթի գավառ	51489	57.2	38554	42.8	90043	13.4	917
<i>Ընդամենը գավառներում</i>	<i>367888</i>	<i>54.8</i>	<i>302821</i>	<i>45.2</i>	<i>670709</i>	<i>100.0</i>	<i>3037</i>
Ընդամենը նահանգում	458065	55.4	368651	44.6	826716	100.0	6781

Ծանոթ.՝ Գյոքչայ և Սալյան բնակավայրերի բնակչության թիվը հաշվարկված է գավառների հետ:

Կովկասի օրացույցի նույն աղյուսակում շատ հաճախ հանդիպում են տարբեր տարեթվերի վիճակագրական տվյալներ, որոնք լրացուցիչ դժվարություններ են առաջացնում բնակչության շարժընթացի կամ վերաբնակչության գործակիցները հաշվարկելիս: Առաջնորդվելով վերը շարադրվածով՝ կազմվել են նոր աղյուսակներ, որոնք համալրվել են տարբեր աղբյուրներից քաղված վիճակագրական տվյալներով և կարող են ընդհանուր պատկերացում տալ Բաքվի նահանգի 1868-1916 թթ. բնակչության թվի ու կազմի փոփոխությունների վերաբերյալ (տե՛ս աղ. 5):

¹ Ст. в ПВПНРИ, 1897 г., Бакинская губерния, СПб., 1905, с. 1; Сборник статистических сведений по Закавказскому краю (այսուհետև՝ СССР по ЗК), часть I, Тифлис, 1902, с. 5-7, 20-21, 278-287:

Նահանգի բնակչության թվի շարժընթացն արտացոլող աղյուսակի դիտարկումը ցույց է տալիս, որ, չնայած զգալի տատանումներին, շուրջ կեսդարյա ժամանակահատվածում բնակչությունն աճել է 2.6 անգամ (695.8 հազ. մարդ) կամ տարեկան միջին հաշվով 8.5 հազարով: Բնակչության կառուցվածքում, առանց բացառության, գերակշռել են տղամարդիկ, որոնց տեսակարար կշիռը միջին հաշվով տարեկան կազմել է 55.0%: Այս ցուցանիշներն առանձնապես բարձր են քաղաքներում: Չնայած աղյուսակ 5-ի տվյալներից կարելի է ընդհանուր պատկերացում կազմել բնակչության շարժընթացի վերաբերյալ, սակայն գրաֆիկական պատկերն ավելի ակնառու և տեսանելի է դարձնում զարգացումների ընթացքը (տե՛ս գծ. 1):



Համառոտաստանյան առաջին մարդահամարի պաշտոնական արդյունքների հիման վրա աղյուսակ 6-ի տվյալները հնարավորություն են տալիս պատկերացում կազմելու նահանգի քաղաքային և գյուղական առկա բնակչության սեռային կառուցվածքի, ինչպես նաև ժամանակավոր ապրողների մասին: Նահանգի ամենախոշոր քաղաքը Բաքուն էր, որի բնակչության թիվը կազմում էր քաղաքային բնակչության 71.8%-ը: Բանվորական աշխատուժի ներհոսքի պատճառով այստեղ էր կենտրոնացված քաղաքների տղամարդկանց ավելի քան 74%-ը: Քանի որ մյուս երեք քաղաքներից ևս մարդկանց մեծ հոսքեր են լինում դեպի Բաքու, այդ պատճառով էլ այդ քաղաքների տղամարդկանց տեսակարար կշիռը միջին հաշվով 6.8 տոկոսային նիշով ցածր է Բաքվի ցուցանիշից: Գրեթե նույն պատկերն է արձանագրվել նաև գավառներում: Այս առումով՝ տղամարդ բնակչության համեմատաբար բարձր տեսակարար կշիռով, Բաքվի գավառը տարբերվում էր մյուսներից: Այստեղ բնակչության 5.3%-ը ժամանակավոր բնակիչներն էին, ինչը հարա-

կից գավառներից աշխատուժի ներհոսքի հետևանք էր: Նույնը չենք կարող ասել Ջավաթի գավառի մասին, որը ևս տղամարդկանց մեծ բաժին ուներ: Սակայն պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ գավառը նահանգի ամենանոսր բնակեցված շրջանն էր (միջին խտությունը XIX դարի վերջերին երկու անգամ փոքր էր նահանգի միջինից), և տարածքի գրեթե կեսը զբաղեցնում էին քոչատեղերը: Աղյուսակից պարզ երևում է, որ նահանգի տարածքում ապրող ժամանակավոր բնակիչները կազմել են ամբողջ բնակչության ընդամենը 0.8%-ը:

1886-1897 թթ. պաշտոնական վիճակագրության համաձայն՝ ստորև ներկայացված աղ. 7-ի տվյալները հնարավորություն են տալիս համեմատության մեջ դիտարկել Բաքվի նահանգի բնակչության թվի ու կազմի 10-ամյա փոփոխությունների պատկերը:

Բաքվի նահանգի բնակչությունը նշված ժամանակաշրջանում ավելացել է ավելի քան 114 հազ. մարդով, կամ տարեկան միջին աճը կազմել է 11.4 հազ. մարդ, ինչը, նախորդ տարիների համեմատ, բավականին բարձր ցուցանիշ է և բացատրվում է կապիտալիստական հարաբերությունների զարգացմամբ: Քաղաքային բնակչությունն ավելացել է 23%-ով, այսինքն՝ տարեկան միջին աճը կազմել է 2.3%, որը նշված ժամանակահատվածի համար շատ բարձր ցուցանիշ է և պայմանավորված է ներհոսքի բարձր տեմպով: Գավառների բնակչությունն աճել է 21%-ով, տարեկան միջին ցուցանիշը կազմել է 2.1%: Քաղաքների մեջ բնակչության շատ բարձր աճ է արձանագրվել Լենքորանում՝ 106.8%, ամենացածրը՝ Շամախիում, որտեղ բնակչության թիվը նվազել է 10.6%-ով: Գյուղական բնակավայրերում ամենաբարձրը գրանցվել է Գյոթջայի գավառում՝ 53.6%, իսկ ամենացածրը՝ Շամախիի գավառում՝ -7.9%: Այս ամենով հանդերձ՝ նահանգի բնակչության ընդհանուր աճը կազմել է 13.6%:

Նահանգում քաղաքային բնակչության մեջ տղամարդիկ ավելացել են 15.4%-ով, իսկ կանայք՝ ավելի քան 35%-ով: Գավառներում տղամարդկանց աճը կազմել է 13.8%, իսկ կանանցը՝ 8.8%: Ինչ վերաբերում է նահանգին, ապա տղամարդիկ ավելացել են 14.1, իսկ կանայք՝ 12.9%-ով: Բնակչության ընդհանուր աճը մեծապես պայմանավորված էր բնական շարժի ցուցանիշներով (տե՛ս աղ. 8), որոնց դիտարկումն անգամ ցույց է տալիս, որ բնական վերարտադրության բացարձակ արժեքները, չնայած զգալի տատանումներին, ունեն դրական ցուցիչներ: Այսինքն՝ նահանգում բնական աճի հաշվին բնակչության ամենամյա ավելացում է գրանցվել, սակայն դրանք հարաճուն չեն եղել, ինչը պայմանավորված էր տեղաշարժերի բնույթով (միգրացիայի վերաբերյալ ամբողջական տվյալներ չկան):

Բնական շարժի հնգամյա գործակիցների հաշվարկը ևս փաստում է, որ նահանգի բնակչությունն անհավասարաչափ է աճել: Այսպես, 1868-1873 թթ. այն կազմել է 8.8%, 1873-1878 թթ.՝ 3.3, 1878-1883 թթ.՝ 4.2, 1883-1888 թթ.՝ 26.6, 1888-1893 թթ.՝ 25.0, 1893-189թթ.՝ - 3.1, իսկ 1896-1901 թթ.՝ 6.8%, 1901-1906

թթ.՝ 3.0, 1906-1911 թթ.՝ 12.8, 1911-1916 թթ.՝ 11.4%: Հարկ է նշել, որ ըստ սանդղակի՝ ծնելիության գործակիցներն ունեն միջին և միջինից բարձր ցուցանիշներ, իսկ մահացությանը՝ բարձր: Այս պարագայում բնական բարձր աճ

Աղյուսակ 7

Բաքվի նահանգի քաղաքային և գյուղական բնակչության թվի ու կազմի փոփոխությունները 1886-1897 թթ.¹

Վարչական միավորներ	1886 թ.			1897 թ.			Աճը կամ նվազումը 10 տարում		
	Տղմ.	Կին	Ընդ.	Տղմ.	Կին	Ընդ.	Տղմ.	Կին	Ընդ.
<i>Քաղաքներ</i>									
Բաքու	54823	31788	86611	66893	45011	111904	12070	13223	25293
Լենքորան	2262	1961	4223	4661	4072	8733	2399	2111	4510
Ղուբա	7783	6133	13916	8160	7203	15363	377	1070	1447
Շամախի	13286	8853	22139	10463	9544	20007	−2823	691	−2132
Ընդամենը	78154	48735	126889	90177	65830	156007	12023	17095	29118
<i>Գավառներ</i>									
1. Բաքվի	29925	24876	54801	41555	29438	70993	11630	4562	16192
2. Գյոքչայի	41497	35147	76644	64133	53572	117705	22636	18425	41061
3. Լենքորանի	61055	44063	105118	67831	54423	122254	6776	−6632	144
4. Ղուբայի	86724	73460	160184	88611	79268	167879	1887	5808	7695
5. Շամախու	51789	42591	94380	54269	47566	101835	2480	4975	7455
6. Զավաթի	52113	42574	94687	51489	38554	90043	−624	−4020	−3396
Ընդամենը	323103	262711	585814	367888	302821	670709	44785	23118	67903
Ընդամենը նահանգում	401257	311446	712703	458065	368651	826716	56808	40213	97021

չի ակնկալվում: Մեր դիտարկումները ցույց տվեցին, որ Բաքվի նահանգի բնակչության 1884, 1897, 1910, 1912, 1915 թթ. բնական վերարտադրության տվյալները Անդրկովկասի համանման ցուցանիշների հետ համեմատելիս պարզվում է, որ Անդրկովկասում ծնելիության ցուցանիշները միջին հաշվարկներով ավելի բարձր են՝ 28.7%, քան Բաքվի նահանգինը՝ 25.8%, մահացության գործակիցները գրեթե հավասար են՝ 18.2 և 18.1, իսկ բնական

¹ Статистика по 3К, часть I, Тифлис, 1902, с. 20-21; КК на 1901 г., Тифлис, 1900, отд. III, с. 24-27; ПВПН РИ, 1897 г., с. 1-3:

աճը կազմել է 10.5% և 7.7%: Եթե ծնելիության գործակիցներն Անդրկովկասում ունեցել են նվազման միտումներ, ապա Բաքվի նահանգում դրանք չեն փոխվել, ուստի բնական աճը 1915 թ. նույն գործակիցն է ունեցել՝ 7.8% (մանրամասն տե՛ս գծ. 2): Աղյուսակ 5-ի և 8-ի համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ չնայած նահանգի բնակչության բնական աճը նշված տարիներին միջին հաշվով կազմել 6.5 հազ. մարդ, այսինքն՝ ուսումնասիրվող ժամանակահատվածում բնակչության թիվը պետք է ավելանար շուրջ 310 հազ. մարդով, իրականում այն կազմել է 780 հազ. մարդ կամ


Աղյուսակ 8

Բաքվի նահանգի բնակչության բնական աճի ցուցանիշները 1875-1915 թթ.¹

Տարե- թիվ	Պսակնե- րի թիվը	Ծնունդ	%	Մահ	%	Բնական աճ	%
1875	4506	14619	27.2	9669	18.0	+4950	9.2
1881	-	14388	26.0	12260	22.2	+2128	3.8
1883	5283	15569	26.5	10577	18.0	+4992	8.5
1884	4398	16233	27.1	12104	20.2	+4131	6.9
1885	5231	17223	25.9	10175	15.3	+7048	10.6
1891	4165	14864	19.6	11713	15.5	+3151	4.1
1894	7086	20306	25.5	13920	17.5	+6386	8.0
1895	7622	15674	19.5	12179	15.1	+3495	4.4
1896	6730	18159	22.4	14336	17.7	+3823	4.7
1897	7651	20484	25.0	15126	17.5	+5358	7.5
1898	7346	20128	23.0	14449	16.5	+5679	6.5
1908	9116	28357	27.2	20350	19.5	+8007	7.7
1910	8815	25581	25.8	20728	18.8	+4853	7.0
1911	7457	28035	24.4	17422	15.0	+10613	9.4
1912	7978	30010	25.8	19124	16.5	+10886	9.3
1913	9550	31024	26.3	19464	16.5	+11560	9.8
1914	9585	29705	25.2	20799	17.6	+8906	7.6
1915	8880	30819	25.5	21403	17.7	+9416	7.8

¹ КК на 1877 г., Тифлис, 1876, отд. II, часть 2, с. 28-33; КК на 1887 г., Тифлис, 1886, отд. III, с. 190-193, 226-227; КК на 1883 г., Тифлис, 1882, отд. I, с. 219; КК на 1885 г., Тифлис, 1884, отд. III, с. 242-243; КК на 1887 г., Тифлис, 1886, отд. III, с. 226-227; КК на 1900 г., Тифлис, 1899, отд. III, с. 46; КК на 1893 г., Тифлис, 1892, отд. I, с. 44; КК на 1894 г., Тифлис, 1893, отд. V, с. 75; КК на 1898 г., Тифлис, 1897, отд. III, с. 70; КК на 1899 г., Тифлис, 1898, отд. II, с. 48; КК на 1900 г., Тифлис, 1899, отд. III, с. 46; КК на 1901 г., Тифлис, 1900, отд. III, с. 59-62; CCC по ЗК, часть I, Тифлис, 1902, с. 20-21, 278-287; КК на 1903 г., Тифлис, 1902, отд. III, с. 44-45; КК на 1910 г., Тифлис, 1909, отд. IV, с. 522-523; КК на 1913 г., Тифлис, 1912, отд. IV, с. 242; КК на 1914 г., Тифлис, 1913, отд. IV, с. 162-163; КК на 1915 г., Тифлис, 1914, отд. IV, с. 215; КК на 1916 г., Тифлис, 1915, отд. IV, с. 35; КК на 1917 г., Тифлис, 1916, отд. IV, с. 244 և մեր հաշվարկները:

2.5 անգամ ավելի, իսկ բնական ընդհանուր միջին աճը՝ 9.8 հազ. մարդ: Այստեղից հետևում է, որ բնակչության ներհոսքի տարեկան միջին ցուցանիշը եղել է 3.3 հազ. մարդ, սակայն այդ հոսքերը հաստատուն ու հավասարաչափ չեն եղել: Այս մասին են վկայում բնական վերարտադրության գործակիցների աճը և բնակչության թվաքանակի տարեկան միջին ցուցանիշները: Կապիտալիստական հարաբերություններով պայմանավորված՝ XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին Անդրկովկասում, հատկապես Թիֆլիսում և Բաքվում, բավականին արագ էր զարգանում արդյունաբերությունը:



Անդրկովկասում կապիտալիստական հարաբերությունների զարգացման և գյուղական համայնքներում բնակչության շերտավորման խորացման հետևանքով ապրուստի միջոց հայթայթելու համար զգալի ծավալների էր հասնում արտագնացությունը դեպի քաղաքներ: Կապիտալիզմի զարգացման անհամաչափությունն իր հերթին պայմանավորեց նաև բնակչության տեղաշարժերի ինտենսիվությունը և շարժման ուղղությունները: Անդրկովկասի գյուղերից փոքր ու միջին քաղաքներից դեպի արդյունաբերական խոշոր քաղաքներ, մասնավորապես Թիֆլիս և Բաքու, արտագնա աշխատանքի էին մեկնում հազարավոր մարդիկ, այդ թվում՝ հայեր: Այսպես, XX դարի սկզբներին Բաքվի եկվոր հայ բնակչության թիվը կազմել է 42.6 հազ. մարդ, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղից՝ 12.9 հազ., Ջանգեզուրի գավառից՝ 9.4 հազ., Շամախիի գավառից՝ 9.1, Երևանի նահանգից՝ 6.7 հազ., Նուխիի գավառից՝ 1.2 հազ., Ղազախի գավառից՝ 1.2 հազ., Գյոքչայի գավառից՝ 1.9 հազ.

մարդ¹: Այսպիսով, Բաքվի նահանգի ժամանակավոր բնակչության թիվն աստիճանաբար ավելանում էր, փոխվում էր քաղաքային և գյուղական բնակչության հարաբերակցությունը: Թե ինչ չափով են կատարվել այդ փոփոխությունները, կարող ենք տեսնել՝ դիտարկելով աղյուսակ 9-ը և 10-ը:

Աղյուսակ 9

**Բաքվի նահանգի բնակչության տարաբնակեցումը
ըստ գավառների 1868-1886 թթ.²**

Վարչական միավոր	Քաղաքներում			Գյուղերում			Նահանգում		
	1868	1873	1886	1868	1873	1886	1868	1873	1886
Բաքվի	15079	15105	86611	41504	44284	54801	56583	59389	141412
Գյոքչայի	-	-	-	51301	60299	76644	51301	60299	76644
Լենքորանի	5082	4779	4222	85728	90603	105118	90810	95382	109340
Ղուբայի	11677	11324	13917	126631	134454	160184	138308	145778	174101
Շամախու	23406	25087	22139	82465	72714	94380	105871	97801	116519
Ջավաթի	10677	10168	12121	32679	60400	82566	43356	70568	94687
Ընդամենը	65921	66463	139010	420308	462754	573693	486229	529217	712703

Աղյուսակ 9-ի տվյալները փաստում են, որ Բաքվի նահանգի կազմավորումից ի վեր մեծ տեմպերով է ավելացել քաղաքային բնակչության տեսակարար կշիռը: Այսպես, 1868-1886 թթ. քաղաքային բնակչությունն աճել էր ավելի քան 2 անգամ կամ 110.8%-ով, իսկ գյուղականը՝ 1.3 անգամ կամ 36.5%-ով: Նշված տարիներին քաղաքային և գյուղական բնակչության հարաբերակցությունն այսպիսի պատկեր ուներ. 1868 թ. քաղաքային բնակչության տեսակարար կշիռը կազմել է 9.2%, 1873 թ.՝ 12.5%, 1886 թ.՝ 19.5%, իսկ գյուղական բնակչությանը՝ համապատասխանաբար 90.8%, 87.5% և 80.5%: Ինչպես նշվել է վերևում, առանձնապես արագ էր աճում Բաքվի բնակչության թիվը, 1868-1886 թթ. բնակչությունն ավելացել էր 5.7 անգամ, մյուս մեծ քաղաք Շամախիում այն նվազել էր, փոքր-ինչ աճ էր գրանցվել Ղուբայում՝ գրեթե 1.2 անգամ: Այս ընթացքում գյուղական բնակչության մեջ համեմատաբար ամենաբարձր աճ էր արձանագրվել Գյոքչայի գավառում՝ 1.5 անգամ կամ 49.4%:

1886-1897 թթ. տվյալների դիտարկումը ցույց է տալիս, որ շուրջ 10 տարվա ընթացքում նահանգի քաղաքային բնակչության թիվն ավելացել է 1.2 ան-

¹ Տե՛ս **Խոջաբեկյան Վ.**, Հայաստանի բնակչության վերաբնակչությունը և տեղաշարժերը XIX-XX դարերում, XXI դարի շեմին, Երևան, 2002, էջ 114:

² Տե՛ս КК на 1870 г., Тифлис, 1869, с. 406-407; КК на 1878 г., Тифлис, 1877, с. 327; КК на 1879 г., Тифлис, 1878, с. 329; КК на 1889 г., Тифлис, 1888, отд. I, с. 146; ССДНЗКИПС, 1886 г., V, Города и уезды Бакинской губернии, Тифлис, 1893, б/м.:

գամ, ընդ որում Լենքորանում՝ 2 անգամ, իսկ Բաքվում՝ 1.3 անգամ, սակայն Շամախիում և Ջավաթում նվազել է: 1897-1916 թթ. նահանգի բնակչության ընդհանուր թիվը (տե՛ս աղ. 10) ավելացել է ավելի քան 1.5 անգամ, ընդ որում քաղաքայինը՝ 2.8 անգամ կամ 180.9%, իսկ գյուղականը՝ 1.2 անգամ կամ 22.3%: 1897 թ. նահանգի քաղաքային բնակչության տեսակարար կշիռը կազմել է 20.6%, 1908 թ.՝ 39.8%, 1916 թ.՝ 37.3%, գյուղական բնակչության համար՝ համապատասխանաբար՝ 79.4%, 60.2% և 62.7%:

Աղյուսակ 10

**Բաքվի նահանգի բնակչության տեղաբաշխումը ըստ սեռի ու
գավառների 1897-1916 թթ. (հազ. մարդ)¹**

Վարչական միավոր	1897 թ.			1908 թ.			1916 թ.		
	Տղմ.	Կին	Ընդ.	Տղմ.	Կին	Ընդ.	Տղմ.	Կին	Ընդ.
1. Բաքվի գավառ	41.6	29.4	71.0	8.8	7.4	16.2	8.7	7.5	16.2
ք. Բաքու	66.9	45.1	112.0	215.1	131.8	346.9	235.9	169.9	405.8
2. Գյոքչայի գավառ	62.8	52.7	115.5	68.2	54.4	122.6	73.9	60.4	134.3
գ. Գյոքչայ	1.4	0.9	2.3	1.4	0.9	2.3	-	-	-
3. Լենքորանի գավառ	67.8	54.4	122.2	66.0	61.3	127.3	96.9	88.6	185.5
ք. Լենքորան	4.6	4.1	8.7	5.4	5.0	10.4	10.0	7.8	17.8
4. Ղուբայի գավառ	88.6	79.2	167.8	88.8	76.6	165.4	91.8	79.4	171.2
ք. Ղուբա	8.2	7.2	15.4	13.5	12.4	25.9	13.7	13.2	26.9
5. Շամախու գավառ	54.2	47.6	101.8	67.2	58.3	125.5	71.8	62.0	133.8
ք. Շամախի	10.5	9.5	20.0	12.5	10.3	22.8	14.8	12.9	27.7
6. Ջավաթի գավառ	45.5	32.7	78.2	47.7	39.2	86.9	84.0	78.3	162.3
գ. Սալյան	6.0	5.8	11.8	9.3	7.9	17.2	-	-	-
Ընդամենը գավառներում	360.5	296.0	656.5	346.7	297.2	643.9	427.1	376.2	803.3
Ընդամենը քաղաքներում	97.6	72.6	170.2	257.2	168.3	425.5	274.4	203.8	478.2
Ընդամենը նահանգում	458.1	368.6	826.7	603.9	465.5	1069.4	701.5	580.0	1281.5

Ինչպես տեսնում ենք, քաղաքային բնակչության տեսակարար կշիռն արագ տեմպերով մեծանում է, դրան հակառակ՝ նվազում է գյուղականի բաժինը: Այս ամենի հիմնական պատճառը միգրացիայի սալդոյի դրական բարձր ցուցանիշներն են, որոնք բնական աճի դրական արժեքների հետ ապահովել են բարձր տեսակարար կշիռ:

Միգրացիան իր ազդեցությունն է թողնում ոչ միայն բնակչության թվա-

¹ Տե՛ս ПВПНРИ, 1897 г. Бакинская губерния, СПб., 1905, с. 1-3; CCC по ЗК, часть I, Тифлис, 1902, с. 5-7, 278-287; КК на 1910 г., Тифлис, 1909, отд. IV, с. 432-435, 462-469; КК на 1917 г., Тифлис, 1916, отд. IV, с. 178-183:

քանակի, այլև կազմի վրա: Առանց հաշվի առնելու բնակչության տարիքն ու սեռը՝ հնարավոր չէ հանգամանորեն վերլուծել ծնելիության ու մահացության գործընթացները, մարդկանց ընտանեկան դրության փոփոխությունները, կրթական մակարդակը, ընտանիքի կազմը, մարդկանց անցումը սոցիալական մի վիճակից մյուսին և այլն:

Ընդհանուր առմամբ, նահանգում 1897-1908 թթ. արձանագրվել է տղամարդկանց տեսակարար կշռի աճ (1.1%), սակայն 1908-1916 թթ. այն նվազել է 1.8%-ով, ինչը բացատրվում է Առաջին աշխարհամարտի տարիների կորուստներով: Քանի որ Բաքուն նահանգի արդյունաբերական խոշոր կենտրոն էր, ուստի այստեղ էին տղամարդկանց հիմնական կուտակումները: Այդ են վկայում թվերը. եթե 1897-1908 թթ. տղամարդկանց բաժինն ավելացել է 2.2%-ով, ապա 1908-1916 թթ. նվազել է 3.9%-ով, այս առումով գավառներում ունենք՝ 0.9% աճ և 2.7% նվազում: 1897-1916 թթ. նահանգում ամենաբազմամարդը Բաքվի գավառն էր, իսկ ամենանոսր բնակեցվածը՝ Ջավաթի գավառը:

Բնակչության սեռային կազմից գատ, ժողովրդագրության, մասնավորապես էթնոժողովրդագրության մեջ իր ուրույն տեղն ունի նաև էթնիկ ու դավանական կազմերի փոփոխությունների ուսումնասիրությունը: Այս առումով Բաքվի նահանգի բնակչության էթնիկ կազմը բավականին բազմազան է ու խայտաբղետ: Աղյուսակ 11-ի տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ նահանգում նշված ժամանակահատվածում գերակշռել են թյուրքալեզու հանրությունները, որոնք 1873 թ. կազմել են ամբողջ բնակչության 56.3%, 1886 թ.՝ 53, 1897 թ.՝ 58.7%, այնուհետև բարձր ցուցանիշներով աչքի են ընկել թաթերը և լեզգիների խմբերը: Հայերի տեսակարար կշիռն ամբողջ բնակչության մեջ նշված տարիներին կազմել է՝ 5.1%, 7.8 և 6.3%, իսկ ռուսներինը՝ 3.4, 5.9 և 8.9%:

Աղյուսակում ներկայացված տվյալները ցույց են տալիս, որ 1886 և 1897 թթ. բնակչության թվի բացարձակ աճ են ունեցել և՛ ռուսները, և՛ հայերը: Սակայն թալիշների՝ 1.4 և թաթերի՝ 1.3 անգամ նվազումը կարելի է բացատրել հատկապես տղամարդ բնակչության արտահոսքի մեծ չափերով: Այդ են ցույց տալիս 1886-1897 թթ. բնակչության սեռային կազմի տվյալների համեմատությունը, ըստ այդմ, եթե 1886 թ. թալիշ տղամարդիկ կազմել են 57%-ը, իսկ թաթերը՝ 54.8, ապա 1897 թ. համապատասխանաբար պատկերն այսպիսին էր՝ 53.6 և 53.1%: Ինչպես նշված է ծանոթագրության մեջ, 1904 թ. տվյալները վերաբերում են բնիկ բնակչությանը, որոնց համեմատական վերլուծությունը աղյուսակի նախորդ տարիների բնակչության թվերի հետ կարող է որոշ հարցեր արգաքանել: Այսպես, էթնիկ հանրությունների մեջ պարզորոշ երևում է, որ հայերի, թյուրքալեզու էթնիկ խմբերի, թալիշների, ռուսների և հրեաների կազմում եկվորների թիվն ավելի փոքր էր, քան թաթերի ու լեզգիական հանրությունների:

Նույնիսկ այս պարագայում 1904 թ. բնիկ բնակչության ընդհանուր թիվը

1897 թ. համեմատ աճել էր 19.7%-ով: Բաքվի նահանգի բնակչության 1897 թ. էթնիկ կազմի վերաբերյալ ավելի մանրամասն պատկեր է ներկայացնում աղ. 12-ը:

Աղյուսակ 11
Բաքվի նահանգի բնակչության էթնիկ կազմը 1873-1904 թթ.¹

Էթնիկ կազմը	Տ ա ր ե թ վ ե ր				Աճը՝ 1873 թ. համեմատ, %	
	1873	1886	1897	1904	1886 թ.	1897 թ.
Հայեր	27792	55459	52234	84257	99.5	87.9
Թյուրքալեզու էթնիկ խմբեր	304789	377521	485146	631467	23.8	59.1
Թաթեր	79112	118165	89519	53580	49.3	13.1
Թալիշներ	42999	50510	34990	72560	17.4	-22.9
Լեզգիական խմբեր	54869	57149	62294	15045	4.1	13.5
Ռուսներ	18229	42432	73632	98932	132.8	303.9
Հրեաներ	6415	8603	8172	12760	34.1	27.3
Եվրոպական ժողովուրդներ	-	1721	4869	-	-	-
Վրացիներ	-	-	1616	3214	-	-
Պարսիկներ	5940	-	5973	15575	-	0.5
Այլք	658	1143	6004	2260	-	-
Ընդամենը	540773	712703	826716	989650	31.8	52.8

Ծանոթ.՝ 1897 թ. տվյալները հաշվարկված են ըստ մայրենի լեզվի, իսկ 1904 թ. ցուցանիշները վերաբերում են նահանգի բնիկ բնակչությանը:

Մինչև XX դարի սկիզբները հրապարակվում էին բնակչության միայն էթնիկ կազմի մասին տվյալներ, սակայն հետագայում գրավոր սկզբնաղբյուրներում հայտնվում են աղյուսակներ, որոնք վերաբերում են բնակչության էթնոդավանական կազմին, ուստի դրանք որոշակի խմբագրումներից հետո կներկայացվեն ըստ տարբեր ժամանակահատվածների:

Աղյուսակ 13-ը պատկերացում է տալիս Բաքվի նահանգի բնակչության դավանական կազմի և քաղաքային ու գյուղական տարաբնակեցման մասին: Ըստ աղյուսակի տվյալների՝ նահանգում գերակշռողը մահմեդական տարրն էր՝ 90%, այդ թվում շիաները՝ 56.8%, քրիստոնյաները կազմել են ընդամենը

¹ Ст'у КК на 1881 г., Тифлис, 1880, отд. II, Приложение, с. 22; Сборник сведений о Кавказе (այսուհետև՝ ССК), том V, Списки населенных мест Кавказского края, часть I. Бакинская губерния, Тифлис, 1879, б/с.; ССК, т. VII, Тифлис, 1880, с. XXII-XXV; ССДНЗКИПС, 1886 г. б/с; ПВПНРИ, 1897, с. 52-53:

8.7%-ը, այդ թվում հայեր՝ 59%: Իրականում Բաքվի նահանգի ամբողջ բնակչության թիվը կազմել է 540773 մարդ (294469 տղամ., 246304 կին), սակայն սկզբնաղբյուրներում արձանագրված են միայն հարկեր վճարածները, այսինքն՝ դուրս են մնացել 11556 մարդ (6322 տղամ., 5234 կին) կամ 2.2%-ը:

Բարեբախտաբար այդ խավի վերաբերյալ կան տվյալներ, քանի որ նրանք նահանգի բնակչության մաս են կազմել: Այսպես, հարկերից խուսափել են 664 հայ առաքելականներ, 6651 շիա և 4121 սունի մահմեդականներ, 92 հրեականներ, 28 ռուս ուղղափառներ:

Աղյուսակ 12

Բաքվի նահանգի բնակչության էթնիկ կազմն ու տեղաբաշխումը 1897 թ.¹

Էթնիկ կազմը	Գ ա Վ ա ռ ն ե ռ						
	Բաքվի	Գյոթջաի	Լենքորանի	Ղուբաի	Շամախու	Ջալաթի	Ընդամենը
Հայեր	22583	12994	483	1191	14283	699	52233
Թյուրքալեզու էթնիկ խմբեր	63415	92962	84725	70150	89840	84054	485146
Թաթեր	34503	3995	74	46430	4517	-	89519
Ռուսներ	43893	2458	9481	2516	11275	4009	73632
Լեզգիական խմբեր	2122	3836	19	56476	261	231	62945
Թալիշներ	-	-	34991	-	-	-	34991
Հրեաներ	2034	847	207	3972	1104	8	8172
Պարսիկներ	4774	265	89	549	149	147	5973
Գերմանացիներ	3204	14	132	38	13	29	3430
Լեհեր	982	27	205	64	101	60	1439
Վրացիներ	1127	235	17	66	49	122	1616
Այլք	4260	72	564	1790	250	684	7620*
Ընդամենը նահանգում	182897	117705	130987	183242	121842	90043	826716

Տառադր.՝ Այլք-ի մեջ են՝ ուկրաինացիները, բելառուսները, հույները, լիտվացիները և այլն:

Աղյուսակում ներկայացված «Աղանդավորներ» սյունակում գերակշռել են մուլդականները (շուրջ 85%), կան նաև սուբոտնիկներ, դուխոբորներ, հնաժիսականներ:

Ըստ բնակչության տեղաբաշխման առանձնահատկությունների՝ կարող ենք ասել հետևյալը՝ հայ առաքելականները բարձր տեսակարար կշիռ են ունեցել Շամախի քաղաքում՝ կազմելով բնակչության 20.7%-ը, իսկ գյու-

¹ См. u ПВПНРИ, 1897 г., Бакинская губерния, СПб., 1905, с. 52-53:

ղական բնակավայրերից առանձնանում էր Գյոքչայի գավառը՝ 17.5%: Մահմեդականները բոլոր գավառներում գերակշռող են եղել ու կազմել են ամբողջ բնակչության 90.1%-ը, նրանք տեսակարար մեծ կշիռ ունեին Ղուբայի գավառում՝ կազմելով նահանգի գյուղական բնակչության 28.7%-ը, ռուս ուղղափառները և աղանդավորները միասին կազմել են Շամախիի գավառի բնակչության շուրջ 10%-ը, իսկ Լենքորանի՝ 6.3%-ը:

Բնակչության դավանական կազմի 1897 թ. վերաբերող աղյուսակ 14-ը ավելի մանրամասն տվյալներ է պարունակում, քանի որ այն արտացոլում է համառուսաստանյան առաջին մարդահամարի արդյունքները: Բաքու քաղաքի հայերը կազմել են ամբողջ բնակչության 6.3%-ը, իսկ քաղաքային հայ բնակչության՝ ավելի քան 83%-ը, գյուղական բնակչության մեջ այդ ցուցանիշը բարձր էր համանուն գավառում՝ 76%: Մահմեդական բնակչությունը դարձյալ գերակշռող էր ու կազմել էր նահանգի բնակչության 81.8%-ը:

Աղյուսակ 13
Բաքվի նահանգի բնակչության դավանական
կազմն ու տեղաբաշխումը 1873 թ.¹

Վարչական միավորներ	Հայ առաքելականներ*	Մահմեդական		Ուղղափառներ	Աղանդավորներ	Հրեական	Այլք	Տղամարդ	Կին	Ընդամենը
		Շիաներ	Սունիներ							
1. Բաքվի գավառ	-	44284	-	-	-	-	-	24139	20145	44284
ք. Բաքու	747	13526	-	28	754	50	-	8627	6478	15105
2. Գյոքչայի գավառ	10567	19656	28262	-	964	438	412	33016	27283	60299
3. Լենքորանի գավառ	-	84793	28	457	5290		35	49741	40862	90603
ք. Լենքորան	232	3813	-		734			2504	2275	4779
4. Ղուբայի գավառ	681	23054	109774	945	-	-	-	71384	63070	134454
ք. Ղուբա	62	2206	3788	141	-	5127	-	6219	5105	11324
5. Շամախիի գավառ	9661	12179	42917	1081	6182	694	-	39987	32727	72714
ք. Շամախի	5177	6590	12076	-	1230	14	-	13999	11088	25087
6. Ջավաթի գավառ	-	50518	9276	-	360	-	246	33576	26824	60400
գ. Սալյանի	-	10168	-	-	-	-	-	4955	5213	10168
Ընդամենը	27127	270787	206121	2652	15514	6323	693	288147	241070	529217

* Բնագրում՝ հայ գրիգորյաններ:

¹ Ст'ю Сборник сведений о Кавказе (այսուհետև՝ ССК), т. V, Списки населенных мест Кавказского края, часть I. Губернии: Эриванская, Кутаисская, Бакинская и Ставропольская и Терская область, Тифлис, 1879, 6/с.; ССК, т. VII, Тифлис, 1880, с. XLII-XLIII; КК на 1877 г., Тифлис, 1876, отд. II, с. 28-33; КК на 1881 г., Тифлис, 1880, отд. II, Приложение, с. 22, 323; КК на 1882 г., Тифлис, 1881, отд. II, с. 323; КК на 1883 г., Тифлис, 1882, отд. I, с. 219:

1873 թ. ցուցանիշի հետ համեմատ որոշակի նվազումը պայմանավորված էր 1897 թ. մարդահամարի տվյալների հավաստիությամբ: Քաղաքային մահմեդական բնակչությունը կազմել է նահանգի քաղաքային բնակչության 52.7%-ը, իսկ գավառներում՝ 89.3%-ը: Ռուս ուղղափառները և հնաժիսականները համեմատաբար բարձր տեսակարար կշիռ են ունեցել Բաքվում՝ կազմելով քաղաքի բնակչության 35.6%-ը, համանուն գավառում՝ 25.6% և Շամախիի գավառում՝ 9.3%:

Աղյուսակ 14

Բաքվի նահանգի բնակչության դավանական կազմն ու տեղաբաշխումը 1897 թ.¹

Վարչական միավորներ	Հայ առաքելական	Մահմեդական	Ուղղափառ	Հնաժիսական	Կաթոլիկ	Լյութերական	Բապտիստ	Հրեական	Այլք	Ընդամենը
ք. Բաքու	19033	46235	37007	2811	1340	1899	87	2341	205	111904
գ. Գյոքչայ	294	1736	148	7	6	5	-	3	2	2201
ք. Լենքորան	299	6648	655	494	113	107	109	305	3	8733
ք. Ղուբա	810	7160	604	44	65	7	7	6662	4	15363
ք. Շամախի	2362	16309	651	191	238	14	8	92	142	20007
գ. Սալյան	113	11520	134	5	12	2	-	1	-	11787
1. Բաքվի գավառ	22506	105603	43706	3095	1584	2412	91	2489	277	182897
2. Գյոլչայի գավառ	12990	101149	747	1734	34	18	128	857	48	117705
3. Լենքորանի գավառ	487	119965	2282	6351	210	133	299	1252	8	130987
4. Ղուբայի գավառ	1758	170361	3726	286	73	34	7	6988	9	183242
5. Շամախիի գավառ	14119	94764	1301	10016	242	15	119	1119	147	121842
6. Զավաթի գավառ	703	84401	4328	430	75	34	19	48	5	90043
Ընդամենը նահանգում	52563	676243	56090	21912	2218	3780	663	12753	494	826716
Այդ թվում՝ քաղաքներում և ավաններում	22911	89608	39199	3552	1774	2980	211	9404	356	169995
Գավառներում	29652	586635	16891	18360	444	800	452	3349	138	656721

¹ См. u ПВПНРИ, 1897 г. LXI, Бакинская губерния, СПб., 1905, с. 2-3, 50-51:

Բաքվի նահանգի բնակչության էթնոգրական կազմը 1912-1916 թթ.¹

Էթնիկ կազմ	Դավանանք	1912 թ.	1914 թ.	1916 թ.
Հայեր	Առաքելականներ	112010	109760	117729
	Ուղղափառներ	1095	458	102
	Այլ հավատքի	2516	3308	2256
Ասիական տարբեր ժողովուրդներ	Քրիստոնյաներ	3618	3750	4864
	Մահմեդական շիա	491666	528598	582716
	Մահմեդական սունի	280585	298865	292686
Ռուսներ	Ուղղափառներ	131974	133918	135665
	Աղանդավորներ	35840	37532	41569
Կովկասի լեռնականներ	Մահմեդականներ	75352	13073	58713
	Այլ հավատքի	1616	-	2448
Վրացիներ	Ուղղափառներ	2386	3574	3372
	Մահմեդականներ	1030	666	5632
Գերմանացիներ, լեհեր և այլ ժողովուրդներ	-	14670	14336	7610
Հրեաներ	-	22633	22770	25212
Քրդեր	Մահմեդականներ	889	8835	500
	Եզդիներ	28	3277	192
Գնչուներ	-	76	75	239
Ընդամենը	-	1174984	1182795	1281505

Բաքվի նահանգի XX դարի սկզբների բնակչության էթնոգրական կազմի փոփոխությունների մասին պատկերացում է տալիս աղյուսակ 15-ը: Ընդհանուր առմամբ նահանգի բնակչությունը 1912-1916 թթ. հիմնականում աճել է, սակայն 1914 թ.՝ 1912-ի համեմատ, 2,8 հազ. մարդով նվազել էր առաքելական և ուղղափառ հայերի թիվը: Սակայն 1916 թ. առաքելականների թիվն ավելացել էր 7.9 հազարով, իսկ ուղղափառների ու այլ հավատքի հայերի թիվը նվազել էր 1.4 հազարով: Հայ բնակչության մեջ գերակշիռ մեծամասնություն են կազմել առաքելականները, նշված տարիներին նրանց տեսակարար կշիռը 95%-ից բարձր է եղել: Նահանգի բնակչության մեջ առաքելականները նշված տարիներին հարաբերական ցուցանիշներով երրորդն էին՝ մահմեդականներից և ուղղափառներից հետո, միջինը՝ 9.3%: Մահմեդականները միջին հաշվով կազմել են նահանգի բնակչության 72.5%-ը, իսկ ուղղափառները՝ 11.3%-ը: Քրիստոնյա բնակչության թիվը 1912-1916 թթ. ավելացել էր 3.3 հազարով, սակայն տեսակարար կշիռը նվազել էր՝ 22.8-ից 21.2%, իսկ մահմեդականների պարագայում և՛ թիվն էր ավելացել, և՛ տեսակարար կշիռը՝ 72.3%-ից հասել էր 73.4%-ի: Մահմեդական քրդերի և եզդի

¹ Տե՛ս ԿԿ 1913 թ., Тифлис, 1912, отд. IV, с. 128-131, 188-195; ԿԿ 1915 թ., Тифлис, 1914, отд. II, с. 218-225; ԿԿ 1917 թ., Тифлис, 1916, отд. II, с. 178-185:

քրդերի թվաքանակի կտրուկ փոփոխությունները, մեր կարծիքով, պայմանավորված է նրանց քոչվորական կենսակերպով, այսինքն՝ կենցաղավարող ակտիվ տեղաշարժերով:

Ստորև բերված աղյուսակ 16-ի տվյալները ընդհանուր պատկերացում են տալիս 1886-1906 թթ. նահանգի հայ բնակչության թվի շարժընթացի և տեսակարար կշռի փոփոխությունների մասին: Նահանգի հայ բնակչության 20-ամյա զարգացումները ցույց են տալիս, որ մեծ հոսքեր են գրանցվել դեպի նահանգի քաղաքներ ու գյուղական բնակավայրեր, ինչը վկայում են ներկայացված վիճակագրական տվյալները:

Աղյուսակ 16

Բաքվի նահանգի հայ բնակչության թվի շարժընթացը և տեսակարար կշիռն ամբողջ բնակչության մեջ 1886-1906 թթ.¹

Վարչական միավորներ	Նահանգի բնակչության թիվը	Այդ թվում՝ հայ բնակչության թիվը	Հայ բնակչության բաժինը (%)	Նահանգի բնակչության թիվը	Այդ թվում՝ հայ բնակչության թիվը	Հայ բնակչության բաժինը (%)
	1886 թ.			1906 թ.		
1. Բաքվի գավառ	54801	-	-	108531	4119	3.8
ք. Բաքու	86611	24490	28.3	222412	51340	23.1
<i>Ընդամենը</i>	<i>141412</i>	<i>24490</i>	<i>17.3</i>	<i>330943</i>	<i>55459</i>	<i>16.7</i>
2. Գյոքչայի գավառ	76002	12790	16.8	113626	15633	13.7
Գյոքչայ	642	189	29.3	4184	550	13.4
<i>Ընդամենը</i>	<i>76644</i>	<i>12979</i>	<i>16.9</i>	<i>117810</i>	<i>16183</i>	<i>13.7</i>
3. Լենքորանի գավառ	105118	-	-	148029	202	0.1
ք. Լենքորան	4222	273	6.4	9929	480	4.8
<i>Ընդամենը</i>	<i>109340</i>	<i>273</i>	<i>0.2</i>	<i>157958</i>	<i>682</i>	<i>0.4</i>
4. Ղուբայի գավառ	160184	-	-	165991	873	0.5
ք. Ղուբա	13917	833	5.9	16121	342	2.1
<i>Ընդամենը</i>	<i>174101</i>	<i>833</i>	<i>0.4</i>	<i>182112</i>	<i>1215</i>	<i>0.7</i>
5. Շամախիի գավառ	94380	11902	12.6	119012	15482	13.0
ք. Շամախի	22139	3962	17.9	22786	1775	7.8
<i>Ընդամենը</i>	<i>116519</i>	<i>15864</i>	<i>13.6</i>	<i>141798</i>	<i>17257</i>	<i>12.2</i>
6. Զավաթի գավառ	82566	-	-	97747	367	0.3
Սալյան	12121	-	-	13574	78	0.6
<i>Ընդամենը</i>	<i>94687</i>	-	-	<i>111321</i>	<i>445</i>	<i>0.4</i>
Ընդամենը նահանգում	712703	54439	7.6	1041942	91241	8.7
Այդ թվում՝ քաղաքներում և ավաններում	139652	29747	21.3	289006	54565	18.8

¹ См. у ССДНЗКИПС, 1886 г., б/ с.; Карта Кавказского края с показанием густаты армянского населения, Баку, 1908 г. (М 1: 840 000):

Նշված ժամանակահատվածում հայ բնակչությունն աճել էր 67.6%-ով, կամ տարեկան միջին աճը կազմել էր 3.4%, իսկ ամբողջ նահանգում՝ 46.2%, կամ տարեկան միջինը՝ 2.3%: Նման ցուցանիշներն ավելի շատ պայմանավորված էր միգրացիայի դրական բարձր հաշվեկշռով, մասամբ նաև՝ բնական աճով: 1873 թ. քաղաքային հայ բնակչության 82.4%-ը բաժին է ընկել Բաքու քաղաքին, իսկ 1906 թ. այն կազմել է շուրջ 77%: Նահանգի քաղաքային հայ բնակչությունը 20 տարում աճել էր 83.4%-ով, իսկ քաղաքային ամբողջ բնակչությունը՝ 106.9%-ով կամ 2 անգամ: Այլ էր պատկերը գավառներում. եթե նահանգի գյուղական ամբողջ բնակչությունն աճել էր 31.4%-ով, ապա գյուղական հայ բնակչության աճը կազմել էր 48.5%:

Որոշակի տարածքի բնակչության ցուցանիշներից է նաև մարդաշատությունը, այլ կերպ ասած՝ 1 քառ. կմ-ում ապրող մարդկանց թիվը, որն անվանում են խտություն: Բաքվի նահանգի բնակչության խտության 48-ամյա շարժընթացը ցույց է տալիս, որ բնակչության խտությունը բոլոր գավառներում միայն աճել է. այսպես՝ Ջավաթի գավառում՝ 5 անգամ, Բաքվի գավառում՝ 3.8, Գյոքչայի՝ 2.6 անգամ:

Այսպիսով, Բաքվի նահանգի բնակչության ժողովրդագրական 48-ամյա զարգացումների վերլուծությունը ցույց տվեց, որ նահանգի կազմավորման առաջին տասնամյակում բնակչության վերարտադրության գործընթացում առավել կարևոր դեր է խաղացել բնական շարժը: Այլ էր պատկերը 1880-ականներից մինչև 1916 թ., երբ միգրացիայի սալդոյի դրական բարձր հաշվեկշիռը հետին պլան մղեց բնական շարժով պայմանավորված ցուցանիշները: Նահանգի գրեթե կեսդարյա ժամանակաընթացքում (1868-1916 թթ.) բնակչության թիվն ավելացել է 2.6 անգամ կամ 163.5%-ով, տարեկան միջին աճը կազմել է 3.4%: Այս ընթացքում աճի բարձր ցուցանիշներ են արձանագրվել 1868-1886 թթ.՝ 46.5%, կամ տարեկան միջին աճը կազմել է 2.6%, 1897-1916 թթ.՝ 55%, կամ՝ 2.9%, իսկ 1886-1897 թթ. ընդամենը գրանցվել է 1.4% աճ:

Զգալի փոփոխության է ենթարկվել նաև բնակչության էթնիկ և դավանական կազմը. էթնոդավանական տարբեր հանրությունների զանգվածային ներգաղթի հետևանքով ավելանում էր ոչ միայն նրանց թիվը, այլև ստվարանում էր կազմը: Ուսումնասիրվող ժամանակահատվածում բնակչության էթնիկ կազմում գերակշռող էին թյուրքալեզու հանրությունները, որոնք 1873-1897 թթ. աճել են 1.6 անգամ, հայերը՝ 1.8, իսկ ռուսները՝ 4 անգամ: Դավանական կազմի առումով 1897-1916 թթ. ընթացքում մահմեդականներն աճել են 1.3 անգամ, իսկ հայ առաքելականներն ու ռուս ուղղափառները՝ 2.4 անգամ:

Աղյուսակ 17

**Բաքվի նահանգի բնակչության խտությունը ըստ գավառների
1868-1916 թթ.¹**

Գավառներ	Տարածքը (կմ ²)	1868	1873	1886	1897	1908	1912	1914	1916
Բաքվի	3934.2	10.5	11.2	13.9	18.0	17.6	39.8	40.4	40.5
Գյոքչայի	3509.2	14.6	17.2	21.8	33.5	35.6	37.2	37.7	38.2
Լենքորանի	5423.6	15.8	16.7	19.4	22.5	23.5	27.7	28.2	34.2
Ղուբայի	7170.3	17.6	18.7	22.3	23.4	23.1	23.2	23.8	23.9
Շամախիի	7784.8	10.6	9.3	12.1	13.1	16.1	16.5	16.8	17.2
Ջավաթի	11195.3	2.9	6.3	8.4	8.0	9.3	9.8	11.8	14.5
Ընդամենը	39017.4	10.8	12.1	15.0	17.2	18.4	21.6	22.5	24.2

**Гамлет Саркисян – Этнодемографические процессы Бакинской губернии
в 1859-1916 гг.**

В 1859 г. была сформирована провинция Баку (создана как Шамахская провинция в 1846 г.), которая являлась одной из 4-х провинций Закавказья. Здесь сформировался многонациональный состав населения, большую часть их составляли тюркоязычные этнические группы, по вероисповеданию мусульмане, весь период полувековых исследований они составляли более 70% населения. До 80-х годов XIX века одним из важных факторов воспроизводства населения являлось естественное движение, дальнейшее развитие сложившихся капиталистических отношений способствовало миграции населения прежде всего из села в промышленные центры, стимулируя рост численности городского населения. Высокими темпами роста в этнических сообществах выделялись русские и армяне.

Hamlet Sargsyan – The Ethno-demographic Processes in Baku Province in 1859-1916

Baku province was founded in 1859 (after the formation in 1866 as the province of Shamakhi) as one of the four provinces of the Russian Transcaucasia. The majority of the multi-ethnic population of the province were Turkic-speaking groups that were Muslims, accounting for more than 70% of the population for half a century.

The main increase in the population until the 1880s was a natural increase, which contrasted with the influx of migratory waves mainly into urban areas as a result of the development of capitalist relations and the exploitation of oil resources. Immigration to the province quickly increased the number of urban population. Among those immigrants of a later period, a large number of Armenians and Russians were registered.

¹ Տե՛ս ԿԿ և ԿԿ 1870 թ., Թիֆլիս, 1869, թ. 406-407; ԿԿ 1881 թ., Թիֆլիս, 1880, տ. II, Միջնորդ, թ. 22; ԿԿ 1882 թ., Թիֆլիս, 1881, տ. II, թ. 323; ՏԾՆՀԿԻՍ, 1886 թ. 6/հ; ՄԿՆԻՐԻ, 1897, թ. 52-53; ԿԿ 1910 թ., Թիֆլիս, 1909, տ. IV, թ. 432-435; ; ԿԿ 1913 թ., Թիֆլիս, 1912, տ. IV, թ. 140-147; ԿԿ 1915 թ., Թիֆլիս, 1914, տ. IV, թ. 218-225; ԿԿ 1917 թ., Թիֆլիս, 1916, տ. IV, թ. 178-185:

ԳԵՐՄԱՆԱՑԻ ՄԻՄԻՈՆԵՐՆԵՐԻ ՈՐԲԱԽԱՄ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ XIX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՄԻՆ

Բանալի բառեր – Յոհաննես Լեփսիուս, Էռնեստ Լոհման, Օսմանյան կայսրություն, Խարբերդ, Մեզրե, մարդասիրական օգնություն, գերմանացի միսիոներներ, «Գերմանական առաքելությունը Արևելքում», որբանոց

XIX դարում թուլացած և անկման ուղի բռնած Օսմանյան կայսրության ներքին գործերին միջամտելու համար արևմտյան մեծ տերությունների ձեռքին գործիք դարձան նաև կայսրության փոքրամասնությունները: Իրենց դիվանագիտական ներկայացուցիչների միջոցով, պաշտպանելով միսիոներների շահերը՝ սկսեցին լայն թափով տարածել բողոքականությունն Օսմանյան կայսրության ազգային փոքրամասնությունների շրջանում: Թեև միսիոներների գործունեության սկզբնական փուլում նրանց նպատակը քրիստոնեության տարածումն էր այլակրոնների շրջանում, սակայն հաստատվելով Օսմանյան կայսրությունում՝ նրանք սկսեցին քարոզչություն իրականացնել նաև քրիստոնյաների՝ շրջանում¹:

Բողոքականության տարածումը պարարտ հող է գտնում արևմտահայության շրջանում՝ պայմանավորված նրա իրավական, քաղաքական և սոցիալ-տնտեսական ծանր կացությամբ: Ինքնին հասկանալի է, որ Օսմանյան կայսրության սոցիալ-տնտեսական իրավիճակը իր կնիքը թողեց ոչ միայն թուրք, այլև հատկապես հպատակ քրիստոնյա ժողովուրդների վրա: Այդուհանդերձ, միայն այդ պայմանները չէին, որ բողոքական քարոզիչների համար հնարավորություններ էին ստեղծում ծավալելու իրենց գործունեությունը²: Գլխավոր պատճառը արևմտահայերի զգալի մասի իրավագրկությունն էր: Կրոնական այդ ուղղությանն անդամակցածները սին հույսեր էին փայփայում, թե կկարողանան պաշտպանվել օսմանյան հալածանքներից:

* Բողոքականությունը քրիստոնեության հիմնական ուղղություններից է: Քրիստոնեական մյուս ուղղություններից այն տարբերվում է գլխավորապես նրանով, որ առաջադրում է Աստծո հետ մարդու անմիջական կապի սկզբունքներ՝ առանց եկեղեցու և հոգևորականության միջնորդության:

¹ Տե՛ս **Սիմավորյան Ա., Հովյան Վ.**, Հայ կաթոլիկե և ավետարանական համայնքները Թուրքիայում. Ժամանակակից միտումներ, Երևան, 2012, էջ 76:

² Ավելի մանրամասն տե՛ս **Գևորգյան Ս. Բ.**, Բողոքականության տարածման պատճառները արևմտահայության շրջանում XIX դարի վերջին և XX դարի սկզբին // «Լրաբեր հասարակական գիտությունների» (այսուհետև «ԼՀԳ»), 2013, թիվ 2, էջ 88-94:

Կրոնական տարաբնույթ համայնքների առաջացումը ձեռնտու էր հենց օսմանյան կառավարությանը, քանի որ այդ քայլով արևմտահայությունը երկփեղկվում էր, բաժանվում ազգային եկեղեցուց, ինչից առաջին հերթին տուժում էր ազատագրական շարժումը: Հատկանշական է, որ ավետարանական միությունների ձևավորումը՝ տեղի ունեցավ XIX դարի 60-ական թվականներին, երբ սկսվեց ազգային հալածանքների նոր փուլը: Դա դարձավ այն պատճառներից մեկը, որոնք առաքելադավան հայերի մի մասին դրդեցին ընդունելու բողոքականությունը՝ խուսափելով ազգային ճնշումներից¹: Սա ձեռնտու էր նաև օսմանյան կառավարությանը, քանի որ թուլացնում էր արևմտահայերի միասնությունը:

Սակայն կաթոլիկ և բողոքական հայերին առանձին կարգավիճակ հասկացնելն ունեցավ բացասական հետևանք նաև Օսմանյան կայսրության համար: Սուլթանական կառավարության՝ առաջին հայացքից նպաստավոր թվացող պայմաններից, այն է՝ հպատակ քրիստոնյաների շրջանում բողոքականության տարածումից, օգտվեցին բողոքական միսիոներները, որոնք սկսեցին միջամտել օսմանյան կառավարության ներքին գործերին²: Սկզբնական շրջանում, չնայած միսիոներների ներդրած նյութական զգալի միջոցներին և զանազան կրթական ու այլ հաստատությունների հիմնադրմանը, նրանց չհաջողվեց ձեռք բերել զգալի թվով համակիրներ²: Սակայն իրավիճակը փոխվեց XIX դարի 90-ական թթ.՝ Աբդուլ Համիդ II-ի կազմակերպած ջարդերի ժամանակ: Կոտորածներից փրկված ծնողագուրկ երեխաների մի մասի խնամքը իրենց վրա վերցրին բողոքական միսիոներները, որոնք սկսեցին նրանց դաստիարակել բողոքականության ոգով:

Օսմանյան կայսրությունում Աբդուլ Համիդի կողմից արևմտահայության նկատմամբ իրականացվող կոտորածների հետևանքով ակտիվ գործողություններ սկսեցին իրականացնել նաև գերմանացի միսիոներները: Սկզբնական շրջանում գերմանական հասարակությունը անտեղյակ էր համիդյան կոտորածներին, սակայն սկսած 1895 թ. աշնանից՝ հայկական ջարդերի մասին իրական տեղեկությունները թափանցում են Գերմանիա՝ շնորհիվ մամուլի և հասարակական որոշ շրջանների: Բացի տեղեկությունների տպագրությունից՝ որոշ պարբերականներ սկսում են իրենց էջերում «Հայաստանի համար» կամ «Հայ որբերի համար» ֆինանսական օժանդակության կոչեր

* 1847 թ. նոյեմբերի 15-ի սուլթանական հրովարտակով Օսմանյան կայսրությունում բնակվող բողոքականները ճանաչվեցին որպես առանձին կրոնական համայնք, իսկ մինչ այդ՝ 1830 թ., նման կարգավիճակ էին ստացել նաև հայ կաթոլիկները:

¹ Տե՛ս **Ղանկարյան Տ.**, Հայ բողոքականներ // «21-րդ դար», 2010, թիվ 4, էջ 39:

^{**} Նման միջամտությունները կամ թափանցումները հայտնի են «փափուկ» դիվանագիտություն անվամբ:

² Տե՛ս **Տերոյան Վ.**, Միսիոներաբարեգործական կազմակերպությունների աշխատանքը Մերձավոր Արևելքում և Անդրկովկասում, Երևան, 2008, էջ 5:

տեղադրելով նվիրատվություններ հավաքել¹: Այս մարդասիրական շարժման մեջ իր ուրույն տեղն ունի Մայնի Ֆրանկֆուրտի Քրիստոսի եկեղեցու քահանա Էռնեստ Լոհմանը: Վերջինս 1896 թ. փետրվարի 2-ին «Für Alle» պարբերականում հանդես է գալիս հայերին ֆինանսական օգնություն ցույց տալու կոչով: Հավաքված հանգանակությունը տարեվերջին կազմում է 265,000 մարկ²: Շուտով Լոհմանին իրենց օգնությունն են առաջարկում մի շարք անհատներ, որոնց թվում էր Յոհաննես Լեփսիուսը: Քանի որ Գերմանիայում կոտորածների մասին լուրերը խիստ հակասական էին, այդ խնդրով հետաքրքրվողների մոտ ցանկություն առաջացավ անձամբ մեկնել Օսմանյան կայսրություն և տեղում ծանոթանալ իրավիճակին: Այդ գործը ստանձնում է Լեփսիուսը: Ճանապարհորդությունը ձեռնարկելուց առաջ նա այդ մասին տեղեկացնում է գերմանական ավետարանական շարժման մի քանի ղեկավարների: Ավետարանական միության նախագահ իշխան Անդրեաս ֆոն Բեռնշտորֆը նրան տրամադրում է 10000 մարկ՝ տուժածներին օգնություն ցուցաբերելու և որբեր հավաքագրելու համար³: Այդ գումարով Լեփսիուսը Թալասում և Ուռհայում հավաքագրում է երեխաներ և իր վեցշաբաթյա ճանապարհորդության ընթացքում հիմնադրում «Գերմանական առաքելությունը Արևելքում» ընկերության առաջին երկու որբանոցները⁴:

Լեփսիուսի վերադարձից հետո՝ 1896 թ. հուլիսի 2-ին, Մայնի Ֆրանկֆուրտում գումարվում է ժողով, որտեղ նա ներկայացնում է Օսմանյան կայսրությունում տիրող իրավիճակը: Հենց նույն օրը պաշտոնապես հիմնադրվում է «Հայաստանի օգնության գերմանական միությունը» (այսուհետև ՀՕԳՄ)՝ Բեռլին՝ և Ֆրանկֆուրտ՝ կենտրոններով: Այդ երկու ընկերություններն ունեին բազմաթիվ ճյուղեր, որոնք սփռված էին ամբողջ Գերմանիայում, իսկ այն տարածքներում, որտեղ չկային մասնաճյուղեր, գործում էին հատուկ մասնավոր անձինք, որոնք համարվում էին կոմիտեների ներկայացուցիչներ:

1896 թ. օգոստոսի վերջին լույս տեսավ Լեփսիուսի «Հայաստան և Եվրոպա» խորագրով գիրքը⁵, որի շնորհիվ գերմանական հասարակությունը

¹ Տե՛ս **Մարտիրոսյան Հ.**, Գերմանական միսսիոնական գործունեությունն Օսմանյան կայսրությունում. Մարաշի կայանը (1896-1919 թթ.), գիրք Ա, Երևան, 2016, էջ 30:

² Տե՛ս **Ժամկոչեան Բ.**, Պատմություն Մամիսբեթ Իլ Ազիզի Գերման որբանոցներու, Պէրյուրթ, 1973, էջ 14:

³ Տե՛ս **Հայրունի Ա. Ն.**, Յոհաննես Լեփսիուս հայանվեր գործիչն ու հրապարակախոսը, Երևան, 2001, էջ 14:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 15:

* Բեռլինի կենտրոնը ղեկավարում էր Գերմանիայի արևելյան-հյուսիսային մասնաճյուղի ընկերությունը, որի նախագահ ընտրվեց Ա. Ֆոն Բեռնշտորֆը:

** Ֆրանկֆուրտում գործող կենտրոնը ղեկավարում էր հարավարևմտյան մասնաճյուղը, որի նախագահն էր Է. Լոհմանը: Լեփսիուսը իր ցանկությամբ դարձավ Բեռլինի կոմիտեի քարտուղար:

⁵ Տե՛ս **Lepsius J.**, Armenien und Europa. Eine Anklageschrift wider die christlichen Grossmächte und ein Aufruf an das christliche Deutschland, 2-te Aufl., Berlin-Westend, 1896.

ստացավ հավաստի տեղեկություններ հայկական կոտորածների մասին¹։ Զանազան հասարակական գործիչներ և հոգևորականներ ակտիվ գործունեություն ծավալեցին։ Նրանք, հատկապես հոգևորականները, իրենց հրապարակային ելույթներում ներկայացնում էին արևմտահայության ծանր վիճակը։ Վերջիններս կազմակերպում էին դրամահավաք, կազմում կոչեր, հեռագրեր՝ ուղղված Գերմանիայի կայսր Վիլհելմ II-ին և գերմանական հասարակությանը։ Այդ ակտիվ գործունեության արդյունքը եղավ այն, որ նրանք կարողացան կազմակերպել օգնություն արևմտահայերի համար²։

1896 թ. օգոստոսի 28-ին Մայնի Ֆրանկֆուրտում տեղի է ունենում ՀՕԳՄ-ի երկրորդ համաժողովը, որտեղ վճռվում է բոլոր հնարավոր միջոցներով սկսել լայնածավալ տեղեկատվության տարածումը և հանգանակությունների կազմակերպումը։ Որոշվեց նաև խնամակալության տակ վերցնել 400 որբերի և պահել Խարբերդում, Մարաշում և Վանում վարձակալած տներում, իսկ Կոստանդնուպոլսի Սկյուտար թաղամասում գերմանական օժանդակությամբ որբանոց բացել³։

Հայ որբերին օգնություն ցուցաբերելու ևս մեկ միջոց էր նրանց տեղափոխումը Գերմանիա և ՀՕԳՄ անդամների ու համակիրների կողմից նրանց պատսպարումը⁴։ 1896 թ. նոյեմբեր և դեկտեմբեր ամիսներին հայ որբերի երկու խումբ տեղափոխվում է Գերմանիա, որոնցից առաջինում ընդգրկված երեխաների թիվը հասնում էր 25-ի։ Նրանց հիմնականում տեղավորեցին Վիլհելմսդորֆում՝ Յ. Ցիգլերի գիշերօթիկ դպրոցում⁵։

Որոշ ժամանակ անց կոմիտեները բաժանվեցին և սկսեցին գործել ինքնուրույն։ Բեռլինի կոմիտեն գործում էր «Գերմանական արևելյան առաքելություն» (այսուհետև ԳԱԱ) անվամբ, իսկ Ֆրանկֆուրտի կոմիտեն վերանվանվեց «Արևելքում քրիստոնեական բարեգործության գերմանական օգնության միություն»։ Ֆրանկֆուրտի կոմիտեն ստանձնել էր Խարբերդում, Մարաշում, Վանում և Կոստանդնուպոլսում, իսկ Բեռլինի կոմիտեն՝ Դիարբեքիրում և Ուտհայում, ինչպես նաև Իրանում և Բուլղարիայում իրականացվող աշխատանքների ղեկավարումը։ Այս կոմիտեների բաժանման հիմնական պատճառներից մեկն այն է, որ Բեռլինի կոմիտեն, ի տարբերություն Ֆրանկֆուրտի կոմիտեի և բարեգործական աշխատանքներ վարող այլ կազմակերպությունների, իր առջև խնդիր էր դրել ոչ թե ավետարանի քարոզումը, այլ «ավե-

¹ Տե՛ս **Հայրունի Ա. Ն.**, նշվ. աշխ., էջ 17։ Ըստ Հերման Գուլցի գնահատականի՝ այս գրքի հրատարակությունը Լեփսիոսին դարձնում է «եվրոպական մեծություն»։ Տե՛ս **Գուլց Հ.**, Գերմանիայի և Հայաստանի միջև. դոկտոր Յոհանես Լեփսիուս (1858-1926) // «Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր», 2002, թիվ 5, էջ 129։

² Տե՛ս «Մուրճ», 1899, թիվ 11-12, էջ 1450։

³ Տե՛ս **Մարտիրոսյան Հ.**, նշվ. աշխ., էջ 32։

⁴ Տե՛ս **Հայկ Վ.**, Խարբերդ եւ անոր ոսկեդէն դաշտը, Նիւ Եորք, 1959, էջ 477։

⁵ Տե՛ս **Մարտիրոսյան Հ.**, նշվ. աշխ., էջ 33։

տաքանի պահանջների իրագործումը»¹: Այսինքն՝ Ֆրանկֆուրտի կոմիտեն, մարդասիրական աշխատանքին զուգահեռ, ակտիվ քարոզչություններ էր ծավալում թե՛ որբանոցներում, թե՛ բնակչության շրջանում՝ նպատակ ունենալով ձևավորել բողոքական համայնքներ: Իսկ Լեփսիուսը, հակառակը, գտնում էր, որ «Արևելքում մեր աշխատանքում բոլոր պարագաներում պետք է խուսափել քարոզչության որևէ փորձից կամ նույնիսկ միտումից.... Քանի որ մենք բարոյական իրավունք չունենք լուսավորչական ծնողների որբացած երեխաներին օտարացնել իրենց եկեղեցուց....»²:

1897 թ. հունվարի 13-14-ը Բրեմենում կայացավ Բեռլինի և Ֆրանկֆուրտի մասնաճյուղերի ժողովը, որին մասնակցում էին նաև Հայաստանի շվեյցարացի բարեկամներն ու Կայզերվերթի, Բիլեֆելդի, Վեստֆալիայի, Հեսենի և այլ ենթակոմիտեների ներկայացուցիչները: Համաժողովում կանոնակարգվեցին օգնության կազմակերպման հիմնական սկզբունքները: Մասնակիցների համոզմամբ՝ իրենց կատարած աշխատանքի առաջնային և կարևոր հարցն այն էր, որ հարկ էր պահանջել օսմանյան կառավարությունից դադարեցնել հալածանքները և ստեղծել խաղաղ իրադրություն, այլապես օգնության գործը կդառնար անիմաստ աշխատանք: Նրանց համար կարևոր խնդիր է դառնում ջարդերից տուժած և ընկճված հայությանը ընձեռել ինքնօգնության հնարավորություն և իրենց քարուքանդ երկրում աշխատանք գտնել նրանց համար: Լեփսիուսի ջանքերով մեծ արհեստանոց է կառուցվել Ուոհայում: Տղամարդկանց և կանանց բաժանում էին նյութեր ու գործիքներ, որպեսզի արտադրեին գորգեր, կարպետներ և ասեղնագործություններ: Այս աշխատանքները տանում էին Եվրոպա, վաճառում, իսկ ստացված գումարներով օգնում որբերին: Նույնիսկ եվրոպական երկրներում կազմակերպվում էին ցուցահանդեսներ, և վաճառքից ստացված գումարներն ուղարկվում հայերին: Ընկերությունը գտնում էր, որ պետք է ոչ միայն բոլոր ջանքերը նպատակաուղղել առանձին տառապյալներին կամ որբերին, այլև ձեռք մեկնել ամբողջ ժողովրդին, գրկանքների դեմ պայքարել հենց կոտորածների շրջաններում, որ քրիստոնյա ժողովուրդը պահպանվի իր բնօրրանում: Հարկավոր էր պայմաններ ստեղծել, որպեսզի արևմտահայերը կարողանային վերականգնել իրենց տները, սերմացու և գործիքներ տրամադրել նրանց աշխատելու և եկամուտ ստանալու համար: Օգնությունը պետք է իրականանար և վերահսկվեր եվրոպացիների կողմից: Ընկերությունը նպատակ ուներ Թուրքիայի սահմանամերձ երկրներում ապաստանած փախստականներին, որոնք ևս գտնվում էին ծայրահեղ կարիքի և թշվառության մեջ, նույնպես հնարավորինս օգնություն ցուցաբերել:

Կես տարում բոլոր ենթակոմիտեների հավաքած գումարը կազմել է 631.000 մարկ, որն ուղարկվում է Կոստանդնուպոլսում գտնվող «Միջազգա-

¹ **Հայրունի Ա. Ն.**, Յոհաննես Լեփսիուսի առաքելությունը, Երևան, 2002, էջ 68:

² Նույն տեղում, էջ 71-72:

յին օգնության կոմիտեին»: Դրա նախագահը Մեծ Բրիտանիայի դեսպանն էր, որը Թուրքիայում ապրող վստահելի եվրոպացիների միջոցով բաշխում էր օգնությունը¹:

Ֆրանկֆուրտի կոմիտեի առաջին միսիոներներն Օսմանյան կայսրություն են մեկնում 1896 թ. վերջին: Կոստանդնուպոլսում գերմանացի միսիոներներ բժիշկ Ֆ. Հեդլենը, ուսուցիչ Յոհ. Էհմանը և գյուղատնտես դ-ր Մ. Ցիմները այցելում են Գերմանիայի դեսպանատուն՝ ներկայացնելով իրենց մարդասիրական գործունեության ծրագիրը: Դեսպանատանը փորձում են նրանց ետ պահել կարիքի մեջ գտնվող արևմտահայությանը օգնության ձեռք մեկնելու մտքից՝ համոզելով չմտնել մահվան խավարի մեջ: Մակայն Ֆ. Հեդլենը տալիս է հետևյալ պատասխանը. «Մենք պատրաստ ենք առանց Գերման կառավարութեան պաշտպանութեան ճամբորդելու»²: Այսինքն՝ նրանք ստիպված են լինում հավաստել, որ իրենք սեփական պատասխանատվությամբ են այդ քայլին դիմում:

Այսպես սկզբնավորվում է գերմանացի միսիոներների ամենակարևոր ու անհրաժեշտ՝ որբախնամ գործունեությունը: 1896 թ. վերջին Ուռհայի որբանոցում որբերի թիվը հասնում էր 200-ի³: Գերմանացի միսիոներները ակտիվ գործունեություն էին ծավալում նաև Խարբերդում և Մալաթիայում: Սկզբնական շրջանում նրանք աշխատում էին այդ բնագավառում ավելի վաղ հաստատված ամերիկացի միսիոներների օգնությամբ: 1896 թ. նոյեմբերի 28-ին ամերիկյան առաքելությունից տիկին Լին տեղեկանում է, որ գերմանացի միսիոներները 250 լիրա օգնություն են հատկացնում Մարաշում 50 որբերին խնամելու համար: Վերջիններս երկկողմ ծնողագուրկ էին՝ 5-ից 12 տարեկան: 25 տղաներից 17-ը Մարաշից էին, 8-ը՝ մոտակա գյուղերից: 25 աղջիկներից 13-ը Մարաշից էին, 12-ը՝ գյուղերից⁴: Մարաշի որբերից 70-ին տեղափոխում են Երուսաղեմ՝ Շնեյլերի անունը կրող գերմանական որբանոց, որտեղ նրանք, ուսումից բացի, զբաղվում են նաև արհեստներով՝ կոշկակարությամբ, երկաթագործությամբ, աստղձագործությամբ, բրուտագործությամբ և այլն: Իսկ 40 երեխայի տեղափոխում են Բեյրութ, Իզմիր (Զմյուռնիա), Ամասիա և այլուր⁵: 1897 թ. դրությամբ Մարաշում կար գերմանացի միսիոներների հովանու տակ գործող երեք որբանոց՝ 130 որբով, որոնցից 100-ը՝ աղջիկ, իսկ 30-ը՝ տղա⁶:

Ընկերությունները որբերին պատսպարելու մի յուրօրինակ մոտեցում

¹ Տե՛ս **Հայրունի Ա. Ն.**, Յոհաննես Լեփսիուս հայանվեր գործիչն ու հրապարակախոսը, էջ 22-23:

² **Հայկ Վ.**, նշվ. աշխ., էջ 475:

³ Տե՛ս **Հայրունի Ա. Ն.**, նշվ. աշխ., էջ 25:

⁴ Տե՛ս **Մարտիրոսյան Հ.**, նշվ. աշխ., էջ 37:

⁵ Տե՛ս **Տեր-Վաթական Յ.**, Մարաշի ջարդը 1920-ին եւ պատմական համառոտ ակնարկ մը իր անցեալին վրայ, Երուսաղեմ, 1927, էջ 37:

⁶ Տե՛ս **Մարտիրոսյան Հ.**, նշվ. աշխ., էջ 38:

էին որդեգրել. այն անհատը, ով կարող էր վճարել երեխայի մեկ տարվա ծախսերի համար նախատեսված գումարը, այդ ընտանիքը հեռակա որդեգրում է երեխային և դառնում նրա «հոգացող հայրը կամ մայրը»¹: Երբեմն այդ երեխաները նամակագրական կապ ունեին իրենց հեռակա ծնողների հետ, իսկ ծնողներն իրենց հերթին միսիոներներից տեղեկություններ էին ստանում իրենց «որդեգրած երեխայի» մասին:

1896 թ. վերջին ԳԱԱ ընկերության ջանքերով որբանոցներ հիմնվեցին նաև Դիարբեքիում, Խոյում և Վառնայում, որտեղ հանգրվանել էին անմխիթար վիճակում գտնվող տասնյակ հազարավոր հայ փախստականներ: Բուլղարիայում ապաստանած հայ փախստականների վիճակին ծանոթանալու և նրանց օգնություն կազմակերպելու համար 1896 թ. դեկտեմբերին Բեռլինի կոմիտեի հանձնարարությամբ այնտեղ է մեկնում ավետարանական քահանա Աբրահամ Ամիրխանյանը: Վերջինս Բեռլինի կոմիտեի հատկացրած միջոցներով Ռուսչուկում, Վառնայում և Շումլայում լայնածավալ օգնություն է կազմակերպում: Հիմնում է նաև հասարակական ճաշարաններ, կարիքավորներին հատկացնում հագուստ, տղամարդկանց բաժանում գյուղատնտեսական գործիքներ, երիտասարդներին սովորեցնում արհեստներ: Ապահովվում էր նաև անվճար բուժզննում: Վառնայում հիմնում է որբանոց, որտեղ, բացի որբերից, պատսպարվում էին նաև անապահով և աղքատ ընտանիքների երեխաներ²: ԳԱԱ ընկերությունը կազմակերպում է նաև Բուլղարիայից հայրենիք մեկնել ցանկացողների վերադարձը:

Ֆրանկֆուրտի կոմիտեի կողմից որպես ներկայացուցիչ Կոստանդնուպոլիս է մեկնում կոմսուհի Գրեբենը: Վերջինս հաստատվում է Սկյութարում և կարճ ժամանակ անց իր տանը պատսպարում շուրջ քառասուն հայ որբերի, իսկ ընկերության հանձնարարությամբ հիմնվում է որբանոց Բոսֆորի ափին գտնվող Բեբեկ գյուղում: Շուտով որբերի թիվն այստեղ հասնում է 100-ի: Գերմանական լրագրում նշվում է, որ որբանոցում երեխաները սովորում են կրոնագիտություն հայ քահանաներից³: Սակայն Մարբուրգի ուսանողները, «Արձագանք» թերթում անդրադառնալով Բեբեկի որբանոցի գերմանական լրագրի տեղեկությանը, նշում են, որ որբանոցի բոլոր ուսուցիչները բողոքականներ են: Ուսումը մեծ մասամբ գերմաներեն է, իսկ կրոնագիտությունը՝ բողոքական: Որբանոցում կրոն դասավանդել են պաստոր Բրոկսը, Օր. Մ. Լիվդիկը, օրիորդ Ռիֆկոհլը և օրիորդ Մանիկ Մալխասյանը: Վերջինիս ծնողները եղել են առաքելական, հետո ամերիկացի միսիոներների ազդեցությամբ ընդունել են ավետարանականությունը, իսկ ինքը՝ օրիորդը, սովորել է բողոքական

¹ Տե՛ս «Մուրճ», 1899, թիվ 11-12, էջ 1455:

² Տե՛ս **Հայրունի Ա.**, Յոհաննես Լեփսիուսը եւ հայ գործիչները // «Էջմիածին», 2013, թիվ Դ, էջ 63:

³ Տե՛ս «Արձագանք», 1897, թիվ 129, էջ 1:

ուսումնարանում¹: Մենք հակված ենք կարծելու, որ հայ ուսանողի տեղեկությունը ավելի ճշգրիտ է: Փաստորեն գերմանական լրագրում տեղ գտած տեղեկությունները բխում են իրենց իսկ շահերից, քանի որ Ֆրանկֆուրտի կոմիտեի նպատակը բողոքականության տարածումն էր հայերի մեջ:

Օտար որբանոցներից աչքի է ընկնում նաև Սալմաստի՝ Ղալասար գյուղի գերմանական որբանոցը, որը նույնպես ԳԱԱ հովանու տակ էր: Այս որբանոցում պատսպարվում էին 60-ից ավելի որբեր: Սակայն շուտով այստեղ վիճաբանություններ առաջացան տնօրեն Միհրան Պաղտասարյանցի և վերատեսուչ Բերմանի միջև: Որբանոցի բարերար Լեփսիուսը քննիչ է ուղարկում և միաժամանակ հրամայում տնօրենին թողնել զբաղեցրած պաշտոնը: Տնօրենը հեռանալով այնուամենայնիվ կոչ է անում՝ հանուն հայ ժողովրդի գոյատևման հեռու պահել հայ երեխաներին նման «անխիղճ ճանկերից»²: Փաստորեն, այս ամենը ապացուցում է, որ չնայած գերմանացի միսիոներների գործունեության դրական կողմին, որի նպատակը հայ ժողովրդին սատարելն էր, բողոքական միսիոներները հետապնդում էին այլ շահեր ևս՝ արևմտահայության շրջանում բողոքականության տարածումը:

1897 թ. հունիսի 1-ից Խարբերդում գործող գերմանացի միսիոներները առանձնանում են ամերիկացիներից և սկիզբ դնում իրենց գործունեությանը: Նրանք որոշում են հաստատվել Խարբերդում, քանի որ, ըստ բազմաթիվ օտարերկրացի միսիոներների և հյուպատոսների տրամադրած տեղեկությունների, Խարբերդում ավերվել էին հայկական մեծ թվով բնակավայրեր: Կարմիր խաչ կազմակերպության աշխատակից Ջ. Հաբելը 1896 թ. օգոստոսի 1-ին Կլարա Բարտոնին ուղղած տեղեկագրում գրում է, որ Խարբերդը տուժել է առավել, քան որևէ այլ տարածք: Ըստ այդ տեղեկագրի՝ Խարբերդում թալանված կամ ամբողջությամբ ավերված բնակավայրերի թիվը հասնում էր շուրջ 200-ի³: Խարբերդում կար 45.000 սովյալ, որոնցից 20.000-ը որբեր էին, իսկ 15.000-ը՝ այրիներ⁴: Ի վերջո որպես գործունեության հիմնական վայր ընտրվում է Խարբերդ նահանգի վարչական կենտրոն Մեզրեն: 1897 թ. գարնանը ամերիկացի միսիոներների օգնությամբ ՀՕԳՄ-ի Ֆրանկֆուրտի կոմիտեն Մեզրեում երկու շենք է վարձակալում և հունիսին այնտեղ տեղափոխում Խարբերդում գտնվող որբերին⁵: Մեզրեի կայանում որբախնամ աշխատանքների համար հատկացվում է 9 տուն: Հարկ է նշել, որ վերջինիս կազ-

¹ Տե՛ս նույն տեղում, 1897, թիվ 151, էջ 1:

² «Արաքս», 1898, գիրք Ա, էջ 164:

³ Տե՛ս **Բաբլումյան Ա.**, Խարբերդի նահանգի հայ ազգաբնակչությունը համիդյան կոտորածների տարիներին // «Ցեղասպանագիտական հանդես», 2014, թիվ 2, էջ 32:

⁴ Տե՛ս «Արարատ», 1897, փետրվար, էջ 63:

⁵ Տե՛ս **Մարտիրոսյան Հ.**, «Հայաստանի օգնության գերմանական միության» հիմնումը և նրա առաջին քայլերը Մեզրեում (1897-1908 թթ.) // «Պատմաբանասիրական հանդես» (այսուհետև՝ «ՊԲՀ»), 2013, թիվ 1, էջ 57:

մում էին ընդգրկված նաև մոտակա Հյուսենիկ և Փերչենձ գյուղերի ենթակայանները: Արդեն 1898 թ. Մեզրեի կայանում պատսպարվում էին 280 երեխա, Փերչենձի ենթակայանում՝ 40, իսկ Հյուսենիկում՝ 20 երեխա¹: Որքանոցներում երեխաները բաժանվում են 25-հոգանոց խմբերի, որոնք կոչվում են «ընտանիքներ»: Յուրաքանչյուր «ընտանիք» ղեկավարվում էր մի հայ աշխատակցուհու կողմից, որն իր աշխատանքի դիմաց վարձատրվում էր: Ավագ տարիքի երեխաների համար գործում էին արհեստանոցներ:

1898 թ. նոյեմբերի 28-ին Մեզրեում տեղի է ունենում նորակառույց՝ «Բեթելի» որքանոցի բացումը, որտեղ ապաստանում էր 50 աղջիկ²: 1899 թ. դրությամբ Մեզրեի տղաների «Վեստաֆալական որքանոցում» կար 134 երեխա: Այնտեղ աշխատում էին Էհման ամուսինները, հինգ «մայրիկներ», հինգ հայ ուսուցիչ և երեք հայ արհեստավոր: 1900 թ. նոյեմբերի 1-2-ին որքանոցը տեղափոխում են նորակառույց շենք, որը ստանում է «Էբեն-Էցեր» անվանումը, և որտեղ տղաների թիվը համալրվել էր 150-ով³:

Կոտորածներից փրկված հայությանը անհրաժեշտ էր նաև բժշկական օգնություն: Տարածված էր տարբեր տարափոխիկ հիվանդություններ՝ տիֆ, ճահճատենդ (մալարիա), կարմրուկ, քութեշ և այլն: Գերմանացի միսիոներները, այդ ամենը հաշվի առնելով, Մեզրեում սկզբնական շրջանում վարձում են բնակարան և կահավորում հիվանդանոցին համապատասխան: Իսկ 1902 թ. կառուցում են նոր ու ժամանակակից հիվանդանոց և տալիս «Գերմանական Եփրատ հիվանդանոց Սիլոնահ» անվանումը: Վերջինիս կից գործում էր նաև դեղատուն⁴:

Գերմանացի միսիոներները Արևմտյան Հայաստանում վարձակալած 7 տներում պահում էին 500, Զմյուռնիայի Կայերսվերթ որքանոցում՝ 116, Երուսաղեմի ասորական որքանոցում՝ 50, Բեթղեհեմում՝ 20 որբերի⁵:

1896 թ. սեպտեմբերից մինչև 1899 թ. արևմտահայերի օգնության համար Գերմանիայում հավաքվում է 1.800.000 մարկ, որից տարեկան ծախսվում է մոտ 350.000 մարկ⁶:

Ըստ Լեփսիոսի հրատարակած տեղեկագրի՝ մինչև 1897 թ. մայիսի 1-ը հայ որբերի օգտին ստացվել է.

1. Բեռլինի կենտրոնական հանձնաժողովը հավաքել է 350.000 մարկ (մոտ 170.000 ռուբլի) և պահում է 600 որբ, որոնք ապաստանել են

¹ Տե՛ս նույն տեղում:

² Տե՛ս **Մարտիրոսյան Հ.**, Գերմանական միսիոներական գործունեությունն օսմանյան կայսրությունում. Մարաշի կայանը (1896-1919 թթ.), էջ 41:

³ Տե՛ս **Մարտիրոսյան Հ.**, «Հայաստանի օգնության գերմանական միության» հիմնումը և նրա առաջին քայլերը Մեզրեում (1897-1908 թթ.), էջ 58:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 60:

⁵ Տե՛ս «Արարատ», 1897, թիվ 2, էջ 64:

⁶ Տե՛ս «Մուրճ», 1899, թիվ 4-5, էջ 546:

Ուրֆայում, Կեսարիայում, Ուրմիայում և Վառնայում:

2. Ֆրանկֆուրտի հանձնաժողովը հավաքել է 300.000 մարկ (մոտ 140.000 ռուբլի) և հիմնել է 4 ապաստարան՝ 320 որբերով: Դրանք գտնվում էին Բեբեկում (Բոսֆորի եզերքի վրա), Խարփուրում, Վանում և Մարաշում:
3. Զմյուռնիա-Բեյրութ-Երուսաղեմի որբանոցների հանձնաժողովը հավաքել է 250.000 մարկ և Զմյուռնիայի, Բեյրութի և Երուսաղեմի որբանոցներում պահում է 150 որբերի:
4. և 5. Բելֆելդի և Շտուտգարդի հանձնաժողովները հավաքել են 103.000 մարկ: Գերմանացի ընտանիքների խնամքին են հանձնել 60 որբ:
6. Սիրիական որբանոցը հավաքել է 48.000 մարկ և Երուսաղեմում պահում է 90 որբ:
7. Բեթլեհեմի որբանոցը հավաքել է 21.000 մարկ և պահում է 30 որբ:

1897 թ. մայիսի 1-ի դրությամբ ընդհանուր առմամբ գերմանական նպաստներով պահվում էին 14 որբանոց՝ 1250 հայ որբ, իսկ հավաքված ընդհանուր գումարը կազմում է 1.072.000 մարկ կամ մոտ կես միլիոն ռուբլի¹:

1899 թ. դրությամբ Բեռլինի կոմիտեի կողմից հիմնվել է 9 որբանոց, որտեղ պահվում է 654 երեխա², իսկ Ֆրանկֆուրտի կոմիտեի կողմից՝ 22 որբանոց՝ 1077 որբերով³:

Այս ամենից զատ՝ պետք է հաշվի առնենք, որ կա 65 որբ, որոնց կեցությունը հոգում էին նրանց հյուրընկալած գերմանական ընտանիքները⁴:

Այսպիսով, չնայած Գերմանիան, սկսած XIX դարի վերջից, եղել է Օսմանյան կայսրության դաշնակիցը և աջակցել կատարված ոճրագործություններում, այնուամենայնիվ գերմանական հասարակությունը, հաշվի չառնելով իր պետության դիրքորոշումը և հարուցած դժվարությունները, իրականացրել է իր մարդասիրական գործունեությունը՝ օգնության ձեռք պարզելով մահվան ճիրաններում գտնվող հայ ժողովրդի որոշ հատվածին: Չի բացառվում նաև, որ նա հետապնդում էր այլ նպատակներ՝ հայերի մեջ տարածել բողոքականությունը, բայց, այնուամենայնիվ, տվյալ ժամանակաշրջանում նրանց օգնությունը արևմտահայության համար կարևոր էր: Մեծ մարդասեր Յոհաննես Լեփսիուսը հայ ժողովրդի մեծագույն ողբերգությունների և կորուստների տարիներին (1895-1926) անգնահատելի ներդրում ունեցավ կոտորածների վերքերի սպիացման և մազապուրծ հայության բեկորների վերընձյուղման գործում: Նա, անտեսելով իր պետության դիրքորո-

¹ Տե՛ս «Մշակ», 1897, հունվարի 7, էջ 1:

² Մանրամասն տե՛ս «Մուրճ», 1900, թիվ 1, էջ 63: Տե՛ս նաև «Տարազ», 1901, թիվ 4, էջ 35:

³ Մանրամասն տե՛ս «Մուրճ», 1900, թիվ 1, էջ 64-65: Տե՛ս նաև «Տարազ», 1901, թիվ 4, էջ 35: Միայն այստեղ Ֆրանկֆուրտի կոմիտեի հիմնած որբանոցների թիվը նշվում է 25:

⁴ Տե՛ս «Տարազ», 1901, թիվ 4, էջ 35: Տե՛ս նաև «Մուրճ», 1900, թիվ 1, էջ 64-65:

շումը, միաժամանակ դարձավ հայ ժողովրդի դատապաշտպանը: Դրա վառ օրինակն էր Սողոմոն Թեղերյանի դատավարությունը: Լեփսիոսն իր ընդարձակ զեկույցում պարզաբանումներ էր կատարում նաև Հայկական հարցի շահարկումների և մեծ տերությունների երկդիմի դիվանագիտական խաղի վերաբերյալ, որոնց պատճառով Թալեաթի և իր կուսակիցների կողմից ծրագրավորվեց և առանց խոչընդոտի իրականացվեց արևմտահայության բնաջնջումը: Բացի այդ՝ Լեփսիոսը դատարանին ներկայացրեց աքսորի վերաբերյալ Օսմանյան կայսրության մարզային իշխանություններին Թալեաթի ուղարկած հեռագրերը, որոնք անհերքելիորեն ապացուցում էին արևմտահայության բնաջնջման ծրագրված լինելը: Լեփսիոսի այս ելույթը կարևոր նշանակություն ունեցավ արդար դատավճռի կայացման գործում:

Лилит Косян – *Деятельность немецких миссионеров по уходу за сиротами во второй половине XIX века*

Во второй половине XIX века распространение протестантизма находит плодородную почву в Западной Армении в связи с тяжелым политико-правовым и социально-экономическим положением западных армян. В начальный период, несмотря на значительные материальные средства, вложенные миссионерами, и основание различных образовательных и других заведений, им не удалось приобрести единомышленников в большом количестве. Однако ситуация изменилась во время организованной Абдул-Гамидом резни в 1890-ых гг. В этот период свою деятельность стали осуществлять и немецкие миссионеры. Для организации ухода за сиротами они официально основали «Немецкий союз помощи армянам» с центрами в Берлине и Франкфурте. На положение от 1 мая 1897 г. ими содержится в общей сложности 14 детских домов (1250 армянских сирот), общая собранная сумма составила 1.072.000 марок или около полмиллиона рублей. Несмотря на то, что в этот период помощь немецких миссионеров была действительно гуманистическим шагом по отношению к армянскому народу, тем не менее, тем самым они преследовали свои дальние цели – воспитать армянских сирот в духе протестантизма.

Lilit Kosyan - *Activities of German Missionaries for the Care of Orphans in the Second half of the XIX Century*

In the second half of the XIX century, Protestantism became widespread in Western Armenia due to the heavy legal, political and socio-economic situation of Western Armenians. Initially, despite the considerable amount of material investments and the establishment of various educational and other institutions, they were not able to obtain a significant number of supporters. However, the situation changed in the 1890's during the massacres organized by Abdul Hamid. During this period, the German missionaries also began their activities. For the organization of activities for the care of orphans, they officially form "The German Aid Society for Armenian Relief", which had its centers in Berlin and Frankfurt. As of May 1, 1897 14 orphanages and 1250 orphans were kept on German allowances, and the total amount raised was 1,072,000 marks or about half a million rubles. Despite the fact that the assistance of German missionaries in this period was a truly humane act for the Armenian people, they pursued their long-term goals – to raise Armenian orphans in the spirit of Protestantism.

**ՀԱՅ-ՔՐԴԱԿԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՎԵՃԵՐԸ ՎԱՆԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ 1908-1914 ԹԹ.
ԵՎ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ**

***Բանալի բառեր** - հողագրկում, հողային հանձնաժողովներ, հողային հարց, հողային վեճեր, հողատեր, Վանի նահանգ, քրդեր*

Հողային հարցը ամենաարմատական և ամենավտանգավոր հարցերից էր Օսմանյան Թուրքիայի հայաբնակ նահանգներում, քանի որ արևմտահայ գյուղացիության գլխավոր հարստությունը հողն էր: Դեռևս նախահամիդյան ժամանակներից սկսած՝ քուրդ շեյխ Ջալալեդդինի հոր՝ շեյխ Սաֆադուլլահի կողմից մշակվեց և գործողության մեջ դրվեց հողային մի քաղաքականություն, որի նպատակն էր տեղահան անել կայսրության հայկական նահանգների հայ ազգաբնակչությանը և նրանց զրկել իրենց պատկանող անտառներից, մարգագետիններից ու վարելահողերից¹: Հողային հարցն ավելի սրվեց 1879 թվից հետո²: Այս ամենից ելնելով հասկանալի է դառնում 1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո Վանի նահանգում հողային բազում խնդրահարույց հարցերի և Վանի հայության հողագրկման խնդիրների կարևորությունը:

Օսմանյան խորհրդարանի Մուշի երեսփոխան Գ. Կարապետյանը ևս նկատում էր, որ հողային վեճերի առիթով հայ և քուրդ ոչ բոլոր հողագործերն էին միմյանց դեմ լարված³: Վանի նահանգում հողերի մեծ մասը քրդերը ձեռք էին բերել օրինական ճանապարհով, ուստի վերադարձնելու ոչ մի հիմք չկար: Բանն այն էր, որ «գուլումի» տարիներին, երբ հայերը որոշում են գաղթել երկրից, նրանցից շատերը դիմում են քրդերին և ընդամենը ճանապարհածախս ձեռք բերելու համար, չնչին գումարով և պարզ մուրհակով գրավ են դնում իրենց հողերը՝ պայմանով, որ քուրդը շահագործի հողերը պարտք վերցրած գումարի տոկոսի փոխարեն մինչև մայր գումարի վճարումը: Ինչ խոսք, քուրդը ջանացել է մուրհակում նշել հողի գնից շատ ավելի մեծ գումարներ, որպեսզի հնարավոր չդարձնի պարտքի վճարումը և հետագա-

¹ Տե՛ս **Սաաունի Կ.**, Քիւրտ ազգային շարժումները եւ հայ-քրտական յարաբերութիւնները (ԺԵ դարէն մինչեւ մեր օրերը), Պէրուլք, 1969, էջ 198:

² Տե՛ս Свящ. Бекгульянц Р. (Съверьянин), По Турецкой Армении. Впечатления от поездки летом в 1914 году, Ростов на Дону, 1914, с. 84:

³ Տե՛ս **Տէր-Կարապետեան Գ.** (Մուշի երեսփոխան), Հողային հարցը հայաբնակ նահանգներում մէջ, Կ. Պոլիս, 1910, դեկտեմբերի 10, էջ 5:

յում կարողանա հողերին տիրանալ: Իսկ կառավարությունը հայերից պահանջում էր հողերի տուրքը, որը քրդերը չէին վճարել և, ըստ էության, աճելով հասել էր հողերի բուն արժեքին: Գաղթողներից շատերը պարտքեր ունեին նաև անհատներին, երկրագործական բանկին կամ կառավարական գանձարանին: Նրանց հեռանալուց հետո պարտատերերը դատարան դիմելու հայցադիմում էին ստացել, որով այդ հողերը վաճառվել էին քրդերին չնչին գումարներով: Տեղացի և ազդեցիկ քուրդ կամ թուրք հողատերերը կարողացել էին կառավարական պաշտոնյաների հետ գործարքի մեջ մտնել և զանազան կեղծ փաստաթղթերով կամ կաշառքներով իրենց անունով փոխել գաղթական հայերի թողած ընդարձակ հողերը: Քրդերից շատերը, հողերի որոշ մասը բաժնետերերից գնելով, մյուս հատվածները ևս բռնագրավել էին՝ կառավարությանը կեղծ վկայաթղթեր ներկայացնելով:

Երիտթուրքական սահմանադրության հռչակումից հետո հայությունը, օգտվելով քաղաքական ազատություններից, Արևմտյան Հայաստանի բոլոր անկյուններում, այդ թվում և Վանում, միջոցներ ձեռնարկեց վերականգնելու իր հողային դարավոր իրավունքները: Կ. Սասունին նշում է, որ «հայուն համար Սահմանադրութիւնը անիմաստ ազատութիւն մը պիտի ըլլար, եթէ ան չկրնար տէր դառնալ իր հողերուն..., իսկ քիւրտ ցեղապետը պահ մը կը հաշտուէր Սահմանադրութեան անուանական ազատութեան հետ, եթէ հայերը իրենց հողերը ետ չուզէին...»¹:

Երիտթուրքական կառավարությունն իր հերթին միջոցներ է ձեռնարկում հայերին վերադարձնելու այն կալվածքները, որոնք 1890-ական թվականների կոտորածներից հետո թե՛ հին վարչակարգը և թե՛ քրդերը խլել էին նրանցից²: Հայությունը մինչև 1913 թ. սպասեց, որ կառավարությունն իրականացնի հողային խնդիրները լուծելու իր «հանդիսավոր» հանձնառությունները և չդիմեց մեծածավալ ընդվզումների:

Սակայն նախքան հողային խնդրահարույց խնդիրների կարգավորմանն անցնելը անհրաժեշտ էր նաև արագ կազմակերպել երկրից հեռացած արևմտահայության վերադարձը: Այդ նպատակով Կովկաս գաղթած վասպուրականցիներին հայրենիք վերադարձնելու համար հայկական լրագրերում կոչով հանդես է գալիս Զավեն վ. Տեր-Եղիանը: Ուրախություն հայտնելով կառավարության որդեգրած քաղաքականությանը՝ նա 1908 թ. սեպտեմբերի 9-ին հեռագրում է Թիֆլիս արևմտահայերի գաղթականական հանձնաժողովին, որում տեղեկացնում է, թե սկսել է գալթած բոլոր հողերի վերադարձը նախկին տերերին: Այդ մասին հեռագրում մասնավորապես նշվում է. «Ուրախութեամբ իմանալով, որ Թիֆլիսի մէջ արդէն յանձնաժողով մը կազմւած է գաղթականաց վերադարձը դիւրացնելու նպատակաւ, կը յորդորեմք

¹ Սասունի Կ., Քիւրտերու եւ հայերու ազատագրական շարժումներու փուլերը եւ անոնց փոխարաբերութիւնները // «Հայրենիք», 1930, թիվ 10, էջ 55:

² Տե՛ս «Մշակ», 1908 թ. սեպտեմբերի 11, թիվ 199:

բոլոր Վասպուրականի գաղթականները՝ որ փութան վերադառնալ քանի դեռ ձմեռ չի հասած, վստահ ըլլալով որ իրենց գրաւեալ հողերը շուտով պիտի վերադարձնեն իրենց և թէ իրենց վերադարձն իսկ պիտի փութացնէ քիրդերու վտարումը: Իսկ ճանապարհներն ալ ապահով ու հանգիստ են: Իսկ գալով գաղթականաց գետեղման գործին, որովհետև շատերու հողերը գրաւ են, և կարօտութիւն ունեն եզի, երկրագործ-գործիքներու, մինչև իսկ ձմեռայ պարէնի, թէև անոնց գետեղման համար մասնաժողով մը կազմուած է Վանի մէջ և անոր տրամադրութեան ներքն դրած է Թիֆլիսի հանգանակիչ յանձնաժողովէն Վանայ սովելոց համար տեղոյս ռուս հիւպատոսարանն ղրկուած 10.000 ֆրանքի գումարը, բայց որովհետև պէտքի մեծութեան հանդէպ դա շատ անբաւական գումար մը է, ուստի յորդոր կը կարդամք տեղոյդ գաղթականաց յանձնաժողովին և բոլոր բարեգործ մարմիններու և ազգայիններու, որպէս զի ուշադրութիւն դարձնեն այս ամենակարևոր խնդրոյ վրայ և իրենց նպաստներով դիւրացնեն գաղթականաց թէ վերադարձը և թէ մանաւանդ գետեղման դժարին գործը, ու միջոցները ընծայեն մեզ օգնութիւններ հասցնելու վերադարձողներուն, որով կարող ըլլան ապրել և գործել ցանկալի հայրենեաց հողի վրայ:

Առաջնորդ տեղապահ Վանայ՝

Զաւէն վրդ. Տէր-Եղիայեան»¹:

Կովկասում ապաստանած վասպուրականցիները թերահավատությամբ էին վերաբերվում կառավարության խոստումներին, ուստի հայկական 20 գյուղերի ավելի քան 1000 տուն հայ գաղթականներ 19 պատվավոր հայերից բաղկացած պատվիրակություն են ուղարկում Վան՝ պարզելու, թե իսկապես այդ ամենը համապատասխանում է իրականությանը²:

Դժբախտաբար նրանց թերահավատությունը հիմքեր ուներ: Երբ նրանք հասնում են Արճեշ, որտեղ հանգրվանել էին 600 հեծյալ քուրդ-համիդիե զինվորներ, դիմում են տեղի կայմական Ֆերիդ փաշային՝ վերադարձնել իրենց այն հողերն ու կալվածքները, որոնց առանց որևէ իրավասության տիրացել էին քրդերը: Կայմականը հայերի խնդրանքը ներկայացնում է քուրդ Հայդերանլը Էմին փաշային: Վերջինս պատասխանում է, որ հայերը 13 տարի է, ինչ հեռացել են երկրից, ուստի և նրանց հողերն իրենք են մշակել: Իսկ ըստ երկրի օրենսդրության՝ հողատարածքը պատկանում էր նրան, ով տասը տարի շարունակ այն մշակում էր³: Էմին փաշային չէր հետաքրքրում, թե ինչու էին հայերը թողել իրենց հողերը և հեռացել, որովհետև համիդյան կոտորածների ժամանակ անձամբ ինքն էր կազմակերպել ավելի քան 5000 հայերի ջարդն Արճեշի գավառում: Ահա այս փաշան էր խոսում օրենքի

¹ Պատմության թանգարան, նոր պատմության վավերագրերի բաժնի մատյան (ՆՊ ԲՄ), թիվ 839, արկղ 2, գ. 142, թղթ. 11:

² Տե՛ս «Մշակ», 1908 սեպտեմբերի 23, թիվ 208:

³ Տե՛ս «Արև», 1908 դեկտեմբերի 28, թիվ 190:

անունից և չէր ճանաչում հայ գաղթականների օրինական իրավունքները:

Դեռ ավելին, Արճեշի Հուսեին, Էմին և այլ փաշաներն ու քուրդ բեկերը Կ. Պոլիս ուղարկած հեռագրում նշում էին. «Մենք քիւրդերս ընդունում ենք արդարութիւնը, իսկ ազատութիւն, հաւասարութիւն, եղբայրութիւն բնաւ չենք ընդունի»¹: Այս առարկությունը ընդունել տալու համար քրդերն առաջարկում էին գործարք՝ իրենց 1500 զինվորներով և ֆինանսական միջոցներով օգնել կառավարությանը պատերազմի ժամանակ²:

Հայ պատվիրակներին վիստեցնելու համար Արճեշի տեղական իշխանությունը Հայդերանլը Էմին փաշայի և այլ քուրդ ու թուրք բեկերի խորհրդով երկրագործական բանկում գրավ դրած հողային կալվածքները աճուրդի է հանում՝ էժան գներով քրդերին վաճառելու և հարցը օրինական ճանապարհով փակելու համար: Հայտնի է, որ դեռևս Աբդուլ Համիդ II-ի իշխանության տարիներին բազմաթիվ շինականներ, հնարավորություն չունենալով վճարել պետական հարկերն ու վաշխառուական պարտքերը, ստիպված էին փող վերցնել այդ բանկից՝ գրավ դնելով իրենց հողակտորները՝ արժեքի 1/10-ի չափով³: Ահա հենց այդ հողերն էր կառավարությունը աճուրդի հանում:

Երիտթուրքերը միաժամանակ գաղթական վասպուրականցիներին հայրենի երկրում ազատ ապրելու ապահովություն էին խոստանում: Մատթեոս կաթողիկոսին ուղղված Վանի առաջնորդական տեղապահ Զավեն վրդ. Տեր-Եղիյանի 1909 թ. հուլիսի 22-ի նամակում նշվում էր. «Օսմ. սահմանադրության հռչակվելէն հետո... հարց ծագեցավ հայ գաղթականներին վերադարձէն և անոնց քրդերէ գրավված հողերին խնդրին: ... Բայց վերադարձողներու թիվը դեռ շատ ցանցառ է, այնպէս որ վախ կա, թէ անոնց վերադարձի հապաղումով կառավարության ներկա լավ տրամադրությունները ու հոժարությունները ժամանակի ընթացքով փոխվին: ... Գաղթականներէն ոմանք, որոնք ցարդ վերադարձած են, գրեթէ առանց դժվարության արդեն տիրացած են իրենց հողերուն: Նահանգէն ներկա փոխ-կուսակալը մանավանդ լավ տրամադրություններով օժտված կերևի հողային խնդրոյն մեծ կարևորություն կուտա և մտածել է անձամբ երթալ Արճեշի ու Ալճավազի գավառները, ուսումնասիրելու հողային խնդիրը և անոր խորունկ ու արդար լուծում տալ: Այս պարագային գաղթականներու դանդաղկոտությունը... կարող են վտանգավոր լինել... եթէ նա չներկայանա ու չը պահանջի»⁴:

Վանի նահանգում հողային վեճերը կարգավորելու համար 1909 թ. հունվարին որոշվեց ստեղծել չորս հոգուց (երկու հայ և երկու թուրք) բաղկացած հատուկ հանձնաժողով՝ Խալիլ բեյի գլխավորությամբ, որի անդամներից էր

¹ «Մշակ», 1908 նոյեմբերի 14, թիվ 253:

² Տե՛ս նույն տեղում, նաև դեկտեմբերի 2, թիվ 267:

³ Տե՛ս «Մշակ», 1908 նոյեմբերի 14, թիվ 253:

⁴ Մատենադարան, Մաթևոս Իզմիրլյան կաթողիկոսի արխիվ, ցուցակ 34, թղթ. 14, վավ. 528:

Ջեմալ փաշան (ապագա ծովային նախարարը): Հանձնաժողովի աշխատանքներին մասնակցելու համար նա Սալոնիկից ժամանեց Ստամբուլ, սակայն հանձնաժողովը շուտով ցրվեց¹:

Հետագայում Վանի գավառական կենտրոններում զինվորական Թայյար բեյի նախաձեռնությամբ ստեղծվում են հայ-թուրք-քրդական համերաշխության կոմիտեներ: Միաժամանակ, կուսակալ Բեքիր-բեյի նախագահությամբ կազմվում է հանձնախումբ՝ հողային խնդիրները քննելու համար²: Քրդերը սարսափի մեջ էին՝ բռնագրավված հողերն իրենց նախկին տերերին՝ հայերին, վերադարձնելու և նրանց բոլոր բողոքներն ու գանգատները բավարարելու հեռանկարից: Այդ խառը հանձնաժողովները պետք է զբաղվեին նաև բարենորոգումների հարցով: Դատարաններն ու ոստիկանները շատ համակիր վերաբերմունք ցուցաբերեցին հայերի նկատմամբ և սկսեցին գործել: Հայերի դատը պաշտպանում էր Շամզիրանի շեյխ Իբրահիմի որդի Աբդուլ Գատերը, որը երկար ժամանակ Կ. Պոլսում իբրև աքսորական ապրելուց հետո 1908 թ. ընտրվել էր Օսմանյան խորհրդարանի պատգամավոր: Նա թերևս բոլոր թուրքերից և քրդերից ամենից անկեղծն էր և հույժ մտերիմ հարաբերություններ ուներ հայ ղեկավար շրջանների հետ³: Գնալով Վան՝ նա հետևյալ հեռագիրն է ուղարկում Ներքին գործերի նախարարությանը. «Քսանըթթը օր է ի վեր, մեր կուսակալութեան կեդրոնը՝ Վան եկայ: Մեր օրինական սահմանադրութեան լիապէս հաստատումին և վեճի առարկայ բոլոր խնդիրներուն բարձումին համար՝ կուսակալութեան շրջակայ բոլոր աշիրէթներուն և ցեղերուն պետերը և իսլամ ու քրիստոնէայ երեւելիները կանչելով ամէն տեսակ խրատներ տուի իրենց: Նոյնպէս ամսոյ 18 Երկուշաբթի օր տեղիս Միութեան և Յառաջադիմութեան քօմիթէին գլիւպին մէջ արուած ճառախօսութեան մը մէջ ցեղերու և աշիրէթներու պետերու, քրիստոնէայ հոգեւորականութեան և ետք իրենց մէջ որևէ անհամաձայնութեան տեղի չպիտի տան»⁴:

Այս ժամանակաշրջանում կառավարությունն ու դատական իշխանությունները ստիպված էին արդարության կողմը բռնել և հաստատել հայերի իրավունքները: Այդ էր պատճառը, որ սկզբնական շրջանում հայերը կարողացան ետ ստանալ այն հողերը, որոնք մինչև այդ խնդրո առարկա էին: Բայց զբաղված հողերի մեծ մասը համիդյան կառավարությունը օրինականորեն վավերացրել էր, և հայերի պահանջները դատական իշխանության կողմից համարվում էին անշրջելի:

¹ Տե՛ս ՀԱՄ, ֆ. 413, ց. 1, գ. 869, թ. 11:

² Տե՛ս «Հորիզոն», 1909 օգոստոսի 9, թիվ 7:

³ Տե՛ս **Երամեան Հ.**, Յուշարձան Վան-Վասպուրականի, հ. 2, Ալեքսանդրիա, 1929, էջ 120-121: 1925 թ. Ա. Գատերը՝ իբրև քրդական ապստամբության պարագլուխ, Շեյխ Սաքրի հետ կախաղան բարձրացվեց Տիգրանակերտում:

⁴ «Հայրենիք», 1909 հոկտեմբերի 30 / նոյեմբերի 12, թիվ 1513:

Բանն այն էր, որ քրդերի համար հողի խնդիրը «ցեղային սկզբունքայնության» հարց էր: Քրդական ցեղապետության սահմաններում հողը, որը մեծ մասամբ ամայի և անմշակ էր, պատկանում էր աշիրաթապետությանը: Բացի այդ, հողը ոչ միայն չէր վաճառվում, այլև քրդական ուրիշ ցեղի ներկայացուցիչներ իրավունք չունեին այդ տարածքներում ապրելու և նույնիսկ իբրև ճամփորդ անցնելու՝ առանց հանձնարարականների և ցեղապետի գիտության: Հայկական հողերի վերադարձման հարցում խնդիրը ստացավ սուր տեսք՝ ծնունդ տալով ազգային, կրոնական և տնտեսական հակամարտությունների, քանի որ «քիրդերու համար այս գործողութիւնը տարածականութեան հին սովորութիւն մէ, որ կը գործադրեն...»¹: Այսպիսի ծանր խնդիրը կարող էր լուծվել վարչական միջամտությամբ, պետական բացառիկ հրովարտակով: Սակայն թուրքական պետությունն այդ արմատական միջոցին չդիմեց, որի արդյունքում հայերն ու քրդերը տնտեսական պայքարում մնացին դեմ դիմաց:

Հաշվի առնելով հողային հարցի կնճռոտությունը մասնավորապես Վանում, Մուշում, Բիթլիսում, Բուլանըղում և Դիարբեքիում՝ Վանի և Մուշի երեսփոխանները Ներքին գործերի նախարար Թալեաթ Բեյին են մատուցում մի թագրիկ, որտեղ առաջարկվում էր. ա) հայ գաղթականներին վերադարձնել բոլոր այն հողերը, որոնք նրանց վաղեմի սեփականությունն էին, սակայն նախորդ կառավարության օրոք մուսուլման աղաների կողմից ապօրինաբար խլվել էին, բ) բոլոր «ռայա» գյուղերից հեռացնել բռնի բնակություն հաստատած աղաներին, բեյերին և նրանց ստորադասներին, որոնք իրենց բազում կեղեքումներով շարունակական պատուհաս էին ժողովրդի համար, գ) դատաստանի ենթարկել այդ գավառներում 1909 թ. մարտի 31-ի հեղաշրջման հակասահմանադրական բանսարկություններին, դ) գաղթականներին զերծ պահել «պագայանների» խստությամբ գանձվող հարկերից, ե) հարցերին լուծում տալու համար ստեղծել քննիչ մարմին: Թալեաթն իր հերթին հավաստիացնում էր, որ առաջարկներ է արել Նախարարների խորհրդին, և մոտ ժամանակներում որոշում կկայացվի²:

Շուտով նախարարապետ Հիլմի փաշան կայսերական իրադեով հաստատեց հողային հարցը կարգավորող հետևյալ որոշումը, որը 1910 թ. օգոստոսի 27-ին հեռագրով հաղորդվեց կուսակալություններին: Ըստ այդ որոշման՝ ա) երբ վիճելի անշարժ կալվածներին տիրանալու համար երկու կողմից միաժամանակ կալվածագիր ներկայացվի, առավելությունը տալ նախկին տիրոջը, եթե այն ըստ օրենքի և հոժարությամբ չի վաճառվել, բ) եթե կալվածագիր ունենա միայն մի կողմը, հողը հատկացնել նրան, գ) եթե երկու կողմն էլ կալվածագիր չունի, հողը հատկացնել տուրք վճարողին և այն

¹ **Շահպազեան Յ.**, Քիրդո-հայ պատմություն, Կ. Պոլիս, 1911, էջ 118:

² Տե՛ս «Ազատամարտ», 1909 օգոստոսի 31 / սեպտեմբերի 13, թիվ 69:

մշակողին: Նույն հրամանագրով բոլոր վիճելի հարցերը թողնվում էին վարչական ժողովներին և դատական որոշումներին¹:

Բացի այդ, կառավարության հրամանով նահանգի փոխկուսակալն անձամբ մեկնում է Արճեշի և Ալջավազի գավառները՝ ուսումնասիրելու հողային խնդիրը²: Վան են ժամանում Հուսեին և Էմին փաշաները: Տեղական կառավարությունը զինվորական մի գունդ է ուղարկում Ալջավազ՝ Հուսեին փաշայի գրաված գյուղերից քրդերին հանելու համար: Առանց դժվարության քրդերից դատարկվում են Վերին Սիփան, Անուշ-Աղբյուր, Ներքին Սիփան, Կոճերեր, Գյուզել, Բարկաթ, Խոռանց, Առեն, Առնչկուս, Արճա և Վիճկաց-ռուկ գյուղերը, և վերադարձվում են Երկրագործական բանկին, վաշխառու-ներին ու քուրդ բռնավորներին գրավ դրված հողերը: Գործին հաջող ընթացք տալու համար Թիֆլիսից ռուսական հյուպատոսարանի միջոցով ուղարկ-վում է 430 ոսկի³:

Հեղաշրջումից հետո երիտթուրքերը ոչ միայն չվերադարձրին, այլև վաճառեցին գրավյալ հողերը⁴ և շարունակեցին վարկավորել հայ գյուղացի-ներին նրանց հողերը գրավ վերցնելու պայմանով: Բանկը 100 ոսկի էմլաքի (գրավի) դիմաց 10 ոսկի էր վճարում, իսկ թուրքերին՝ 80, նույնիսկ 100 ոսկի: Միայն մեկ տարվա ընթացքում (1911-1912) նրանք Վանի նահանգում այդ նպատակով 137 հազար դուրուշ վարկ հատկացրին⁵:

Հայ գյուղացին, բանկից գումար վերցնելով, ստիպված էր լինում այնքան ձևակերպումներ կատարել ու միջոցներ ծախսել, որ հարկադրված էր լինում հողը քրդին կամ թուրքին ծախել՝ իր պարտքը փակելու համար⁶: Վարկի դիմաց բռնագրավված հողակտորները սովորաբար աճուրդի էին հանվում, իսկ գնողները հիմնականում աղաներն էին, քանի որ հայ գյուղացիները չէին համարձակվում մասնակցել աճուրդին: Արդյունքում ոչ մեկը տեր չդարձավ իր հողերին և կալվածքներին, որովհետև դրանց մի մասը վաճառվում է որպես «մահլիլ» (անտեր), իսկ մյուս մասը դիտվում է որպես «բեդելի միալ» (փոխարենը վճարված կամ նվիրված): Հայ գյուղացիների՝ գրավված հողերի համար կառավարությանը կամ դատարանին ուղղված դիմումները մնացին անարձագանք, որովհետև իրավունքը տրվում էր «միլիթարիպեին» (խնամակալին): Այդ մասին մենք պատկերացում ենք կազմում Բաշկալեի հայ-կական 15 գյուղերի գյուղապետերի (մըխթարների) ստորագրությամբ պատրիարքարանին ուղղված հեռագրերից. «Վանայ վիլայեթի Ադբակ

¹ Տե՛ս **Տեր-Կարապետեան Գ.** (Մուշի երեսփոխան), նշվ. աշխ., էջ 48:

² Տե՛ս Մատենադարան, Մաթնոս Իզմիրյան կաթողիկոսի արխիվ, ցուցակ 34, թղթ. 14, վավ. 528:

³ Տե՛ս «Մշակ», 1908 սեպտեմբերի 23, թիվ 208:

⁴ Տե՛ս «Բիւզանդիոն», 1908 նոյեմբերի 26, թիվ 3690:

⁵ Տե՛ս «Ազատամարտ», 1914 հունիսի 28, թիվ 1539:

⁶ Տե՛ս «Ազատամարտ», 1910 փետրվարի 21, թիվ 216:

գաւառակի մէջ բնակող 2000 տնուոր՝ 15-էն աւելի գիւղերու օսմանն ան քաղաքացի հայ ժողովուրդը բռնապետութեան ատեն հարստահարուած և ճնշուած ըլլալով, նոյն ատեն մեծ մասով իրենց հողերն ու կալուածները թողած և օտար երկիր գաղթած են: Երբ ասոնք լսեցին սահմանադրութեան հռչակուիլը և ազատութիւն տիրելը, իրենց հայրենի օճախները վերադարձան: Սակայն և ո՛չ մէկը կրցաւ տէր ըլլալ իր հողերուն և կալուածներուն, որոնց մէկ մասը մահլիւ նկատուած և ծախուած էր, մէկ մասը «պետէլի միսլ»-ով (իբր թէ «փոխարէնը վճարուած») ծախուած էր և կամ 80 տարի առաջ: Պաշգալէ Եէնիգլան գիւղին «այսինչ մարդուն նուիրուած է» ըսուելով վկաներ բերուած և օսմանն ան կառավարութենէն տրուած կալուածաթուղթերը ոչնչացուելով՝ նոր կեղծ թուղթեր տրուած են: Գիւղերէն ոմանց մէջ մուհաճիբները կը նեղեն բնիկները: Խեղճ գիւղացիներուն կողմէ գրաւուած հողերուն համար՝ կառավարութեան կամ դատարանին եղած դիմումները ապարդիւն կը մնան և իրաւունքը միշտ ոտնակոխ կ'ըլլայ: Ամէն տեղ իրաւունքը միութեալիպէին կը տրուի: Հարստահարուած ժողովուրդը յուսահատ, և զինքը սնուցանող հողէն զրկուած և այլևս կառավարութենէն յոյսը կտրած՝ կը պատրաստուի օտար երկիր գաղթել: Հետեւաբար կը խնդրենք անմիջական միջոցները փութացնել, Սահմանադրութեան և արդարութեան անունով»¹:

Կային նաև այլ օրինակներ: Այսպէս, Ալջավազի Կեազուխ գյուղում քրդերը եկել հաստատուել էին և նրա սահմաններում նոր բնակատեղի հիմնել: 1910 թ. հայերի բողոքի հիման վրա կառավարությունը քրդերին հեռացրել էր, իսկ տները քանդել: Որոշ ժամանակ անց քրդերը կառավարության իմացությամբ նորից վերադարձել էին և կրկին սկսել տներ կառուցել²: Իշխանության եկած իթիլաֆականները խոստացան «վիճելի» հողերը անվարձահատույց բաշխել հողագուրկ հայերին, որն առաջ բերեց քրդերի դժգոհությունը: Արդյունքում, վախենալով, որ քրդերի ելույթները կարող էին վերածվել հակակառավարական հուզումների, իթիլաֆական կառավարությունը 1912 թ. վերջին հրաժարվեց այդ ծրագրից:

1911-1912 թթ. իտալա-թուրքական պատերազմում կրած պարտության հետևանքով երիտթուրքերը հայտնվեցին քաղաքական ծանր պայմաններում: Նրանց հետ համագործակցությունը շարունակելու համար դաշնակցությունը ներկայացրեց իր պահանջները, որի լուսաբանմանը 1912 թ. անդրադարձել է արաբական «Ալ Թակադդում» պարբերականը «Հայերի պայմանները» հոդվածում: Ըստ այդ պահանջների.

1. Հարկավոր էր Արևելյան Անատոլիայի վիլայեթներում իրականացնել 1890 թ. ի վեր հայերից բռնագրավված տարածքների խնդրի ուսում-

¹ «Ազատամարտ», 1911 հուլիսի 3, թիվ 630:

² Տե՛ս «Մշակ», 1911 հունիսի 16, թիվ 127:

նասիրություն և այդ հոդերը վերադարձնել իրենց իսկական տերերին, ինչպես եղել էր մինչև 1890 թ.: Եվ այդ ամենը հնարավոր էր կյանքի կոչել միայն պետական նախկին փաստաթղթերով, որոնք կհավաստեին հայերի իրավունքները:

2. Մուսուլման գաղթականներին տրվող դրամական հատկացումները տրամադրել նաև նախկին վարչակարգի ճիրաններից օտար երկրներում ապաստան գտած, այնուհետև սահմանադրության ընդունումից հետո Օսմանյան կայսրություն վերադարձած հայերին:
3. 1890 թ. ի վեր հայկական նահանգներում բնակվող մուսուլման գաղթականներին տեղափոխել և բնակեցնել կայսրության նոր ազատ տարածքներում (օրինակ՝ Հյուսիսային Աֆրիկայում): Ոչ մի ազատ հող չպետք է մնար. գյուղին պատկանող անտառները, վարելահողերը և այլ հողատարածքները պետք է օգտագործվեին առանց արգելքների:
4. Պարտքի դիմաց կամ այլ պատճառներով հայկական գյուղերը բռնագավթած մարդկանց հեռացնել այդտեղից և ստեղծել հանձնաժողով՝ ուսումնասիրելու համար նրանց պահանջներն ու օրինականության աստիճանը դատարաններում:
5. Լուծում տալ հողային պահանջներին, որոնք բռնագավթել էին քուրդ աղաները 1890 թ. ի վեր: Առանց հողի մնացած քրդերին և հայերին պետք է հողակտորներ հատկացվեին պետական ազատ հողերից: Այդ գործընթացը պետք է իրականացվեր այնպես, որ քրդերին տրվեին այն հողատարածքները, որոնք նախկին բնակության վայրից գտնվում էին առնվազն ութ ժամվա հեռավորության վրա:
6. Հեռացնել ինչ-որ չափով տեղի բնակիչների հետ կապ ունեցած պաշտոնյաներին և նրանց փոխարեն նշանակել նոր՝ այդ շրջանների հետ առնչություն չունեցող անձանց, ինչպես նաև աստիճանաբար ավելացնել հայ պաշտոնյաների թվաքանակը, մինչև որ նրանց քանակն ուղիղ հարաբերական լինի տեղաբնիկ հայերի թվին¹:

Հաշվի առնելով հողային հարցի լուծման հրատապությունը՝ Կ. Պոլսում ռուսական դեսպան Գիրսը 1912 թ. նոյեմբերի 12-ին հաղորդում էր. «Ագրարային հարցը սրվում է օրեցօր: Հողերի մեծ մասը զավթվել ու զավթվում է քրդերի կողմից, և իշխանությունները ոչ միայն չեն արգելում, այլև անգամ հովանավորում ու աջակցում են այդ զավթումներին: Հողի հարցը սրվում է օրեցօր հատկապես այն պատճառով, որ թուրքական իշխանություններն ամենաանամոթ ձևով խրախուսում են քրդերի կողմից հայկական հողերի զավթումը՝ երբեմն ստիպելով հայերին ստորագրել իրենց հողերը զավթելու:

¹ Տե՛ս **Շադյան Մ.**, Հայկական հարցը Սիրիայի արաբալեզու մամուլում 1908-1914 թվականներին, Երևան, 2015, էջ 133-134:

թողների վրա վավերացնող ակտեր»¹:

1912 թ. դեկտեմբերի սկզբներին Ներքին գործերի նախարարությունը Արևմտյան Հայաստանի վեց նահանգների կուսակալներին ուղարկած հայքդական հարաբերությունների կարգավորման մասին հրահանգներից երեքում հատուկ ուշադրություն էր հրավիրում հողային հարցի կարգավորմանը, ըստ որի նախատեսվում էր կուսակալի նախագահությամբ կազմել մի հանձնաժողով, որում պետք է ընդգրկվեին մուֆթիներ, առաջնորդներ, քուրդ և հայ երևելիների երկուական ներկայացուցիչներ, դատարանի նախագահը և սպաներ: Հանձնաժողովը, հողի մասին քննություն կատարելով, պետք է կայացներ արդար որոշում, իսկ հողից զրկվող կողմին պետք է տրվեր կա՛մ դրամական հատուցում, կա՛մ որոշակի հողատարածք պետական հողից: Երկու կողմերն անդորրագրով պետք է հավաստեին իրենց գոհունակությունը որոշումից²:

Վանի առաջնորդական տեղապահ Սարաճյան արքեպիսկոպոսը Կ. Պոլսի Հայոց պատրիարքին ուղղված 1912 թ. դեկտեմբերի 27-ի պաշտոնական գրությամբ տեղեկացնում էր, որ նահանգապետ Բզգեթ փաշայի նախագահությամբ և իր, ինչպես նաև Գևորգ Ճիթեյանի, Ավետիս Երամյանի, երեք թուրքերի և մեկ զինվորական սպայի մասնակցությամբ կազմվել է հանձնաժողով՝ «քննելու և լուծելու համար ապօրինի կերպով գրաւուած հողերու խնդիրը»³: Սակայն հանձնաժողովի գործունեության սկզբնական փուլում ժողովուրդը թերահավատությամբ էր լցված և լուրջ արդյունք չէր ակնկալում: Բանն այն էր, որ կառավարությունը չէր կամենում քուրդ ավատապետների վրա խիստ միջոցներ գործադրել, քանի որ դա պատճառ կհանդիսանար քրդական խլրտումների, ուստի բարեկարգությունների հարցը շարունակ հետաձգվում էր:

Հաշվի առնելով խնդրի հրատապությունը՝ դաշնակցությունը կրկին առաջ քաշեց իր պայմանները: 1913 թ. «Ալ-Թակադդումը» «Դաշնակցություն կուսակցության պահանջները» վերնագրով հողվածում ներկայացնում է դաշնակցության ղեկավարներից Սաֆարյանի՝ օտարերկրյա թերթերից մեկին տված հարցազրույցը: Նա մատնանշում էր, որ հողային հարցը պետք է ուսումնասիրվի քաղաքական, տնտեսական, հասարակական տեսանկյուններից: Հայերը պահանջում են հողային օրենսգրքի միայն մեկ կետի իրականացումը, այն է՝ եթե մարդը ստիպված լքում է իր երկիրը և տասը կամ քսան տարի անց վերադառնում, ապա նրա հողերը պետք է նրան վերադարձվեն: «Այս օրենքը պետք է վերաբերի միայն հայերին, քանի որ քրդերը, թուրքերը և մյուս ազգերն այս հարցում որոշակի կանոնադրություն

¹ Сборник дипломатических документов. Реформы в Армении 26 ноября 1912 г. – 10 мая 1914 г., Петроград, 1915, с. 3, 11.

² Տե՛ս «Առաջամարտ», 1912 դեկտեմբերի 21-1913 հունվարի 3, թիվ 34:

³ «Ազատամարտ», 1913 հունվարի 16, թիվ 112, նաև «Մշակ», 1913 հունվարի 20, թիվ 14:

ունեն: Բացի այդ, հայկական գյուղերը հավասար վիճակում չեն՝ քրդական և թուրքական գյուղերի հետ համեմատած»¹:

Հայերի նկատմամբ հարստահարություններին ծանոթանալու և հողային կնճիռներին լուծում տալու համար նահանգի հաջորդ նահանգապետ Թահսին բեյի նախաձեռնությամբ կազմվում է մի հանձնաժողով²: Միաժամանակ նա շրջում է Աղբակ գավառում, որտեղ նրան հարյուրավոր հայեր դիմում են աղերսագրերով՝ վերադարձնել քրդերի բռնագրաված հողերը: Բանն այն էր, որ հողային խնդիրն ամենից սուր դրված էր Աղբակում, որտեղ բազմաթիվ հայկական գյուղեր տարիներ առաջ գրավել էին քուրդ բեկերն ու փաշաները, իսկ հայերը ճարահատյալ գաղթել էին Պարսկաստան³:

Օսմանյան սահմանադրության հրապարակումից հետո գաղթածների մի մասը վերադարձավ այն հույսով, որ իրենց հողերը հետ կստանան: «Բայց այդ կեղծ սահմանադրութիւնը Աղբակում գոնէ երբեք չէր այցելել», ուստի վերադարձողները նորից մնում են ձեռնունայն⁴:

Բանն այն է, որ նահանգապետ Թահսին բեյի միջնորդությամբ իշխանություններն Աղբակի Հասպստան, Էրեսան, Բուլ, Էրնկեան, Առակ, Բենկերտ, Պալլասուն, Փարս, Մակկավեն, Խառատուն և Պատկոն հայկական գյուղերում են բնակեցնում Պարսկաստանից գաղթած մահմադցի աշիրերին պատկանող քրդական ցեղը (60 տուն), որոնց նախատեսված էր տեղավորել գավառի եզրիական գյուղերում: Հայերը բողոքեցին և սպառնացին գաղթել, ինչպես եզդիները, սակայն մյութեսարիֆ Ջնդեթ բեյը նրանց պատասխանեց. «Ճանապարհը բաց է ձեր առաջ մինչև ջեհեննեմ, կարող էք գնալ»⁵:

Նույն ձևով Շիկակ աշիրեթի քրդերը (7 տուն) եկել և բնակություն էին հաստատել Աղբակ գավառի Էրդսուն գյուղում: Հայերը բողոքել էին, բայց Աղբակի իշխանությունները որոշել էին, որ քուրդ գաղթականները պետք է մնային նույն գյուղում⁶: Այսպես պատահեց նաև Ջեյնիս անունով մի հայկական գյուղի հետ: Շահբենդեր-գադե Մուստաֆա անունով մի ճարպիկ թուրք պաշտոնյա, մի քանի տարի վարելով կայմակամի կամ մյութեսարիֆի փոխանորդի պաշտոնները, Խոշաբ գավառում (Բաշկալե) իր անունով էր փոխել այդ գյուղի հողերը, բուն հողատերերին սեփականագուրկ արել և գյուղացիներին դարձրել իր մրիբաները: Հայերը, միամտաբար կարծելով, թե հեշտ է իրենց հողերը հետ խլել հափշտակողից, փորձում են բողոքել, սակայն անօգուտ, որովհետև թուրք աղան վարպետորեն վերացրել էր հին արձանագրությունները: Իսկ երբ սահմանադրության հռչակումից հետո

¹ Եսայան Մ., նշվ. աշխ., էջ 135:

² Տե՛ս «Մշակ», 1914 մարտի 26, թիվ 65:

³ Տե՛ս «Մշակ», 1914 ապրիլի 16, թիվ 79:

⁴ Տե՛ս «Մշակ», 1913 դեկտեմբերի 12, թիվ 276:

⁵ Նույն տեղում:

⁶ Տե՛ս «Մշակ», 1911 հունիսի 16, թիվ 127:

հայերը ցանկացան տեր դառնալ իրենց կորցրած իրավունքներին, նրա որդիները գյուղից դուրս քշեցին ամբողջ բնակչությանը¹: Դեռ ավելին, այն հայերը, որոնք համարձակվում էին բարձրաձայնել Աղբակի քրդերի անօրենությունները, ենթարկվում էին սպառնալիքների, ծեծի և հայիոյանքների:

1913 թ. վերջերին անգլիական պառլամենտի անդամ և Բալկանյան կոմիտեի նախագահ Նոյել Բաքստոնը, իր եղբոր՝ Հայկական կոմիտեի անդամ Հարոլդ Բաքստոնի և Բաֆֆու որդու՝ Արամ Բաֆֆու հետ այցելելով Աղբակի գավառ և տեսնելով այդ ապօրինությունները, հեռագրում է Ներքին գործերի նախարար Թալեաթ ֆեյին, բայց մնում անպատասխան²:

Աղբակի հայոց առաջնորդի գանգատներից հետո վալի Թահսին ֆեյը կազմում է նոր հանձնաժողով՝ նախագահությամբ հույն պաշտոնյա Քոզմետի Էֆենդիի և երկու հայի ու երկու քրդի անդամակցությամբ: Բայց հարցը դարձյալ լուծում չի ստանում³:

Հայ-քրդական հողային վիճաբանության ակնառու օրինակ է նաև Ավանց գյուղի դեպքը: Ավանց գյուղի հայերը, կոտորածից խուսափելու նպատակով, հարևան գավառներն էին գաղթել: Իսկ սահմանադրության հոչակումից հետո վերադառնալով՝ տեսնում են, որ իրենց հողերը կառավարությունը աճուրդի է հանել ու տուրքերի փոխարեն այն ծախել մի քուրդ աղայի: Հայերը, դիմելով դատարան, հաստատում են, որ իրենք պարտք չունեն կառավարությանը, և որ կառավարությունն իրավունք չունի հողերը վաճառել իրենց բացակայության ժամանակ: Ստացվում է մի վճռագիր, որով հաստատվում է, որ առքուվաճառքի գործարքն ապօրինի էր կատարվել, ուստի հարկ էր հողերը վերադարձնել նախկին տերերին, իսկ գումարը՝ գնողներին: Վճիռը հաստատում է Կ. Պոլսի վճռաբեկ դատարանը: Սակայն երբ հերթը հասնում է վճռագրի գործադրությանը, 35 կոտոր հողերից հայերին են հանձնում միայն երեքը՝ առարկելով, թե «ձեր դատավարութիւնը եղել է հողերը գնող քիւրդի (որ մեռած է լինում) որդիներից մէկի հետ միայն, իսկ միւս որդիների դէմ էլ առանձին բողոք պիտի յայտնել, իսկ մինչ այդ՝ միւս հողերը մնալու են նրանց ձեռքում»⁴:

Կարելի է միայն երևակայել հողագրկված հայերի հոգեվիճակը, որոնք հինգ տարի շարունակ մասնակցել էին դատավարությանը, ծախսել էին պարտքով վերցրած 30 ոսկի և այդ ամենի դիմաց ստացել էին միայն երեք արտ⁵:

Մեկ այլ օրինակ ևս: Ալջավազի գավառի Կեագուլս ու Ներքին Սիփան գյուղերում մի քանի տասնյակ քրդեր, օգտվելով հայերի հողերից ու արոտա-

¹ Տե՛ս «Մշակ», 1914 ապրիլի 12, թիվ 76, նաև 1911 թ. հունիսի 16, թիվ 127:

² Տե՛ս «Հորիզոն», 1913 դեկտեմբերի 4, թիվ 272:

³ Տե՛ս «Մշակ», 1913 դեկտեմբերի 12, թիվ 276:

⁴ «Մշակ», 1914 ապրիլի 12, թիվ 76:

⁵ Տե՛ս նույն տեղում:

վայրերից և չունենալով սեփականության ոչ մի իրավունք, եկել հաստատվել էին այնտեղ և նոր տներ կառուցել:

Հայերը շատ անգամ դիմել էին տեղական կայմականներին՝ պահանջելով քրդերին դուրս հանել իրենց սահմաններից և նրանց ապօրինի կառուցած տները քանդել, սակայն, իհարկե, բավարարություն չէին ստացել¹:

Այս և նման շատ օրինակներ վկայում են, որ Թուրքիայում ոչ մի բան չէր փոխվել, բացի սուլթանից: Դեռ ավելին, այդպիսի արարքներ հազիվ թե իրագործվեին համիդյան ժամանակաշրջանում, որովհետև «որևէ Հիքմեթ էֆենդի չէր համարձակվում գիւղից և իրանց տներից դուրս շալտել 20 տուն հայերի, իսկ այժմ շարժվում են այնպես, որ կարծես թե կառավարութիւնը դադրած լինի գոյութիւն ունենալուց»²:

Հավանաբար նման վիճակը նկատի ունեն «Биржевые ведомости» և «Русские ведомости» թերթերի ռուս լրագրող և գրող Արիադնա Տիրկովան, երբ նշում էր, որ հողային վիճելի հարցերում հայերը տեսականորեն ճիշտ էին, բայց մյուս կողմից քուրդ բեկ-ավատատերերն այնքան ուժեղ էին իրենց հարստությամբ և ազդեցությամբ, որ կարողանում էին իշխանությունների վրա ճնշում գործադրել բոլոր միջոցներով³:

Չպետք է ժխտել նաև այն հանգամանքը, որ քիչ չէին այն դեպքերը, երբ հողային հարցում արձանագրվում էր որոշ առաջընթաց, բայց վերապահումներով: Աբաղայի դաշտում և Բերկրիում բազմաթիվ գյուղեր իրենց ընդարձակ հողերով և արոտավայրերով պատկանում էին մի քանի քուրդ բեկերի, իսկ նրանց քուրդ ու հայ բնակիչները որպես «միրաբայներ» ծառայում էին նրանց: Թահսին բեյը որոշում է ճորտատերերից վերցնել հողը, նրանց ամեն մեկին թողնել մեկ-երկու գյուղ, իսկ մյուսները բաժանել երկրագործ ժողովրդին: Այդ նպատակով կազմվում է հանձնաժողով՝ Բերկրիի կայմական Ջիա բեյի նախագահությամբ⁴: Թվում էր, թե խնդիրը մոտ էր հանգուցալուծմանը: Սակայն քուրդ բեյերը բռնագրավում են քուրդ շինականներին տրված յոթ-ութ գյուղերը և մեծ միջոցներ ծախսում խոպան հողերը մշակելու և շենացնելու համար: Ավելին, վախենալով, որ եվրոպացի քննիչների ժամանելուց հետո հայերը ևս կարող են հողերի սեփականության խնդիրը առաջ քաշել, որոշում են դուրս քշել Աբաղայում բնակվող 400 տուն հայերին, որոնք գաղթել էին Նորդուզից՝ հալածված քուրդ հարստահարիչներ Շաքիրից ու Միր-Միհեից: Թվում էր, թե վիճակն անհուսալի էր: Սակայն հայերը օգնության համար դիմում են Թահսին բեյին, իսկ վերջինս, հասկանալով, որ Աբաղան կարևորագույն կայան էր Ռուսաստանի և Վանի հայության միջև,

¹ Տե՛ս նույն տեղում:

² «Մշակ», 1911 հունիսի 16, թիվ 127:

³ Տե՛ս **Тыркова А.**, Старая Турция и младотурки. Год в Константинополе, Петроград, 1916, с. 66.

⁴ Տե՛ս «Մշակ», 1914 թ. հունիսի 11, թիվ 125:

դիմում է առաջնորդական փոխանորդ Մեսրոպ ք. Ճանիկյանին և պահանջում, որ հայերը վերադառնան Նորդուգ¹: Նա պատասխանում է. «Դուք խնդրում եք վերադարձնել հայերի հողերը... մենք նրանց ենք վերադարձնում Նորդուգի բոլոր հողերը, թող Աբաղայի հայ միրաբայները զբաղեցնեն իրենց հողակտորները և միանգամայն ազատ կլինեն»²:

Բայց հայերն ինչպե՞ս կարող էին վերադառնալ, երբ նրանց տներն ավիրվել էին, իսկ հողերը բեկերի ձեռքում էր: Շուտով Աբաղայի Խաչան գյուղի մոտ 100 տուն հայեր արտաքսվում են գյուղից: Թահսին բեյին ուղղված հերթական բողոքից հետո նա անտարբեր պատասխանում է. «Ի՞նչ անեմ, ես հեռագրել եմ, որ հայերը մնան»³:

Հայտնվելով անասելի կացության մեջ, երբ բեյերն արգելում էին վարուցանք անել և խոտ քաղել, հողագուրկ երկրագործների հայ ներկայացուցիչները մեկնում են Վան և խնդրամատույց լինում ռուսական հյուպատոսին՝ հայցելով քրիստոնյա պետության պաշտպանությունը, ու խնդրում, որ նա միջոցներ ձեռք առնի, որպեսզի 400 տնից բաղկացած Խաչան գյուղի 2500 բնակիչներն իրենց 5000 խոշոր եղջերավոր և 40000 մանր եղջերավոր անասուններով գաղթեն Պարսկաստան, ուր հնարավոր կլիներ ապրել առանց իրենց կրոնը ամեն օր նախատինքի և հայհոյանքի ենթարկելու: Հյուպատոսին ուղղված իրենց գրության մեջ նրանք նշում էին. «Ճիշդ է, որ, այն գաւառը, ուր մենք բնակվում էինք 30 տարիներից ի վեր, բարեբեր հող ունէր, նրա վրա մենք չարաչար աշխատում էինք, բայց կոյս հողը վարձատրում էր մեր քրտինքը առատ բերքով, որից թէ մենք և թէ հողատեր բեյերը օգտվում էինք. սակայն ի՛նչ օգուտ, որ մենք նրանց՝ բեյերի ծառաները, ստրուկներն էինք, ու նրանց ամենափոքր լամուկն անգամ ամեն օր մեր խաչն ու հաւատն էր հայհոյում, իսկ մենք լուռ էինք մնում: Թէն մենք շատ տարիներ առաջ գաղթել ենք Նօրդուգ գաւառից, բայց էլի չենք կարող վերադառնալ այդ գաւառը, ուր մեր տների հետքն անգամ կորել է, նոյն իսկ եթէ մեզ վերադարձնելիս էլ լինեն մեր հողերը, ինչ որ անհաւանական է. երկիրը այնչափ նեղ է, որ չի կարող ապրեցնել մեզ և մեր բազմաթիւ անասուններին ու ոչխարների հօտերին»⁴:

Այսպիսով, սահմանադրության հոչակումից հետո հայությունը միջոցներ ձեռնարկեց վերականգնելու իր հողային իրավունքները: Այդ նպատակով ստեղծվեցին հայ-թուրք-քրդական հողային հանձնաժողովներ, համերաշխության կոմիտեներ, և ընդունվեցին հողային հարցը կարգավորող մի շարք որոշումներ: Այդուհանդերձ, իշխանությունները, վախենալով քրդա-

¹ Տե՛ս «Մշակ», 1914 թ. հուլիսի 1, թիվ 141:

² **Свящ. Бекгульянц Р. (Сѣверьянин)**, նշվ. աշխ., էջ 82:

³ «Մշակ», 1914 հուլիսի 31, թիվ 166:

⁴ «Մշակ», 1914 հուլիսի 5, թիվ 145:

կան հակակառավարական հուզումներից, ստիպված եղան հրաժարվել նախապես խոստացած հողային վեճերը կարգավորող ծրագրերից:

Аветис Арутюнян, Левон Симонян – *Армяно-курдские земельные споры в Ванской губернии в 1908-1914 гг. и позиция властей*

После провозглашения младотурецкой конституции западное армянство, воспользовавшись утвержденными в стране политическими свободами в различных регионах Западной Армении, в том числе и в Ване, предприняло меры для восстановления своих земельных прав. В свою очередь младотурецкое правительство поспешило вернуть армянам земли, которые после резни 1890-ых гг. были отобраны у армян либо бывшими административными органами, либо курдами. Для восстановления земельных прав были созданы армяно-турецко-курдские земельные комиссии, комитеты солидарности, был принят ряд решений, регулирующих земельный вопрос. В этот период правительство и судебные власти были вынуждены действовать справедливо и утвердить права армян. Именно поэтому в начальный период армянам удалось вернуть те земли, которые до этого были предметом споров. Тем не менее, османские власти, остерегаясь курдских антиправительственных волнений, были вынуждены отказаться от урегулирования земельных вопросов.

Avetis Harutyunyan, Levon Simonyan – *Armenian-Kurdish Land Disputes in Van Province in 1908-1914 and the Position of the Authorities*

After the adoption of the Constitution of the Young Turks, taking advantage of political freedoms established in the country Western Armenians took measures to restore their territorial rights in various parts of Western Armenia, including Van. In its turn, the Government of the Young Turks hastened to return them the estates, which were taken away from them by the old regime and by the Kurds after the massacres of the 1890s. Armenian-Turkish-Kurdish Land Committees, Committees of Solidarity were established to restore land rights, and a number of decisions regulating land issues were adopted. During this period, the Government and the judiciary had to act justly to confirm the rights of Armenians. It was for this reason that Armenians were able to get back the lands that had been a matter of dispute before. Nevertheless, the Ottoman authorities feared Kurdish anti-government protests and were forced to refuse from land dispute regulating programs.

**1918 թ. ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԱՅՈՑ
ՅԵՂԱՄԱՆՈՒԹՅԱՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՇՈՒՐՁ**

***Բանալի բառեր** – Օսմանյան կայսրություն, Մեհմեդ VI, Մուստաֆա Քեմալ, թուրքական կառավարություն, երիտթուրքեր, ժողովուրդ, Հայոց ցեղասպանություն, կոտորածներ, տեղահանություն, մամուլ, քննադատություն, պատասխանատվություն*

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման գործում առանձնահատուկ նշանակություն ունեն 1918 թ. հոկտեմբեր-դեկտեմբեր ամիսներին Օսմանյան կայսրությունում այդ իրադարձության շուրջ ծավալված հասարակական քննարկումները, որոնք իրենց ազդեցությունն ունեցան թե՛ օսմանյան խորհրդարանում լսումների ընթացքում կառավարության քննադատության և թե՛ հետագայում թուրքական ռազմական տրիբունալներում նախկին երիտթուրքական կառավարության պարագլուխների դատավարության և կայացված վճիռների վրա: Այս անցքերին առնչվող նյութերը կարևորվում են նրանով, որ Հայոց ցեղասպանության հիմնախնդիրը դուրս եկավ «ազգային քննարկումների» շրջանակից, դատապարտվեց հանցագործ տերության բարձրագույն ատյաններում՝ խորհրդարանական քննարկումների հարթությունից փոխանցվելով Ռազմական տրիբունալի դատին:

Առաջին համաշխարհային պատերազմում Օսմանյան կայսրության պարտությունը այդ պետությանը կանգնեցրեց ծանր հետևանքների առջև: 1918 թ. հոկտեմբերի 30-ին Մուղրոսի զինադադարի ստորագրմամբ Օսմանյան կայսրությունում ազգային հարցի լուծումը հանձնվում էր հաղթանակած տերությունների հայեցողությանը: Օսմանյան կայսրության հետ կնքվելիք հաշտության պայմանագրի դրույթները թուրքական վերնախավին տեղիք էին տալիս խորհելու, որ առաջիկա պայմանագրերը շատ ծանր հետևանքներ էին ունենալու կայսրության համար, քանի որ նա չէր կարող հաշվի չառնել Անտանտի երկրների՝ պատերազմի տարիներին հնչեցրած մարդասիրական ու քրիստոնեական խոստումները և Օսմանյան կայսրության հասցեին սպառնալիքները: Խոսքը վերաբերում է Անտանտի տերությունների՝ 1915 թ. մայիսի 24-ի համատեղ հռչակագրին, ըստ որի՝ հայկական կոտորածների ամբողջ պատասխանատվությունը ընկնում էր օսմանյան կառավարության վրա: Այնտեղ մասնավորապես նշված էր. «Մարդկության և քաղաքակրթության դեմ ուղղված Թուրքիայի այս նոր հանցագործություններին ի տես՝ դաշնակիցների կառավարությունները հրապարակայնորեն տեղյակ

են պահում Բարձր Դռանը, որ իրենք նշված հանցագործությունների համար անհատապես պատասխանատու կճանաչեն օսմանյան կառավարության բոլոր անդամներին, ինչպես նաև նրա այն գործակալներին, որոնք ներգրավված կլինեն համանման կոտորածներում»¹: Այսինքն՝ դաշնակիցները Թուրքիային սպառնում էին հետպատերազմյան հաշվեհարդարով, իրականացված հանցագործության հատուցում միջազգային դատարանի առջև: Մի կողմից՝ Անտանտի տերությունների Փարիզի խաղաղության կոնֆերանսը, մյուս կողմից՝ Անգլիայի բացահայտ առավելությունը տարածաշրջանում (դաշնակիցները և հատկապես անգլիական զորքերը ռազմակալել էին Օսմանյան կայսրության տարածքը և սպառնում էին Կոստանդնուպոլսին) տազնապի մեջ էին պահում օսմանյան կառավարությանն ու թուրքական հասարակությանը:

Դրան գումարվեց նաև միջազգային հասարակայնության բողոքի արձագանքը: Լայն ճանաչում և մեծ հեղինակություն վայելող հայտնի եվրոպացի մտավորականներ և գործիչներ Յոզեֆ Մակվարտը, Յոհաննես Լեփսիուսը, Արմին Վեգները, Ժակ դը Մորգանը, Ռենե Պիոնը, Արնոլդ Թոյնբին, Անդրեյ Մանդելշտամը, Հենրի Մորգենթաուն² և շատ ուրիշներ իրենց բողոքի ձայնը բարձրացրին՝ հրապարակավ պահանջելով միջազգային տրիբունալի դատին հանձնել երիտթուրք պարագլուխներին՝ հայասպան քաղաքականության գլխավոր հանցագործներին: Հանցագործությունը դատապարտելուց զատ՝ նրանք պահանջում էին դատական գործընթացը կազմակերպել Անտանտի և ԱՄՆ-ի ներկայացուցիչների մասնակցությամբ: Հայկական կոտորածների համար օսմանյան կառավարության պատասխանատու անդամներին պատժելու պահանջով Մեծ Բրիտանիայի խորհրդարանի համայնքների պալատում 1918 թ. նոյեմբերի 12-ին հարցապնդումով հանդես եկավ պատգամավոր Ռայթը՝ պահանջելով, որ Թուրքիայի հետ կնքվելիք խաղաղության պայմանները քննելիս հաշվի առնվեր վերոհիշյալ հանգամանքը³:

Միջազգային հասարակական կարծիքը Առաջին աշխարհամարտի տարիներին Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած հայկական կոտորածները համարեց անսախաղեպ հանցագործություն: Միջազգային հանրության բողոքի ձայնը կասեցնելու, միջազգային պատասխանատվությունից և դրանից բխող հետագա պարտավորություններից խուսափելու նպատակով սուլ-

¹ Պեյերյան Ա., Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914-1918), հ. 1: Փաստաթղթերի ժողովածու: Ֆրանսերենից թարգմանեց Վարուժան Պողոսյանը, Երևան, 2005, էջ 99:

² Տե՛ս Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի: Առաջաբանը, թարգմանությունը և ծանոթագրությունները Ա. Հ. Փափազյանի, Երևան, 1988, էջ 12:

³ Տե՛ս Կիրակոսյան Զ., Երիտթուրքերը պատմության դատաստանի առաջ (1915-ից մինչև մեր օրերը), գիրք երկրորդ, Երևան, 1983, էջ 174:

թան Մեհմեդ VI Վահիդեդդինի կառավարությունը քայլեր ձեռնարկեց պատ-
ժելու երիտթուրքական կառավարության ու «Միություն և առաջադիմու-
թյուն» կուսակցության անդամներին: Նոր կառավարությունը ամեն գնով
փորձում էր քննարկման առարկա չդարձնել թուրք ժողովրդի մեղսակցու-
թյան հարցը՝ մտավախություն ունենալով, որ տվյալ պարագայում այդ հա-
նագործությունների համար ամբողջ պատիժը բաժին էր ընկնելու թուրք
ժողովրդին և օսմանյան պետությանը, մի բան, որը թույլ տալ չէր կարող
անգամ «Իթթիհատ վե թերաքիի» (İttihat ve Terakki – «Միություն և առաջադի-
մություն») հակառակորդ «Իթթիլաֆ վե իթիլաֆ» (Hürriyet ve Itilaf – «Ազատու-
թյուն և համաձայնություն») կուսակցությունը: Անկախ այն բանից, թե քա-
ղաքական դաշտում նրանք ինչպիսի կատաղի պայքարի մեջ էին ընդ-
գրկված, այնուամենայնիվ այս հարցի շուրջ նրանք միշտ համամիտ էին,
քանի որ այդ միասնությունից էր կախված Օսմանյան կայսրության փրկու-
թյունը: Հետաքրքրականն այն է, որ երիտթուրքերի հասցեին մեղադրանքներ
հնչեցնելով հանդերձ՝ թուրք ղեկավարները, այդուհանդերձ, անընդհատ
շեշտում էին թուրք ժողովրդի *անմեղության* հանգամանքը: Նրանք անգամ
հայտարարում էին, որ «**թուրք ժողովուրդն իր գլուխը խոնարհում է՝ հայ ժո-
ղովրդի ողբերգության առաջ: «Դա նա անում է տխրությամբ՝ հայ ժողովրդի
և ամոթով՝ իր համար:** Նա խոստովանում է դա և պարտավորություններ է
իրականացնում, որոնք ծագել են այդ իրադրության հետևանքով: Բայց թուրք
ժողովուրդը մերժում է որևէ բարոյական պատասխանատվություն, որ
կապված է իր անարժան ղեկավարների գործողությունների հետ և նրանց չի
ճանաչում»¹: Անգլիացի մի թղթակցի հետ ունեցած զրույցում սուլթանը
դատապարտում է երիտթուրքերի վարած քաղաքականությունը հայերի
նկատմամբ և նրան խնդրում անպայման հրապարակել հետևյալ խոսքերը.
«Ազգի ճնշող մեծամասնությունը լիովին անմեղ է այդ հանցանքների մեջ...
լոկ սահմանափակ թվով մարդիկ են պատասխանատվություն կրում»²:

Այն, որ օսմանյան կառավարությունն ամեն գնով փորձում էր քողարկել
թուրք ժողովրդի մեղավորության գործոնը, ակնհայտորեն նկատվում է ոչ
միայն օսմանյան մամուլի, այլև մի շարք միջազգային պարբերականների էջե-
րում, որտեղ սուր քննադատություն էր հնչում միմիայն երիտթուրքական
կուսակցության հասցեին: Սակայն բազմաթիվ փաստեր ապացուցում են, որ
ոչ միայն թուրք, այլև Օսմանյան կայսրությունում ապրող մուսուլման այլ
ժողովուրդներ ևս թուրքական կառավարության հետ հավասարապես մեղա-
վոր էին: Ավելին, եղել են դեպքեր, երբ «ժողովուրդը սրբագրեց ու լրացուց
կառավարութեան գործը»³: Ստեղծված պայմաններում թե՛ երկրի ներսում

¹ Հղումը ըստ՝ **Կիրակոսյան Ջ.**, նշվ. աշխ., էջ 173:

² Տե՛ս նույն տեղում, էջ 162:

³ **Անտոնյան Ա.**, Հայկական վերջին կոտորածները և Թալեաթ փաշա, Երևան, 1990, էջ 243:

առաջացած լարվածությունը մեղմելու և թե՛ արտաքին ճնշումներից խուսափելու համար թուրքական կառավարությունը ձեռնամուխ եղավ պատժելու երիտթուրք հանցագործներին: Ձեռնարկելով այդ «պատժիչ գործողությունները»՝ այն դիմում էր ցանկացած քայլի՝ պետության և ժողովրդի մեղավորության գործոնը բացառելու նպատակով:

Ինչպես իրավամբ նշել է Ջ. Կիրակոսյանը, «սկսած 1918-ի հոկտեմբերից, այն բանից հետո, երբ նույն ամսի 7-ին Թալեաթի երիտթուրքական կառավարությունը հրաժարական տվեց, քննադատությունը, վերագնահատումները, դատապարտումները դարձան թուրքական մամուլի գլխավոր զբաղմունքը»¹: Նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին օսմանյան մամուլը լի էր հայկական կոտորածները բացահայտող տարբեր տեղեկություններով, որոնց ճնշող մեծամասնությունը ականատեսների վկայություններն էին, թուրք բարձրաստիճան պաշտոնյաների խոստովանությունները և այլն: Թուրքական հասարակությունը մամուլի միջոցով խստագույն պատիժ էր պահանջում հայերի տեղահանության ու կոտորածների պատասխանատուների համար: Հայերի կոտորածների և տեղահանության ամբողջ պատասխանատվությունը միայն երիտթուրքական կուսակցության ուսերին բարդելու միտումը դարձավ թուրքական հասարակության՝ «պատասխանատվությունից ազատվելու» և իրեն՝ որպես այդ քաղաքականության զոհի ներկայացնելու երաշխիքը:

Թուրքական թերթերից հատկապես «Ալեմդարը», «Սաբահը» անխնա քննադատում էին իթթիհատի ոճիրները, որի պատճառով երկիրը կանգնել էր նման պատուհասի առջև: «Ալեմդարը» գրում էր. «Իթիլաֆական դահլիճը պետք է ամեն բանէ առաջ արմատախիլ ընէ իթթիհատականութիւնը, եւ այնպէս մը արմատախիլ, որ անունն ու հետքն իսկ չմնա»²: «Սաբահը» հավաստում էր. «Մեր և մեր ազգին արժանապատուութիւնը պաշտպանելու համար պետք է, որ մեր ձեռքովն իսկ գործադրենք զայն... Ջարդերը եւ տարագրութեան հեղինակները ոչ միայն արատավորեցին օսմանցիութեան անունը, այլ Թուրքիոյ համար էն սոսկալի ձախորդութիւնները պատրաստեցին... Կը փնտռենք ոճրագործը ու պիտի պատժենք զանոնք»³: Թուրքական հասարակությունը նոր՝ հզոր և գործունյա կառավարություն էր պահանջում, որը երկիրը կտաներ զարգացման ուղիով, կդատապարտեր իթթիհատական կառավարության հանցավոր արարքները, կվերականգներ արդարությունը և իրավունքը⁴:

Ի դեպ, հանցագործներին դատապարտելու միտումին, թուրքական հասարակությունից բացի, տուրք էին տվել նաև մի շարք բարձրաստիճան

¹ Կիրակոսյան Ջ., նշվ. աշխ., էջ 166:

² «Ճակատամարտ», 14 մարտի 1919, թիւ 105 (1926):

³ «Ճակատամարտ», 4 մայիսի 1919, թիւ 146 (1967):

⁴ Տե՛ս «Ճակատամարտ», 27 փետրվարի 1919, թիւ 92 (1913):

պաշտոնյաներ: Ներքին գործերի նախարար Ջեմալը իթթիհատական կառավարությանը մեղադրում էր երկիրը պատերազմի մեջ ներքաշելու և հայերի կոտորածների ու տեղահանության մեջ, մատնանշում, որ «իթթիհատը ջարդել տուաւ 800.000 հայեր... Մենք արագ և լաւ դատաւարութիւն պիտի ընենք... Նախարարները պարզապէս պատերազմական ատեանի կողմէ պիտի դատուին, որովհետեւ իթթիհատականները իրենք ջնջեցին այն օրէնքը, որուն համաձայն նախարարները բարձրագոյն ատեանի մը առջեւ միայն կը դատուէին»¹: Այստեղից կարելի է հանգել այն հետևության, որ նախարարները դատվելու էին որպէս զուտ հանցագործներ ու առավել ևս ռազմական ատյանի կողմից: Ալի Քեմալ բէյը, ով 1920 թ. դարձավ Օսմանյան Թուրքիայի ներքին գործերի նախարար, 1919 թ. հունվարի 28-ին «Սաբահ» թերթում գրում էր, որ «չորս հինգ տարի առաջ, երկրին մէջ կը գործադրուի պատմութեան մէջ եզակի, աշխարհասան ոճիր մը: Նկատի ունենալով ոճրին հսկայական չափն ու ծաւալը, անոր հեղինակները այսպէս հինգ տասը հոգի չեն, այլ աստիճանաբար՝ հարիւր հազարներ են անոնք... այս եղեռնը ծրագրուեցաւ Իթթիհատի ընդհանուր կեդրոնին որոշումներովն ու կարգադրութիւններովն...»²: Անգամ Մուստաֆա Քեմալը, որը որոշ ժամանակ անց իրականացրեց երիտթուրքերի նույն քաղաքականությունը և ստանձնեց երիտթուրք ոճրագործների հերոսացման գործը³, մինչ իշխանության գալը Հայոց ցեղասպանությունը բնորոշում էր «կառավարության հսկողությունն իր ձեռքում կենտրոնացրած մի փոքր կոմիտէի կողմից» կազմակերպված «կոտորած»: Դեռ ավելին. 1920 թ. ապրիլի 24-ին թուրքական խորհրդարանում ունեցած իր ծավալուն ելույթում դատապարտելով Հայոց ցեղասպանությունը՝ նա այն բնութագրեց իբրև «անցյալին պատկանող ամոթալի գործողություն»⁴:

Տարբեր նախարարների և բարձրաստիճան պաշտոնյաների՝ քննադատությունների ու մեղադրանքների ալիքը ընդհուպ մոտեցավ սուլթանին: Մեհմեդ VI-ը վշտակցում էր հայ ժողովրդին և նշում, որ «արդարադատությունը կիրականացվի և մենք այլևս երբեք թույլ չենք տա նման տգեղ դեպքերի կրկնություն»⁵: Հարց է ծագում. ինչու՞ օսմանյան նոր իշխանությունները և հենց բուն թուրքական հասարակությունը, որոնք իրականում նույն երիտթուրքերի գաղափարախոսության կրողներն ու նրանց կիրառած քաղաքականության հետևորդներն էին, ուստի և նրանց հանցակիցները,

¹ «Ճակատամարտ», 15 մարտի 1919, թիւ 106 (1927):

² Անտոնյան Ա., նշվ. աշխ., էջ 249:

³ Տե՛ս Մելքոնյան Ռ., Հայոց ցեղասպանության կազմակերպիչների և իրականացնողների հերոսացման գործընթացը Թուրքիայում (1920-ական թվականներ) // «ՊԲՀ», 2015, թիվ 2, էջ 65:

⁴ Տե՛ս Akçam T., Un acte honteux. Le génocide arménien et la question de la responsabilité turque, [Paris], 2008, p. 366, 367:

⁵ Տե՛ս Հովհաննիսյան Ռ., Հայաստանի Հանրապետություն, Երևան, 2005, էջ 460:

դիմեցին նման քայլի: Ակնհայտ է, որ հայ ժողովրդի կոտորածների և տեղահանության վերաբերյալ փաստերն այնքան շատ էին, որ դրանից խուսափել և այն շրջանցել ուղղակի հնարավոր չէր: Ուստի Մեհմեդ VI-ը, մի կողմից իթթիհատի պարագլուխներին հետապնդելու հրաման արձակելով, փորձեց տարանջատել սուլթանական պալատը կառավարության ոճիրներից¹, իսկ մյուս կողմից, որդեգրելով այդ քաղաքականությունը, ջանաց ամեն գնով բացառել պետության և ժողովրդի մեղավորության հանգամանքը: Այսպիսով, թուրքական կողմը հետապնդում էր հետևյալ նպատակները.

- խուսափել միջազգային դատարանի պատասխանատվությունից,
- լռեցնել միջազգային հանրության բողոքի ձայնը,
- Եվրոպայի առջև արդարադատ երևալ՝ մեկընդմիջտ վերացնելով Օսմանյան կայսրությանը որպես հանցագործ պետություն և «քրիստոնյա փոքրամասնությունների բանտ» պիտակները,
- ժողովուրդն ինքնին զոհ էր և ոչ թե պատասխանատվություն կրող կողմ:

Այս մասին է վկայում նաև «Ալեմդար» օրաթերթի գլխավոր խմբագիր Ռեֆի Ջնադ Ուլունայի Հայոց ցեղասպանության խնդրին նվիրված հոդվածաշարը, որտեղ նա նշում էր, որ Թուրքիան հայերի դատաքննությունն իրականացնում էր հարկադրված, և որ դատավարությունների շարժառիթը ոչ թե արդարության վերականգնումն էր, այլ Եվրոպայի առջև արդարադատ երևալու ցանկությունը²: Այսպիսով, այս ամենից կարող ենք հանգել այն հետևության, որ թուրքական հասարակության բողոքի ձայնը, քննիչ հանձնաժողովների հետաքննությունները, օսմանյան խորհրդարանի քննարկումները, մամուլի հրապարակումները իրականում շատ լավ մշակված ներկայացումներ էին: Բայց նաև չի կարելի անտեսել այդ քննարկումների ու հրապարակումների՝ մեզ համար կարևոր նյութերը, այն, որ այդ ամենը ապացուցում են օսմանյան պետության հանցագործ քաղաքականությունը՝ ևս մեկ անգամ լույս սփռելով պատմական իրականության վրա: Չնայած այն բանին, որ թե՛ մամուլում և թե՛ խորհրդարանում հայերի կոտորածների և տեղահանության վերաբերյալ քննարկումները մնացին անավարտ, քանի որ ջանքեր էին գործադրվում մեղքը բարդելու իթթիհատական ղեկավարության ուսերին՝ անմեղ ճանաչելով թուրք ժողովրդին և թուրքական պետությանը, սակայն իրականությունը մնում էր նույնը. իշխանությունը փաստացի ղեկավարում էին իթթիհատի պարագլուխները, որոնք իրենց քաղաքականության մեջ ընդգրկել էին թուրք ժողովրդին: Ժողովրդի և հանցավոր իշխանությունների համատեղ մեղսակցության փաստը շատ հետաքրքիր է մեկնա-

¹ Տե՛ս **Ավագյան Ա.**, Հայոց ցեղասպանության հարցը թուրքական մամուլում (1918-1921 թթ.) // «Բանբեր հայագիտության» (այսուհետև՝ «ԲՀ»), 2015, թիվ 1, էջ 33:

² Տե՛ս **Անումյան Մ.**, Երիտթուրքերի 1919-1921 թթ. դատավարությունների վավերագրերը ըստ օսմանյան մամուլի, Երևան, 2011, էջ 35:

բանում Ա. Անտոնյանը՝ 1919 թ. ապրիլի 10-ին Կոստանդնուպոլսի Բայազետ հրապարակում Բողազլիանի կայմական և Յոզդաթի նախկին մութասարիֆի պաշտոնակատար Քյամիլ բեյին կախաղան բարձրացնելու առնչությամբ, երբ թուրք ժողովուրդը բողոքի մեծ ցույց կազմակերպեց և «ազգային նահատակ» հռչակեց այդ նախկին պաշտոնյային, որն իրականացրել էր ավելի քան 60.000 մարդու սպանդ¹: «Որքա՞ն սերտ մեղսակցությամբ ժողովուրդ եւ կառավարութիւն իրարու կապված էին», այսպես է նա բնութագրում թուրքական հասարակության և կառավարող շրջանների հանցավոր կապը և նշում, որ «Իթթիհատի քովտեն, կառավարութիւնը, թուրք ժողովուրդը, Թուրքիոյ բոլոր իսլամ ժողովուրդները ձեռք ձեռքի գործեցին այս ոճիրը»²:

Հայության կոտորածների և տեղահանության իրականացման հարցում մեղավոր էր թուրք ժողովրդի ճնշող մեծամասնությունը, որը կառավարության ձեռքում գործիք դարձավ ոչ միայն բուն ցեղասպանության, այլև դրան հաջորդած հետպատերազմյան տարիներին: Քանի որ առաջ էր քաշվել Օսմանյան կայսրության լինել-չլինելու, պետությունը և նրա հեղինակությունը փրկելու հարցը, ուստի թուրքական հասարակությունը և կառավարությունը միմյանց հետ համագործակցեցին՝ ջանալով հանցագործության պատասխանատվությունը բարդել բացառապես իթթիհատի ուսերին՝ խույս տալով սեփական պատասխանատվությունից: Իրականում Թալեաթի կառավարության հրաժարականը երկրի ներքաղաքական կյանքում ոչինչ չփոխեց: Միմյանց հաջորդած կառավարությունները շարունակում էին միևնույն քաղաքականությունն իրականացնել, ուստի և գործելառճն էր մնում նույնպիսին: Փոփոխվող կառավարությունները հրապարակայնորեն քննադատում և մեղադրում էին նախկին վարչակարգը, սակայն խուսից այն կողմ չէին անցնում, քանի որ «ամեն բան կը մնայ Թալեաթի կարգադրութեան համաձայն»³: Տեղին է նշում «Ժողովուրդ» օրաթերթը. «Թուրք մամուլն ու կառավարութիւնը երգ մը ունին հիմա իրենց շրթունքներուն վրայ. «Պիտի յարգենք տարբերու իրաւունքները»... այդ երգը երգեց Իթթիհատը, աշխարհի վրայ գտնուող քաղաքական կուսակցութիւններուն էն մտայլ ու էն քստմնելին... Հիմա նոյն երգը կը հնչեցնէ ներկայ դահլիճը...»⁴: Սա ևս մեկ անգամ վկայում է, որ թուրքական հասարակական կարծիքը հետևում էր կառավարության հրահանգներին:

Նշենք մի հետաքրքիր փաստ ևս. եթե արևմտահայ հասարակական միտքը արդուլիամիդյան վարչակարգի տապալումը և նոր՝ «արդարության» և «ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպան» երիտթուրքական շարժումն ընդունեց մեծ ոգևորությամբ և ցնծությամբ, ապա

¹ Տե՛ս **Անտոնյան Ա.**, նշվ. աշխ., էջ 247:

² Նույն տեղում:

³ «Ճակատամարտ», 15 մարտի 1919, թիւ 106 (1927):

⁴ «Ժողովուրդ», 28 հոկտեմբերի/10 նոյեմբերի 1918, թիւ 8:

հետպատերազմյան շրջանում նա փոխեց իր վերաբերմունքը՝ հավատ չընծայելով այդ քաղաքականությանը, ուստի մամուլի միջոցով անխնա քննադատում էր թուրքական վարչակարգերը: Արևմտահայ իրականությունում հեղինակություն վայելող այնպիսի լրագրեր, ինչպիսիք էին «Ճակատամարտը», «Ժողովուրդը», «Ժողովրդի ձայնը», անխնա քննադատում էին թուրքական նոր վարչակարգի որդեգրած այդ «նոր» քաղաքականությունը: «Ժողովուրդ» օրաթերթը գրում էր. «Թուրք մամուլն ու հասարակական կարծիքը մատնւած են, այս րոպէիս, մեծ իրարանցումի մը. ի՞նչպէս փրկել Թուրքիոյ նաւը, որ ջուր կառնէ ամէն կողմէ...»¹: Այն «ինքնապաշտպան» քաղաքականությունը, որ որդեգրել էին թուրք վերնախավը, հասարակությունն ու մամուլը, արդեն իսկ պարզ էր: Դա լավ հասկանում էր արևմտահայ հասարակությունը, ուստի ոչ մի հավատ չէր ընծայում ո՛չ մամուլում, ո՛չ խորհրդարանական քննարկումների և կամ բուն դատավարության ժամանակ հնչած խոստումներին: «Ճակատամարտ» օրաթերթում կարդում ենք. «Մեզի համար նորութիւն չէ նաեւ այն արդիւնքը, որուն վերջ ի վերջոյ պիտի յանգին այս և նման բոլոր դատավարութիւնները, որովհետեւ համոզուած ենք, որ երբեք արդարութիւն կարելի չէ յուսալ որևէ թուրք դատարանէ»²:

Ամփոփելով նշենք, որ այսօր ևս թուրքական իշխանությունները, հավատարիմ մնալով իրենց ավանդական գործելաոճին, շարունակում են այն նույն քաղաքականությունը, որը 1918-1920-ական թվականներին որդեգրել էր թուրքական նոր վարչակարգը: Հայերի զանգվածային կոտորածներին և տեղահանությանն առնչվող փաստերն այնքան մեծաթիվ են և անառարկելի, որ դրանք հերքելու դեպքում, ինչպես 1918 թ., այնպես էլ առավելապես հիմա, թուրքական իշխանությունների դիրքերը դառնում էին խիստ խոցելի, ուստի «ճանաչելով և դատապարտելով» եղելությունը՝ հին ու նոր թուրքական իշխանությունները դրա պատասխանատվությունը տարածում են միայն սահմանափակ թվով անհատների վրա՝ բացառելով այդ քաղաքականությունը «ցեղասպանություն» որակելը և ըստ պետական ծրագրի՝ դրա իրականացման հանգամանքը:

Мане Конилян – *К вопросу об обсуждениях Геноцида армян, развернувшихся в Османской империи в 1918 г.*

В деле международного признания и осуждения Геноцида армян особое значение имеют развернувшиеся в октябре-декабре 1918 г. в Османской империи публичные обсуждения массовой резни западных армян. Обсуждения оказали воздействие как на критику правительства в ходе слушаний в османском парламенте, так и в дальнейшем на суд и вердикт лидерам бывшего младотурецкого правительства на турецких военных

¹ «Ժողովուրդ», 14 դեկտեմբերի 1918, թիւ 42:

² «Ճակատամարտ», 2 մարտի, 1919, թիւ 95 (1916):

трибуналах. В целях заглушить голос протеста международной общественности, уклонения от международной ответственности и вытекающих из нее обязательств правительство султана Мехмеда VI Вахидеддина предприняло шаги для наказания членов младотурецкого правительства и партии «Единение и прогресс». Новые османские власти и общество посредством прессы требовали строжайшего наказания ответственных за резню и депортацию армян. Это было обусловлено тем, что информации о резне и депортации армян было так много, что невозможно было обойти ее или умолчать. И потому султан Мехмед VI издает указ о преследовании лидеров Иттихата, попытавшись, с одной стороны, отделить султанскую палату от преступлений, совершенных правительством, а с другой стороны – исключить обстоятельство вины государства и народа.

**Mane Koninyan – *On the Discussions over the Armenian Genocide of 1918
in the Ottoman Empire***

The public debates over the massacres of Western Armenians in the Ottoman Empire in October-December 1918 are of particular importance for the international recognition and condemnation of the Armenian Genocid. They influenced the criticism of the government during the hearings in the Ottoman Parliament as well as on trials and verdicts of the former leaders of the Young Turks in the Turkish military tribunals. To suppress the voice of the international community's protest and in order to avoid international responsibility and further obligations, the government of Sultan Mehmed VI Vahideddin took measures to punish members of the Young Turks and the "Union and Progress" Party. Through the media the new Ottoman authorities and the public demanded severe punishment for those responsible for the deportation and massacres of Armenians. This was due to the fact that there was so much information about the massacres and deportations of the Armenian people, which could not be avoided and circumvented. Thus, Sultan Mehmed VI tried to separate the Sultanate from the crimes committed by the government ordering the Sultanate to persecute the leaders of Ittihat, on the one hand, and to exclude the guilt of the state and the people, on the other.

DER DEUTSCHE HILFSBUND FÜR ARMENIEN UND SEIN ARMENISCHES HILFSWERK

***Schlüsselwörter** – Deutscher Hilfsbund für Armenien; Abdul Hamid II., Osmanisches Reich, Massaker an den Armeniern, Johannes Lepsius, Deutsche Orient-Mission, Martin Rade, Armenisches Hilfswerk, Karapet Thoumajan, James Greenfield*

Die Idee zur Begründung einer Deutschen Orient-Mission entstand in Friesdorf bei Wippra im Südharz, wo Johannes Lepsius seit Anfang 1887 die Pfarrstelle innehatte¹. Er und die Pfarrer der benachbarten, ebenso weltentlegenen sieben Gemeinden im Tale und auf den Waldhängen der Wipper pflegten eine rege geistige Gemeinschaft unter Teilnahme der Pfarrfrauen. Am 29. September 1895 versammelten sich die Freunde der Nachbargemeinden, die Pfarrer sowie Lehrer der Umgegend und auswärtige Freunde mit der Kirchengemeinde Friesdorf zu einem Waldfest, um von der Mission im Orient und ihren Aufgaben unter Christen und Mohammedanern zu hören. Am Abend dieses Tages beschlossen drei Freunde, diese Missionsaufgabe zu einem besonderen Anliegen ihres Gebets zu machen. Hundert weitere Freunde schlossen sich ihnen an, und aus diesem Gebetsbund ging im Ostern 1896 die Begründung der Deutschen Orient-Mission hervor², die sich ursprünglich die Mohammedanermision zur Aufgabe machen wollte.

Am 30. September 1895 aber kam in Konstantinopel das Massaker an den

Գերմանացիների համար Արևելյան Հայաստանը տնտեսապես հետաքրքրություն չէր ներկայացնում, սակայն այդ տարածքով էր անցնում երկրամասի երկաթուղային հանգույցի մի մասը, որտեղ բախվում էին Թուրքիայի և Գերմանիայի ռազմաքաղաքական և տնտեսական շահերը: Դրանից ելնելով՝ գերմանացիներն իրենց շահերից բխող խոստումներ էին տալիս՝ «աջակցելու» հայերին: Սակայն թուրքերի հետ հակամարտության մեջ գտնվող Հայոց ցեղասպանության և հայրենագրկության մեղսակից Գերմանիայի համար այլևս ընդունելի չէր խորացնելու առանց այն էլ լարված հարաբերությունները դաշնակից Թուրքիայի հետ: Սակայն, ինչպես ցույց տվեցին հետագա քաղաքական իրադարձությունները, երկրամասում Քառյակ դաշինքի երկրների շահերի բախման պայմաններում հայկական դիվանագիտությունը ժամանակին չկարողացավ ապագան կանխատեսել և արագ ու ճիշտ նախապատրաստվել: Մեր կարծիքով, թուրքական ռազմական առաջխաղացումը կանխելու և Արևմտյան Հայաստանի ինքնավարության հարցի լուծման նպատակով հայկական տարբեր պատվիրակությունների դիվանագիտական ջանքերը Բեռլինում, Վիեննայում, Կոստանդնուպոլսում ³ իրատեսական չէին, և բնական է, որ չարժանացան Գերմանիայի և նրա դաշնակիցների «շոշափելի» աջակցությանը: Հետագայում Ալ. Խատիսյանը խոստովանում է. «Մենք ուշացած էինք, ինչպես քանի մի անգամ ուշացանք մեր վերջին տարիներու պատմութեան մէջ: Պատճառը միշտ ալ այն էր, որ մենք գերագնահատեցինք մեր սեփական ուժերը եւ ստորագնահատեցինք թշնամիին ուժերը»⁴:

Այսպիսով, Գերմանիայի աշխարհաքաղաքական և տնտեսական շահերն անհրաժեշտաբար նրան մղեցին իր հովանավորության տակ առնելու Վրաստանն ու Ադրբեյջանը: Գերմանիան պահանջեց Թուրքիայի ռազմաքաղաքական կառավարությունից դադարեցնել ռազմական առաջխաղացումը և տարածքային բռնազավթումները երկրամասում և դիվանագիտական բա-

¹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 107:

² **Авалов З.**, նշվ. աշխ., էջ. 106:

³ Տե՛ս ՀԱԱ (հայկական պատվիրակությունների արձանագրություններ), ֆ. 200, ց. 2, գ. 11, թ. 9-125, գ. 12, թ. 22-102, գ. 13, թ. 7-9, ֆ. 4033, ց. 2, գ. 962, թ. 88, 93, 96-97 և այլն: Տե՛ս նաև **Ավետիսյան Հ.**, Հայկական հարցը 1918 թվականին, Երևան, 1997, **Հայրունի Ա.**, Հայկական խնդիրը Գերմանիայի արտաքին քաղաքականության մեջ 1918 թվականին, Երևան, 2013:

⁴ **Խատիսյան Ալ.**, նշվ. աշխ., էջ 52:

նակցային սեղանի շուրջ նստել Անդրկովկասի հետ: Նրա ճնշմամբ 1918 թ. ապրիլի 27-ին Կոստանդնուպոլսում կնքվեց գերմանա-թուրքական գաղտնի դաշնագիր, որով Անդրկովկասը բաժանվեց ազդեցության ոլորտների Թուրքիայի և Գերմանիայի միջև¹: Ըստ այդ դաշնագրի՝ Թուրքիային էին անցնում Անդրկովկասում նրա գրաված հայկական բոլոր տարածքները, ինչպես նաև Կարս-Ալեքսանդրապոլ-Ջուֆա երկաթուղին: Անդրկովկասի մյուս տարածքները՝ Վրաստանն ու Ադրբեջանը, ընդգրկվում էին Գերմանիայի ազդեցության ոլորտում: Այնուամենայնիվ, թուրքերը կարողացան հետագայում կորզել Անդրկովկասի երկաթուղով զորքերի անարգել տարանցման իրավունքը՝ իբր Հյուսիսային Իրանում անգլիական զորքերի առաջխաղացումը կանգնեցնելու համար, մինչդեռ Թալեաթ-Էնվեր տանդեմը ձգտում էր դեպի Բաքու:

Հետագայում գերմանացիներին հայտնի դարձավ, որ թուրքական զորքերի անարգել տարանցումը ընդամենը դիվանագիտական հնարք է. նույն օրը՝ ապրիլի 27-ին, գերմանա-թուրքական դաշնագիրը շրջանցելու նպատակով Թուրքիան գաղտնի դաշինք կնքեց մուսաֆաթականների հետ, որով բացվում էր թուրքերի ճանապարհը դեպի Բաքվի նավթը և Թուրքեստանի բամբակը: Հետագայում գերմանացիները հասկացան, որ խաբված են, բայց արդեն ուշ էր: Մինչև գերմանական զորքերի տարանցման նախապատրաստության ավարտը՝ Էնվերի եղբայր Նուրի փաշան, կարողացավ գրավել Բաքուն²: Այդ քայլը նոր մարտահրավեր էր՝ ուղղված Գերմանիայի շահերին, որն ավելի էր խորացնելու առանց այն էլ լարված հարաբերությունները Թուրքիայի հետ: Դա պատահական չէր. շուտով, ի պատասխան Թուրքիայի, վրաց-գերմանական գաղտնի բանակցությունների արդյունքում Վրաստանը ստացավ Գերմանիայի «հովանավորի» հրավեր: Իսկ մի քանի ամիս անց՝ 1918 թ. օգոստոսի 27-ին, Գերմանիայի և Խորհրդային Ռուսաստանի միջև կնքվեց Բրեստ-Լիտովսկի լրացուցիչ դաշնագիրը, որով Գերմանիան լուծում էր Բաքվի նավթի նկատմամբ իր պահանջների բավարարումը³: Սակայն, ինչպես ցույց տվեցին հետագա դեպքերը, Թուրքիայի ռազմաքաղաքական ղեկավարությունը կարողացավ իր ծրագրերն իրականացնել Անդրկովկասում:

Երկրամասն ազդեցության ոլորտների բաժանելու գերմանա-թուրքական դաշնագրի կնքման հաջորդ օրը՝ ապրիլի 28-ին, Թուրքիայի ռազմաքաղաքական կառավարությունը համաձայնվեց Անդրկովկասի հետ ընդգրկվել

¹ St' u Пипия Г., Политика Германии в Закавказье в 1918 году, Сборник документов, Тбилиси, 1971, с. 10, *его же*: Германский империализм в Закавказье 1910-1918 гг., М., 1978, с. 101, 102: St' u նաև Խաչատրյան Ա., Արևելահայ և թուրք դիվանագիտական հարաբերությունները, Երևան, 2010, էջ 9, Ավետիսյան Հ., նշվ. աշխ., էջ 185:

² Людендорф Э., նշվ. աշխ., էջ 598:

³ St' u Խաչատրյան Ա., ., նշվ. աշխ., էջ 9:

բանակցային գործընթացում: Կողմերի միջև փոխադարձ համաձայնությամբ այս անգամ որոշվեց հաշտության բանակցությունները նշանակել Բաթումում:

Гегам Петросян – *Внешинополитическая ситуация в Закавказье в преддверии батумских дипломатических переговоров (апрель 1918 г.)*

Турция военной силой захватила Батум, Ардаган, Карс, под ее давлением также было отсоединено от России Закавказье и провозглашено независимым государством. Независимость Закавказья не только освобождала Турцию от уз Брест-Литовского договора, но и предоставляла возможность для новых территориальных завоеваний. Германия потребовала от Турции прекратить военное наступление и территориальные завоевания на континенте, сесть за стол переговоров с Закавказьем. Геополитические и экономические интересы Германии неизбежно толкнули ее к тому, чтобы взять под свою опеку Грузию и Азербайджан. Под давлением Германии 27 апреля 1918 г. в Константинополе был подписан тайный немецко-турецкий договор, по которому Закавказье было разделено на сферы влияния между Турцией и Германией. В тот же день, в целях обхода немецко-турецкого договора, Турция заключила тайный договор с мусаватистами. Этим договором открывался путь турок к бакинской нефти. 28 апреля Турция согласилась сесть за стол переговоров с Закавказьем.

Gegham Petrosyan – *The Foreign Policy of Transcaucasia on the eve of Batumi Diplomatic Negotiations (April 1918)*

Turkey took Batumi, Ardahan and Kars with military force. Under its pressure, Transcaucasia was separated from Russia and declared itself an independent state. The independence of Transcaucasia not only freed Turkey from the obligations of the Treaty of Brest-Litovsk, but also gave it a new opportunity for territorial invasion. Germany demanded that Turkey cease its military promotion and territorial seizures in the region and sit at the diplomatic table of negotiations with Transcaucasia. Geopolitical and economic interests of Germany forced him to take control of Georgia and Azerbaijan. Under this pressure, in 1918 a German-Turkish secret treaty was signed in Constantinople on April 27, according to which Transcaucasia was divided into spheres of influence between Turkey and Germany. On the same day, to circumvent the German-Turkish treaty, Turkey secretly signed a memorandum with the Musafats, which opened the way for the Turks to Baku oil. On April 28, Turkey agreed to sit at the diplomatic table of negotiations with Transcaucasia.

1920 թ. ՕԳՈՍՏՈՍԻ 10-Ի ՀԱՅ-ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

***Բանալի բառեր** – հայ-ռուսական համաձայնագիր, բանակցություն, ՀՀ կառավարություն, խորհրդային կառավարություն, դաշնակիցներ, խորհրդայնացում, պատմագրություն, աշխատություն*

1920 թ. օգոստոսի 10-ի հայ-ռուսական համաձայնագրին հայ պատմագրության մեջ բավականին անդրադարձ եղել է: Հատկապես հետխորհրդային շրջանում հրատարակվեցին աշխատություններ, որոնց հեղինակները այն հանգամանորեն լուսաբանել և գնահատել են: Այդուհանդերձ, համաձայնագրի բնույթի վերաբերյալ միասնական կարծիք չկա. դրան առնչվող մի շարք հարցեր տարբեր կերպ են մեկնաբանվել: Ուստի ցանկանում ենք ներկայացնել և վերլուծել հայ պատմագրության մեջ առկա հակասական տեսակետները և փորձել հասկանալ, թե ինչու այդ համաձայնագիրը դժգոհություն առաջացրեց կողմերի միջև, և ով այն խախտեց: Ինչու էին համաձայնագրից դժգոհ հատկապես Անտանտի տերությունները: Վերջապես՝ ինչ վիճակում էր Հայաստանի խորհրդայնացման հարցը 1920 թ. օգոստոսին:

1920 թ. Մոսկվայում ընթացող հայ-ռուսական բանակցությունները, որնե արդյունքի չհանգեցրեց, ընդհատվում են: Այդ մասին դեռևս հունիսի 29-ին Չիչերինը հեռագրել էր Հայաստանի կառավարությանը՝ հայտնելով, որ Լեզրանը նշանակվել է ՀՀ-ում Խորհրդային Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ, որի խնդիրն էր Խորհրդային Ռուսաստանի և ՀՀ-ի միջև բարիդրացիական հարաբերություններ հաստատել, բոլոր վիճելի հարցերը կարգավորել, հակամարտությունները հարթել և երկու հանրապետությունների միջև վերջնական խաղաղություն ամրապնդել¹: Սակայն ՀՀ կառավարությունը սկզբնական շրջանում չի համաձայնվում ընդունել Լեզրանին որպես դեսպան, որովհետև հայկական պատվիրակությունը դեռևս գտնվում էր Մոսկվայում, իսկ միննույն խնդրի շուրջ տարբեր բանակցություններ վարելը կլիներ անմտություն²:

Հուլիսի 20-ին Օհանջանյանը Տ. Բեկզադյանին հղած գրությունում նշում էր. «Լեզրանին ոչ մի դեպքում մենք չենք ընդունելու իբրև դեսպան, որով-

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1., գ. 581, թ. 117:

² «Յառաջ», 27 հուլիսի 1920:

հետև պայմանագիրը ստորագրված չէ և ինչպես երևում է Մոսկվայում դիտմամբ քաշքշում են բանակցությունները մեզ հետ: Շատ-շատ նրան կարող ենք ընդունել իբրև դեկզագիայի նախագահ՝ շատ փոքրաթիվ շտատով՝ 4-5 հոգի, այդ էլ այն դեպքում, եթե վերջնականապես գլուխ չգա Մոսկվայի բանակցությունները և Շանթը իր ընկերներով վերադառնա Երևան»¹:

ՀՀ կառավարությունը միայն հուլիսի 26-ին Խորհրդային կառավարությանը հայտնեց, որ չի առարկում բանակցությունները Մոսկվայից Հայաստան տեղափոխելուն: Միաժամանակ համաձայնվեց ետ կանչել Շանթի պատվիրակությանը՝ պայմանով, որ մինչև նրա Երևան ժամանելը Թիֆլիսում նախնական բանակցություններ վարվեն մեկ այլ պատվիրակության հետ:

Այդ կապակցությամբ Հ. Օհանջանյանը հուլիսի 27-ին հեռագրում է Շանթին. «Ընդառաջ գնալով Խորհրդային կառավարության ցանկությանը, կառավարությունը համաձայնել է Խորհրդային Ռուսաստանի հետ բարեկամական փոխհարաբերություններ հաստատելու, պայմանագրի կնքման բանակցությունները Մոսկվայից փոխադրել Հայաստան: Բանակցությունների շարունակումը Հայաստանում՝ Լեզրանի կողմից ղեկավարվող պատվիրակության հետ, կառավարությունը դնում է Ձեր և Ձեր կողմից ղեկավարվող պատվիրակության մյուս անդամների վրա: Այդ պատճառով, խնդրում եմ Ձեզ և պատվիրակության անդամներին շտապ մեկնել Երևան»²:

ՀՀ կառավարության համաձայնությունը ստանալուց հետո արդեն Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը հուլիսի 28-ին Բ. Լեզրանին պաշտոնապես նշանակում է Հայաստանում Արտակարգ լիազոր ներկայացուցիչ՝ զինադադարի և խաղաղության դաշնագիր ստորագրելու համար³: Բանակցությունները սկսվեցին Թիֆլիսում 1920 թ. օգոստոսի 6-ին: ՀՀ կառավարությունը հրահանգել էր նախարարներ Ա. Ջամալյանին և Ա. Բաբայանին բանակցել Լեզրանի հետ ռազմական գործողությունները դադարեցնելու համար⁴: Հայ-ռուսական համաձայնագիրը ստորագրվեց օգոստոսի 10-ին:

Խորհրդահայ պատմաբան Ա. Մնացականյանը օգոստոսի 10-ի համաձայնագիրը համարում է դրական քայլ Խորհրդային Ռուսաստանի և ՀՀ-ի միջև հարաբերություններ հաստատելու ուղղությամբ⁵: Մ. Արզումանյանը օգոստոսի 10-ի համաձայնագիրը գնահատում է իբրև «որոշակի տեղաշարժ

¹ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 440, թ. 31:

² **Մարգարյան Ե.**, Լեզրանի միսիան // «Բանբեր Հայաստանի արխիվների» (այսուհետև՝ «ԲՀԱ»), 1967, թիվ 3, էջ 44:

³ Նույն տեղում, էջ 32:

⁴ ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 607, թ. 28:

⁵ Տե՛ս **Մնացականյան Ա.**, Հայ ժողովրդի ազատագրումը և վերածնունդը, Երևան, 1970, էջ 81:

դեպի առաջ», իսկ դաշնակցական կառավարության քաղաքականությունը համարում երկդիմի՝ նշելով նրա հակվածությունը դեպի Արևմուտք, քանի որ նույն օրը կնքվել էր նաև Սևրի պայմանագիրը: «Դրանով իսկ դաշնակցական կառավարությունը ռոմանիարում էր իր իսկ ստորագրած համաձայնագիրը Սովետական Ռուսաստանի հետ,– գրում է նա,– և բոլոր հույսերը կապում եվրոպական տերությունների հետ»¹: Բ. Խուդավերդյանը օգոստոսի 10-ի համաձայնագիրը համարում է «զինադադարի համաձայնագիր», որը, ըստ նրա, տոգորված էր բարյացակամությամբ և լի էր հոգատարությամբ հայ ժողովուրդի և ՀՀ-ի հանդեպ²: Այս խոսքերը, անշուշտ, տեղին կլինեին, եթե այդ համաձայնագրի կետերը չխախտվեին: Անդրադառնալով համաձայնագրի պատմական նշանակությանը՝ հեղինակը նշում է, որ դա առաջին հերթին դարձավ հայ-ռուսական պետական փոխհարաբերությունների հիմքը: «Համաձայնագրով առաջին փորձը կատարվեց Հայաստանը Անտանտի ճիրաններից խլելու և Խորհրդային Ռուսաստանին բարեկամ պետություն դարձնելու գործում»³,– այսպիսին է նրա եզրահանգումը:

Ակադեմիկոս Հ. Միմոնյանը նշում է, որ սույն համաձայնագրի ստորագրման օրը Ա. Ահարոնյանը Սևրում իր ստորագրությունը դրեց նույնանուն մեկ այլ պայմանագրի տակ՝ դրանով իսկ մի նոր օղակով իրեն կապելով արևմտյան տերությունների իմպերիալիստական քաղաքականությանը, սակայն խորհրդային կառավարությունը, ի գիտություն ընդունելով դաշնակցական կառավարության թշնամական նոր քայլը, շարունակում էր անդուլ ջանքեր գործադրել հայ ժողովրդի գլխին կախված վտանգը հեռացնելու համար⁴:

Ակադեմիկոս Գ. Գալոյանը, խորհրդային տարիներին հրատարակած իր աշխատություններից մեկում անդրադառնալով օգոստոսի 10-ի համաձայնագրին, մերժում է բուրժուական պատմագրության մեջ տեղ գտած այն տեսակետը, որ Խորհրդային Ռուսաստանն օգոստոսի 10-ի համաձայնագիրը դիտել է իբրև «թղթի կտոր»: Դա հիմնավորելու համար նա մեջբերում է Գ. Չիչերինի գրությունը՝ ուղղված Ս. Տեր-Գաբրիելյանին, որում մասնավորապես նշված էր. «Օգոստոսի 10-ի պայմանագիրը անհրաժեշտ է պահպանել անհետաձգելիորեն: Հայաստանի հետ հարաբերությունների ոչ մի խզում և ռազմական բարդություն չի թույլատրվում: Դա կառավարության տեսակետն է, որը ամուր և վճռական կերպով պաշտպանվում է պարտիայի կենտկոմի կողմից»: Սակայն հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ առաջինը հենց Ռուսաստանը խախտեց իր ստորագրած համաձայ-

¹ Արզումանյան Մ., Արհավիրքից վերածնունդ, Երևան, 1973, էջ 320:

² Տե՛ս Խուդավերդյան Բ., Զանգեզուր (1917-1921), Երևան, 1988, էջ 91:

³ Նույն տեղում, էջ 93:

⁴ Տե՛ս Միմոնյան Հ., Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը, Երևան, 1986, էջ 509:

նագիրը: Ինչ վերաբերում է դաշնակցական կառավարությանը, ապա հեղինակը գտնում է, որ վերջինս արհամարհում էր այս համաձայնագիրը, սահմանային առճակատումներ հրահրում և կեղծ լուրեր տարածում խորհրդային զորքերի հարձակման մասին: Գ. Գալոյանի կարծիքով՝ այս ամենը արվում էր խորհրդային զորքերի դեմ «դաշնակցական բանդաների» զործողություններն արդարացնելու նպատակով¹:

Հետխորհրդային պատմագրության մեջ ևս օգոստոսի 10-ի համաձայնագրի շուրջ տեղ են գտել տարբեր կարծիքներ: ՀՀ ԳԱԱ թղթկից անդամ Ա. Միմոնյանը օգոստոսի 10-ի համաձայնագիրը համարում է խորհրդային կողմի դիվանագիտական հաջողություններից մեկը, քանի որ «վիճելի» տարածքների հարցը արևմտյան տերությունների դիվանագիտության ոլորտից հանվեց և ընդգրկվեց բոլշևիկյան Ռուսաստանի և Խորհրդային Ադրբեջանի քաղաքական ու դիվանագիտական հարաբերությունների ոլորտ²: Այնուհետև նա նշում է, որ համաձայնագիրը ուժի մեջ մտնելուց անմիջապես հետո Հայաստանի զինվորական նախարարը հեռագրել է Դարալագյազում գտնվող Դրոյին և հանձնարարել հայտնել Ղափանի զորքերի հրամանատար Գ. Նժդեհին թողնել Զանգեզուրը և առանց դիմադրության անցնել հանրապետության տարածք: Վերջինս, սակայն, հայտարարել է, որ չի ենթարկվելու կառավարության հրամանին, մնալու է Կապարգողթում և շարունակելու է կռիվը: Սրանից ելնելով՝ հեղինակը գրում է. «Եթե Նժդեհը կտրականապես մերժում էր ենթարկվել օգոստոսի 10-ի զինադադար-համաձայնագրից բխող ՀՀ զինվորական նախարարի հրամանին և վճռել էր շարունակել կռիվը Կարմիր բանակի ու ադրբեջանական ուժերի դեմ, ապա նա ելնում էր միայն ու միայն Հայաստանի ու հայ ժողովրդի շահերից: Նժդեհը ուրիշ կերպ չէր կարող վարվել»³:

Հ. Հարությունյանը նշում է, որ Զանգեզուրում առաջ շարժվելու Կարմիր բանակի նորանոր փորձերի ձախողումը արագացրեց ՀՀ կառավարության և Խորհրդային Ռուսաստանի միջև օգոստոսի 10-ի համաձայնագրի ստորագրումը: Նա գտնում է, որ հայ-ռուսական համաձայնագիրը պարտադրվել էր ՀՀ կառավարությանը, ուստի այն վավերացրեց արդեն իսկ կատարված փաստը: «Լեռնային Ղարաբաղը և Զանգեզուրի գավառը մինչև համաձայնագրի ստորագրելն արդեն օկուպացվել էին խորհրդային զորքերի կողմից: Ինչ վերաբերում է Նախիջևանի շրջանին, ապա նա ևս նույն բախտին էր արժանացել ավելի վաղ՝ 1920 թ. հուլիսի 28-ին»⁴, – գրում է Հ. Հարությունյանը:

Է. Զոհրաբյանը այս համաձայնագիրը ՀՀ-ի համար դիվանագիտական

¹ Տե՛ս Գալոյան Գ., Անդրկովկասում սոցիալիստական ռևոլյուցիայի և կոմունիստական շինարարության պատմության կեղծարարության դեմ, Երևան, 1961, էջ 234-235:

² Տե՛ս Միմոնյան Ա., Զանգեզուրի գոյամարտը 1920-1921 թթ., Երևան, 2000, էջ 158-159:

³ Նույն տեղում, էջ 161:

⁴ Հարությունյան Հ., Լեռնային Ղարաբաղը 1918-1921 թթ., Երևան, 1996, էջ 268:

հաջողություն չի համարում, որովհետև այն չի գոհացրել ո՛չ Հայաստանին, ո՛չ Ռուսաստանին ու նրա դաշնակիցներին (Ադրբեջան, Թուրքիա) և ո՛չ Հայաստանի դաշնակիցներին (Անգլիա, Ֆրանսիա): Ըստ հեղինակի՝ համաձայնագրից Հայաստանի դժգոհության պատճառը հայ-ադրբեջանական վիճելի բոլոր տարածքները Ադրբեջանի դաշնակից Ռուսաստանի կողմից ռազմականումն էր: Իսկ ինչ վերաբերում էր Ռուսաստանին, ապա նրա կեցվածքը պայմանավորված էր դաշնակից Ադրբեջանի և Թուրքիայի դժգոհությամբ, որոնք ոչ միայն պահանջում էին վիճելի տարածքների կցումն Ադրբեջանին, այլև դեմ էին, որ Շահթախթի կայարանը և մինչև Ջուլֆա երկաթգծի շահագործման իրավունքը տրվեն Հայաստանին: Հենց սրանով է հեղինակը բացատրում համաձայնագրի ստորագրումից հետո Շահթախթը գրավելու ուղղությամբ կարմիր բանակի զորամասերի ձեռնարկած գրոհները¹: Իսկ ինչ վերաբերում է օգոստոսի 10-ի համաձայնագրից դժգոհ մնացած Հայաստանի «դաշնակիցներին», ապա հեղինակը կարծում է, որ Հայաստանը նրանց հետաքրքրում էր միայն որպես հակառուսական ճակատ և ոչ ավելին²:

Ակադեմիկոս Լ. Խուրշուդյանը, անդրադառնալով օգոստոսի 10-ի համաձայնագրին, հետևյալն է գրում. «ՀՀ-ն հայտնվեց աքցանի մեջ: Մի կողմից առաջ էր շարժվում ռուսական բանակը, մյուս կողմից՝ թուրքականը: Այդ տարածքները կամ պետք է գրավեին ռուսները կամ թուրքերը կամ էլ կիսեին իրար միջև: Դիմադրել միաժամանակ և Ռուսաստանին, և Թուրքիային՝ Հայաստանը չէր կարող: Ահա այդպիսի անելանելի պայմաններում ՀՀ կառավարությունը գնաց այդ տարածքները ժամանակավորապես Ռուսաստանին հանձնելու ճանապարհով: Ռուսաստանից դեռ ինչ-որ չափով հույս կար հետստանալու այդ տարածքները, ինչը լիովին բացառվում էր դրանք Թուրքիայի կողմից զավթելու դեպքում: Հակահայկական խումբը վարում էր նուրբ, ճկուն և խորամանկ քաղաքականություն»³:

Սույն համաձայնագիրը նա համարում է Ռուսաստան-Թուրքիա մրցակցության առաջին փուլում Ռուսաստանի հաղթանակ, քանի որ այն ժամանակավորապես ռազմակալեց Լեռնային Ղարաբաղը, Ջանգեզուրը և Նախիջևանը: Հեղինակը գտնում է, որ այն ՀՀ արտաքին քաղաքականության լուրջ անհաջողությունն էր, սակայն նաև դրական էր այնքանով, որ այդ տարածքները գրավեց Ռուսաստանը, այլ ոչ թե Թուրքիան կամ Ադրբեջանը, և դա հույս էր ներշնչում, որ դրանք Հայաստանի համար դեռևս վերջնականապես կորսված չեն⁴:

Ա. Ներսիսյանի կարծիքով՝ օգոստոսի 10-ին՝ Սևրի պայմանագրի

¹ Տե՛ս **Զոհրապյան Է.**, 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Երևան, 1997, էջ 129-130:

² Տե՛ս **Զոհրապյան Է.**, Նախիջևանյան հիմնահարցը (1920-1921), Երևան, 2010, էջ 148:

³ **Խուրշուդյան Լ.**, Հայաստանի բաժանումը 1920 թվականին, Երևան, 2002, էջ 101:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 103-104:

ստորագրման օրը, Թիֆլիսում վավերացված այս համաձայնագիրը ինքնին կասկածելի էր դարձնում այն, քանզի նախատեսում էր ռուսական զորքերի կողմից այն տարածքների գրավում, որոնք արդեն ՀՀ-ի մասն էին կազմում: Հեղինակը նշում է, որ ՀՀ ղեկավարները ամեն կերպ ձգտում էին Ռուսաստանի հետ լեզու գտնել՝ անկախությունը պահպանելու և նոր ողբերգությունները կանխելու նպատակով: «Բայց թե՛ այս, թե՛ հետագա բանակցությունները ցույց տվեցին, որ ռուսական կողմը եղավ դավադիր և երկդիմի՝ երկու ճակատով կռվելու փաստի առջև կանգնեցնելով Հայաստանի մանուկ հանրապետությանը»¹, – գրում է նա:

Կ. Սարգսյանը և Գ. Գալոյանը կարծում են, որ ամենին պատահական զուգադիպություն չէր, որ խորհրդային պատվիրակությունը օգոստոսի 10-ին՝ Սևրի պայմանագրի ստորագրման օրը, նաև Թիֆլիսում ստորագրեց հայ-ռուսական համաձայնագիրը: Կ. Սարգսյանը նշում է, որ մինչև դրա ստորագրումը, որով վիճելի տարածքները պետք է գրավեին խորհրդային զորքերը, արդեն իսկ գրավված էին: «Պարզապես այդ ընթացքը ձգվեց երկու ամիս և պայմանագրային ձևակերպում ստացավ միայն այն օրը, երբ Սևրում ստորագրվեց «Թուրքիայի մահալճիոն արձանագրող» Սևրի պայմանագիրը»², – իրավացիորեն գրում է հեղինակը: Լեզրանը, Չիչերինը և Կարախանը մեծագույն ջանքեր էին գործադրում, որպեսզի վիճելի տարածքները զբաղեցնեն Կարմիր բանակի զորամասերը՝ այդ կերպ փորձելով ժամանակ շահել Ադրբեջանի նվաճողական ձգտումները մեղմելու համար:

Գ. Գալոյանի կարծիքով՝ Թիֆլիսի հայ-ռուսական համաձայնագիրը ստորագրվեց Սևրի պայմանագրի վավերացման օրը, որովհետև Խորհրդային Ռուսաստանի կառավարությունը չէր ցանկանում վերջնականապես կորցնել Հայաստանը³:

Կ. Խաչատրյանը նշում է, որ Թիֆլիսում ստորագրված հայ-ռուսական համաձայնագիրը Խորհրդային Ռուսաստանը դիտում էր որպես հակաքայլ նույն օրը Սևրում ստորագրված հաշտության պայմանագրի, իսկ ինչ վերաբերում էր ՀՀ կառավարությանը, ապա, հեղինակի փաստմամբ, ՀՀ իշխանությունները այն համարում էին «ժամանակավոր» և մեծ նշանակություն չէին տալիս դրան⁴: «Այս ժամանակաշրջանում Հայաստանի իշխանությունները իրենց արտաքին քաղաքական բոլոր նպատակները կապում էին Սևրի պայմանագրի հետ, համոզված էին, որ եվրոպական հզոր պետություններ

¹ Ներսիսյան Ա., Ռուբեն, Երևան, 2007, էջ 335:

² Սարգսյան Կ., Հայ-վրացական հարաբերությունները 1918-1921 թթ., Երևան, 2002, էջ 132:

³ Տե՛ս Գալոյան Գ., Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Երևան, 1999, էջ 256:

⁴ Տե՛ս Խաչատրյան Կ., Հայ-ռուսական հարաբերությունները 1920-1922 թթ., Երևան, 2007, էջ 23:

ջանքերով այն անպայման իրականանալու էր: Եվ դա բնական ու հասկանալի է. չէ՞ որ Սևրի պայմանագիրն ավելի «ծանրակշիռ» էր, քան հայ-ռուսական համաձայնագիրը»¹, – գրում է հեղինակը:

Սփյուռքահայ որոշ հեղինակներ նույնպես անդրադարձել են օգոստոսի 10-ի համաձայնագրին՝ այն համարելով հաշտության ժամանակավոր փաստաթուղթ²: Դրանով Խորհրդային Ռուսաստանի ուժերը «գրավման տակ էին պահելու Ղարաբաղի, Ջանգեզուրի, Նախիջևանի շրջանները և Ղազախի գավառի մասը»³, մինչդեռ օգոստոսի 6-ից 9-ը ռուսական 11-րդ բանակն արդեն ռազմակալել էր Ղարաբաղը, Ջանգեզուրը, Նախիջևանը, դեռ ավելին՝ ռուսները անգամ թույլ էին տվել թուրքական ուժերին մտնել Նախիջևան և քեմալա-բոլշևիկյան միացյալ ուժերը գրավել էին այդ տարածաշրջանը⁴: Ահա նման պայմաններում է ստորագրվում Թիֆլիսի համաձայնագիրը: Կարծում ենք՝ չեն սխալվում սփյուռքահայ հեղինակները, երբ այն անվանում են հաշտության համաձայնագիր, քանի որ վիճելի տարածքներում փաստացիորեն չհայտարարված պատերազմ էր ընթանում: Այս առիթով ՀՀ վարչապետ Հ. Օհանջանյանը խորհրդարանի նոյեմբերի 1-ի նիստում իր ելույթում հաղես է եկել հետևյալ հայտարարությամբ. «Օգոստոսի սկզբներին Խորհրդային Ռուսաստանի և Ադրբեջանի միացյալ զորքերը սկսեցին հարձակումներ կատարել մեր հյուսիսային և արևելյան սահմաններին. մի շարք կռիվներից հետո հարկադրված եղանք օգոստոսի 10-ին կնքել զինադադար, որով Հայաստանի երեք մասերը՝ Ղարաբաղը, Ջանգեզուրը և Նախիջևանը հայտարարվեցին չեզոք գոտի, մինչև նրա բախտի վերջնական լուծումը»⁵:

Հայկական պատվիրակության անդամ Հ. Տերտերյանը իր հուշերում գրում է. «Պատվիրակութեան անդամներս շշմել էինք, թե ինչպես Հայաստանի կառավարութիւնը, որ չէր համաձայնում մի ամիս առաջ Մոսկուայում շատ ավելի նպաստաւոր պայմաններով մեզ առաջարկուած համաձայնագիրը ստորագրել եւ առաջարկում էր նոր պահանջ ներկայացնել դաշտային Ղարաբաղի մասին, օգոստոսի 10-ին համաձայնուել էր ստորագրելու այդ խայտառակ համաձայնագիրը»⁶: Հ. Տերտերյանը այսպիսի զարմացական տեսակետ է հայտնում հավանաբար այն պատճառով, որ տեղյակ չէր արդեն իսկ վիճելի համարվող տարածքներում կատարվող ռազմական բախումների մասին:

¹ Նույն տեղում, էջ 24:

² Տե՛ս **Վրացյան Ս.**, Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 484, **Լազեան Գ.**, Հայաստան եւ Հայ դատը (Հայ և ռուս յարաբերութիւններու լոյսին տակ), Երևան, 1991, էջ 239, **Տերտերեան Հ.**, Հայաստանի Հանրապետութեան և Խ. Ռուսաստանի բանակցութիւնները. Լ. Շանթի պատվիրակութիւնը // «Հայրենիք», 1954, թիւ 2, էջ 26:

³ **Լազյան Գ.**, նշվ. աշխ., էջ 239:

⁴ Տե՛ս **Սահակյան Տ.**, Ցավալի պայմանագրեր, Երևան, 2007, էջ 319:

⁵ «Յառաջ», 4 նոյեմբերի 1920, «Ժողովուրդ», 3 նոյեմբերի 1920:

⁶ «Հայրենիք», 1954, թիւ 2, էջ 26:

«Օգոստոսի 10-ին ստորագրուած այդ համաձայնագիրը ապագայ բանակցութիւններու յաջողութեան նկատմամբ որեւէ վստահութիւն չէր ներշնչեր: Հայ պատուիրակներ չէին կրնար համոզուիլ, որ Կարմիր Բանակի զօրամասեր հետագային դիրութեամբ պարպէին Նախիջեւանի եւ Զանգեզուրի շրջանները: Ահա այստեղէն կը սկսէր արդեն հայ եւ ռուս բանակցութեանց ձախողանքն ու պարտութիւնը, որ հետզհետէ լայն ծաւալ պիտի ստանար»¹, – գրում է սփյուռքահայ հեղինակ Թ. Վեհապետյանը: Մեկ այլ սփյուռքահայ հեղինակ՝ Ռ. Փիրումյանը, օգոստոսի 10-ի համաձայնագիրը համարում է հայերի համար նվաստացուցիչ և դրա խախտման մեղավոր է համարում Խորհրդային Ադրբեջանին: Ըստ էության, այդ համաձայնագիրը Խորհրդային Ռուսաստանի և Հայաստանի միջև ստորագրված առաջին պաշտոնական փաստաթուղթն էր: Հեղինակի խորին համոզմամբ այն մի կողմից նշանակում էր պարտություն և հողերի կորուստ Հայաստանի համար, իսկ մյուս կողմից փաստում էր Հայաստանի Հանրապետության ճանաչումը Ռուսաստանի կողմից²:

Օգոստոսի 10-ի համաձայնագրի վերաբերյալ Ս. Վրացյանը հետևյալն է գրում. «Հուլ. 20-ին, Խալիլ փաշայի ընկերակցությամբ, Լեզրանը հասավ Բաքու և Ազրբեջանի կոմունիստների հետ խորհրդակցելուց հետո անցավ Թիֆլիս, ուր, օգոստոսի սկզբին Նախիջևանում, Զանգեզուրում և Ղազախում տեղի ունեցող հայ-բոլշևիկյան կռիվները դադարեցնելու նպատակով գումարվեց խորհրդածողով Հայաստանի ներկայացուցիչներ՝ Ա. Զամալյանի ու Ա. Բաբայանի և Լեզրանի միջև և օգոստոսի 10-ին ստորագրվեց հաշտության համաձայնագիր, որով օգոստոսի 10-ին ժամը 12-ից սկսած վերջ էին գտնում պատերազմական գործողությունները Խորհրդային Ռուսաստանի և Հայաստանի միջև: Հայաստանի զորքերը գրավելու էին Շահթախթ-Խոկ-Ազնաբերդ-Սուլթանբեգ և ապա Քիվկիից հյուսիս և Բազարչայից արևելք անցնող գիծը, իսկ Ղազախի շրջանում՝ այն գիծը, որ բռնում էին հուլիսի 30-ին: Խորհրդային Ռուսաստանի զորքերը պիտի գրավէին Ղարաբաղ, Զանգեզուր, Նախիջևան շրջանները: Այդ գրավումով չէր նախորոշվում այդ գավառների վերջնական պատկանելությունը. այդ հարցը պիտի որոշվէր Խորհրդային Ռուսաստանի և Հայաստանի միջև կնքվելիք դաշնագրով: Մինչև այդ դաշնագրի կնքումը Շահթախթ-Ջուլֆա երկաթուղին պիտի բանեցվէր Հայաստանի երկաթուղային վարչության կողմից»³: Կարծում ենք՝ այս համաձայնագրով Խորհրդային Ռուսաստանը ժամանակավորապես կանխում էր Թուրքիայի և Ադրբեջանի հարձակումը վիճելի տարածքների ուղղությամբ: Լեզրանը և Չիչերինը հասան այն բանին, որ Ղարաբաղի,

¹ Վեհապետյան Թ., Նոր սերունդը՝ քաղութան նոխագ, հ. Ա, Պէրուր, 1988, էջ 68-69:

² Տե՛ս Փիրումյան Ռ., Հայաստանը ՀՅԴ-Բոլշևիկ յարաբերութիւնների ոլորտում (1917-1921), Երևան, 1997, էջ 233-234:

³ Վրացյան Ս., նշվ. աշխ., էջ 484-485:

Զանգեզուրի և Նախիջևանի պատկանելիության հարցը մնաց անորոշ մինչև վերջնական պայմանագրի կնքումը:

Միյուռքահայ հեղինակ Ա. Սևանը նշում է, որ Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչ Լեգրանը համաձայնվեց կնքել օգոստոսի 10-ի հայ-ռուսական համաձայնագիրը՝ «սկսելու համար հայ եւ ռուս բանակցութիւններուն, յուսալով ձեռք բերել խաղաղ կերպով այն՝ ինչ պէտք պիտի ըլլար ձեռք ձգել կոտով»¹: «Ամէն անոնք, որոնք տեղեակ էին այդ բանակցութիւններուն եւ այն ոգիին, որով կառաջնորդէր Ռուսաստանի ներկայացուցիչը, ոչ մի կասկած չէին տածեր Մոսկւայի սնուցած նպատակներու մասին. բոլոր առաջարկները Հայաստանը կը դնէին խաղաղ, անաղմուկ «կամովին» խորհրդայնացման ճամբուն վրա»², – գրում է նա:

Յավոք, օգոստոսի 10-ի համաձայնագիրը չիրագործվեց, ավելին՝ դրանից դժգոհ մնացին թե՛ Հայաստանը և թե՛ նրա թշնամիներն ու դաշնակիցները: Հայաստանը դժգոհ էր, քանի որ վիճելի տարածքները անցել էին Խորհրդային Ռուսաստանի վերահսկողության ներքո: Աղբրեջանը դարձյալ դժգոհ էր, քանի որ ինքը նույնպես ցանկանում էր զավթել վիճելի տարածքները, իսկ Թուրքիան դժգոհ էր, քանի որ համաձայնագրով Շահթախթ-Ջուլֆա երկաթգծի շահագործման իրավունքը տրվում էր Հայաստանին³: Թուրքիան պատճառաբանում էր, որ դա միակ կետն է, որով ինքը կարող էր Աղբրեջանի տարածքով կապվել Ռուսաստանի հետ և դնում էր Շահթախթը թուրքական գորքերին հանձնելու հարցը: Չիչերինը ևս դժգոհություն էր հայտնել Լեգրանին առ այն, որ Շահթախթը՝ Թուրքիային կապող հատվածը, օգոստոսի 10-ի համաձայնագրով տրվում էր Հայաստանին: Գ. Գալոյանը նշում է, որ Լեգրանը համաձայնագրի այս կետը կենտրոնի հետ չէր համաձայնեցրել⁴: Ուստի կարծում ենք, որ այն ուղղված էր Թուրքիայի դեմ:

Հայաստանի, Աղբրեջանի և Թուրքիայի դժգոհությունը համաձայնագրից կարծես թե տեղին էր և հասկանալի, սակայն բոլորովին անհասկանալի էր, թե ինչից էին դժգոհ Հայաստանի «դաշնակից» Անգլիան և Ֆրանսիան: Ս. Վրացյանը նշում է, որ օգոստոսի 10-ի համաձայնագիրը դժգոհություն առաջացրեց Թիֆլիսի դաշնակից ներկայացուցիչների մոտ: «Անգլիայի ներկայացուցիչ կոմանդոր Լիվքը մեղադրում էր հայերին, որ Հայաստանը երես է դարձնում դաշակիցներից և այլևս չպիտի կարողանա օգտվել նրանց օգնությունից, իսկ Ֆրանսիայի բարձր կոմիսար դը Մարտելը գտնում էր, որ հայերը անցնում են դաշնակիցների թշնամիների բանակը: Դը Մարտելի

¹ Արմեն Մեան, Փետրուար 18-ի յեղափոխութիւնը // «Վեմ», հանդես մշակոյթի եւ պատմութեան, ԺԳ, հունուար-փետրուար, 1936, էջ 89:

² Նույն տեղում:

³ Տե՛ս Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, 2000, էջ 248-249:

⁴ Տե՛ս Գալոյան Գ., նշվ. աշխ., էջ 259:

դժգոհությունը մեծ էր և այն պատճառով, որ Հայաստանի կառավարությունը մերժել էր առնել Ֆրանսիայի վաշխառուական պայմաններով առաջարկած զենքերն ու ռազմամթերքը: Օգոստոսի 31-ին Երևան գնաց կոմ. Լիվքը, ուր ընդունվեց հանդիսավորությամբ, և կառավարության հետ շփվելով ու դրությանը տեղն ու տեղը ծանոթանալով համոզվեց, որ իր կասկածներն անհիմն են: Նույն ժամանակ Լիվքը Հայաստանի կառավարությանը ներկայացրեց տնտեսական պայմանագրի մի նախագիծ՝ Հայաստանի նավահանգիստները և երկաթուղիները Անգլիային հանձնելու իմաստով և առաջարկեց երեք օրվա ընթացքում ստորագրել, սակայն ՀՀ կառավարությունը մերժեց¹: Ս. Վրացյանի այս վկայությունից հստակ ակնհայտ է, որ Հայաստանը հայտնվել էր իսկապես անելանելի իրավիճակում, քանզի դաշնակից պետությունները նրա նկատմամբ անկեղծ չէին: Ավելին, ինչպես երևում է մեջբերումից, Անգլիան, օգտվելով ՀՀ-ի վիճակից, նոր պահանջներ էր ներկայացնում վերջինիս: Կարծում ենք՝ Անգլիան այս քայլով ավելի շատ հակված էր հակադրվելու Ռուսաստանին՝ Հայաստանին տրամադրելով նրա դեմ: Եթե ՀՀ-ն հենց այս ժամանակ հրաժարվեր դաշնակիցներից և նախընտրեր քեմալականների հետ բանակցությունների ուղին, վստահ ենք, որ թուրք-հայկական վերջին պատերազմը տեղի չէր ունենա:

Ա. Սիմոնյանը իրավացիորեն նշում է, որ Հայաստանի «դաշնակից» պետությունները Հայաստանի կառավարության կողմից օգոստոսի 10-ի համաձայնագրի ստորագրումը դիտում էին որպես Անտանտի ուխտին «փոքր դաշնակցի» բացահայտ դավաճանություն: «Հայաստանին ռեալ օգնության ձեռք չմեկնելով և քեմալական զավթիչներից նրան պաշտպանելու միջոցներ չձեռնարկելով, – գրում է հեղինակը, – «դաշնակից» տերությունները միաժամանակ ամեն կերպ խոչընդոտում էին Ռուսաստանի հետ նրա մերձեցմանը: Ահա այդ ընդհանուր քաղաքականությունից ելնելով է, որ նրանք կտրակա՛նապես հանդես եկան ՌՄՖԽՀ-ի և ՀՀ-ի միջև կնքված ժամանակավոր համաձայնագրի դեմ»²: Այնուհետև հեղինակը նշում է, որ Անգլիայի և Ֆրանսիայի ներկայացուցիչները երկար զրույցներից և հանգամանալից բացատրություններից հետո համոզվեցին, որ Հայաստանի կառավարությունը հավատարիմ է Անտանտի ուխտին և շարունակում է մնալ հակաբոլշևիկյան դիրքերում³: Հարկ է նշել, որ անգամ այս բացատրություններից հետո թե՛ Անգլիան և թե՛ Ֆրանսիան Հայաստանին օգնություն ցուցաբերելու որևէ խոստում չեն տալիս: Կարելի է ենթադրել, որ Հայաստանը Անտանտի երկրներին հետաքրքրում էր պարզապես որպես հակախորհրդային երկիր, որը չէին ցանկանում կորցնել, հակառակ դեպքում որևէ չնչին օգնություն կցուցաբերեին գոնե հիմնավորելու համար իրենց «դաշնակից» լինելու

¹ Վրացյան Ս., նշվ. աշխ., էջ 485:

² Սիմոնյան Ա., նշվ. աշխ., էջ 164:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 165:

հանգամանքը: Թեև հարկ է նշել, որ այս ամենով հանդերձ ՀՀ Բյուրո կառավարությունը չփոխեց իր որդեգրած քաղաքականությունը և շարունակեց հավատարիմ մնալ «դաշնակիցներին»:

«Դաշնակիցների» դժգոհությունների առնչությամբ Լ. Խուրշուդյանը հետևյալն է գրում. «Դաշնակիցների մոտ նման տրամադրություններ առաջ էին եկել այն բանի հետևանքով, որ Հայաստանի կառավարության բանակցությունները բոլշևիկների հետ տարվել էին առանց դաշնակիցների գիտության, և զինադադարի պայմանների մասին նրանք իմացել էին մամուլից: Այդ պատճառով էլ առաջացավ այն սխալ կարծիքը, որ Հայաստանի կառավարությունը փոխում է իր կողմնորոշումը»¹:

Պատմագրության մեջ բուռն քննարկման առարկա է դարձել նաև այն հարցը, թե ով և ինչու խախտեց օգոստոսի 10-ի համաձայնագիրը: Հարկ է նշել, որ այս համաձայնագիրը ստորագրման իսկ պահից դատապարտված էր խախտման, քանի որ դրանից դժգոհ մնացին և՛ ստորագրող կողմերը, և՛ նրանց դաշնակիցները: Խորհրդահայ պատմագրության մեջ իշխող էր այն տեսակետը, որ դրա «ստորագրման իսկ պահից դաշնակցական կառավարությունը սկսեց խախտել այդ համաձայնագիրը»²: Ավելին, շրջանառվում էր նաև մեկ այլ մոտեցում, ըստ որի՝ «դաշնակցական կառավարությունը օգոստոսի 10-ի համաձայնագիրը խախտելով, երկրի ներսում տեռորի քաղաքականություն է վարում և բոլշևիկներին բռնաճնշումների ենթարկում»³: Խորհրդահայ պատմաբան Ս. Ալիխանյանի համոզմամբ՝ դաշնակցականները որոշում են մայիսյան ապստամբության ակտիվ մասնակիցների հետ հաշվեհարդար տեսնել և հենց օգոստոսի 14-ի գիշերը Ս. Ալավերդյանին, Բ. Ղարիբջանյանին և Ս. Մուսայելյանին Նորքի ձորում տանջամահ են անում⁴: Այս հանգամանքը հեղինակը դիտում է օգոստոսի 10-ի համաձայնագրի ոտնահարում: Սակայն նա հնարամտորեն շրջանցում է այն փաստը, որ մինչև բոլշևիկ գործիչների գնդակահարումը բոլշևիկները օգոստոսի 2-ին մահվան էին դատապարտել 14 դաշնակցական գործիչների, որոնց շարքում էին ՀՀ Խորհրդարանի անդամներ Ա. Շիրինյանը և Վ. Խորենին, ովքեր Ջանգեզուր էին մեկնել՝ ազդելու հայ բոլշևիկների վրա և գավառը փրկելու ավերից⁵:

Իհարկե սա օգոստոսի 10-ի համաձայնագրի խախտման հիմնավոր պատճառ չենք համարում, այլ կարծում ենք, որ այն զանց առնվեց, որովհետև խորհրդային ուժերը շարունակում էին համագործակցել կովկասյան թաթարների հետ: Խորհրդահայ պատմաբանները այս փաստը ևս անտեսել

¹ Խուրշուդյան Լ., նշվ. աշխ., էջ 114:

² Խուրավերդյան Բ., նշվ. աշխ., էջ 103, Արզումանյան Մ., նշվ. աշխ., էջ 321:

³ Մարգարյան Ե., նշվ. աշխ., էջ 26:

⁴ Տե՛ս Ալիխանյան Ս., նշվ. աշխ., էջ 134-135:

⁵ Տե՛ս Յուշապատում ձ. Յ. Դաշնակցութեան 1890-1950, Բոստոն, 1950, էջ 528:

են. չէ՞ որ համաձայնագրի ստորագրման օրը խորհրդային ուժերը, միանալով ազերի խմբավորումների հետ, հարձակվել են Ակսիբարի շրջանում գտնվող հայկական զորքերի վրա և գրավել մի քանի հենակետեր: Իսկ օգոստոսի 12-ին, շարունակելով իրենց առաջխաղացումը, նրանք գրավել են մի քանի գյուղեր Ղարադաղի շրջանում¹:

Գ. Գալոյանի կարծիքով՝ օգոստոսի 10-ի համաձայնագիրը բավարարում էր Ռուսաստանի պահանջները, սակայն դրա խախտողը եղավ հենց ինքը՝ Ռուսաստանը: Որպես դրա օրինակ՝ հեղինակը նշում է Նախիջևանի գավառը քեմալականներին հանձնելու փաստը: Նա մեջբերում է կատարում նաև Լեգրանին ուղղված Չիչերինի գրությունից. «Մենք հարցում արեցինք Օրջոնիկիձեին՝ Շահթախթին և Սարիդամիշը մեզանից անկախ գրավելու թուրքերի ցանկության մասին: Դա պայմանագրի խախտում չի լինի, քանի որ մենք չենք պարտավորվել այդ տարածքները պաշտպանել թուրքերից»²: Սրանով հեղինակը ցույց է տալիս, որ Խորհրդային կառավարությունը տեղյակ էր և չխոչընդոտեց թուրքական զորքերի մուտքը Սարիդամիշ և Շահթախթի՝ պայմանով, որ «այդ գծից այն կողմ» թուրքերը չպիտի անցնեին:

Լ. Խուրշուդյանը նույնպես կարծում է, որ օգոստոսի 10-ի համաձայնագրի առաջին խախտողը Խորհրդային Ռուսաստանն էր, որը թեև դրանով Շահթախթը թողել էր ՀՀ-ին, իսկ այդ փաստաթղթի ստորագրումից մեկ շաբաթ անց՝ օգոստոսի 17-ին, որոշեց թուրքերի համար ճանապարհ բացելու նպատակով «սխալմամբ» գրավել այն³:

Ըստ էության, այս մտափոխությունը կատարվել է օգոստոսի 12-ից 13-ը Բաքվում տեղի ունեցած խորհրդակցության ժամանակ, որտեղ որոշել են փոխել Հայաստանի նկատմամբ մարտավարությունը և Հայաստանի կողմից դեպի Թուրքիա Ռուսաստանին ազատ տարանցման իրավունք տալու համաձայնություն ստանալ⁴: Այն է՝ պետք է հասնել այն բանին, որ Թուրքիան Շահթախթը և ընդհանրապես Նախիջևանի գավառը գրավելու համաձայնություն ստանա, ինչը օգոստոսի 10-ի համաձայնագրի բացահայտ խախտում էր: Փաստորեն այս համաձայնության կայացումից հետո ՀՀ-ի հետ պայմանագիր ստորագրելու և դեպի Թուրքիա տարանցիկ ուղու իրավունք ստանալու առնչությամբ խորհրդային կառավարության հետաքրքրությունը անկում է ապրում:

Հարկ է նշել, որ Լեգրանը ձգտում էր պահպանել իր ստորագրած համաձայնագրի պայմանները և այդ առիթով օգոստոսի 20-ին հեռագրում է Չիչերինին. «Եթե Դուք իսկապես հաղորդել եք Մերգոյին թուրքերի պահանջով Շահթախթը գրավելու անհրաժեշտության մասին՝ խախտելով

¹ ՀԱՍ, ֆ. 200, ց. 1, գ. 607, թ. 29:

² Գալոյան Գ., նշվ. աշխ., էջ 259:

³ Տե՛ս Խուրշուդյան Լ., նշվ. աշխ., էջ 137:

⁴ Տե՛ս Զոհրաբյան Է., Նախիջևանյան հիմնահարցը, էջ 128:

խորհրդային կառավարության անունից օգոստոսի 10-ին Հայաստանի հետ իմ ստորագրած համաձայնագիրը, ինձ ուրիշ ոչինչ չի մնում անելու, քան խնդրելու Ձեզ և Կենտկոմին անհապաղ ինձ հետ կանչել: Նախիջևանի գավառի հանձնումը և Շահթախթի գրավումը քեմալականների կողմից օգոստոսի 10-ի համաձայնագրի բացահայտ խախտում է, ինչը հավասարազոր է Հայաստանի հետ խաղաղ հարաբերությունների խզման»¹:

Հեռագրից երևում է, որ Լեգրանը մտահոգված էր պահպանելու իր իսկ ստորագրած համաձայնագիրը և փորձում էր դրանում համոզել նաև Չիչերինին, սակայն խորհրդային կառավարությունը, տեղի տալով քեմալական Թուրքիայի պահանջին, համաձայնեց, որ թուրքերը գրավեն Շահթախթը և Սարիղամիշը՝ Նախիջևան մտած Կարմիր բանակի հետ կապ հաստատելու և օգնություն ստանալու նպատակով²: Չիչերինը փորձում էր արդարանալ՝ Լեգրանին հայտնելով, որ թուրքերի՝ Շահթախթը և Սարիղամիշը գրավելու ցանկությունը չէր կարող լինել պայմանագրի խախտում, քանի որ խորհրդային կառավարությունը չէր պարտավորվել այդ տարածքները պաշտպանել նրանցից³:

Այն, որ ՀՀ կառավարությունը հավատարիմ է եղել օգոստոսի 10-ի համաձայնագրի կետերին, վկայում է նաև ՀՀ զինվորական նախարարի գրությունը Ղափանի գորամասի ղեկավարությանը. «Զինուորական նախարարը հրամայում է Ձեզ, տեղեկացնել Նժդեհին, որպես զի՝ համաձայն կնքուած զինադադարի, հաւաքէ իր զօրամասերը նոյնպէս եւ բոլոր ցանկացողներին, ու նախագգուշական միջոցները ձեռք առնելով անցնի մեր տերիտորեան, բերելով իր հետ ամբողջ զէնքերը»⁴: Կարծում ենք, որ զինվորական նախարարի այս գրությունը բավարար էր՝ եզրակացնելու, որ հայկական կողմը մտադրություն չունէր խախտելու համաձայնագրի կետերը: Բացի այդ, եթէ հայկական կողմը հնարավորություն ունենար ռազմական գործողությունները շարունակելու, ապա ոչ թէ այն կստորագրէր կամ կմտածէր համաձայնագրի կետերը խախտելու մասին, այլ պարզապէս այն չէր ստորագրի:

Այսպիսով, կարծում ենք, որ օգոստոսի 10-ի համաձայնագիրը փոխզիջում էր, ինչն ազդարարում էր կարճատև պատերազմի ավարտը: Հայաստանը, համաձայնելով Խորհրդային Ռուսաստանի կողմից Ղարաբաղի, Զանգեզուրի և Նախիջևանի ժամանակավոր ռազմակալմանը, փոխարենը ստանում էր Շարուրի գավառը և իրավունք՝ շահագործելու Շահթախթ-Ջուլֆա երկաթուղին, ինչը կենսական մեծ նշանակություն ունէր: Ինչ-որ տեղ համաձայնագիրը կարող ենք դիվանագիտական հաջողություն համարել

¹ Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ., էջ 254:

² Տե՛ս **Զոհրապյան Է.**, Նախիջևանյան հիմնահարցը, էջ 132:

³ Տե՛ս **Զոհրապյան Է.**, 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, էջ 141:

⁴ **Գեորգեան Վ.**, Լեռնահայաստանի հերոսամարտը (1919-1921), Երևան, 1991, էջ 68:

Հայաստանի համար, քանի որ այս տարածքները ժամանակավորապես ռազմակալեց Խորհրդային Ռուսաստանը՝ առաջիկայում պայմանագիր ստորագրելու և դրանց կարգավիճակը հստակեցնելու համար: Կասկած իսկ չենք տածում, որ Հայաստանը ընդհանրապես շահագրգռված չէր խախտելու օգոստոսի 10-ի համաձայնագիրը, քանի որ նախ՝ բավարար ուժեր չունեին կովելու և երկրորդ՝ ձգտում էր հասնել իր անկախության ճանաչմանը Խորհրդային Ռուսաստանի կողմից: Թեև այն փաստը, որ Թիֆլիսի համաձայնագիրը վավերացվեց Սևրի պայմանագրի ստորագրման օրը, արդեն իսկ կասկածի տակ էր դնում այդ համաձայնագիրը իրականության վերածվելու հավանականությունը: ՀՀ կառավարությունը թերահավատորեն չի մոտեցել այդ համաձայնագրին: Դրա վկայությունն այն է, որ Ռուսաստանն ինքն էր ձգձգում ՀՀ հետ հաշտության պայմանագրի կնքումը, որը և խախտում էր օգոստոսի 10-ի համաձայնագիրը, քանի որ ինքը թույլատրեց դրանից դժգոհ Թուրքիային գրավել Շահթախթը և Սարիղամիշը: Չենք բացառում, որ այս քայլով Խորհրդային Ռուսաստանը ցանկանում էր ավելի ամրապնդել հարաբերությունները Թուրքիայի հետ:

Իսկ ինչ վերաբերում է այն հարցին, թե ինչ կարգավիճակում էր գտնվում Հայաստանի խորհրդայնացման հարցը հուլիս-օգոստոս ամիսներին, ապա պետք է նշել, որ դեռևս հուլիսի 30-ին ՌԿ(Բ)Կ Կենտկոմի Քաղբյուրոյի նիստում քննարկվել էր Չիչերինի առաջարկը Հայաստանի խորհրդայնացման վերաբերյալ, որը ընդունվել էր հաջորդ օրը՝ հուլիսի 31-ին¹, սակայն այս անգամ ևս այն գործնական նշանակություն չունեցավ, քանի որ օգոստոսի 10-ի համաձայնագրով Խորհրդային Ռուսաստանը հետաձգում էր Հայաստանի խորհրդայնացումը, այն պատճառով, որ նրա տարածքներում քաղաքացիական պատերազմը շարունակվում էր: Քանի դեռ այն չէր ավարտվել, Վրանգելը պարտություն չէր կրել, Խորհրդային Ռուսաստանը չէր ցանկանում ձեռնարկել Հայաստանի և Վրաստանի խորհրդայնացումը: Փոխարենը ձգտում էր ժամանակ շահել և շոշափել այդ պետությունների տրամադրությունները:

Փաստորեն, Հայաստանի խորհրդայնացման առաջին փորձը չիրականացավ լեհական հարձակման, իսկ երկրորդը՝ Խորհրդային Ռուսաստանում դեռևս չավարտված քաղաքացիական կռիվների պատճառով, երրորդն արդեն անխուսափելի էր լինելու: Վրանգելի պարտությունից հետո իրավիճակը կտրուկ փոխվեց: Օգոստոսի երկրորդ կեսից իրադարձությունները զարգացան այլ ճանապարհով: Ձևավորված քեմալա-բուլշևիկյան դաշինքի շնորհիվ Խորհրդային Ռուսաստանը նպատակ ուներ նեղուցներից հեռացնել դաշնակիցներին: Հետզհետե օրակարգ էր մտնում Հայաստանի խորհրդայնացման հարցը, թեպետ հրապարակավ նման հարց դեռևս չէր դրվում:

¹ St' u Геноцид армян: ответственность Турции и обязательства мирового сообщества. Документы и комментарий. Ред. и сост. профессор Ю. Г. Барсегов, т. 2, ч. 1, М., 2003, с. 110-112:

Ара Азатян – Оценка армяно-российского соглашения 10 августа 1920 г. в армянской историографии

Подписанное 10 августа в 1920 г. в Тбилиси армяно-российское соглашение было многократно изучено в армянской историографии. Особенно в постсоветский период были опубликованы работы, в которых дается подробное описание и оценка этого соглашения. Несмотря на это, в существующей литературе нет единого мнения о сущности Тбилисского соглашения. Ряд вопросов, связанных с этим соглашением, в историографии интерпретировался и оценивался по-разному, и нашей целью явилось проанализировать и представить противоречивые взгляды на армяно-российское соглашение в армянской историографии.

Ara Azatyan – Evaluation of Armenian-Russian Treaty (August 10, 1920) in the Armenian Historiography

The Armenian-Russian Treaty, signed on August 10 in Tbilisi, was sufficiently studied in Armenian historiography. Especially in the post-Soviet period, works were published in which this Treaty was thoroughly elucidated and evaluated. Nevertheless, there is no unanimous opinion on the nature of the Tiflis Treaty in the existing literature. In historiography, some issues related to this Treaty were interpreted and evaluated in a different way, so our goal was to present and analyze the contradictory views of Armenian historiography on the Armenian-Russian Treaty.

ԱՐԵՎՍՏԱՀԱՅ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ՏԵՂԱՎՈՐՄԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐԱՍՏԵՂԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Բանալի բառեր – Հայաստանի առաջին Հանրապետություն, գաղթականություն, արևմտահայ փախստականներ, փախստականների տեղավորման քաղաքականություն, փախստականների տունդարձ, Գառնիի շրջանի Միլլի ձոր

Հայաստանի առաջին Հանրապետության (1918-1920) սոցիալ-տնտեսական ծանր կացությունը առաջին հերթին անդրադարձել է ազգաբնակչության ամենաանապահով և խոցելի խավի՝ «հարյուր հազարներով հաշվող անտուն և անսնունդ գաղթականության»¹ վրա: Նորանկախ Հայաստանի Հանրապետությունը, հիրավի, մի մեծ «գաղթականական կայան» էր²: Գաղթականության ճնշող մեծամասնությունը հայազգի փախստականներ էին՝ 76.000 արևմտահայ և 148.000-ը արևելահայ³: Դրանով է պայմավորված եղել այն հանգամանքը, որ հանրապետության նորակազմ ազգային իշխանությունների համար փախստականների բազում և տարատեսակ խնդիրների լուծումները նախ և առաջ ազգապահպան նշանակություն են ունեցել: Բացի դրանից, այդ նույն հիմնական պատճառով են հանրապետության իշխանություններն իրենց ներքին ու արտաքին քաղաքականության ուշադրության կենտրոնում պահել փախստականների հիմնախնդիրը⁴:

Գաղթականության հարցում պետական քաղաքականությունը հանրապետության իշխանությունները ձևակերպել են իրենց գործունեության սկզբում: 1918 թ. օգոստոսի 3-ին նախարար-նախագահ (վարչապետ) Հ. Քաջազունին, Հայաստանի խորհրդում ներկայացնելով իր ձևավորած առաջին կառավարության ծրագրային հայտարարությունը, երկրում առկա իրավիճակը անվանել է «կատաստրոֆային» (աղետալի) և «անիշխանության» հան-

¹ Տե՛ս «Ձանգ», 7 օգոստոսի 1918, «Հորիզոն», 15 օգոստոսի 1918: Տե՛ս նաև Հայաստանի Հանրապետությունը 1918-1920 թթ. (քաղաքական պատմություն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, 2000, էջ 57, Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ 1918-1920 թթ., Երևան, 2010, էջ 10:

² Տե՛ս Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 199, Ռուբեն, Հայ հեղափոխականի մը հիշատակները, հ. 7, Թեհրան, 1982, էջ 144:

³ Տե՛ս Ա-դո (Հովհաննես Տեր-Մարտիրոսյան), Հայութեան երկունքը, Երևան, 2014, էջ 492-493:

⁴ Տե՛ս Հայրապետյան Կ., Փախստականների հիմնախնդիրը Հայաստանի նորաստեղծ առաջին հանրապետությունում // «Կանթեղ», 2004, հ. 2, էջ 128-136:

գեցնող մի քանի հանգամանքների հետ մեկտեղ մատնանշել նաև «հարյուր հազարներով հաշվող անտուն և անսնունդ գաղթականությանը»¹: Փախստականների հարցում պետական քաղաքականությունը ձևակերպվել է նշված հայտարարության՝ ներքին գործերին վերաբերող բաժնի 5-րդ կետում: Այն հանրությանը ներկայացվել է հետևյալ վերտառությամբ. «Տնօրինել գաղթականների և փախստականների վիճակը՝ մասամբ վերադարձնելով իրանց նախկին տեղերը, մասամբ տեղավորելով նոր վայրերում»²:

Հանրապետության առաջին կառավարության ծրագիրը ամբողջությամբ եղել է իրատեսական և կրել է չափավոր բնույթ: Անվանելով այն «պետության գոյությունը ապահովեցնող ամենաանհրաժեշտ գրավականների ծրագիր»՝ վարչապետը նշել է. «Պարզ է, որ նա չի ընդգրկում երկրի բազմազան կարիքները իրանց ամբողջությամբ, որ նրա սահմաններից դուրս են մնում մի շարք կարևոր և արդեն հասունացած խնդիրներ: Բայց կառավարությունը չի դնում հերթի այդ խնդիրները, որովհետև նրանց լուծումը այսօրվա պայմանների մեջ համարում է անկարելի: Կառավարությունը չի ուզում սխրանքների մեջ գցել երկիրը լայն հեռանկարներով և անիրագործելի խոստումներով, չի ուզում վերցնել իր վրա պարտականություններ, որոնց կատարումը վեր է իր ուժերից»³:

Տրամաբանական է, որ ծրագրում փախստականների հիմնախնդրի առաջարկվող լուծումները նույնպես պետք է լինեին չափավոր և իրատեսական: Մեր ձեռքի տակ կա արխիվային մի փաստաթուղթ, որը վերը նշված ծրագրային հայտարարության սևագիր տարբերակն է⁴: Այն ձեռագիր, աշխատանքային, ռուսերեն փաստաթուղթ է: Այստեղ վարչապետ Հ. Քաջագնունու ձեռքով արված են մի քանի ուղղումներ: Դրանում փախստականներին վերաբերող կետն առանց ուղղումների շարադրված է հետևյալ կերպ. «5) устроить беженцев – частью путем возвращения на прежние места, частью путем планомерного расселения по новым местам»⁵: Ինչպես տեսնում ենք, այստեղ նշվում է «տեղավորել փախստականներին» և ոչ թե «տնօրինել գաղթականների և փախստականների վիճակը»: Եթե համեմատենք երկու բառակապակցությունները, ապա «տեղավորել փախստականներին» իմաստային առումով ավելի ճիշտ է: Միաժամանակ, կառավարության պարտականությունների առումով «տնօրինել գաղթականների և փախստականների վիճակը» դրույթը ավելի ընդգրկուն է և պարտավորեցնող: Նկատի ունենալով մի կողմից կառավարության ծրագրային հայտարարության չափավոր, իրատեսական բնույթը,

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ 1918-1920 թթ., էջ 10:

² Տե՛ս նույն տեղում, էջ 10-11:

³ Նույն տեղում:

⁴ «5) տեղավորել փախստականներին՝ մասամբ վերադարձնելով իրենց նախկին տեղերը, մասամբ պլանավորված բնակեցնելով նոր վայրերում»: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 199, ց. 1, գ. 10, թ. 4-15:

⁵ Տե՛ս նույն տեղում, թ. 5:

մյուս կողմից այս ուղղությամբ նրա իրականացրած հետազոտ քայլերը՝ կարծում ենք, որ ավելի ընդունելի է «տեղավորել փախստականներին» ձևակերպումը: Այսպիսով, գաղթականության հարցում պետական քաղաքականությունը կարելի է միանշանակ անվանել փախստականների տեղավորման, այլ ոչ թե նրանց «վիճակի տնօրինման» քաղաքականություն:

Հանրապետության առաջին կառավարության սուղ միջոցները հնարավորություն չեն ընձեռել ապահովելու ոչ միայն մեծաթիվ փախստականների, այլև նրանց թվում համեմատաբար փոքրաթիվ կարիքավորների առաջնահերթ կենսական պահանջումները: Այդպիսի պայմաններում հանրապետության իշխանությունները փախստականների համար մշակել են այնպիսի քաղաքականություն, որով նրանց հնարավորություն է տրվել հողի վրա սեփական աշխատանքով ապահովել իրենց ընտանիքների գոյատևումը: Իսկ այդպիսի հնարավորություն չունեցող փախստականներին նախատեսվել էր տալ համապատասխան նպաստ: Միաժամանակ փախստականները ներգրավվելու էին երկրի սոցիալ-տնտեսական ներքին կյանքում՝ մասնակցելով հանրապետության քայքայված տնտեսության վերականգնմանը: Այսպիսով, հիմնվելով փախստականության խնամատարության գործում ձեռք բերված փորձի վրա, Հայաստանի Հանրապետության իշխանությունները մշակել են փախստականների հիմնախնդրի լուծման համապատասխան պետական քաղաքականություն, որի առաջնահերթ խնդիրներից է եղել փախստականների տեղավորումը կամ իրենց նախկին կամ նոր՝ լքված, ազատ բնակավայրերում: Ընդ որում, նախկին բնակավայրերը պետք է վերադառնային արևելահայ փախստականները, իսկ նոր բնակավայրերում, բնականաբար, պետք է տեղավորվեին արևմտահայ փախստականները:

Մեծաթիվ գաղթականների ապահովության ու խնամատարության խնդիրների հանգուցալուծումն իշխանությունները տեսել են Բրեստ-Լիտովսկի պայմանագրով նախատեսված սահմաններից թուրքական զորքերը դուրս բերելու և արևելահայ փախստականների՝ հայրենի բնակավայրեր տունդարձ կազմակերպելու միջոցով: Այդ է պատճառը, որ արևելահայ փախստականների տունդարձի խնդիրը ամրագրվել է նաև կառավարության ծրագրային հայտարարության արտաքին գործերի բաժնում: Այստեղ կարևորելով Օսմանյան կայսրության հետ հաշտության «ամրացումը» և «բարի դրացիական հարաբերություններ» հաստատումը՝ կառավարությունը պարտավորվել է «խստիվ կատարել այն բոլոր պարտականությունները, որ մենք հանձն ենք առել Օսմանյան կայսրության հանդեպ և հետևել, որ Օսմանյան կայսրությունը իր կողմից անի նույնը մեր վերաբերմամբ: Մասնավորապես լուծել Օսմանյան զորքերի մեր երկրից դուրս բերելու հարցը և գաղթականների վերադարձը»¹: Ակներև է, որ այդ ժամանակաշրջանում նախկին բնակավայրեր փախստականների վերադարձի՝ փաստացի տունդարձի խնդիրը

¹ Տե՛ս նույն տեղում, էջ 11:

հնարավոր էր լուծել միայն Օսմանյան Թուրքիայի հետ միջպետական հարաբերությունների շրջանակներում՝ դիվանագիտական շփումների և բանակցությունների միջոցով: Այդ խնդրի լուծման ուղղությամբ հանրապետության իշխանությունները ձեռնարկել են արտաքին քաղաքական մի շարք քայլեր:

Փախստականների նկատմամբ մշակված քաղաքականությունն իր օրենսդրական ձևակերպումը ստացել է Հայաստանի Խորհրդի՝ 1918 թ. սեպտեմբեր-հոկտեմբեր ամիսներին ընդունած չորս օրենքով. առաջինը՝ սեպտեմբերի 28-ին ընդունված «Կարիք ունեցող գաղթականների խնամատարության մասին» օրենքն է¹: Հռչակելով կարիք ունեցող փախստականներին, օգնությունը աշխատանքի միջոցով իրականացնելու հիմնարար սկզբունքը՝ օրենքը ամրագրել է, որ «Հայաստանի սահմաններում գտնված պետական ազատ», «նաև լքված և անտեր» հողերը «տրվում են գաղթականներին՝ մշակելու»: Օրենքի երրորդ հոդվածով նախատեսվել է, որ «գաղթական յուրաքանչյուր ընտանիքին հողը տրվում է աշխատավոր ձեռքերի թվի համեմատ»: Միաժամանակ, հաջորդ հոդվածով ամրագրվել է, որ փախստականին տրվելու է համապատասխան գույք՝ «մանրամասն ցուցակագրությամբ», որը փչացնելու համար նա ենթակա է պատասխանատվության: Օրենքի հինգերորդ հոդվածում նշվել է, որ եթե փախստականը մեկ ամսվա ընթացքում չի գնացել նշանակված վայր, ապա «հողից օգտվելու իրավունք ստացած գաղթականը զրկվում է այդ իրավունքից»²:

Տեղավորման քաղաքականության օրենսդրորեն ամրագրումը առաջին հերթին միտված էր օրինականացնելու 1918 թ. Արևելյան Հայաստան գաղթած արևմտահայ փախստականների իրականացված ռազմաքաղաքական գործողությունները, որոնց ճնշող մեծամասնությունը, ի տարբերություն արևելահայ փախստականների, երկրորդ անգամ էր բռնել գաղթի ճանապարհները: «1918-ի թրքական արշավանքն եկավ վերջնականորեն տեղահան ընելու 150 000-ի հասնող Տաճկահայությունը, որ այնքան դժվարություններով տեղավորված էր Տաճկահայաստանի մեջ»³,– գրել է Կ. Սասունին: Արևմտահայ փախստականների 1918 թ. գաղթը նախորդների համեմատ շատ ավելի կանոնավոր և կազմակերպված է եղել: Ինչպես վկայել է Կ. Սասունին, արևմտահայությունը «այս անգամ զինված էր և ավելի կազմակերպված՝ ներքնապես: Յուրաքանչյուր նահանգի ժողովուրդը հավաքական ուժ մը կը ներկայացներ»⁴: Արևմտահայ փախստականները մեծ հույսեր չեն կապել ինչպես տեղի ազգային, այնպես էլ Անդրկովկասի պետական իշխանությունների հետ: Արևմտահայ խորհրդի Երևանի շրջանային մարմնի

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքները (1918-1920 թթ.), էջ 6:

² Տե՛ս նույն տեղում:

³ **Սասունի Կ.**, Տաճկահայաստանը ռուսական տիրապետութեան տակ (1914-1918), Պոսթըն, 1927, էջ 167:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 169:

դիվանի վկայությամբ՝ «հին» փախստականությունը 1918 թ. առաջին կեսին զրկված է եղել պետական նպաստ և «կենսական զանազան անհրաժեշտ մթերքներ» ստանալու հնարավորությունից¹:

Եթե արևմտահայ «հին» փախստականները այդ ժամանակահատվածում չեն ստացել ոչ մի օգնություն, ապա ինչպիսի ակնկալիքներ պետք է ունենար մի քանի անգամ ավելի թվաքանակով «նոր» գաղթականությունը: Պարզ է, որ նման պայմաններում արևմտահայ փախստականները ձգտելու էին իրենց ուժերով լուծել գոյապահպանման խնդիրը: Չակնկալելով Արևելյան Հայաստանում գտնել օժանդակություն և օգնություն՝ արևմտահայ փախստականների այդ մասը իրենց ֆիզիկական գոյությունը պահպանելու և ապրուստ հայթայթելու համար ապավինել են սեփական զենքին և կազմակերպվածությանը: Իրենց գոյապայքարը շարունակելու համար նրանք ապավինել են Արագածից մինչև Ղարաբաղ և Ջանգեզուր ընկած հայկական լեռնամասերին: Այդպիսին է եղել նրանց առաջնորդ Մ. Տեր-Մինասյանի (Ռուբենի) մշակված ծրագիրը, որով անշեղորեն ղեկավարվել են²: «Պարզ տրամաբանություն մ'ունեն դեպի Արարատյան Հայաստան դիմող տաճկահայ զինված զանգվածը,՝ վկայել է Կ. Սասունին: – Անիկա կը մտածեր, եթե թուրքը բռնի ուժով զինք դուրս կը քշէ իր հինավուրց հայրենիքէն, ու ինքը Արարատն անցնելէն հետո, անհող ու անծածք բազմություն մը պիտի դառնա, իր մարդկային սրբազան իրավունքն է գրավել, զենքի ուժով, թաթարական հողերը և բնակիլ հոն, որպէս իր Նոր Հայրենիք»³: Միաժամանակ, չհավատալով Բաթումում ստորագրված «թրքական հաշտության դաշնագրին», արևմտահայ փախստականները համոզված էին, որ Բաթուն գրավելուց հետո թուրքերը «երկաթե օղակի մեջ պիտի առնեն մնացորդ հայությունը և պիտի ջանային խեղդել»: Այդ հեռանկարը նկատի ունենալով՝ «տաճկահայությունը կը մտածեր ինքնապաշտպանողական դիմադրության մը մասին և կը գտներ որ Ն. Բայազետի, Ջանգեզուրի և Ղարաբաղի բարձունքները կրնային դառնալ ամուր բերդեր թրքական խոշոր բանակներու դեմ՝ հայության ֆիզիկական գոյությունը պահպանելու, գոնե ժամանակի մը համար»⁴:

Արևմտահայ փախստականները, ղեկավարվելով Մ. Տեր-Մինասյանի մշակված ծրագրով, Արևելյան Հայաստանում իրենց տեղավորման խնդիրը լուծել են ինքնուրույն: Օգտագործելով զինված զորախմբերը՝ նրանք տեղավորվել են ոչ միայն լքված հողերի վրա, այլև մուսուլմաններից մաքրված բնակավայրերում: 1918 թ. մայիսի 5-ին սասունցիների գունդը գիշերային սրընթաց արշավանքով գրավել է ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող Թալինի բերդը: Այնուհետև Տարոնի զինված ուժերը

¹ Տե՛ս ՀԱՄ, ֆ. 201, ց. 1, գ. 500, թ. 142:

² Տե՛ս Ռուբեն, նշվ. աշխ., էջ 102:

³ Տե՛ս Սասունի Կ., նշվ. աշխ., էջ 172:

⁴ Տե՛ս նույն տեղում, էջ 180:

իրագործել են Արագածի և Աշտարակի շրջանների թաթարական բնակավայրերի մաքրումը ու այդ շրջաններում տեղավորել բազմահազար արևմտահայ փախստականներ: Այսպիսով, 1918 թ. Արևմտյան և ապա Արևելյան Հայաստան թուրքական զորքերի ներխուժման պայմաններում արևմտահայ փախստականները զենքի ուժով լուծել են իրենց գոյապահպանման խնդիրը՝ տեղավորվելով մուսուլմաններից ազատագրված բնակավայրերում:

Նորանկախ հանրապետությունում ստեղծված սոցիալ-տնտեսական ծանր պայմաններում ոչ հասարակությունը, ոչ էլ ցարքոցրիվ գործող բարեգործական կազմակերպությունները պարզապես ի վիճակի չեն եղել իրականացնելու այնպիսի սոցիալական օգնություն և աջակցություն, ինչպիսին ցուցաբերվել է արևմտահայ փախստականներին մինչև 1917 թ. վերջերը: Նորաստեղծ հանրապետության իշխանությունների հնարավորությունները պարզապես չնչին են եղել: «Թուրքահայ փախստականութիւնը, որու թիւը Հայաստանի Հանրապետութեան սահմաններու մէջ 70-80,000 կը հաշուի, ներկայիս ծայրայեղ թշուառ ու ողբալի պայմաններու մէջ կը գտնուի, - նշվել է 1918 թ. օգոստոսի 11-ին Արևմտահայ խորհրդի Երևանի շրջանային մարմնի դիվանի կողմից Հայաստանի առաջին Հանրապետության ներքին գործերի նախարարին ուղղված գրությունում: - Հին փախստականութեան վրայ, վերջին դեպքերու հետևանքով, աւելացաւ հոծ փախստական ազգաբնակչութիւն մը. Երկրից, Սուրմալուի, Սարդարաբադի, Ղարսի ևն շրջաներէն: Վերոյիշեալ բոլոր փախստականները, բացարձակապէս անգործ են և նիւթական ամեն տեսակ աղբիւրներէ զուրկ: Հանրապետութեան սահմաններու մէջ, անոնք սովի ուրուականի առաջ կանգնած են»¹: Նման պայմաններում ազատ և լքված հողերի վրա արևմտահայ փախստականներին տեղավորելը եղել է միակ իրատեսական քաղաքանությունը:

Նախկին իշխանություններից ժառանգած պետական կալվածքների ազատ հողերը հանրապետությունում սակավաթիվ էին: Լքված և անտեր հողերը 1918 թ. Երևանի նահանգում տեղի ունեցած ազգամիջյան կռիվների արդյունքն էին²: Միաժամանակ, երկրում ստեղծված ռազմաքաղաքական և սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակը հազարավոր մարդկանց դրդել է լքել հանրապետությունը: Ըստ Արտաքին գործերի նախարարի դիվանի հայտարարության՝ «օգոստոսի 7-ից մինչև օգոստոսի 28-ը Երևանից կամավոր կերպով Օսմանյան հողամասերը անցել են 1484 իսլամ գաղթականական ընտանիքներ, ընդամենը 6641 հոգի»³: Ընդ որում, մուսուլմանների այս թվաքանակում հաշվարկված չեն նախքան օգոստոսը Երևանից գաղթածները: Անհրաժեշտ է նշել, որ հանրապետությունից արտագաղթել են ոչ միայն մուսուլմաններ, այլև հայեր, հույներ, ռուսներ և այլք: Այսպիսով, լքված և անտեր

¹ ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 500, թ. 142:

² Տե՛ս **Զոհրաբյան Է.**, Ազգամիջյան կռիվները Երևանի նահանգում 1918 թ., Երևան, 2000:

³ «Կառավարության լրաբեր», 13 սեպտեմբերի 1918:

հողեր առաջացել են նաև հանրապետության գոյության հենց առաջին օրերից սկսած:

Պետական և լքված հողերի վրա արևմտահայ փախստականներին տեղավորելու խնդրի լուծումը հանձնարարվել է ներքին գործերի նախարարության գաղթականական բաժնի տեղավորման բաժանմունքին: Հանրապետության այն շրջաններում, որտեղ եղել են փախստականների մեծ կուտակումներ, ներքին գործերի նախարարության կողմից նշանակվել են գաղթականական հարցերով կառավարիչներ: Հատկանշական է, որ մինչև հանրապետության առաջին կառավարության ձևավորումը Երևանի նահանգային կոմիսարիատի կազմում փախստականական գործերի բաժին չի եղել¹: Հանրապետության իշխանությունները պարզապես փոխարինել են այդ ստորաբաժինների ղեկավարներին նոր անձանցով, որոնք, որպես կանոն, արևմտահայեր են եղել: Այսպես, 1918 թ. սեպտեմբերի 5-ին «ներքին գործոց միևնույն տարածքի գաղթականական բաժնի տեղավորման բաժանմունքի կառավարիչ» է նշանակվել արևմտահայ ազգային-քաղաքական գործիչ, ՀՅԴ անդամ Վահագն Քրմոյանը²:

Սակայն, լքված և ազատ հողերի սակավության պատճառով բազմապիսի արևմտահայ փախստականներին անհնար է եղել տեղավորել: Այդ պատճառով հանրապետության իշխանությունները փորձել են նրանց զետեղել նաև տեղացի հայերով և մուսուլմաններով բնակեցված բնակավայրերում: Այսպես, ներքին գործերի նախարարի օգնականը 1918 թ. հոկտեմբերի 21-ին զեկուցել է, որ «մեր գործակալները տեղեկացնում են մեզ թե Միլլի-Դարայի և Ագրիչայի շրջաններում գտնուող եօթ գիւղեր (Աղբիլիսա, Մանկկեօք, Գեօլա, ևն) ազատ են ու շեն: Այդ գիւղերում կարելի է տեղադրել մինչև 500 տուն գաղթականներ: Բայց այդ գիւղերը տաճկական սահմանին մօտիկ ըլլալուն համար կրճգուշանանք գաղթականները այդ գիւղերում բնակեցնելու: Առ այդ խնդրում ենք իմանալ թե միևնույն տարածքում ի՞նչ երաշխիք կուտայ գաղթականների ապահովման մասին»³: Այն դեպքերում, երբ տեղացիները դիմադրել են, ինչը հատկապես բնորոշ է եղել մուսուլման ազգաբնակչությանը, ապա իշխանությունները գործադրել են իրենց ձեռքի տակ եղած պարտադրանքի բոլոր հնարավոր միջոցները: Նորաստեղծ հանրապետության ազգային իշխանությունները՝ ի դեմս ներքին գործերի նախարար Ա. Մանուկյանի, Հայաստանի Խորհրդի գաղթականական հանձնաժողովի անդամ Մ. Տեր-Մինասյանի, չեն բավարարվել միայն ազատ կամ լքված հողերով՝ փորձելով փախստականներին տեղավորել մուսուլմաններով բնակեցված որոշ շրջաններում: Նման քաղաքականության օրինակ է Գառնիի շրջանի Միլլի ձորը, որի մուսուլման ազգաբնակչությունը ոչ միայն

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 15, թ. 21:

² Տե՛ս «Կառավարության լրաբեր», 10 սեպտեմբերի 1918:

³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 144, թ. 26:

տեղացի հայ փախստականներին չէր թույլատրում վերադառնալ իրենց բնակավայրերը¹, այլև ընդհանրապես չէր ենթարկվում հանրապետության իշխանություններին՝ հրաժարվելով հարկերը և ապառքները վճարելուց, հացահատիկը հայերին վաճառելուց, զենքն ու զինամթերքը հանձնելուց²։ Այս անհնազանդությանը նպաստել է նաև այն հանգամանքը, որ շրջանում գործել է տեղացի թաթարական ազգաբնակչությունից և թուրք ասկյարներից բաղկացած ավազակային զորախումբ³։

Օգոստոսի վերջին⁴ թուրքական զորքերի գլխավոր հրամանատար Խալիլ փաշայի Երևան այցելության ժամանակ Ա. Մանուկյանը ներկայացրել է փոքրածավալ Հայաստանի Հանրապետությունում փախստականների տեղավորման հետ կապված դժվարությունները և, օգտագործելով նրա հետ իր ունեցած վաղեմի բարիդրացիական հարաբերությունները, կարողացել է ձեռք բերել Գառնիի շրջանի Միլլի ձորում թաթարական բնակչությանը հանրապետության իշխանություններին հպատակեցնելու պարտադրանքի մասին նրա համաձայնությունը, ինչը առաջին հերթին ենթադրել է ապահովել այդ շրջանում գաղթականների վերադարձը և տեղավորումը։ Հակառակ դեպքում հանրապետության իշխանությունը չճանաչող մուսուլմանները պետք է արտաքսվեին թուրքերի կողմից ռազմակալված շրջաններ, որից հետո այնտեղ տեղավորվելու էին փախստականները⁵։

1918 թ. սեպտեմբերի կեսերին Ա. Մանուկյանը Երևանի գավառային կոմիսար (ոստիկանապետ) Լ. Ամիրխանյանին անձամբ է հանձնարարել Միլլի ձորում և Զիզինում հաստատել հանրապետության իշխանությունը⁶։ Վերջինիս առաջարկով 2-րդ տեղամասի կոմիսարը հանդիպումներ է ունեցել այդ շրջանի մուսուլման ազգաբնակչության ներկայացուցիչների հետ և պահանջել վճարել հարկերը և ապառքները, վաճառել հացահատիկը, հանձնել անօրինական զենքն ու զինամթերքը։ Ստանալով թաթարների համաձայնությունը՝ նա այդ մասին զեկուցել է Լ. Ամիրխանյանին։ Վերջինս Միլլի ձոր է ուղարկել իր օգնականին⁷, որը ձորի մի քանի բնակավայրերում հանդիպումներ է ունեցել թաթար բնակչության ներկայացուցիչների հետ։ Թաթարները միակարծիք չեն եղել. բաժանվելով երկու ճամբարի՝ ունևորները կողմ են եղել ենթարկվել հայկական իշխանություններին, իսկ չունևորները հրաժարվել են կատարել իշխանությունների պահանջները ցանկություն

¹ Տե՛ս նույն տեղում, գ. 500, թ. 105։

² Տե՛ս նույն տեղում, գ. 58, թ. 1, 9։

³ Տե՛ս նույն տեղում, թ. 22 և հակ.։

⁴ Տե՛ս «ԲՀԱ», 1991, թիվ 1-2, էջ 298։

⁵ Տե՛ս **Ռուբեն**, նշվ. աշխ., էջ 146։

⁶ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 58, թ. 9։

⁷ Այդ ժամանակվա օգնականի պաշտոնը համապատասխանում է մեր օրերի տեղակալի պաշտոնին։

հայտնելով լքել հանրապետության տարածքը: Տարաձայնությունների պատճառով սեպտեմբերի վերջին նույն օգնականը երկրորդ անգամ է ժամանել Միլի ձոր՝ այս անգամ Թուրքիայի ներկայացուցիչ Նուրիբեկի ուղեկցությամբ: Վերջինիս մասնակցությամբ նոյեմբերի 1-ը Միլի ձորի մուսուլման ազգաբնակչության համար սահմանվել է որպես հանրապետության նկատմամբ պարտավորությունների կատարման վերջնական ժամկետ: Սակայն թաթարները ոչինչ չեն ձեռնարկել: Հասկանալի է, որ նրանք փորձել են ժամանակ շահել՝ զինված դիմադրության նախապատրաստվելու նպատակով: Նորից սկսվել են բանակցությունները, որոնք կրկին անարդյունավետ են եղել: Նոյեմբերի 4-ին իշխանությունները ներկայացրել են վերջնագիր¹: 1918 թ նոյեմբերի 5-ին Միլի ձորի մուսուլման ազգաբնակչությանը հպատակեցնելու նպատակով Բաշ-Գառնիի հայկական գորաջոկատը փոխգնդապետ Մելիք-Շահնազարյանի հրամանատարությամբ² սկսել է ռազմական գործողությունները: Նոյեմբերի 12-ին ամբողջ Միլի ձորը ազատագրվել է: Միայն մի քանի գյուղերի բնակիչներ են կամավոր լքել Միլի ձորը³: Այսպիսով՝ «Միլի ձորը գործով և թնդանոթներով դատարկվեց թաթարներից, թեև կը վախենային շատերը, որ Ուլուխանլու նստած թուրքերը միջամտեն: Ինչ էլ որ լիներ, դա անհրաժեշտ էր, հողի խնդիրը մասամբ գոնե թեթևացնելու համար»⁴: Այնուհետև սկսվել է Միլի ձորում արևմտահայ և արևելահայ փախստականների տեղավորման աշխատանքները: Արևմտահայերի տեղավորումը ներքին գործերի նախարարը հանձնարարել է ճանաչված արևմտահայ զինվորական գործիչ Փիլոս Հարությունյանին⁵: Ներքին գործերի նախարարությունը դիտարկել է նաև Միլի ձորի տասը բնակավայրերում եզդի փախստականների տեղավորման խնդիրը⁶:

Անհրաժեշտ է նշել, որ Միլի ձորի և նմանօրինակ այլ գոծողությունները արևմտահայ փախստականների համար գոյապահպանման, իսկ պետական-քաղաքական գործիչներ Ա. Մանուկյանի և Մ. Տեր-Մինասյանի համար ազգապահպանման և նորաստեղծ հանրապետության ներքին անվտանգության ապահովման խնդիրները լուծելու նպատակ են հետապնդել: Այդ գործողությունները կազմակերպվել և իրականացվել են հասարակությունից, խորհրդարանի պետական-քաղաքական որոշ շրջանակներից գաղտնի⁷: Մ. Տեր-Մինասյանի մշակած ծրագրի համապատասխան և նրա անմի-

¹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 58, թ. 1 (հակ.):

² Տե՛ս նույն տեղում, թ. 8:

³ Տե՛ս նույն տեղում, թ. 10:

⁴ **Ռուբեն**, նշվ. աշխ., էջ 146:

⁵ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 201, ց. 1, գ. 144, թ. 63:

⁶ Տե՛ս նույն տեղում, գ. 58, թ. 11:

⁷ Տե՛ս **Աստվածատուրյան Ա.**, Ռուբենը // «Հայրենիք», 1955, հունվար, էջ 86, տե՛ս նաև **Ռուբեն**, նշվ. աշխ., էջ 115-116:

շական ղեկավարությամբ արևմտահայ զինված խմբերն իրականացրել են նաև Ճղնի ձորի և Միլիտերեի շրջանի մաքրումը, որից հետո այնտեղ ևս տեղավորվել են արևմտահայ փախստականներ:

Карен Айрапетян – *Политика устройства западноармянских беженцев во вновь образованной Первой Республике Армения (1918-1920 гг.)*

Для национальных властей вновь образованной Республики Армения решение беженской проблемы имело важное значение. Поэтому государственная беженская политика была озвучена уже в первом программном документе вновь сформированного правительства. Затем беженская политика была законодательно закреплена республиканским парламентом. Она была названа политикой устройства беженцев. В ее основе лежало обустройство беженцев путем их возвращения на прежние места жительства или размещения на новых местах. В последнем случае оно, как правило, касалось западно-армянских беженцев, которые размещались на покинутых или бесхозных землях. Однако в небольшой республике таких земель явно не хватало. Поэтому республиканским властям приходилось устраивать беженцев и в населенных местными жителями деревнях, что вызывало их недовольство, а в татарских поселениях и прямое противодействие властям. Некоторые населенные татарами районы вообще не признавали и не подчинялись властям вновь образованной Республики Армения. В этих случаях по отношению к ним применялись соответствующие меры принуждения. Примером такого осуществления политики размещения западноармянских и возвращения на прежние места жительства восточноармянских беженцев стали действия республиканских властей в сентябре-ноябре 1918 года в ущелье Милли Гарнийского района.

Karen Hayrapetyan – *The Policy of Accommodation of Refugees in the Newly Created First Republic of Armenia (1918-1920)*

The issue of the refugees had a great significance for the national authorities of the newly established first Republic of Armenia. For this reason, the state policy of refugees was formulated in the first program document of the newly formed government. Subsequently, the policy of refugees was legislatively formulated by the parliament of the republic. It was called the refugee accommodation policy. On the basis of this policy was the accommodation of refugees in their previous or new residences. The latter were mainly attributed to Western Armenian refugees who were placed in abandoned or orphaned lands. However, in this small republic such lands were not enough. For this reason, the authorities of the republic were forced to place refugees in villages inhabited by local residents. Those steps aroused discontent of the local residents, in some Tatar settlements even resistance took place. Some regions of the republic with a dense Muslim population refused to obey the newly established republic's authorities. In such cases appropriate enforcement measures were taken over local muslim population. An example of application of Western Armenian refugee accommodation policy and Eastern Armenian refugee homecoming policy was the military-political events carried out in Milli canyon of Garni region in September-November 1918.

**ԱՊՐԻԼՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐՈՒՄ**

***Բանալի բառեր** – Արցախյան պատերազմ, քառօրյա պատերազմ, հրադադարի
ռեժիմ, ԼՂՀ, ռազմական գործողություններ, տեղեկատվական պատերազմ, միջազգային
մամուլ, ադրբեջանական քարոզչություն, հայկական լրատվադաշտ*

2016 թ. ապրիլյան առաջին օրերի իրադարձությունները դարաբաղյան հակամարտության տարածքում, որը կոչվեց «քառօրյա պատերազմ», ցնցեց Հայաստանը և բազմամիլիոնանոց հայկական սփյուռքը: Այն դարձավ հրադադարի 22 տարիների ամենադրամատիկ իրադարձությունը: Ապրիլյան պատերազմը վճռորոշ դեր ունեցավ միջազգային միջնորդների և ԼՂՀ ու Ադրբեջանի հետագա հարաբերությունների վրա: Նախորդ տարիներին, իհարկե, արձանագրվել են բազմաթիվ սահմանային միջադեպեր, սակայն մինչև 2014 թ. ամառը իրավիճակը եղել է համեմատաբար կայուն և կանխատեսելի: Նշենք, որ 1994 թ. մայիսյան անժամկետ զինադադարից ի վեր Հայաստանն ու Լեռնային Ղարաբաղը տվել են ավելի քան 1000, իսկ Ադրբեջանը, ըստ ոչ պաշտոնական տվյալների, 2000 զոհ՝ հիմնականում 18-20 տարեկան ժամկետային զինծառայողներ: 2015 թ. ադրբեջանական կողմը սկսեց կիրառել զինատեսակներ, որոնք օգտագործել էր պատերազմի թեժ շրջանում՝ 1992-1994 թթ.: 2016 թ. հունվար-մարտ ամիսներին նա շարունակում էր պարբերաբար խախտել հրադադարը հրազենի, նոնականետների, ականանետների կիրառմամբ: Ադրբեջանցի զինվորականները չէին դադարեցնում ԼՂՀ տարածք դիվերսիոն ներթափանցումների փորձերը, որոնց նպատակն էր ապակայունացնել իրավիճակը ԼՂՀ-ում:

Ապրիլի 1-ի լույս 2-ի գիշեր՝ ժամը 3.00-ի սահմաններում, Ադրբեջանը, խախտելով 1994 թ. մայիսի 12-ին ձեռք բերված կրակի դադարեցման եռակողմ (Լեռնային Ղարաբաղ-Ադրբեջանի Հանրապետություն-Հայաստանի Հանրապետություն) համաձայնագիրը¹ և Ղարաբաղյան հակամարտու-

¹ 1994 թ. մայիսի 5-ին՝ Բիշքեկում Ադրբեջանի, Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի խորհրդարանական կառույցների ղեկավարների բանակցությունների ավարտին, ստորագրվեց Բիշքեկյան արձանագրությունը, որով կոչ էր արվում մայիսի 9-ի գիշերը դադարեցնել կրակը: Այդ օրը Լեռնային Ղարաբաղում ՌԴ նախագահի լիազոր ներկայացուցիչ Վլադիմիր Գազիմիրովը նախապատրաստեց «Անժամկետ հրադադարի մասին» համաձայնագիրը, որը նույն օրը ստորագրեց Ադրբեջանի պաշտպանության նախարար Մամեդրաֆի Մամեդովը,

թյունը բացառապես խաղաղ ճանապարհով կարգավորելու միջազգային պարտավորվածությունները, նախահարձակ ռազմական գործողություններ սկսեց հակամարտ գորքերի սահմանագծի ամբողջ երկայնքով: Կարելի է ասել, որ սանձազերծվեց Արցախյան պատերազմի նոր փուլ, որը դադարեց ապրիլի 5-ին հաստատված հրադադարով¹:

Ապրիլյան ռազմական գործողություններն այս անգամ տարբերվում էին իրենց աննախադեպությամբ և ծավալով: Ադրբեջանական կողմը գործի էր դրել ահռելի քանակությամբ զրահատեխնիկա, համազարկային կայանքներ, ավիացիա, հրետանի: Հարվածների թիրախը ոչ միայն հայ դիրքապահներն էին, այլև հայկական բնակավայրերը և խաղաղ բնակչությունը: Ադրբեջանն Արցախի դեմ փորձեց կիրառել բարձրտեխնոլոգիական պատերազմ՝ գործի դնելով իսրայելական արտադրության ժամանակակից «Հարոփ» հարվածային անօդաչու թռչող սարքեր՝ հետախուզական և հարվածային ԱԹՄ-ները (դրոններ) և այլ զինատեսակներ: Ապրիլի 4-ից 5-ը հայ դիրքապահների ուղղությամբ կիրառեց զանգվածային ոչնչացման «SOU» և «Սմերչ» համազարկային կրակի ռեակտիվ համակարգեր: Այդ օրերի ընթացքում հայկական կողմին հաջողվեց խոցել 12 տարատեսակ ԱԹՄ:

Ինչպես իրադարձությունների հետագա զարգացումը ցույց տվեց, այդ օրերին տարածաշրջանը դարձավ լայնածավալ ռազմական գործողությունների ականատես: Յուրաքանչյուր պատերազմի սկիզբ ցանկացած երկրում ուղեկցվում է հուզական բռնկումներով, որից զերծ չմնաց նաև Հայաստանը: Ռազմական գործողությունները լուսաբանելիս տարատեսակ տեղեկատվություն էր տարածվում թե՛ հայկական, թե՛ ադրբեջանական և թե՛ միջազգային մամուլում: Նշենք, որ լրատվական դաշտում հայկական կողմը բավականին արհեստավարժ գտնվեց: Հայկական գրեթե բոլոր կայքերը, լրատվամիջոցները ադրբեջանական սադրանքին տեղիք չտվեցին: Եղան, իհարկե, լրատվամիջոցներ, որոնցում տեղ գտան սխալ մեկնաբանություններ, որոնք ադրբեջանական կողմը շատ արագ տարածեց, ինչն այդ իրավիճակում անթույլատրելի էր: Պաշտոնական խողովակներով պարբերաբար հայտարարություն էր տարածվում, որոնցում հորդորում էին մեղիա պատասխանատուներին լինել ավելի զգոն, պահպանել զսպվածություն և տուրք չտալ սադրանքներին, առաջնորդվել պաշտոնական հաղորդագրություններով: Հայկական մեղիա տիրություն արտակարգ ռեժիմով ներկայացվում էին մարտական առավել թեժ կետերից հաղորդագրություններ ու տեսանյութեր հատկապես սահմանագծի հարավային՝ Հադրութի և հյուսիսային՝ Մարտա-

մայիսի 10-ին Երևանում այն ստորագրեց Հայաստանի պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանը, իսկ մայիսի 11-ին՝ ԼՂ բանակի հրամանատար Սամվել Բաբայանը: Հրադադարի մասին գրավոր համաձայնությունն ուժի մեջ մտավ 1994 թ. մայիսի 12-ի կեսգիշերին:

¹ Տե՛ս «Ժամը 12:00-ից երկկողմանի կրակը դադարեցվել է», ԼՂՀ ՊԲ - <http://hetq.am/arm/news/67051/zhamy-1200-ic-erkkoxmani-kraky-dadarecvel-e-lxh-pb.html>:

կերտի ուղղություններից: Պաշտոնական խողովակներով հեռուստատեսությամբ պարբերաբար հայտարարվում էր ձեռնպահ մնալ որևէ մեկի հետ համացանցով կամ հեռախոսազանգերով տեղեկություն փոխանակելուց, դեպքերի մասին խոսելուց:

Ռազմական գործողությունների առաջին ժամերից աղբբեջանական լրատվամիջոցներն ակտիվություն չդրսևորեցին, այնինչ հայկական մամուլը ողողված էր իրադարձությունների լուսաբանմամբ: Այսպես՝ ապրիլի 2-ի առավոտյան ժամը 8:18-ին, պաշտպանության բանակի (ՊԲ) մամուլի ծառայությունը հայտնեց¹, որ աղբբեջանական բանակը հարձակողական գործողություններ է ծավալել առաջնագծի ամբողջ երկայնքով: Ավելի ուշ՝ ժամը 9:10-ին, ՊԲ-ն տեղեկացրեց², որ ԼՂ հակաօդային պաշտպանության ուժերն առաջնագծի հյուսիսային ուղղությամբ ոչնչացրել են Աղբբեջանի զինված ուժերի 1 ուղղաթիռ: Ժամը 10:25-ին Արցախի ՊԲ-ն հայտնեց³, որ ժամը 8:30-ի սահմանում աղբբեջանական զինուժի՝ «Գրադ» համազարկային կրակի ռեակտիվ համակարգով հայկական գյուղերի հրետակոծությունից Մարտունիի պաշտպանական շրջանի ուղղությամբ գոհվել է մեկ երեխա՝ Վաղինակ Գրիգորյանը (ծնված՝ 2004 թ.), ևս երկու երեխա ծանր վիրավորվել են: Կեսօրին հայտարարվեց, որ հակաօդային պաշտպանության ուժերը հարավարևելյան ուղղությամբ ևս մեկ ուղղաթիռ են խոցել⁴, իսկ հյուսիսարևելյան ուղղությամբ՝ ևս երկու ԱԹՄ:

Արցախի ՊԲ-ն այնուհետև հայտնում է, որ աղբբեջանցիները առավոտյան հարավային ուղղությամբ կարողացել էին գրավել հայկական մի քանի դիրք, սակայն երեկոյան Արցախի նախագահ Բակո Սահակյանը պաշտոնապես հայտնում է, որ կորցրած բոլոր դիրքերը հետ են վերցվել: Նույն օրը՝ երեկոյան, ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը Ազգային անվտանգության խորհրդի նիստ է հրավիրում⁵, որի ժամանակ ներկայացնում է իրավիճակը և հատարարում՝ հայկական կողմն ունի 18 զոհ և 35 վիրավոր: Այս ընթացքում հակառակորդը շարունակում էր լարված պահել իրավիճակը հակամարտության գոտում՝ միաժամանակ անհեթեթ ու հակասական ապատեղեկատվություններ տարածելով լրատվական բոլոր հնարավոր միջոցներով և ուղղություններով: Աղբբեջանի պաշտպանության նախարարության մամուլի ծառայությունը և ԶԼՄ-ներն առաջին ժամերի ընթացքում մարտական գործողությունների մասին ոչ մի հաղորդագրություն չեն տարածում: Միայն ժամը

¹ Տե՛ս Հաղորդագրություն, 02 ապրիլի, 2016 թ., ժամը 8:18 - <http://nkrmil.am/news/view/198>:

² Տե՛ս նույն տեղում, ժամը 9:10 - <http://nkrmil.am/news/view/197>:

³ Տե՛ս նույն տեղում, ժամը 10:25 - <http://nkrmil.am/news/view/196>:

⁴ Տե՛ս նույն տեղում, ժամը 12:50 - <http://nkrmil.am/news/view/195>:

⁵ Տե՛ս (Տեսանյութ) ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը Ազգային անվտանգության խորհրդի նիստում, ժամը 21:27, 02.04.2016 - <https://armeniasputnik.am/video/20160402/2703043.html>:

9:30-ին Աղբբեջանի ՊՆ մամուլի ծառայությունը, մարտերը սկսելու համար մեղադրելով հայկական կողմին, հայտնում է, որ զինված ուժերի ստորաբաժանումները փորձում են կասեցնել աղբբեջանական բնակատեղիներին հարվածող հայկական ստորաբաժանումներին, և հերքում է աղբբեջանական ուղղաթիռ ոչնչացնելու մասին տեղեկությունը: Մինչ պաշտոնական աղբյուրները լռում էին, սոցիալական ցանցերի՝ աղբբեջանցի օգտատերերը պարբերաբար, այսպես ասած, թարմացնում էին տեղեկությունները՝ հաղորդելով զոհերի, կորուստների մասին: Միայն ժամը 17:00-ի մոտակայքում Աղբբեջանը պաշտոնապես հայտնում է, որ մարտական գործողությունների ընթացքում կորցրել է 12 զինվոր, 1 ուղղաթիռ և 1 տանկ:

Այնուհետև աղբբեջանական ՊՆ հայտնում է, որ Աղբբեջանը իր վերահսկողության տակ է վերցրել «Լեյլե Թեփե» և այլ բարձունքներ հայկական Թալիշ, Մեյսուլան գյուղերի շրջանում: ՊՆ-ն լրատվամիջոցներին միաժամանակ հրահանգում է չհրապարակել ո՛չ պաշտոնական տեղեկատվություն: Օրինակ՝ սահմանին տիրող լարվածությունից մի քանի ժամ անց աղբբեջանական կողմը բավական ակտիվ սկսեց կեղծ տեղեկատվություն տարածել թե՛ լրատվական կայքերով և թե՛ սոցիալական ցանցերի օգտատերի միջոցով: Ռազմական գործողությունների ընթացքում աղբբեջանական լրատվամիջոցները ներկայացնում էին իրենց բանակի հզորության, ուժի և գրանցած հաջողությունների մասին նյութեր, որոնք հաճախ հղվում էին ոչ միայն աղբբեջանական, այլև Աղբբեջանի դիրքերից հանդես եկող՝ «երրորդ կողմ» ներկայացնող աղբյուրներին: Աղբբեջանական տեքստերում հայկական կողմը բնութագրվում էր «անմարտունակ, բարոյալքված, զենքի պակաս ունեցող բանակ, որը մեծ կորուստներ կրեց ռազմական գործողությունների հենց առաջին օրվանից»: Բնականաբար սա առաջին հերթին ուղղված էր ներքին լսարանին՝ սեփական բանակի նկատմամբ վստահություն ներշնչելու և, միևնույն ժամանակ հայկական ԶՈՒ-ն վարկաբեկելու, ինչպես նաև ՀՀ-ում և ԼՂՀ-ում պարտավորական տրամադրություններ տարածելու նպատակով: Նույն նպատակին է ծառայել նաև հայկական կողմում տիրող խուճապի, վախի մթնոլորտի, սահմանամերձ շրջաններից հայ բնակչության փախուստի մասին նյութերի մատուցումը: Աղբբեջանական ամբողջ մեղիադատը լի էր հայկական կողմի զոհերի, ոչնչացված զինվորական տեխնիկայի մասին տեղեկություններով: Առձակատման առաջին իսկ օրերից նյութերում շրջանառվում էր այն տեսակետը, որ աղբբեջանական կողմը պատրաստ է դադարեցնել կրակը, սակայն հայկական կողմը շարունակում է զինված գործողությունները: Ապրիլի 3-ին քարոզչական նպատակով աղբբեջանական լրատվամիջոցները օգտագործեցին Աղբբեջանի ՊՆ-ի՝ կրակը միակողմանի դադարեցնելու մասին պաշտոնական հայտարարությունը՝ հայկական կողմին իբրև «առձակատում հրահրող, հարձակվող» ներկայացնելու մտադրությամբ: Մինչդեռ աղբբեջանական կողմի կորուստների, զոհերի թվի մասին սակավ տեղեկատվություն էր տարածվում:

Ադրբեջանը իր քաղաքականությամբ փորձում էր հերքել փաստերը, մինչդեռ համացանցում հայտնվեց հայկական ռազմական դիրքերը գրոհող իսրայելական ԱԹՄ-ի մասին տեսանյութ¹: Պատերազմի գոտուց համացանցում տարածվող Ադրբեջանի, ԼՂՀ-ի ու ՀՀ-ի պաշտպանական գերատեսչությունների տարածած տեղեկատվությունները հակասում էին միմյանց: Ռազմական գործողությունների լուսաբանման ընթացքում ադրբեջանական կողմը կրկին դիմեց տեղեկատվական-հոգեբանական բավականին պարզունակ քայլերի: Քարոզչական դաշտում, հատկապես սոցիալական ցանցերում, հայտնվեցին հայկական անուններով բազմաթիվ կեղծ օգտատերեր, որոնք տեղեկատվություն կորզելու նպատակով Արցախում տիրող իրավիճակի, զոհերի, տարածքային կորուստների, զինվորների պատրաստվածության և բարոյահոգեբանական վիճակի վերաբերյալ հայալեզու հարցեր էին ուղղում հայ օգտատերերին:

Ադրբեջանական կողմը այդ օրերին հղումներ էր կատարում տարբեր պաշտոնական աղբյուրների, փորձագետների, լրագրողների, ականատեսների, երրորդ կողմ ներկայացնող օտարերկրյա և հայկական կամ թվացյալ հայկական աղբյուրների: Օտարերկրյա աղբյուրների ընդգրկումը հետապնդում էր մատուցված տեղեկատվությանն օբյեկտիվություն հաղորդելու նպատակ: Իբր թե միջազգային հանրությունը պաշտպանում է Ադրբեջանի տեսակետները:

Բնականաբար, դա Ադրբեջանի իշխանությունների որդեգրած վերահսկման մեխանիզմներից էր: Օրինակ՝ անկախ «meydan.tv»-ի դեմ քրեական գործ հարուցվեց² այն բանից հետո, երբ ըստ այդ կայքում գետեղված նյութի՝ ադրբեջանական կողմի զոհերի թիվը հասնում էր 93-ի, այն դեպքում, երբ պաշտոնական աղբյուրները նշում էին ընդամենը 31 զոհի մասին: Ադրբեջանական կողմի կեղծիքը բացահայտ էր և չէր կարող որևէ ազդեցություն կամ հետևանքներ ունենալ հայկական կողմի վրա:

Ականատես եղանք, թե ինչպես «Քառօրյա պատերազմի» օրերին Ադրբեջանը չկարողացավ խուսափել անախորժ իրավիճակներից՝ լրագրողների գործունեության և նրանց ազատությունների ոտնահարման առումով: Մասնավորապես, «Լայֆ Նյուզ»-ի լրագրողները վտարվեցին Ադրբեջանից, քանի որ փորձել էին օբյեկտիվորեն ներկայացնել սահմանին և շփման գծում տիրող լարված իրավիճակը: Այդ լրատվամիջոցը հայտնում է, որ Ադրբեջանի իշխանությունները փորձել են ստիպել սեփական լրագրողներին հրապարակել իրենց համար շահավետ տեղեկատվություն (մասնավորապես պնդել, որ հայկական կողմն է առաջինը կրակ բացել), լուսաբանել իրադարձու-

¹ Տե՛ս «Հրապարակվել է ադրբեջանական ոչնչացված ԱԹՄ-ի նոր տեսանյութը» - <http://www.panarmenian.net/arm/news/209636/>, 5 ապրիլի 2016:

² Տե՛ս Fifteen journalists named in criminal investigation of Meydan TV - <https://www.meydan.tv/en/site/news/13829/>:

թյունները «այնպես, ինչպես իրենց է անհրաժեշտ»¹ և այլն, իսկ լրագրողները հրաժարվել են: Ադրբեջանական կողմին զայրացրել էր հատկապես լրատվամիջոցի պատրաստած այն ռեպորտաժը, որտեղ նշել էին Իսլամական պետության գրոհայինների՝ Ադրբեջանի կողմից կռվելու, ինչպես նաև սահամանամերձ Թարթառի բնակիչների՝ իրենց տները լքելու մասին լուրեր²:

Իսկ երբ օտարերկրյա աղբյուրները հայտնում են Ադրբեջանի համար ոչ ցանկալի տեսակետ, նրանց մեղադրանք է ներկայացվում կողմնակալության, հակամարտությունը միակողմանի լուսաբանելու մեջ:

Գորանբոյի շրջանում անվտանգության աշխատակիցները բերման էին ենթարկել և մի քանի ժամ շարունակ հարցաքննել վրացական «Ռուսթավի-2» հեռուստալիքի նկարահանող խմբին՝ հավատարմագրում չանցնելու պատճառաբանությամբ:

Սակայն ադրբեջանական կողմի ոչ ճիշտ աշխատանքը, թերացումը միջազգային հեղինակավոր լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ տվեցին այլ արդյունք: Միջազգային տարբեր լրատվամիջոցների և լրագրողների համար հնարավորություն ստեղծվեց հղել հենց հայկական աղբյուրները: Աշխարհի ճանաչված լրատվամիջոցներից («BBC», «CNN», «New York Times», «The Washington Post») տասնյակ լրագրողներ սեփական նյութերը տեղում պատրաստելու համար ժամանեցին Ստեփանակերտ, իսկ Ադրբեջանը չհամագործակցեց, ավելին՝ չկարողացավ աշխատել նրանց ներկայացուցիչների հետ: Միջազգային շատ լրագրողներ հնարավորություն ունեցան Հայաստանի տարածքով առանց որևէ խոչընդոտի մուտք գործել Լեռնային Ղարաբաղ և Ստեփանակերտում անմիջապես հավատարմագրում անցնել: Հայաստանի հանրային հեռուստառնկերությունը միջազգային լրատվամիջոցներին տրամադրել էր արբանյակային անվճար հեռարձակման հնարավորություն, իսկ լրագրողներն ազատորեն տեղաշարժվում էին քաղաքացիական փոխադրամիջոցներով՝ շփման գծի երկայնքին մոտ բնակավայրեր այցելելու համար, օրինակ՝ Թալիշ կամ Մարտունի:

Համացանցում շրջանառվեց հակառակորդի խուճապի և պարտվողական տրամադրության մասին վկայող տեսանյութեր, որտեղ երևում էր՝ Ալիևի «արգելափակող ջոկատները» գնդակահարում էին իրենց փախչող զինվորներին: Այս ընթացքում շրջանառվեց տեսանյութ³, որտեղ ներկայացվում էր, թե ինչպես է հակառակորդն իր թիկունքում պայթեցնում սեփական

¹ St'u MBD Azerbaydjana prosilo журналистов исказить данные о ситуации в НКР - <https://life.ru/t/%D0%BD%D0%BE%D0%B2%D0%BE%D1%81%D1%82%D0%B8/195000>

² St'u Почему врёт МИД Azerbaydjana - <https://life.ru/t/%D0%BD%D0%BE%D0%B2%D0%BE%D1%81%D1%82%D0%B8/195025>:

³ St'u «Ինչպես են կրակում նահանջող ադրբեջանցի զինվորների ուղղությամբ» (տեսանյութ) - <http://armtimes.com/hy/article/82927>:

կամուրջները, որպեսզի խոչընդոտի հայկական զորքերի հավանական հարձակումը դեպի Ադրբեջանի տարածքի խորքերը: Ռազմական գործողությունների ընթացքում հրապարակվեցին նաև իսլամիստ ծայրահեղականների և Թուրքիայում պատրաստություն անցած հատուկ ջոկատայինների՝ ԼՂՀ ՊԲ դիրքեր դիվերսիոն ներթափանցման մասին լուրեր, որոնք ավելի մեծ խուճապի մատնեցին հայ հասարակությանը:

Ռազմական գործողությունների երրորդ օրը պատերազմի գոտուց ոչ պաշտոնական տեղեկատվություն էր տարածվում, ըստ որի՝ եթե փոքր-ինչ շարունակվեր նման իրավիճակը, հայկական կողմը պատերազմական գործողությունները կտեղափոխեր թշնամու տարածք, այսինքն՝ կհարվածեր Ադրբեջանի՝ շփման գծից խորք գտնվող ենթակառուցվածքներին՝ հատկապես նավթային խողովակաշարերին ու այլ կարևոր կառույցների, նաև ռազմական հրամանատարական բոլոր կարևոր կետերի: Բայց հայկական կողմը բավարարվեց նման հարված հասցնելու բանավոր սպառնալիքով:

Այդ օրերին Ադրբեջանի սանձազերծած հարձակողական գործողությունը անուղղակիորեն նպաստեց, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը հայտնվի միջազգային հանրության ուշադրության կենտրոնում: Արցախում տեղի ունեցող իրադարձությունները դարձան գլխավոր թեմա միջազգային այնպիսի լրատվական կայքերում և հեռուստատեսային ալիքներում, ինչպիսիք են՝ «BBC»-ն, «Euro News»-ը, «CNN»-ը, «New York Times»-ը, «The Washington Post»-ը, «Aljazeera»-ն և այլն:

Սակայն արևմտյան հայտնի լրատվամիջոցների՝ այդ օրերի մշտադիտարկումը վկայում է, որ հրապարակվող նյութերն այնքան էլ օբյեկտիվ չէին, և դրանցում հստակ չէր մատնանշվում, թե որ կողմն է նախահարձակ եղել: Միջազգային լրատվամիջոցներից առաջիններից մեկը, որ ռազմական գործողությունների վերսկսման մասին տեղեկացրեց, «Associated Press»¹-ն էր: Այնուհետև իրադարձություններին արձագանքեցին «ABC News»-ը, «The Washington Post»-ը, «Theguardian»²-ը: Բոլոր միջազգային լրատվամիջոցներից ամենաառաջինը «Euronews»-ն էր, որ հենց ապրիլի 2-ին հրապարակեց լուսնկարներ և տեսանյութեր մարտական գործողությունների վայրից: Տեսանյութում հնչում էր Ադրբեջանի պաշտպանության նախարարի խոսքն առ այն, որ խոցվել են վեց հայկական տանկեր, հայկական կողմում կան 100-ից ավելի զոհեր և վիրավորներ, իսկ ադրբեջանական կողմն ունի ընդամենը 12 զոհ: Ապա ԼՂՀ պաշտպանության բանակից հայտնեցին, որ հայկական ուժերը ադրբեջանական «Mi-24» ուղղաթիռ են խոցել (տեսանյութում ներկայացված ուղղաթիռի լուսանկարները լրատվամիջոցը վերցրել էր ԼՂՀ

¹ St' u AP Explains: The roots of the conflict in Nagorno-Karabakh -<https://apnews.com/6c9aafaa91f247969e8233688f4f7923/ap-explains-roots-conflict-nagorno-karabakh>:

² St' u Conflict erupts between Azerbaijani and Armenian forces -<https://www.theguardian.com/world/2016/apr/02/conflict-erupts-between-azerbaijani-and-armenian-forces>:

ԱԳՆ կայքից): Հայկական կողմը այդ պահի դրությամբ հայտնում է, որ ունի 18 զոհ և 35 վիրավոր: Տեսանյութում ներկայացվում էր նաև այն, որ 1994 թ. ի վեր երկու կողմերը խոսում են քաղաքացիական անձանց մահվան մասին՝ բռնության մեջ մեղադրելով մեկը մյուսին:

«Associated Press»-ը, հղելով ԼՂՀ մամուլի ծառայությանը, հայտնեց, որ Ադրբեջանը կործանիչներ և ծանր հրետանի է օգտագործում Լեռնային Ղարաբաղի սահմանին: Լրատվամիջոցը վկայակոչում էր Ադրբեջանի ՊՆ խոսնակին, որը նշում էր, թե իբր ամեն ինչ սկսվել է հայկական կողմից հրետանի օգտագործելուց հետո: «The Washington Post»-ը¹ հենց ապրիլի երկուսին հրապարակեց հոդված, որտեղ տեղեկացրեց 31 զոհերի մասին՝ մեջբերելով Ադրբեջանի ՊՆ-ի և Արցախի ՊՆ-ի հայտարարությունները: Այնտեղ նշվում էր, որ երկու կողմերը փոխադարձ մեղադրանքներ են հնչեցնում միմյանց հասցեին նախահարձակ գործողություններ սկսելու համար:

«The Washington Post»-ի հրապարակած հոդվածում նշվում էր, որ Ադրբեջանը հայկական դիրքերի վրա գրոհում է իսրայելական արտադրության գերժամանակակից «Հարով» հարվածային անօդաչու թռչող սարքերով: Լրագիրն իր հոդվածում օգտագործում էր նաև Հայաստանի ՊՆ խոսնակ Արծրուն Հովհաննիսյանի՝ «Ռիա Նովոստի»-ին³ տված հարցազրույցը: Այնուհետև հոդվածում ներկայացվում էին հակամարտության հիմքերը և սկիզբը: Մեկ այլ հրապարակման մեջ պատմում էին ադրբեջանական խոցված ուղղաթիռի մասին, որը համառորեն հերքում էր Ադրբեջանի ՊՆ խոսնակը, իհարկե մինչ այն պահը, երբ ԼՂՀ ուժերը ևս մեկ ուղղաթիռ խոցեցին և որպես ապացույց հրապարակեցին լուսանկարներ և տեսանյութեր:

Բրիտանական «BBC»-ն⁴, ներկայացնելով դեպքերի ընթացքը, նշում էր զոհերի ու վիրավորների մասին, հրապարակում լուսանկարներ հայկական կողմից: Հոդվածում մեջբերվում էր նաև ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինի կոչը՝ ուղղված դարաբաղյան հակամարտող կողմերին՝ վերջ տալ ռազմական գործողություններին և առճակատումը լուծել բացառապես խաղաղ ճանապարհով: Հոդվածում անդրադարձ էր կատարվում Լեռնային Ղարաբաղի շուրջ ծավալված հակամարտության պատմությանը, 1990-ականներին սկզբին տեղի ունեցած պատերազմին և բնակչության տեղահանությանը:

¹ Տե՛ս At least 31 reported killed in fighting between Armenian, Azerbaijani forces - https://www.washingtonpost.com/world/at-least-31-reported-killed-in-fighting-between-armenian-azerbaijani-forces/2016/04/02/fc328ab6-f8ff-11e5-8b23-538270a1ca31_story.html?utm_term=.51ffd40bd0cd:

² Տե՛ս Israeli-made kamikaze drone spotted in Nagorno-Karabakh conflict - https://www.washingtonpost.com/news/checkpoint/wp/2016/04/05/israeli-made-kamikaze-drone-spotted-in-nagorno-karabakh-conflict/?utm_term=.6a6d2d261d4f:

³ Տե՛ս Ереван сообщает о гибели 7 человек в Карабахе при ударе беспилотника - <https://ria.ru/world/20160404/1402441265.html>:

⁴ Տե՛ս Nagorno-Karabakh violence: Worst clashes in decades kill dozens - <http://www.bbc.com/news/world-europe-35949991>:

Բացառիկ էր «CNN»-ի¹ ուղիղ եթերով Ադրբեջանի և ԼՂՀ արտգործնախարարներ Էլմար Մամեդյարովի և Կարեն Միրզոյանի մասնակցությամբ հեռարձակումը, որտեղ Արցախը փաստացի ներկայացվեց որպես հակամարտության կողմ, իսկ Ադրբեջանի գլխավոր դիվանագետը խճճվեց իր իսկ կողմից ներկայացվող ապատեղեկատվության մեջ:

Արաբական միջազգային «Al Jazeera» տարածաշրջանային հեռուստաընկերությունը բավականին ակտիվ սկսեց մեկնաբանել դեպքերը հատկապես ապրիլի 3-ից սկսած: Նախ հողված հրապարակեց ռազմական գործողությունների մասին², դարաբաղյան հակամարտությանն անդրադարձավ ընդարձակ ռեպորտաժով, որում նշվեց, որ ռազմական գործողությունները սանձազերծել է Ադրբեջանը:

Բավականին չեզոք դիրք էր գրավել վրացական մամուլը՝ ներկայացնելով միայն ԼՂՀ-ի և Ադրբեջանի տարածած պաշտոնական տեղեկատվությունը:

Ռուսական լրատվամիջոցները, հատկապես լրատվական կայքերը («Gazeta.ru», «Lenta.ru», «Tass.ru», «Ria.ru»), հակամարտության՝ Ադրբեջանի սանձազերծած արկածախնդրության մասին հայտնում էին՝ հղում կատարելով հայկական աղբյուրներին, մասնավորապես՝ ԼՂՀ ՊՆ մամուլի ծառայությանը: Միայն ժամեր անց, երբ հակառակորդը սկսեց ապատեղեկատվություն տարածել, ռուսական լրատվամիջոցների նշանակալի մասը անցավ ադրբեջանական քարոզչության աղբյուրներին: Օրինակ՝ այնպիսի ճանաչում վայելող կայքեր, ինչպիսին է, օրինակ, «Lenta»-ն, իրենց գլխավոր նյութերում տեղադրում էին Ադրբեջանի մատնանշած թվերը:

Հայկական մամուլում այդ օրերին բուռն քննարկվում էր ռուսական կողմի՝ որպես դաշնակցի ցուցաբերած «սառնությունը», նաև այն փաստը, որ հակառակորդը հայկական ուժերին հարվածում է ՌԴ-ից գնած ծանր զենքերով (օրինակ՝ «TOC 1» և «Սմերչ»):

Մյուս կարևոր հանգամանքն այն էր, որ առաջատար լրատվամիջոցներն Արցախին վերաբերող տեսանյութերի մեծ մասում ադրբեջանական պաշտոնական տեսակետի հետ մեկտեղ ներկայացնում էին պաշտոնական Ստեփանակերտի տեսակետը, զրույցներ, տեսանյութեր հրապարակում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտոնյաների հետ: Զուգահեռաբար առաջատար վերլուծական ընկերությունները տպագրեցին բազմաթիվ հոդվածներ, որոնցում փորձ էր արվում հասկանալ դարաբաղյան հակամարտության ակունքները, կողմերի դիրքորոշումները, ինչպես նաև ներկա լարվածության պատճառները: Հիմնականում նրանց տեսակետը այն էր, որ

¹ St' u Nagorno Karabakh Foreign Minister to CNN It's not about territory, it's about self determination - <https://www.youtube.com/watch?v=kmG6qBKrZ9k>:

² St' u Dozens killed in Nagorno-Karabakh clashes - <http://www.aljazeera.com/news/2016/04/heavy-fighting-erupts-armenian-azeri-border-160402084508361.html>:

որպես 1990-ականների սկզբին պատերազմում պարտված կողմ՝ հրադարի խախտումն ավելի շատ բխում էր Ադրբեջանի շահերից:

2016 թ. ապրիլյան պատերազմը ևս մեկ անգամ ցույց տվեց ռազմական գործողությունների լուսաբանման գործում ԶԼՄ-ների կարևորությունը: Պատերազմի հանկարծակի բռնկումն ակնհայտ դարձրեց երկու կողմից էլ լրագրության ոլորտում առկա բացերն ու թերությունները: Իհարկե, ադրբեջանական մամուլի և սոցցանցերի քարոզչական մեթոդները դրսի լսարանի վրա թողեցին իրենց հպանցիկ ազդեցությունը, սակայն հայկական և տարբեր միջազգային լրատվամիջոցների կողմի ճիշտ աշխատանքի շնորհիվ հակառակորդին որպես ագրեսիա հրահրող, ահաբեկիչ-պետություն ներկայացնող պիտակը կարող է երկար հիշվել: Բացի այդ, հակառակ Ադրբեջանի ակնկալիքների՝ հայ հասարակությունը խուճապի չմատնվեց. ավելին՝ համախմբման հզոր ալիք սկսվեց: Տեղեկատվական դաշտում հայկական կողմի ծավալած գործունեությունն ավելի արժանահավատ եղավ, ինչի մասին փաստում են ոչ միայն հայ, այլև միջազգային առաջատար լրատվամիջոցների փորձառու մասնագետները:

Елена Зограбян – Освещение апрельских событий в международных СМИ

В статье представлены военные действия, развернувшиеся в апрельской войне 2016 г. Рассматриваются опубликованные в армянских, арцахских и азербайджанских СМИ материалы о военных действиях в четырехдневной войне, дезинформация, подаваемая азербайджанской стороной, и пропагандистская фальсификация. Представлены работы ряда международных авторитетных изданий, также рассматривается сотрудничество местных и международных СМИ.

Elena Zohrabyan – Coverage of the April War in the International Media

The article presents the process of military action during 2016 April war. Reference is made to the published materials on the military actions of the conflicting parties - the Armenian, Artsakh and Azerbaijani media during the four-day war, the misinformation spread by the Azerbaijani side and the propaganda techniques. The work of a number of authoritative international media is presented; it also touches upon the cooperation between local and international mass media.

ԿԱԶՄԱԽՈՍԱԿԱՆ ՆՈՐԱՍՏԵՂԾ ՏԵՐՄԻՆՆԵՐԸ XII ԴԱՐԻ
ԲԺՇԿԱՐԱՆՆԵՐՈՒՄ
(ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑԻ, ԱԲՈՒՍԱՅԻԴ)

Բանալի բառեր – միջին հայերեն, կազմախոսական տերմին, նորակազմություն, բժշկական տերմինաբանություն, ածանցում, բառաբարդում, բառակապակցություն, բառակապակցական տերմին

Միջնադարյան հայ բժշկագիտության վերելքը, ինչպես գիտենք, սկսվել է XII դարում՝ շնորհիվ Կիլիկիայի բժշկագիտական դպրոցի հիմնադիր ներկայացուցիչ Մխիթար Հերացու։ Խոր գիտակ լինելով հունական, արաբական ու պարսկական բժշկության ստեղծած ավանդներին՝ Հերացին *«Ջերմանց մխիթարություն»* գրքի առաջաբանում մատնանշում է ոչ միայն բժշկության համակողմանի զարգացման իր ծրագիրը՝ կարևորելով հիվանդության կանխորոշումը՝ *նախազիտությունը*, ինչը նա համարում է «իմաստ և վարդապետություն բժշկական արուեստից»¹, այլ նաև շեշտը դնում է իր գրվածքը ժողովրդին հասկանալի լեզվով մատուցելու վրա. «Եւ արարի զսա գեղջուկ և արձակ բարբառով, զի դիւրահաս լիցի ընթերցողաց»²։ Հերացու այս բժշկարանը ժամանակի խոսակցական լեզվով շարադրված առաջին գիտական աշխատությունն է, որն անփոխարինելի սկզբնաղբյուր է միջին հայերենի բառապաշարի, ինչպես նաև հնչյունական ու քերականական առանձնահատկությունների ուսումնասիրության համար։

«Ջերմանց մխիթարություն» գրքից բացի՝ Հերացին, իր պրակտիկ գործունեությանը զուգընթաց, ստեղծել է նաև մարդակազմության, ախտաբանության, մահճաբուժության ու դեղագործության հարցերին նվիրված մի շարք արժեքավոր գործեր, որոնք, ցավոք, կորստի են մատնվել. միայն որոշ պատահիկներ պահպանվել են հետագա դարերի բժիշկների երկերում։ Դրանցից մեկը՝ աչքի կազմախոսությանը նվիրված «Վասն շինուածոյ և յորինուածոյ աչացն» գլուխը, տեղ է գտել Հերացու հետևորդ ասորի բժիշկ Աբուսայիդի *«Յաղագս կազմութեան մարդոյն»* գրքում³։ Նշենք, որ Աբուսայիդի գիրքը

¹ **Հերացի Մ.**, *Ջերմանց մխիթարություն*, Վենետիկ, 1832, էջ Ա (առաջաբան)։

² Նույն տեղում։

³ Տե՛ս **Աբուսայիդ**, *Յաղագս կազմութեան մարդոյն*, Երևան, 1974։ Ս. Վարդանյանի աշխատասիրությամբ և ռուսերեն թարգմանությամբ տպագրված այս բժշկարանը հայագիտական և

հայերենով ստեղծված առաջին կազմախոսական աշխատությունն է¹, որտեղ արտացոլված են մարդու մարմնի կառուցվածքի՝ ուղեղի և նյարդային համակարգի, զգայարանների, ներքին օրգանների, ոսկրերի, հոդերի, մկանների, անոթների մասին պատկերացումները: Ուշագրավ է, որ կլիկյան շրջանում բժշկության մեջ սկսում են առանձնակի կարևորություն տալ մարդու անատոմիային, և դրա լավագույն վկայությունն են հենց Աբուսայիդի վերոնշյալ գործը և Հերացու՝ մարդակազմությանը նվիրված աշխատանքներից մեզ հասած պատառիկները («Վասն շինուածոյ և եւ յօրինուածոյ աչացն», «Վասն փոշտանկի, որ է ձուանքն»):

Մ. Հերացին և Աբուսայիդը, բուն բժշկական գուծունեություն ծավալելուց բացի, մեծ դերակատարում ունեն հայ բժշկական տերմինաբանության զարգացման գործում: Արաբական բժշկության հզոր ազդեցության ներքո չխուսափելով օտար փոխառություններից՝ նրանք, օգտագործելով մեր լեզվի ներքին հնարավորությունները, միաժամանակ ստեղծել ու կիրառել են զգալի թվով բժշկական տերմիններ: Վերջիններս գոյացել են երեք ճանապարհով.

1. փոխառյալ բառերի (հիմնականում արաբերեն կամ արաբերենի միջոցով փոխառված, ավելի քիչ՝ պարսկերեն, հունարեն) հաճախակի գործածությամբ, ինչպես՝ *բէճ* «թիակ, ուսուկր», *թուխմայ* «ստամոքսի խցանում», *լուսենիօն* «տեսանյարդ», *խառնիէ* «եղջերաթաղանթ», *կիֆալ* «զարկերակ», *դուլին* «խթադիք», *մշիմայ* «սաղմը պատող թաղանթ», *պալղամ* «լորձ», *պապ* «ստամոքսաէլք», *սաւտայ* «սև մաղձ», *սաքթա* «կաթված», *սսիսայ* «ջրգոդություն», *տապաղայ* «թաղանթ» և այլն,
2. մեր լեզվում եղած բառերի վերաիմաստավորմամբ (տերմինի արժեքով), ինչպես՝ *աղբիւր* «արտասվալիճ», *անդամ* «օրգան», *առաստաղ* «քիմք», *արկ* «ցանցենի», *բնութիւն* «ներքին օրգաններ», *լեղի* «լեղապարկ», մաշկ «թաղանթ», *ուխտաւոր* «ընկնավոր», *վատութիւն* «հիվանդություն», *քամի* «ցավ» և այլն,
3. հայերենի բառակազմական միջոցներով ստեղծված համարժեք բառերով, ինչպես՝ *աղուեսացաւ* «մազաթափութիւն», *դմորցաւ* «երակաբորբ», *եղջերենի* «եղջրաթաղանթ», *զանկիկ* «մակալեզու», *խոշորութիւն* «կոշտացում, ուռուցք», *կաղաթուլություն* «անդամալուծություն», *հալումաշ* «հյուծող», *մկնատամ* «որքին», *ջրհեղ* «մեզ», *ստամոքսբերան* «ստամոքսաբերան», *քնատեղ* «քունք» և այլն:

Պետք է նկատել, որ Հերացուն և Աբուսայիդին հաջորդած հետագա դա-

բժշկական գրականության մեջ հայտնի է նաև «Մարդակազմություն» անվանումով: Շարադրանքում այսուհետև համառոտության նպատակով մենք ևս կկիրառենք այն:

¹ Տե՛ս **Վարդանյան Մ.**, Հայաստանի բժշկության պատմություն. հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, Երևան, 2000, էջ 125:

րերի բոլոր բժշկները օգտվեցին ոչ միայն նրանց ստեղծած բժշկագիտական հարուստ ժառանգությունից, այլև հարուստ բառապաշարից: Այս տեսանկյունից կարևորելով XII դարի բժշկարանների տերմինների քննությունը՝ սույն հոդվածի շրջանակներում կներկայացնենք հայերենի բառակազմական միջոցներով ստեղծված կազմախոսական բառերն ու բառակապակցությունները¹ (51 տերմին): Դրանց գերակշռող մասը արձանագրված է «*Միջին հայերենի բառարան*»-ում² (տեղ չգտածների դեպքում նշվում է)՝ հենց Հերացու և Աբուսայիդի գործերի վկայակոչմամբ, սակայն կան նաև նորակազմություններ, որոնց համար հղում է արվում ավելի ուշ շրջանի հեղինակների:

Հերացին և Աբուսայիդը տերմիններ են ստեղծել երկու ճանապարհով՝ օտար տերմինը թարգմանելով և ինքնուրույն բառ կազմելով: Արժևորելով հատկապես ինքնուրույն բառաստեղծումները՝ նկատենք, որ նրանք նոր բառեր են ստեղծել ածանցման, բառաբարդման և բառակապակցման եղանակներով: Ըստ մեր հաշվումների՝ Հերացու «Ջերմանց մխիթարութիւն» և Աբուսայիդի «Յաղագս կազմութեան մարդոյն» աշխատություններում ընդհանուր առմամբ կիրառվել է հիսունմեկ կազմախոսական նոր տերմին, որից տասնութը գործածել է Հերացին՝ չնայած իր գործի ավելի մեծ ծավալին, երեսունմեկը (հիմնականում բառակապակցական տերմիններ)՝ Աբուսայիդը, իսկ երկու տերմին՝ *ջրհեղ*, *ստամոքսբերան*, երկու բժշկարաններում էլ հավասարապես կիրառվել են:

XII դարի բժշկարանների նորակազմ տերմինների ստեղծման գործում առավել աչքի է ընկնում **ածանցման եղանակը**, որով կազմված նոր բառերը համալրում են միջին հայերենի բառապաշարը: Կազմախոսական ածանցավոր տերմինները կազմվել են գոյական (պարզ, ածանցավոր և բարդ) + վերջածանց կաղապարով:

Հերացին միայն աչքի կազմախոսության վերաբերյալ ստեղծել է զգալի թվով տերմիններ (11 տերմին, որից 9-ը ածանցմամբ), որոնք, ինչպես արդեն նշեցինք, տեղ են գտել Աբուսայիդի «Մարդակազմության» մեջ: Աչքի թաղանթների և հեղահյութերի համար միայն **-ենի** վերջածանցով բժշկապետը ստեղծել է վեց տերմին՝ **ապիկենի**՝ «ակնագնդի մեջ գտնվող դոնդողանման մասսան, ապակենի» (Աբուս., 181)³, **եղջերենի**՝ «եղջերաթաղանթ» (Աբուս., 182), **խաղողենի** (ելնելով խաղողի կես պտղի նմանությունից) «ծիածանա-

¹ Այս խմբում նպատակահարմար ենք գտել ընդգրկելու նաև օրգանների՝ իբրև կազմախոսական բառերի գործառնություններին վերաբերող երևույթներ և արտազատուկներ նշանակող որոշ բառեր (յոթ բառ)՝ նկատի ունենալով դրանց սերտ առնչությունը այս կամ այն օրգանի հետ:

² **Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ.** Միջին հայերենի բառարան, Երևան, 2009: Տեքստում այսուհետև՝ ՄՀԲ:

³ **Абусайд**, О строении человека, Ереван, 1974, с. 181. Գրքում տեղ գտած բառերի էջերը՝ այդ թվում և Հերացուն պատկանող, այսուհետև կնշվեն փակագծերում՝ Աբուս. համառոտագրությամբ:

թաղանթ» (Աբուս., 183), *սատնենի* «ոսպնյակ» (Աբուս., 181), *սարդոստենի* «ակնագնդի ներքին պատյանը՝ ցանցենի» (Աբուս., 182) և *սպիտակուցենի*: Վերջինս կիրառվել է *ձուի սպիտակուցենի* «ջրային հեղահյութ» (Աբուս., 182) բառակապակցային տերմինով, որը ստեղծվել է ձվի սպիտակուցի նմանությունից ելնելով: Այս տերմինը, ի դեպ, արձանագրված չէ ՄՀԲ-ում*:

-**ած** դերբայական վերջածանցով Հերացին կազմել է *խծկած* «բիբի կալնում», *կոշրած* «շաղկապենի», *վաթած* «լուսացրում, բիբի լայնանալուց լույսի ցրվելը» տերմինները, որոնց միջոցով փորձել է բացատրել փոխառյալ տերմինները. «և այս մկունքս... յորժամ չորանան, յիրար ածեն զփող ջրին ծայրն, և խծկի բիբն, և երևնայ զեղ ասղան ոռք մի, և այդ է գոր անուանեն *խծկած*»: «Եւ Է-րորդ աստառն, որ անուանեն մուլթախիմայ, որ թարգմանի *կոշրած*, և ինքն զետ ծածկոց է, որ... կոշրի ի վերայ աստառացն»: «...նա լոյսն ի դուրս վաթի և ցրուի ընդ ամենայն պտուղն, գոր ինթիշար անուանեն, որ թարգմանի *վաթած*» (Աբուս., 185, 183-184, 185):

Նշված տերմիններից բժշկական տերմինաբանության մեջ, ցավոք, պահպանվել են միայն *սպիկենին* և *եղջերենին*, բայց պետք է նկատել, որ Հերացու ստեղծած տերմինների հետևողությամբ՝ *-ենի* վերջածանցով ժամանակակից ակնաբուժության մեջ մտան *անոթենի*, *պնդենի* և *ցանցենի* տերմինները¹:

-**աուր** վերջածանցով Հերացին ստեղծել է *եկաուր*² կազմախոսական տերմինը՝ «ծղոսկր, ուսագլխից մինչև արմունկ ընկած ոսկոր» իմաստով. «Ապա թէ գլխացավութիւն խիստ լինի, զերկու *զեկաուրսն*՝ որ է ծղին՝ կապէ» (ՄՀԶՄ, 69):

-**Իկ**, **-ուկ** փոքրացուցիչ վերջածանցներով Աբուսայիդի բժշկարանում գտնում ենք *զանկիկ* «լեզվակ, մակալեզու», *միզուկ* «միզանցք» և *կոճուկ* «աճառ» կազմախոսական տերմինները. «Եւ արար աստուած ի խոչակին միս մի որպէս սիւն, որ կոչի *զանկիկ*»: «...և ապա ի դուրս հոսի ընդ *միզուկն*» (Աբուս., 218, 140): *Ձանկիկ*-ը կազմվել է *զանգ* գոյականից -իկ վերջածանցի հավելմամբ³ (հավանաբար մակալեզվի և զանգակի նմանությունից): Նկատենք, որ երեք տերմիններն էլ կիրառվել են հետագա բժշկարաններում⁴, ընդ որում *կոճուկ*-ի համար ՄՀԲ-ն հղում է Ամասիացուն, մինչդեռ բառը ավելի վաղ գործածել է Աբուսայիդը⁵:

* Միջին հայերենի բառարանում չամրագրված նորակազմ տերմինների ցանկը տե՛ս հոդվածի վերջում:

¹ Տե՛ս Վարդանյան Ս., նշվ. աշխ., էջ 96:

² **Հերացի Ս.**, նշվ. աշխ., էջ 69: Այսուհետև էջերը կնշվեն փակագծերում՝ ՄՀԶՄ համառոտագրությամբ:

³ Տե՛ս Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. 2, Երևան, 1973, էջ 79: Տեքստում այսուհետև՝ ՀԱԲ:

⁴ **Գրիգորիս**, Քննություն բնութեան մարդոյն նորին ցաւոց, Երևան, 1962, էջ 99, **Ամասիացի Ա.**, Անգիտաց անպէտ, Վիեննա, 1926, էջ 48, 287, Օգուտ բժշկութեան, Երևան, 1940, էջ 53:

⁵ Բառը գտնում ենք միայն «Յաղագս կազմութեան մարդոյն» գրքի վերջում հրատարակչի կողմից բերվող տերմինների ցանկում, էջ 226:

-**ք** հոգնակերտ վերջածանցով Հերացին կազմել է *խնծորք* «նշագեղձեր» տերմինը. «Բերանոյն առաստաղքն ուռչին և *խնծորքն*» (ՄՀՋՄ, 66):

-**իք** վերջածանցով *կին* գոյականի հոգնակի սեռական հոլովից Հերացին ստեղծել է *կանացիք* և *կարաս* գոյականից՝ *կարսիք* տերմինները: *Կանացիք* տերմինը բժշկապետը կիրառել է երկու իմաստով՝ «դաշտան» և «կանացի օրգաններ»: Բերենք օրինակներ. «...և այն արիւնն՝ *կանացիսն* է»: «...նա բնութիւնն վարէ զինքն ի դուրս ընդ քիթսն, կամ ընդ նստոյ տեղին, կամ ընդ *կանացիսն*» (ՄՀՋՄ, 78): Նկատենք, որ ՄՀԲ-ում այս տերմինը բերվում է միայն առաջին իմաստով, իսկ երկրորդ իմաստով արձանագրված չէ¹: Հերացու հետևողությամբ տերմինը «դաշտան» իմաստով գործածվել է թարգմանական «Գիրք Վաստակոց» երկում (Վենետիկ, 1877), ապա կիրառվել նաև Ամիասիացու կողմից²:

Ուշագրավ է հատկապես *կարսիք* տերմինը՝ «փոր, ընդերք» իմաստով, որ Հերացին կիրառել է *փոր կարսիք* պատկերավոր բառակապակցության մեջ. «...գիժութիւնն որ ի միսն լինի և ի փոր *կարսիքն*»: «...որ այտոց և խցկումն չայրնէ ի փոր *կարսիքն*» (ՄՀՋՄ, 38, 106):

-**ուք** վերջածանցով արաբերեն *ագո* «ղիրտ, մրուր» գոյականից Աբուսայիդը կազմել է *աքուուք* «կղանք» բառը. «Այրած արիւնն որպէս մրուր և *աքուուք* տայ ի փայծաղն» (Աբուս., 198):

Հերացին և Աբուսայիդը զգալի թվով նոր բառեր են կազմել **բառաբարդման եղանակով**: Դրանց մեջ կազմախոսական տերմինները շատ չեն քանակով և հիմնականում կազմվել են գոյական + գոյական և գոյական + բայ կաղապարներով:

Գոյական + գոյական կաղապարով են ստեղծվել հետևյալ տերմինները.

Խոչակափող «կոկորդ». «...նա մինչև ի *խոչակափողն* արիւն գայ» (Աբուս., 194-195):

Ստամոքսբերան «ստամոքսի և կերակրափողի միացման տեղը». «Որ լինի ի *ստամոքսբերանն*»: «Եւ շուրջ ի *ստամոքսբերանին* ջեղ շատ կայ» (ՄՀՋՄ, 145, Աբուս., 142):

Քնատեղ «քունք». «Գլուխն ե ոսկր է, և յամենայն *քնատեղ* ոսկր մի» (Աբուս., 166):

Ականջթոռ «ականջի բլթակ». «Ա՛՛ն աֆիոն և *զականջթոռն* և զքներն օծնէ» (ՄՀՋՄ, 30): Վերջինս կազմվել է *ականջ* և առանձին անգործածական *թոռ* արմատներով (հենց «բլթակ» իմաստն ունի), որ Վանի բարբառում կիրառվում է հենց արմատական ձևով³:

Գոյական + բայ կաղապարով կիրառվել են հետևյալ տերմինները.

¹ Տե՛ս Դազարյան Ռ., Ավետիսյան Հ., նշվ. աշխ., էջ 358:

² Տե՛ս նույն տեղում:

³ Տե՛ս Աճառյան Հ., նշվ. աշխ., էջ 198:

*Դռնապան*¹ «դրույլ, ստամոքսանեք». «Բժշկապետքն այնոր բապատասիր ասեն, որ է *դռնապանն*» (Աբուս., 143):

Շնչահան «մաշկի ծակոտի». «Երեսն ի վերայ շոգոյն կալ, որ բանայ գաղտ *շնչահանքն*» (ՄՀՁՄ, 68):

Ջրհեղ բառը գործածվել է երկու իմաստով՝ «մեզ» և «միգապարկ», ինչպես՝ «Լոքին դուրսն, որ օգտէ լերդին, ի յարծուեցն... և յորդէ *ջրհեղն*»: «Զայն ի փուշտն առաքէ, որ իր հետ *ջրհեղին* ելանէ» (ՄՀՁՄ, 145, Աբուս., 135): «...զբնութիւն մարդոյն՝ գոդուածքն և ջիւսն, զլեղին և *ջրհեղն*, թէ որպէս գոյացան» (Աբուս., 118): *Ջրհեղ* գոյականից Աբուսայիդը կազմել է նաև *ջրհեղել* բայը՝ համապատասխանաբար «միգել» նշանակությամբ. «Եւ լինի մարդ, որ չկարէ *ջրհեղել*» (Աբուս., 140): Նկատենք, որ բառաբարդմամբ ստեղծված վերոնշյալ տերմինները, բացի *խոչակափող*-ից, կիրառվել են նաև հետագա դարերի բժշկարաններում²:

Ուշագրավ են հատկապես աղիների կազմախոսության վերաբերյալ Աբուսայիդի ստեղծած տերմինները, որոնք, ճիշտ է, չեն դիմացել ժամանակի քննությանը և դուրս են մղվել, սակայն կարևորվում են իբրև XII դարի նորաստեղծ բժշկական տերմիններ: «Աղիք» ընդհանուր հասկացության համար նա գործածել է *աղէճորտ* տերմինը (կազմությունը հստակ չէ), որի հիման վրա արաբերենից բառապատճենմամբ³ նա ստացել է աղիների տեսակների հետևյալ անվանումները՝ *աւար* «կույր աղի», *դռներով աղէճորտ* «ստամոքսին կից նրբաղիք, որից սկիզբ են առնում մյուսները» (չկա ՄՀԲ), *երկոտասան* «տասներկումատնյա աղիք», *ձայնավոր աղէճորտ* «խթաղիք», *մանր աղէճորտ* «բարակ աղի», *ցամաք աղէճորտ* «սնաղի», *հիմն և զգայութիւնն աղէճորտացն* «ուղիղ աղիք» (210):

XII դարի, ինչպես նաև հետագա դարերի բժշկարաններում փոխառյալ կազմախոսական տերմինների կողքին զգալի թիվ են կազմում նաև հայերենով ստեղծված **բառակապակցական տերմինները**, որոնք թեև կազմախոսական հասկացության իմաստն արտահայտում են նկարագրորեն, սակայն կարևորվում են օտար տերմինի հայերեն համարժեքը տալու տեսանկյունից, բացի այդ՝ վերջիններս մատնացույց են անում նաև հայկական բժշկական տերմինների կազմավորման ուղին⁴: Քանի որ մեր քննած բժշկարաններում կիրառված բառակապակցական նորաստեղծ տերմիններն արտահայտում

¹ Այս բառը, որ ստեղծվել է բառապատճենմամբ, կապ չունի գրաբարի համանուն *դռնապան* (դռան պահապան) բառի հետ:

² Տե՛ս **Գրիգորիս**, նշվ. աշխ., էջ 13, 125, 197, Բժշկարան ձիոյ, Երևան, 1980, էջ 68, 133, **Տաթևացի Գ.**, Գիրք Հարցմանց, Կոստանդնուպոլիս, 1829, էջ 241, 243, **Ամասիացի Ա.**, Օգուտ բժշկութեան, Երևան, 1940, էջ 53:

³ Այս մասին տե՛ս **Վարդանյան Ս.**, Հայ բժշկական տերմինաբանությունը XII դարում // «Բանբեր Մատենադարանի», 1971, թիվ 10, էջ 190-191:

⁴ Տե՛ս **Վարդանյան Ս.**, Հայաստանի բժշկության պատմություն. հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, Երևան, 2000, էջ 180:

են մեկ ընդհանուր բառային իմաստ, ավելի նպատակահարմար ենք գտնում դրանք նորակազմությունների շարքում դնելը: Բժշկապատմաբան Ս. Վարդանյանը բառակապակցական տերմիններն անվանում է տերմին-նկարագրություն՝ կարծելով, որ դրանք երբեմն պարզունակության են հասնում¹: Չժխտելով նրա մոտեցումը՝ միաժամանակ չպետք է մոռանանք, որ Մ. Հերացին, ապա նաև Աբուսայիդը, կարևորելով ժողովրդին հասկանալի լեզվով շարադրելու փաստը, այնուամենայնիվ կարողացան ստեղծել հայերեն նոր կազմություններ, որոնք թեև չամրագրվեցին իբրև բժշկական տերմիններ, բայց երևույթի բացատրությամբ իրենց հերթին նպաստեցին հետազայում տվյալ հասկացությունների համար համապատասխան տերմին ստեղծելու գործին: Այս տեսանկյունից ևս կարևորում ենք բառակապակցական տերմինների լեզվական քննությունը:

Հիմք ընդունելով բժշկարաններում կիրառված բառակապակցական տերմինների բաղադրիչների արտահայտած հարաբերությունը՝ նպատակահարմար ենք գտնում դրանք ներկայացնել երկու խմբով.

1. որոշիչ-որոշյալ հարաբերությամբ կազմված բառակապակցություններ,
2. հատկացուցիչ-հատկացյալ հարաբերությամբ կազմված բառակապակցություններ:

Հերացու և Աբուսայիդի բժշկարաններում առանձնացրել և քննել ենք **որոշիչ-որոշյալ** հարաբերությամբ կազմված տասներեք բառակապակցական տերմին: Հերացին աչքի կազմախոսությանը վերաբերող ածանցավոր տերմինների կողքին ստեղծել է նաև բառակապակցական *փող ջեղ* «տեսաներվ» (բառացի՝ նյարդի անցք. փող-ի նախնական իմաստն է նեղ անցք)² (Աբուս., 185,186,187), *պինդ մարմին* «աչքի պինդ պատյան» (Աբուս., 179) տերմինները. վերջինիցս հետազայում ընդօրինակելով ստեղծվել է *պնդենի*-ն: Ուշագրավ է նաև նրա կիրառած *փոքր փոր* բառակապակցությունը. «Հաւկթի դեղնուցն 'ի վերայ *փոքր փորոյն* կապէ» (ՄՀՋՄ, 148): ՄՀԲ-ն վերջինիս համար նշում է «փորի՝ պորտից ներքև մասը»³ և հղում է XIII դարի բժիշկ Գրիգորիսին, ում «Քննութիւն բնութեան մարդոյ և նորին ցաւոյ» բժշկարանում *փոքր փոր*-ը քանիցս կիրառվել է (8 անգամ)⁴, մինչդեռ տերմինը XII դարում արդեն կիրառված ենք գտնում Հերացու «Ջերմանց մխիթարութիւն» բժշկարանում:

Պետք է նկատել, որ բառակապակցական կազմախոսական տերմինների ստեղծման գործում առավել աչքի է ընկնում Աբուսայիդը, թեև նրա գործածած բառակապակցությունները հետագա բժշկարաններում չկիրառվեցին

¹ Տե՛ս Վարդանյան Ս., Հայ բժշկական տերմինաբանությունը XII դարում, էջ 194-196:

² Տե՛ս Աճառյան Հ., նշվ. աշխ., հ. 4, Երևան, 1979, էջ 512:

³ Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ., նշվ. աշխ., էջ 792:

⁴ Տե՛ս Գրիգորիս, նշվ. աշխ., էջ 263:

իմաստի անորոշության պատճառով¹: Այսպես՝ «ավիշ, ավշանոթ» հասկացության համար նա ստեղծել է *կաթ արիւն* բառակապակցությունը, ինչպես՝ «ՇՀ կաթ արիւն յօրինեաց աստուած» (Աբուս., 119): *Ջուր* գոյականն «արտագատանք» իմաստով գործածելով՝ Աբուսայիդը *աղի, լեղի քաղցր* և *հոտած* ածականների հարակցությամբ կազմել է չորս տերմին՝ *աղի ջուր* «արտատառք», *լեղի ջուր* «ծծումբ, ականջի արտադրություն», *քաղցր ջուր* «թուրք», *հոտած ջուր* «սերմնահեղուկ»: Բերենք օրինակներ. «*Աղի ջուրն* աչացն է»: «Եւ *լեղի ջուրն* ականջինն է»: «Եւ *քաղցր ջուրն* բերանոյն է»: «Եւ *հոտած ջուրն* ի մէջքն է» (Աբուս., 174): Ի դեպ սրանցից երկուսի՝ *աղի ջուր* և *հոտած ջուր* տերմինների համար Աբուսայիդը զուգահեռ կիրառել է նաև միաբառ՝ *արտատառք* և *սերմ* տարբերակները (Աբուս., 174): Ուշագրավ է *արտաքս ելանել* «դուրս ելնել» բառակապակցությունից Աբուսայիդի ստեղծած *արտաքսելն* կազմախոսական տերմինը, որն այս պարագայում նշանակում է «դուրս ելնելու տեղ, ելք», ինչպես՝ «Եւ գայդ ԲԺ-ան դուռդ, գոր ասացաք... Բ՝ *արտաքսելն*. Ա՝ ջրհեղն և Ա՝ վերջինն» (Աբուս., 172): Ընդ որում նկատենք, որ Աբուսայիդի բժշկարանի համառոտ խմբագրված տարբերակում այս նույն իմաստով կիրառված ենք գտնում *ելն* տերմինը (Աբուս., 164): Վերոնշյալ *արտաքսելն*-ի հիման վրա Աբուսայիդը ստեղծել է *արտաքսելն առաջին* «միզանցք» և *արտաքսելն վերջին* «հետանցք» (Աբուս., 172) կազմախոսական բառակապակցությունները: Նկատենք, որ թե՛ *արտաքսելն* և *ելն* բառերի տերմինային իմաստները, թե՛ դրանցով կազմված բառակապակցությունները տեղ չեն գտել ՄՀԲ-ում և մյուս բառարաններում: Նույն նկարագրական եղանակով են ստեղծվել նաև *լուծումն ի վայր* «փորլուծություն» և *լուծումն ի վեր* «փսխում» տերմինները, ինչպես՝ «Եւ թէ անհալ մնայ կերակուրն, առնէ թուխմայ և դուլինջ և *ի վեր* և *ի վայր լուծումն*» (Աբուս., 135):

Հատկացուցիչ - հատկացյալ հարաբերությամբ բժշկարաններում կիրառվել է վեց կազմախոսական տերմին: «Կոնք» հասկացությունը Աբուսայիդը արտահայտել է *ծննդոյ տեղ* բառակապակցությամբ. «Բայց կնոջն ՄԾԲ ոսկր, Դ աւելի, որ ի *ծննդոյ տեղին* կայ» (166): Վերջինս գործածվել է նաև *ծննդական տեղի* (146) որոշչային տարբերակով: *Ոտնաթաթ*-ի համար նույն բժշկարանում կիրառվել է *թաթ ոտիցն* բառակապակցությունը. «Ոտքն ի ճուռն ունի Բ,... ի *թաթ ոտիցն* լե ոսկր» (166): Ուշագրավ են հատկապես «միզապարկ» կազմախոսական հասկացության համար Աբուսայիդի կիրառած *ջրի աման, ջրհեղի աման* և *ջրհեղի տուն* բառակապակցությունները, ինչպես՝ «Յօրինեաց աստուած գփաղաբուշտն *ջրի աման* ամենայն անձին»: «Եւ թէ *ջրհեղին ամանն* տաք լինի և չոր, ջրհեղն դեղին լինի»: «Եւ *ջրհեղին տունն* ծուռ է» (139, 140), որոնցից միայն *ջրհեղի ամանն* է տեղ գտել ՄՀԲ-ում, ընդ որում նկատենք, որ վերջինիս համար հղում է արվում Ամա-

¹ Տե՛ս Վարդանյան Ս., նշվ. աշխ., էջ 186:

սիացուն¹, թեև բառակապակցական այս տերմինը դեռևս XII դարում կիրառել է Աբուսայիդը: *Դրույլ* (ստամոքսի ելքի մասը) կազմախոսական հասկացության համար Աբուսայիդը կիրառել է նաև (*դոնապան*-ին զուգահեռ) եռաբաղադրիչ *ներքին բերան ստամոքսին* բառակապակցությունը. «Եւ երբ կերակուրն և ըմպելին ի ստամոքսն իջանէ, *ներքին բերանն ստամոքսին խփի*» (143):

Ինչպես տեսնում ենք, բերված բառակապակցական բոլոր տերմիններն էլ կազմախոսական հասկացությունների իմաստը արտահայտում են տերմինին ոչ բնորոշ շրջասական, փոխաբերական, անորոշ և ոչ սեղմ կերպով, այդ իսկ պատճառով էլ դրանք իբրև տերմին չկարողացան դիմակայել և հետագայում փոխարինվեցին բուն բառ-տերմիններով, ինչպես՝ ծննդոյ տեղ – կոնք, կաթ արին–ավիշ, աղի ջուր–արցունք, ջրհեղի աման–միզապարկ և այլն:

Այսպիսով՝ XII դարի բժշկարանների կազմախոսական տերմինների քնությունը ցույց է տալիս, որ Մ. Հերացին և նրա հետևորդ Աբուսայիդը, արաբական բժշկության հզոր ազդեցության պայմաններում փոխառյալ կազմախոսական երեսուներեք տերմիններին (ըստ մեր հաշվումների) զուգահեռ, մեր լեզվի բառակազմական ներքին միջոցներով ստեղծել և կիրառել են ավելի շատ (հիսունմեկ) նորակազմ տերմիններ՝ անսխալոր, բարդ և բառակապակցական՝ այդպիսով ցույց տալով հայ բժշկական տերմինաբանության զարգացման ճանապարհը: Դրանցից չորսը՝ *ապակենի*, *եղջերենի*, *միզուկ*, *ստամոքսաբերան*, պահպանվել են հայ բժշկական տերմինաբանության մեջ, իսկ մնացածը, չդիմանալով ժամանակի քննությանը, դուրս են մղվել:

*ՄՀԲ-ում տեղ չգտած նորակազմ տերմինների ցանկ

Կազմախոսական տերմին	նշանակություն	Աղբյուր
արտաքսելն	<i>ելք (օրգանիզմի)</i>	Աբուս., 172
արտաքսելն առաջին	<i>միզանցք</i>	Աբուս., 172
արտաքսելն վերջին	<i>հետանցք</i>	Աբուս., 172
դոներով աղէճորտ	<i>նրբաղիք</i>	Աբուս., 210
թաթ ոտիցն	<i>ոտնաթաթ</i>	Աբուս., 166
ծննդական տեղի	<i>կոնք</i>	Աբուս., 146
կանացիք	<i>կանացի օրգաններ</i>	ՄՀԲՄ 63, 78
ձուի սպիտակուցենի	<i>ջրային հեղահյուլ</i>	Աբուս., 182 (Մ. Հերացի)
ջրի աման	<i>միզապարկ</i>	Աբուս., 139
ջրհեղի տուն	<i>միզապարկ</i>	Աբուս., 140

¹ Տե՛ս Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ., նշվ. աշխ., էջ 674:

Асмик Тадевосян – Новые анатомические термины в лечебниках XII века
(*Мхитар Гераци, Абусаид*)

В статье рассматриваются новые анатомические термины (51 слово), которые употребляли врачи XII века Мхитар Гераци и Абусаид в своих лечебниках «Утешение при лихорадках» и «О строении человека». В период усиления влияния арабской медицины они не только употребляли заимствованные термины, но и создали значительное количество новых терминов, используя внутренние возможности армянского языка. Анатомические термины создавались с помощью суффиксации, словосложения и словосочетания. Большая часть этих терминов оказалась менее устойчивой и вышла из употребления, уступив место новым терминам: только четыре из них (ապակենի, եղբերենի, միզուկ, ստամոքսաբերան) вошли в современную армянскую медицинскую терминологию. Однако, по примеру Мхитара Гераци, с помощью частицы «-ени» (-ենի) в современной армянской терминологии были созданы такие термины, как *цанцени* (ցանցենի), *анотени* (անոթենի), *шагхапени* (շաղկապենի), *пндени* (պնդենի).

Hasmik Tadevosyan – New Anatomical Terms in the Medical books of XII Century
(*Mkhitar Heratsi, Abusaid*)

This article studies new anatomical terms (51 words) used by XII century doctors Mkhitar Heratsi and Abusaid in their medical books «Relief for Fevers» and «About the Human Structure». In the period of increasing influence of Arab medicine, they used not only borrowed terms, but also created a significant number of new terms using the inner capabilities of the Armenian language. The anatomical terms were created by means of suffixation, word-formation and word combination. Many of these terms were less stable and went out of use, giving way to new terms: only four of them (ապակենի, եղբերենի, միզուկ, ստամոքսաբերան) were included in modern Armenian medical terminology. However, according to the example of Mkhitar Heratsi, new terms were created in the modern Armenian medical terminology with the help of the suffix «eni» (-ենի), such as tsantseny (ցանցենի), anoteny (անոթենի), shaghkapyeny (շաղկապենի), pndeny (պնդենի).

ԱՌԱՇՆԵՐԻ ԵՎ ԱՍԱՑՎԱԾՔՆԵՐԻ ՍԵՐՎԱՆՏԵՍԱՆ
«ԽՄԲԱԳՐՈՒՄՆԵՐԸ»
ԲՆԱԳՐՈՒՄ ԵՎ ԴԻԱՆՑ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Բանալի բառեր – առած-ասացվածք, հեղինակային խմբագրում, համարժեք թարգմանություն, թարգմանական հնարք, դիպվածային և բառային պատճենում, դարձվածային համաբանություն

Սերվանտեսի բոլոր ստեղծագործությունները ի սկզբանե «դատապարտված են եղել» փառքի: Իսկ ինչո՞վ էր պայմանավորված այդ գրական փառքը: Գաղտնիքներից մեկը թերևս այն է, որ Սերվանտեսի ստեղծագործություններում, մասնավորապես «Դոն Կիխոտում», ենթատեքստային բովանդակությունը տասնյակ անգամ գերազանցում է բուն ստեղծագործության նախնական ընկալումը: Միայն գրողի հանճարեղությամբ կարելի է բացատրել այն «վեղարի» առկայությունը, որով նա անմեղորեն քողարկում էր ցանկացած քննադատություն՝ ուղղված պետությանը, այն է՝ Իսպանիայի թագավորությանը: Չէ՞ որ հայտնի է տվյալ ժամանակաշրջանում խոսքի, երբեմն նույնիսկ մտքի անազատության մասին: Տվյալ ժամանակաշրջանի գրականությունը (մասնավորապես ասպետականը) այնքան հեռու էր իրականությունից, որ բնավ պատահական չէր, երբ «Դոն Կիխոտի» հերոսները տարբեր առիթներով ու տարբեր պարագաներում այդ գրքերն այրում են մեկը մյուսի հետևից: Ինչո՞ւ: Փոխարենը նմանը ստեղծելու: Իհարկե ո՛չ:

Սերվանտեսը աշխարհին հայտնի է իր ուրույն գրելաոճով, պատկերավորման եզակի ունակությամբ, բառախաղերի, ինչպես նաև առածների և ասացվածքների ոչ միայն սոսկ կիրառմամբ, այլև դրանք նրբորեն վերափոխելու և կենդանացնելու հմտությամբ: Նա իր ստեղծագործություններում անհամեմատ շատ գործածել է առածներ և ասացվածքներ. նրա իմաստախոսություններից շատ շատերը վերածվել են առածների և ասացվածքների¹, իսկ շատ առածներ էլ հանճարեղ հեղինակի գրչի տակ ստացել են փոքր-ինչ այլ ենթատեքստ:

Քննարկենք այն առածները, որոնք դասական տարբերակից բացի գործածվել են որոշակի փոփոխություններով: Նման առածների և ասացվածքների դրսևորումները քննենք բնագրում՝ համեմատությամբ հայերեն թարգմա-

¹ Տե՛ս **Castillo de Lucas**, Refranes de aplicación médica en el Quijote, Paremia, 5, 1996.

նական տարբերակների¹, որոնք, անշուշտ, շատ հետաքրքիր իրողություններ են ի հայտ բերում:

Մերվանտեսը «Դոն Կիխոտում» երեք անգամ կիրառում է՝ *allá van leyes do quieren reyes*² ասացվածքը (primera parte, cap. XLV, 524, segunda parte, cap. XXXVII, 667, segunda parte, cap.V, 936)³, որը բառացի նշանակում է՝ **այնտեղ են գնում օրենքները, ուր ցանկանում են արքաները**: Ասացվածքը կիրառվում է՝ ցույց տալու իշխանության ուժը: Հեղինակը ասացվածքի այս դասական օրինակը վերը նշված իմաստով կիրառում է երկու դեպքում՝ հմտորեն միահյուսելով այն տեքստին, որտեղ առաջին հայացքից դժվար է նկատել այն սուր սլաքը, որն ուղղված էր այն իշխանությանը, որտեղ օրենքներն են հարմարվում արքաներին: Հեղինակային մյուս օրինակում հանդիպում ենք ճիշտ հակառակ կամ շրջված տարբերակին՝ *allá van reyes do quieren leyes*, որը բառացի նշանակում է՝ **այնտեղ են գնում արքաները, ուր ցանկանում են օրենքները**⁴: Այս դեպքում արդեն խոսքն այն պարզ ճշմարտության մասին է, որ արքաներն են հպատակվում օրենքներին: Ասացվածքի նման վերաձևակերպումը հնարավոր է դարձել այն պատճառով, որ իսպաներենում *rey* (թագավոր) և *ley* (օրենք) բառերը մոտ են իրենց գրությամբ. կարելի է դրանք նույնիսկ հարանուններ համարել, ուստի դրանց տեղափոխությունից առաջացած բովանդակային փոփոխությունը ընթերցողը կարող է և չնկատել: Այսպես բնագրում կարդում ենք. «“Teresa” me pusieron en el bautismo, nombre mondo y escueto, sin añadiduras ni cortapisas, ni arrequives de dones ni donas, “Cascajo” se llamó mi padre; y a mí, por ser vuestra mujer, me llaman “Teresa Pansa” (que a buena razón me habían de llamar “Teresa Cascaj”, pero **allá van reyes do quieren leyes**)...» (II, V, 667):

Ա. Ղազարյանի՝ միջնորդավորված թարգմանության մեջ (այսուհետ՝ Թ-1) հանդիպում ենք. «...Մկրտելիս, ինձ տվել են Թերեսա անունը, մի պարզ ու մաքուր անուն, առանց հավելումների, պճնանքների ու զիզի-պիզիների, ինչպիսիք են այդ դոներն ու մոները: Հորս անունն էր Կասկախո, իսկ իմը՝ քո կնոջը Թերեսա Պանսա (թեպետ իսկականը որ վերցնենք՝ պետք է կոչվելի Թերեսա Կասկախո. դե, ի՛նչ արած, չէ որ **«օրենքը թագավորի ուզած կողմն է ծռում»**)» (II, V, 49, Թ-1):

¹ Մեր ուսումնասիրության համար հիմք են ծառայել Ա. Ղազարյանի՝ ռուսերենից միջնորդավորված և Վ. Սարգսյանի բնագրից կատարված թարգմանությունները: Տե՛ս 1. **Մերվանտես Միգել դե**, Հնարամիտ հիդալգո Դոն Կիխոտ Լամանչեցի, թրգմ.՝ Մ. Ղազարյանի, հ. 1, 2, Երևան, 1950, 2. **Մերվանտես Միգել դե**, Հնարամիտ հիդալգո Դոն Կիխոտ Լամանչեցի, թրգմ.՝ Վ. Սարգսյանի հ. 1, 2, Երևան, 2010:

² Տե՛ս **Carbonell Basset D.**, Diccionario Panhispáico de Refranes, edit. Herder, Barcelona, 2002, p. 274:

³ Օրինակները տրվում են ըստ **Cervantes M. de**, «Don Quijote de la Mancha», del estudio preliminar: F. Lázaro Carreter, edición de Francisco Rico, Barcelona, 2001 հրատարակության:

⁴ Տե՛ս **Cervantes M. de**, «Don Quijote de la Mancha», del estudio preliminar: F. Lázaro Carreter, edición de Francisco Rico, Barcelona, 2001: Այս գրքի ծանոթագրության մեջ նշվում է, որ հեղինակը բնավ պատահական չի վերափոխել առածը (էջ 667, ծնթ. 44):

Այս օրինակում, որտեղ հեղինակը կիրառել է ասացվածքի փոփոխված տարբերակը, թարգմանիչը կրկին կիրառել է դասական ձևը, որից, անշուշտ, անհնար է դառնում կռահել հեղինակի՝ երգիծանքով կիրառած հմուտ հնարը: Կարծում ենք, որ նման թարգմանության պատճառը եղել է թարգմանչի կողմից համատեքստի սխալ ընկալումը, քանի որ բնագրում ոչ թե ասվում է «*իսկ իմը՝ քո կնոջը Թերեսա Պանսա*», այլ *y a mí, por ser vuestra mujer*, բառացի՝ *իսկ ինձ՝ ձեր կինը լինելու պատճառով* (կոչել են): Ասել է թե՛ այս դեպքում անհրաժեշտ էր օրենքին հպատակվել և կրել ամուսնու ազգանունը:

Հայերենում Վ. Սարգսյանի թարգմանության մեջ (այսուհետ՝ Թ-2) ասացվածքի վերափոխված տարբերակը թարգմանվել է հետևյալ կերպ. «...Մկրտելիս ինձ կոչել են Տերեսա, մի հասարակ և մաքուր անուն, առանց ավելորդ բաների, զարդ ու պաճուճանքների, տարբեր տեսակի դոն-երի ու դոնյա-ների: Հորս անունն էր Կասկախո, իսկ իմը՝ քո կնոջը Տերեսա Պանսա, չնայած, ճիշտ որ խոսենք, պետք է լիներ Տերեսա Կասկախո, բայց, ինչ արած, միշտ չէ, որ թագավորները օրենքով են շարժվում» (II, V, 41, Թ-2):

Այստեղ ասացվածքի թարգմանությունը ևս թերի է, չնայած այն առաջին հայացքից կարող է ճիշտ թվալ: Թարգմանիչը «*ճիշտ որ խոսենք, պետք է լիներ Տերեսա Կասկախո*» թարգմանությամբ առաջացնում է մտքի շփոթ, քանի որ թվում է, թե հենց օրենքն է այնպիսին, որ Տերեսան պետք է կրեր իր հայրական ազգանունը: Բացի այդ, ասացվածքը սկսել է *միշտ չէ, որ* արտահայտությամբ, որն ինքնին հակադրվում է ասացվածքի իմաստին և դրանով թարգմանությունը դարձնում է ոչ համարժեք բնագրին: Բնագրում հեղինակը այն կիրառում է հաստատելու համար օրենքի զորությունը, իսկ թարգմանության մեջ այն ընկալվում է այլ կերպ:

Հաջորդ երկու տարբերակներում կարդում ենք. «*No la tenga yo en el cielo-dijo el sobrebarbero- si todas vuestras mercedes no se engañan, y que así parezca mi ánima ante Dios como ella me parece a mí albarda, y no jaez; pero allá van leyes etc.. y no digo más*» (I, XLV, 524):

– *Թող ես գրկվեմ երկնքի արքայությունից, եթե դուք, սինյորներ, չեք սխալվում, թող իմ հոգին չներկայանա տերն աստծուն, եթե սա սարք է և ոչ թե փալան: Հիմա ես տեսնում եմ, որ թագավորների համար օրենք չկա* (I, XLV, 416, Թ-1):

– *Թող ես կարոտ մնամ երկնքի արքայությանը, սենյորներ, եթե դուք չեք սխալվում, – բացականչեց խեղճ վարսավիրը, – թող իմ հոգին աստծու աչքին երևա այնպես, ինչպես իմ աչքին է փալան երևում այս թամբը: Բայց օրենքը ձեր ձեռքն է* (I, XLV, 405, Թ-2):

Ինչպես տեսնում ենք, այս երկու տարբերակներում թարգմանիչները փորձել են համարժեքորեն փոխանցել ասացվածքը, այսինքն՝ դասական համարվող տարբերակը: Սակայն այստեղ էլ հեղինակը կիրառել է մեկ այլ հնար: Բնագրում կարող ենք տեսնել ասացվածքի ընդամենը մի մասը՝ *allá van leyes*, բառացի՝ *այնտեղ են գնում օրենքները*, իսկ թարգմանություններ-

րում գեղչված ասացվածքը տրված է ամբողջությամբ: Այստեղ այլևս չի պահպանվել հեղինակի քննադատական մտքի նուրբ դրսևորումը, ինչն անշուշտ պատահական չէ: Բացի այդ, երկրորդ թարգմանության մեջ ասացվածքը թարգմանվել է չեզոք նկարագրական եղանակով և կորցրել է իր դիդակտիկ, ընդհանրացնող իմաստը:

Երրորդ օրինակում թարգմանիչները կատարել են համարժեք թարգմանություն.

– *Dueñas tiene mi señora la duquesa en su servicio que pudieran ser condesas si la fortuna quisiera, pero allá van leyes do quieren reyes* (II, XXXVII, 936).

– *Իմ սենյորա դքսուհին այնպիսի դուենյաներ ունի, որոնք նույնպես կարող էին կոմսուհիներ լինել, եթե ճակատագրին հաճելի լիներ այդ. բայց օրենքը թագավորի ուզած կողմն է ծովում* (II, XXXVII, 282, Թ-1):

– *Իմ սենյորա դքսուհուն այնպիսի դուենյաներ են ծառայում, որոնք կարող էին կոմսուհի լինել, եթե բախտը կամենար: Սակայն այդ գործերում օրենքը գնում է թագավորի ետևից* (II, XXXVII, 265, Թ-2):

Իր ստեղծագործության մեջ Սերվանտեսը որոշակիորեն քողարկել էր ասացվածքի բուն գաղափարը. նախորդ երկու օրինակներում դա արել էր հիմտորեն, ինչպես արդեն նշեցինք, մի դեպքում հարանուն բառերի օգնությամբ, մյուսում՝ ասացվածքը կիրառելով մասնակիորեն: Իսկ հայերենում՝ և՛ Թ-1-ում, և՛ Թ-2-ում, մենք հանդիպում ենք բացահայտ «հանդիմանության» ուղղված իշխանությանը: Սերվանտեսյան քողարկված փոփոխությունը հայերեն երկու թարգմանություններում էլ ներկայացված է խիստ բացահայտ:

Յուրաքանչյուր ստեղծագործություն ունի իր առանձնահատկությունները՝ լեզվական, գեղագիտական, կառուցվածքային և այլն: Որքան հմուտ է թարգմանիչը, այնքան ավելի հավանական է դառնում համարժեք թարգմանությունը, սակայն կարելի է արդյոք պնդել, որ թարգմանչի հմտությունն է կարևոր առհավատյան: Կարծում ենք՝ ոչ: Երբեմն այս կամ այն լեզվի առանձնահատկությունները թույլ չեն տալիս համարժեքորեն փոխանցել տվյալ գաղափարը, և այդ ժամանակ թարգմանիչը ստիպված է լինում շեղվել բնագրից՝ մի դեպքում թույլ տալով բացթողումներ, մեկ այլ դեպքում՝ կատարելով հավելումներ: Այստեղից ևս բխում են մի շարք հարցեր: Նախ՝ թարգմանիչը պետք է հանդես գա ի՞ր, թե՞ հեղինակի ոճով. նկատի ունենա ընթերցողի գեղագիտական, թե՞ լեզվական պահանջները: Համարժեք բառապաշարային մակարդակում կարող ենք խոսել հարազատ վերարտադրության մասին, իսկ եթե կատարվում է բառապաշարային շեղում, մի՞թե դրանից չի տուժում ստեղծագործությունն առհասարակ: Գեղարվեստական տեքստերի թարգմանություններին անդրադառնալիս Ջ. Մունենը, բացի լեզվական և գեղարվեստական մակարդակներից, առաջարկում է այն «պատիճավորել» մեկ այլ մակարդակում՝ գեղագիտական¹: Սա բացատրվում

¹ Տե՛ս **Mounin G.**, Les problèmes théoriques de la traduction, Paris, 1963:

է նրանով, որ տեղեկատվական տեքստի լեզվական կառուցվածքը թարգմանության մեջ համակարգվում է թարգմանվող լեզվի նորմերի համաձայն՝ ի տարբերություն գեղարվեստական տեքստի, որի լեզվաբանական կառուցվածքը թարգմանվող լեզվում հանդիպում է արգելքների՝ համաձայն թարգմանող լեզվի նորմերի: Այս դեպքում ընդունելի է դառնում միայն գործառական համարժեքության տարբերակը (*equivalencia funcional*): Ասել է թե՛ գեղարվեստական տեքստում հանդիպում է բառախաղ, ապա մեր գերինդիրը ոչ թե այն համարժեք բառային միավորներով ներկայացնելն է, այլ մեկ այլ բառախաղով ապահովելը՝ լավագույն դեպքում չհեռանալով բառապաշարային մակարդակից: Այն տեքստերում, որտեղ առավել կարևորվում է բովանդակությունը, միևնույնն է, թարգմանությունը պետք է համապատասխանի թարգմանող լեզվի նորմերին: Սակայն լինում են դեպքեր, երբ ստեղծագործողն ինքն է հեռանում իր լեզվի կանոններից, և երբեմն դրանով է հենց պայմանավորված լինում նրա գրող լինելը:

Դիտարկենք մեկ այլ օրինակ. իսպաներենում հայտնի՝ *al buen callar llaman santo (Sancho)*¹ առածը, որ բառացի նշանակում է՝ *լավ լռողին սուրբ են անվանում*, իսպաներենում ունի ևս մեկ տարբերակ՝ *al buen callar llaman Sancho (santo)*² բառացի՝ *լավ լռողին Սանչո են անվանում*, որտեղ, համաձայն որոշ աղբյուրների, *Սանչո* անձնանունը բնավ չի վերաբերում Սերվանտեսի «Սանչոյին»: Սերվանտեսը «Դոն Կիխոտում» գործածել է այս առածի՝ *Al buen callar llaman Sancho* (II, XLIII, 977) տարբերակը, որը, կարծում ենք, բնավ պատահական ընտրություն չէ: Առաջին իսկ հայացքից կարող է թվալ, որ տարբերությունն աննշան է, ընդամենը մեկ բառի փոփոխություն՝ *santo* > *Sancho*: Հետաքրքիր է այն հանգամանքը, որ իսպանացիների մեծ մասին հայտնի է առածի՝ սերվանտեսյան տարբերակը, ավելին՝ ժամանակակից իսպաներեն որոշ առածանիներում³ հանդիպում ենք արդեն առածի՝ *al buen callar llaman Sancho (santo)* տարբերակին, և միայն փակագծերում տրվում է դասական տարբերակում կիրառվող *santo unipr* բառը: Հեղինակը, կիրառելով առածի անձնանունով տարբերակը, որտեղ իր հերոսը կրում էր հենց նույն անունը, փորձել է ամբողջովին հակադրել նրա նախնական արտա-

¹ Տե՛ս **Muñoz S., Zurdo Ruiz M.**, et alli, Refranero Multilingüe: Այս աղբյուրում բերվում են Կոռեասի և Մբարբիի մեկնաբանությունները տվյալ առածի վերաբերյալ, որտեղ, ըստ Կոռեասի, առածում *Սանչո*-ն ընկալվում է համարժեք *սուրբ* (*santo*), *առողջ* (*sano*) և *բարի* (*bueno*) բառերին: Ըստ Մբարբիի՝ առածում կիրառված *Սանչո* անձնանունը վերաբերում է Սանչո Երկրորդ թագավորին:

² Տե՛ս **Bizzari H.**, Diccionario de Paremias Cervantinas, Universidad de Alcalá, Alcalá de Henares 2015. Página web: www.uah.es Այստեղ առածի ծագման մասին նշվում է, որ, ըստ որոշ աղբյուրների, այն հենց Դոն Կիխոտի զինակիր Սանչոյի մասին է, չնայած հնարավոր է, որ այն Սանչո Երկրորդ թագավորի մասին լինի, որին գրեթե սուրբ են համարել:

³ Տե՛ս **Carbonell Basset D.**, Diccionario Panhispánico de Refranes, edit. Herder, Barcelona 2002, p. 430:

հայտած իմաստին. չէ՞ որ «իր Սանչոն» երբեք չէր կարողանում «լռել»: Ինչպե՞ս է առածը ներկայացվում հայերեն թարգմանություններում:

Թ-1-ում հանդիպում ենք՝

– Աստված վկա, սինյոր,– պատասխանեց Սանչոն,– ձերդ ողորմա-
ծությունը իզուր է բարկանում: Գրողը տանի, ինչո՞ւ եք զայրանում, երբ ես
օգտվում եմ իմ սեփական կարողությունով: Չէ որ մի այլ կապիտալ ես
չունեմ, բացի առածներից և կրկին առածներից: Հենց այս բուպեիս էլ մի
քանիսը գլուխս են խցկվում և բոլորն էլ տեղին ու սազական, ոնց որ քոթցի
մեջ դարսած տանձեր: Բայց ես այդ առածները չեմ ասի, որովհետև **«Սանչո է
նա – ով կյանքում լռակյաց է»** (II, XLIII, 319, Թ-1):

Ինչպես նկատում ենք, միջնորդավորված թարգմանության մեջ պահ-
պանվել է առածի բովանդակային կոդմը, բայց տուժել է արտահայտման
ձևը:

Թ-2-ում թարգմանությունը հետևյալն է.

– Վկա է մեր տեր աստված,– պատասխանեց Սանչոն,– որ ձերդ ողորմա-
ծությունը անտեղի է բարկանում: Բայց, գրողը տանի, ինչո՞ւ եք բարկանում,
երբ ես օգտվում եմ իմ սեփական ունեցվածքից, երբ ես ուրիշ ոչ մի բան
չունեմ, բացի առածներից և կրկին առածներից: Հենց այս պահին մի չորս
առած ուզում են բերանիցս դուրս պրծնել, բոլորն էլ շատ տեղին ու պատեհ,
բայց չեմ ասի, **քանզի բարի լռակյացներին սուրբ են ասում** (II, XLIII, 298, Թ-
2):

Այստեղ արդեն թարգմանիչը չի պահել հեղինակի կոդմից այդքան
հմտորեն կատարված ընտրությունը, և արդյունքում ունենք՝ *լռակյացին
սուրբ են ասում* տարբերակը, որը, անշուշտ, հեռացել է բնագրից՝ չպահպա-
նելով հեղինակի «Սանչոյի» և առածի «Սանչոյի» հակադրությունը:

«Դոն Կիխոտում» առածն ու ասացվածքը, ունենալով մեկանգամյա գոր-
ծածություն, ենթարկվում են հեղինակային «խմբագրման» (այդպես էր վերո-
հիշյալ օրինակում) և կրկնվելով երկու, երեք կամ բազմակի անգամներ՝ եր-
բեմն ենթարկվում են փոփոխման, երբեմն՝ ներկայանում դասական տարբե-
րակով: Հաշվի առնելով իսպաներենում առածների և ասացվածքների առա-
տությունը՝ հարց է առաջանում՝ արդյոք հեղինակը չէր կարող փոխարինել
դրանք մեկ այլ՝ հոմանիշ առածով: Սակայն կարծում ենք, որ դա ևս հեղինա-
կի հնարներից մեկն է. նա, բերելով առածների դասական տարբերակները,
ընթերցողին հիշեցնում է դրանց մասին, այնուհետև միաձուլում դրանք իր
հերոսների, իրավիճակների և այլ հանգամանքների հետ: Այսպես՝ «Դոն Կի-
խոտում» հինգ անգամ հանդիպում է՝ *Desnudo nació, desnudo me hallo, ni pierdo
ni gano* ասացվածքը, որ բառացի նշանակում է՝ **Մերկ ծնվել եմ, մերկ էլ կմեռ-
նեմ, ոչ կորցրել եմ, ոչ էլ՝ շահել**: Այս ասացվածքը կիրառողը բոլոր դեպքե-
րում Սանչոն է, հերոս, որի լեզուն համեմված է ժողովրդախոսակցական
տարրերով: Առածի խրատական իմաստը այնքա՛ն հարազատ է Սանչոյին.

Sancho nació y Sancho pienso morir (II, IV, 661).

Ես Մանչո եմ ծնվել, Մանչո էլ ուզում եմ մեռնել (II, IV, 36, Թ-2):

Այնուհետև գործածություններից մեկում, միանգամայն ճիշտ և համոզիչ, երկու թարգմանիչներն էլ նախապատվությունը տվել են *մերկ*-ի փոխարեն *տկլոր* բառին:

– *Ni yo lo digo ni lo pienso- respondió Sancho-. Allá se lo hayan con su pan se lo coman: si fueron amancebados o no, a Dios habrán dado cuenta. De mis viñas vengo, no sé nada, no soy amigo de saber vidas ajenas, que desnudo nací, desnudo me hallo: ni pierdo ni gano* (I, XXV, 273).

– Ես որ բռնորովին այդ չեմ մտածում և չեմ ասում,- պատասխանեց Մանչոն: – Թող նրանք այդ քսեն հացին և ուտեն: Միրահարներ եղել են թե ոչ – նրանք պատասխան կտան աստծուն: Դա իմ գործը չէ, ես բան չգիտեմ և ուրիշների գործը չեմ էլ ուզում իմանալ: Ով որ գնում է և խարդախում, նա իր սեփական քսակում զգում է այդ: Ես *տկլոր* եմ ծնվել և հիմա էլ *տկլոր* եմ: Ես ոչ տարել եմ, ոչ էլ տանուլ տվել (I, XXV, 209, Թ-1):

– Ես ոչ այդ ասողներից եմ, ոչ էլ մտածողներից,- պատասխանեց Մանչոն,- իրենց ճաշն եփած է, թող իրենք էլ ուտեն, եթե սիրային կապեր են ունեցել, աստծո առաջ պատասխան տված կլինեն, ես իմ գործերի մասին եմ խոսում և ուրիշների հետ գործ չունեմ: Ես չեմ սիրում խառնվել սրա-նրա անձնական կյանքին: Ով առևտրի մեջ դիմացինին խաբում է, առաջին խաբվածն ինքն է: Ես *տկլոր* եմ ծնվել և հիմա էլ *տկլոր* եմ, ոչ շահել եմ, ոչ էլ *տարվել* (I, XXV, 205, Թ-2):

Թարգմանության այլ օրինակներում գործածված է *մերկ* տարբերակը: Մեր կարծիքով՝ *տկլոր* բառի գործածությունը ավելի տիպական է դարձնում Մանչոյի խոսքը, և թերևս ճիշտ կլիներ, որ մնացած կիրառություններում ևս մնար *տկլոր*-ը, մինչդեռ նախապատվությունը տրվել է *մերկ*-ին, ինչպես՝

Pero digan lo que quisieren, que desnudo nací, desnudo me hallo: ni pierdo ni gano (II, VIII, 689).

Մակայն թող ասեն, ինչ ուզում են: *Մերկ* եմ ծնվել, *մերկ* էլ կմնամ, չեմ շահել, չեմ էլ *տանուլ տվել* (II, VIII, 68, Թ-1):

Մակայն թող ասեն ինչ ուզում են: Ես *մերկ* եմ ծնվել, *մերկ* էլ կմնամ, չեմ շահել, չեմ էլ *տանուլ տվել* (II, VIII, 59, Թ-2):

Ասացվածքի այս տարբերակներում համեմատելի են նաև *կորցնել*, *տանուլ տալ* և *տարվել* հոմանիշները. առաջինը և երկրորդը բնորոշ են գրական լեզվին, իսկ վերջինը՝ խոսակցականին: Մանչոյի բառապաշարին ներդաշնակում է, իհարկե, *տարվել* ձևը, որն առկա է Վ. Սարգսյանի՝ բնագրից կատարված թարգմանության մի օրինակում: Հաջորդ օրինակում *շահել* բառի փոխարեն նախապատվությունը տրվել է *տանել*-ին:

Vuestras mercedes se queden con Dios, y digan al duque mi señor que desnudo nací, desnudo me hallo: ni pierdo ni gano (II, VIII, 1065).

Մնացեք աստծով, ձերդ ողորմածություններ և հաղորդեցեք իմ տիրոջը՝ դուքսին, որ *ես մերկ ծնվել եմ և մերկ էլ մնացել, ոչինչ չեմ տարել և տանուլ էլ չեմ տվել* (II, LIII, 398, Թ-1):

Աստված ձեզ հետ, ձերդ ողորմածություններ, և հաղորդեցեք իմ տեր դքսին, **որ մերկ ծնվել եմ և մերկ էլ մնացել, ոչ շահել եմ, ոչ՝ կորցրել** (II, LIII, 375, Թ-2):

Իսկ ստորև տրվող օրինակում Մերվանտեսը ասացվածքը հմտորեն խմբագրել է, որն էլ հարազատորեն վերարտադրվել է հայերեն թարգմանություններում որոշակի տարբերություններով:

– Yo, señores, porque lo quiso así vuestra grandeza, sin nungún merecimiento mío, fui a gobernar vuestra ínsula Barataria, en la cual **entré desnudo, y desnudo me hallo: ni pierdo ni gano** (II, LV, 1082).

Իմ սինյորներ, ձերդ ողորմածությունների կամքով և առանց որևէ արժանիքներ ունենալու, ես մեկնեցի ձեզ պատկանող Բարատարիո կղզին կառավարելու: **Մերկ մտա իմ տիրության իրավունքների մեջ, մերկ էլ մնացի՝ ինչպես հիմա եմ, ոչ տարա, ոչ էլ տանուլ տվեցի** (II, LV, 413, Թ-1):

Իմ սենյորներ, ձերդ մեծությունների կամքով ես մեկնեցի ձեզ պատկանող Բարատարիա կղզին կառավարելու: **Մերկ մտա այնտեղ և մերկ էլ դուրս եկա, ինչպես հիմա եմ, ոչ տարել եմ ոչ տարվել** (II, LV, 388, Թ-2):

Դիցուք, հայերեն երկու թարգմանություններում կատարվել է դիպվածային պատճենում¹, և բոլոր գործածություններում առկա է պատկերային միևնույն համակարգը: Այս թարգմանության տեսակը հնարավոր է լինում միայն այն դեպքում, երբ բառային միավորները համապատասխան գաղափարը կարողանում են փոխանցել առանց խախտելու իմաստային արժեքը: Նման դեպքերում թարգմանվող առածները և ասացվածքները պետք է ունենան որոշակի հանգավորում, որպեսզի ընթերցողն այն ընկալի որպես հեղինակի կողմից գործածված ոճական հնար: Եթե թարգմանիչը առածը կամ ասացվածքը տալիս է պարզապես բառացի թարգմանությամբ (ըստ բառային միավորների համապատասխանության), ապա միշտ չէ, որ դրանք ընկալելի կարող են լինել ընթերցողին:

Բերենք մեկ ուրիշ օրինակ. իսպաներենում ունենք **todo saldrá con la colada**² առածը, որը բառացի նշանակում է՝ **ամեն ինչ լվացքի հետ դուրս կգա**, և ամփոփում է երկու գաղափար. առաջին՝ **ի վերջո արածի համար պետք է հատուցում ստանալ**, երկրորդ՝ **ժամանակի ընթացքում ամեն ինչ պարզվում է**: «Դոն Կիխոտում» առածը կիրառվում է երկու անգամ: Առաջին անգամ այն ժամանակ, երբ դոն Կիխոտը բարկանում է և հանդիմանում Սանչոյին անհարկի կատակների համար, և զգուշացնում նրան, որ բազմիցս հորդորել է հնարավորինս քիչ խոսել, որին ի պատասխան՝ Սանչոն կիրառում է առածը:

– A lo menos –respondió Sancho– supo vuestra merced poner en su punto el

¹ Տե՛ս **Նազարյան Ա., Բաղդասարյան Հ.**, Թարգմանաբանական ուսումնական ձեռնարկ, Երևան, 2000:

² Տե՛ս **Bizzarri H.**, Diccionario de paremias españolas, Universidad de Alcalá, Alcalá de Henares. Página web: www.uah.es:

lazón, apuntándome a la cabeza, y dándome en las espaldas, gracias a Dios y a la diligencia que puse en ladearme. Pero vaya, que **todo saldrá en la colada**; que yo he oído decir: «Ese te quiere bien que te hace llorar» (I, XX, 220).

– Համենայն դեպս,– պատասխանեց Սանչոն,– ձերդ ողորմածությունը լավ է նիզակը գործածում. դուք նշան էիք դրել իմ գլխին և դիպաք մեջքիս միմիայն շնորհիվ աստծու և այն ճարպկության, որով ինձ հաջողվեց մի կողմ թռչել: Ե, դե լավ, **լվացքից ամեն բան կմաքրվի**. զուր չի ասում առածը՝ ով որ սաստիկ սիրում է, սաստիկ էլ խփում է (I, XX, 162, Թ-1):

– Ամեն դեպքում,– պատասխանեց Սանչոն,– ձերդ ողորմածությունը լավ հաջողացրեց նիզակով նշան բռնել գլխիս, բայց խփել մեջքիս, և դա եղավ շնորհիվ աստծո և իմ ճարպկության, որ կարողացա մի կողմ թեքվել: Անցած լինի, **լվացքից հետո ամեն բան կպարզաջրվի**, և զուր չեն ասում՝ ով քեզ լացացնում է, նա քեզ սիրում է (I, XX, 164, Թ-2):

Ինչպես տեսնում ենք, երկու թարգմանիչներն էլ կատարել են առածի բառացի թարգմանություն, բայց ինչ որոշակի տարբերությամբ. իսպաներենում *դուրս կգա* ձևը հայերենում մի դեպքում տրվել է *կմաքրվի*, իսկ մյուսում՝ *կպարզաջրվի*, որոնք ինչ-որ չափով, բայց ոչ ամբողջապես, արտահայտում են իսպաներեն բառի իմաստը: Տվյալ դեպքում մենք կառաջարկեինք առածային կիսապատճենում՝ **լվացքից հետո ամեն ինչ ջրի երես դուրս կգա**:

Հարկ է նշել, որ թարգմանական նման հնարը կարելի է կիրառել, երբ թարգմանող լեզվում չունենք առածի զուգահեռ համարժեքը կամ առածային համաբանությունը: Վերը նշված օրինակին կարելի է համարժեք համարել հայերեն հետևյալ տարբերակները՝ առածի առաջին նշանակության դեպքում՝ «*ինչ-որ ցանես այն կհնձես*», «*ինչ-որ անես առաջդ կգա*», «*ինչ-որ ձեռով տաս, հոգով կստանաս*»¹, երկրորդի դեպքում՝ «*պղտոր ջուրը որքան հոսում, մաքրվում է*», «*ամեն ինչ ջրի երեսն է դուրս գալիս*»:

Այսպես, եթե առաջին կիրառության դեպքում առածի նշանակությունը որոշակիորեն վիճահարույց է, այսինքն՝ կարող է ընկալվել և՛ *պարզվել*, և՛ *հատուցում ստանալ* իմաստներով, ապա երկրորդ կիրառության դեպքում հեղինակը անպայմանորեն նկատի ունի երկրորդ իմաստը²: Այսպես՝ բնագրում կարդում ենք՝

No ha sido Dios servido de depararme otra maleta con otros cien escudos como la de marras, pero no te dé pena, Teresa mía, que en salvo está el que repica, y todo saldrá en la colada de gobierno (II, XXXVI, 932).

Իսկ թարգմանություններում՝

Աստված չհաճեց ինձ տալ մի պայուսակ՝ մեջը հարյուր էսկուդո, ինչպես որ եղավ նախորդ անգամ, բայց դու մի նեղվիր, սիրելի Տերեսա, խոսողների

¹ Ղանալանյան Ա., Առածանի, Երևան, 1960, էջ 122:

² Տե՛ս Bizzarri H., նշվ. աշխ., էջ 139: Ըստ նշված աղբյուրի՝ Սանչոն իր կնոջն ուղարկած նամակում ասում է, որ ինքն ի վերջո պետք է հատուցում ստանա:

ձայնը տաք տեղից է գալիս: Թող ես նստեմ նահանգապետի աթոռին, **հետո ամեն ինչ կերևա** (II, XXXVI, 260, Թ-2):

Այստեղ, սակայն, թարգմանիչը կրկին նախապատվությունը տվել է առաջին՝ *պարզվել* իմաստին, իսկ մյուս՝ միջնորդավորված թարգմանության դեպքում ունենք՝

Աստծուն հաճելի չէր, որ ես քեզ հարյուր չերվոնեցով լի մի ճամպրուկ էլ ուղարկեի, անցյալ անգամվա նման. Բայց դու մի վշտանա, սիրելի Տերեսա, ահագանգ տվողը անվտանգ տեղում է նստած լինում: Թող մի ես նահանգապետ դառնամ, կտեսնես ինչ շորեր կլվանանք (II, XXXVI, 277, Թ-1):

Այս թարգմանության դեպքում կարծես թարգմանիչը նկատի ունի մի երրորդ իմաստ, որտեղ ընկալվում է ինչ-որ սպասելիքների ակնկալիք: Նման կարծիքը թերևս հաստատվում է ռուսերեն լավագույն թարգմանության տեքստով¹, որտեղ կարդում ենք՝

Богу было неужгодно послать мне еще один чемоданчик с сотней эскудо, как в прошлую поездку, но ты, милая Тереса, же огорчайся, козла пустили в огород и в должности губернатора мы свое возьмем (II, XXXVI, 272, Թ-3).

Նման առաձները և ասացվածքները կարող են այդքան էլ ընկալելի չլինել բառացի թարգմանված տարբերակներում: Մեկ այլ խնդիր է, երբ թարգմանիչը ինքը ճիշտ չի ընկալում դրանք: Այսպես՝ «Դոն Կիխոտում» գործածվել է՝ *Buenas son mangas después de Pascua* առածը, որ բառացի նշանակում է՝ **Ընծաները Չատիկից հետո էլ լավն են լինում**: Առածի խրատական իմաստն այն է, որ *նույնիսկ աննշան նվերները պետք է գնահատելի լինեն*, ինչպես նաև այն, որ *լավ են նաև ուշ իրականացած ցանկություններն ու երազանքները*: Առածը իսպանական մշակույթում լայն տարածում ունի, քանի որ Չատիկին միմյանց նվերներ տալու ավանդույթը գալիս է շատ հինուց:

Իսպաներենում *manga*² բառը, բացի բառացի **թևք** իմաստից, ունի նաև **ընծա** նշանակությունը: Բնագրում կարդում ենք.

– *Es liberal en extremo,– dijo don Quijote,– y si no te dio joya de oro, sin duda debió de ser porque no la tendría allí a la mano para dártela; pero buenas son mangas después de Pascua*³ (I, XXXI, 360).

Իսկ հայերեն թարգմանությունները տալիս են՝

– *Նա տվորարար առատաձեռն է,– ասաց դոն Կիխոտը: – Երևի այդ վայրկյանին ձեռքի տակ թանկագին իրեր չեն եղել, դրա համար էլ չի տվել քեզ: Ասենք՝ թևքերը Չատիկից հետո էլ պետքական են լինում* (I, XXXI, 279, Թ-1):

¹ St' u Сервантес Мигель де, Хитроумный Идальго Дон Кихот Ламанчский, пер. Н. Любимова, ч. 2, М., 1970, с. 272:

² St' u Muñoz S., Zurdo Ruiz M., Ayúcar et alli, նշվ. աշխ.:

³ St' u Cervantes M. de, «Don Quijote de la Mancha», del estudio preliminar: F. Lázaro Carreter, edición de Francisco Rico, Esp. 2001, p. 360: Այստեղ ծանոթագրության մեջ տրվում է, որ **թևք**՝ *manga* բառը տեքստում համարժեք է *hավելավձար*՝ *aguinaldo*, *թելավձար*՝ *propina* բառերին:

– Նա չափազանց առատաձեռն է,- ասաց դոն Կիխոտը,- երևի այդ պահին ձեռքի տակ թանկարժեք իրեր չեն եղել, որ տար քեզ: **Սակայն գրպանները Ջատկից հետո էլ են պետք գալիս** (I, XXXI, 273, Թ-2):

Ինչպես տեսնում ենք, սա հենց վառ օրինակ է այն բանի, որ բառացի թարգմանությունները կարող են ամբողջապես աղավաղել առածի կամ ասացվածքի իմաստը. հայ երկու թարգմանիչներն էլ ուշադրություն չեն դարձրել *manga* > *ընծա* նշանակությանը և ակամա կատարել են առածի սխալ թարգմանություն:

Թարգմանության ժամանակ թարգմանչի առանձնակի ուշադրությանը պետք է արժանանան ազգային տարրեր պարունակող առածներն ու ասացվածքները: Դրանք շատ հաճախ կարող են ընկալելի լինել միմիայն տվյալ ժողովրդի համար: Հետաքրքիր է, որ հայերենում մենք չունենք առածի համարժեք տարբերակը: *Manga* -ի *ընծա* նշանակությունը հաշվի առնելու դեպքում թարգմանիչները այն կարող էին փոխարինել դարձվածային համաբանություններով, որից չէր տուժի բովանդակությունը: Այսպես, առածին համարժեք հայերենում կարող էին համարվել «*ուշ լինի, նուշ լինի*», «*ուշ լինի, անուշ լինի*» տարբերակները:

Ավելացնենք նաև այն, որ հայերեն լեզվամտածողությունը ունի առածի՝ ճիշտ հակառակ իմաստով տարբերակները՝ «*հետ Ջատկին, հալվան էժանագին*», «*կարմիր ձուն Ջատկին կսագի*», «*ճաշից հետո հարիսան էժան կլինի*», «*աքլորը որ անժամանակ կանչե, գլուխը կկտրեն*»¹ և այլն:

Մերվանտեսի ստեղծագործություններում առածների և ասացվածքների «խմբագրումների» այն մասը, որը հեղինակային է, կատարված է բնավ ոչ ինքնանպատակ. դրանք ունեն խոր ենթատեքստ, ասելիքի դիպուկություն և գաղափարական և հուզական-արտահայտչական հազեցվածություն: Հայ թարգմանիչները հիմնականում կարողացել են պահել սերվանտեսյան «խմբագրումները», սակայն երբեմն՝ ոչ այնքան:

Ася Хачатрян – Сервантесовские «редактирования» пословиц и поговорок в подлиннике и их армянские переводы

В статье рассматриваются те пословицы и поговорки, которые были отредактированы пером Сервантеса. Такие окказиональные видоизменения осуществлялись для того, чтобы высказывания автора становились более адресными и образными, а текст обогащался новыми семантическими и эмоциональными нюансами. Армянские переводчики: и А. Газарян (опосредованно), и В. Саргсян (по оригиналу), в своих переводах в основном смогли правильно воспроизвести эти сервантесовские «редактирования» и довести их до читателя, однако иногда допускали погрешности, искажая искомое значение пословиц и поговорок в тех случаях, когда в армянском не находили равноценный вариант данной пословицы или поговорки.

¹ Տե՛ս Դանալանյան Ա., նշվ. աշխ., էջ 135:

Asia Khacharyan – *Cervantes's «Editings» of Proverbs and Sayings in the Original Text and Armenian Translations*

The article focuses on the proverbs and sayings 'edited' by Cervantes. Using the technique of occasional calque the author made the ideas sharper and more objective giving a new sense and connotation to the text. Armenian translators A. Ghazaryan (indirect translation) and V. Sargsyan (literary translation) mostly succeeded in their translations and managed to present the Armenian reader with the appropriate versions of the 'editings' by Cervantes. However, in case there was no equivalent of the proverb or saying, both translators made occasional mistakes, thus, distorting the main idea of the proverbs and sayings.

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄԱԿԵԴՈՆԱՑԻՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Բանալի բառեր – Ալեքսանդր Մակեդոնացի, Արիանոս, Ռուփոս, Միթրենես, Օրոնտես, Հայաստան, Փոքր Հայք, Թագավոր, սատրապ, ճակատամարտ

Մասնագիտական գրականության մեջ տարակարծությունների տեղիք է տվել այն հարցը, թե արդյոք Ալեքսանդր Մակեդոնացին ի վերջո նվաճել է Հայաստանը: Անկասկած, հարցադրումը պատմագիտական առումով մեծ հետաքրքրություն չի ներկայացնում աշխարհակալ նվաճողի արշավանքների պատմության համատեքստում, սակայն հայոց հին պատմության տեսանկյունից խնդիրը կարևոր է, քանի որ Աքեմենյան երկհարյուրամյա տիրապետության անկումով հնարավորություն էր ստեղծվում լիարժեքորեն վերականգնել հայոց պետականությունն ու ինքնիշխանությունը: Ընդհանուր առմամբ խնդրո առարկա հիմնախնդրի վերաբերյալ գրավոր սկզբնաղբյուրներում առկա տեղեկությունները խիստ սակավաթիվ են և կցկտուր, որոնց ուշադիր քննությունը, այդուհանդերձ, կարող է համոզիչ եզրակացության հանգեցնել:

Ըստ մ. թ. II դարի հույն պատմիչ Արիանոսի՝ հայկական զորագնդերը մասնակցել են մ. թ. ա. 331 թ. Գավգամելայի ճակատամարտին և համառ դիմադրություն ցույց տվել մակեդոնացիներին¹: Դրանից կարճ ժամանակ անց Բաբելոնում Ալեքսանդր Մակեդոնացին Միթրենեսին որպես սատրապ ուղարկել է Հայաստան²: Այլ կերպ ասած՝ եթե Հայաստանը նվաճված չլիներ,

¹ Տե՛ս **Արիանոս**, Ալեքսանդրի արշավանքը // «Ալեքսանդր Մակեդոնացի» (այսուհետև՝ **Արիանոս**), Երևան, 1987, էջ 101, 105:

² Տե՛ս **Ռուփոս**, Ալեքսանդր Մակեդոնացու պատմությունը // «Ալեքսանդր Մակեդոնացի» (այսուհետև՝ **Ռուփոս**) էջ 375; **Arrian**, *Anabasis Alexandri*, with an English translation by E. Iliff Robson, vol. I-II, Cambridge-Massachusetts-London, 1967, Loeb Classical Library, III, 16, 5, p. 274; *Diodori Bibliotheca Historica*, ed. L. Dindorfius, vol. III, Lipsiae, 1826, XVII, 64, p. 167. Որոշ ուսումնասիրողներ Միթրենեսին համարել են սոսկ Փոքր Հայքի սատրապ (տե՛ս **Մանանդյան Հ.**, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության // **Մանանդյան Հ.**, Երկեր, հ. Ա, Երևան, 1977, էջ 96), ինչը տրամաբանական չէ, քանի որ նման սատրապություն Աքեմենյան դարաշրջանում չի եղել, և Ալեքսանդր Մակեդոնացին հիմնականում պահպանում էր նախկին վարչական միավորները: Իրականում Փոքր Հայք կոչվածը Պակտյուիկե երկրի մի մասն էր (տե՛ս **Khorikyan H.**, *The Western and Southern Boundaries of Satrapic Armenia in the VI-IV Centuries B.C.* //

Միթրենները չէր կարող այնտեղ սատրապ նշանակվել: Իհարկե, այլ տեղեկություններ առ այն, որ Ալեքսանդր Մակեդոնացին անձամբ արշավել է Հայաստան և գրավել այն, չունենք, սակայն հավանական է, որ Գավգամելայի ճակատամարտից հետո Հայաստանն ինքնակամ ընդունել է մակեդոնացի նվաճողի տիրապետությունը: Մյուս կողմից չմոռանանք, որ Գավգամելայի ճակատամարտի դաշտից փախուստի դիմած Դարեհ Գ-ն Մարաստան էր սլանում հայկական, իմա՝ Դասն և Նպատական լեռներով¹, և հավանական է, որ նրան հետապնդող մակեդոնական զորամասերից մեկն անցել է Հայաստանի հարավային շրջաններով՝ ստիպելով հայերին անձնատուր լինել մակեդոնացի աշխարհակալին²: Այժմ փորձենք մեր տեսակետը հիմնավորել սկզբնաղբյուրների քննությամբ:

Մ. թ. I դարի հռոմեացի պատմիչ Ռուփոսը գրում է, որ Պարթևստանի մայրաքաղաք Հեկատոմպյուլոսում Ալեքսանդր Մակեդոնացին բազմաթիվ նվաճած երկրների թվում հիշատակում է նաև Հայաստանը³: Արդեն նշեցինք, որ նա Հայաստան չէր արշավել, որի նվաճումը, սակայն, տրամաբանական է թվում հենց Ռուփոսի ընկալմամբ, եթե նույնիսկ նկատի ունենանք, որ Ալեքսանդրը նման բան չի ասել: Ընդ որում, տրամաբանական է նաև Ռուփոսի հիշատակած աշխարհագրական միջավայրը. նվաճված երկրները նա հերթականությամբ է հիշատակում՝ արևմուտքից արևելք՝ Կիլիկիա, Ասորիք, Փյունիկիա, այնուհետև՝ Հայաստան, Պարսք ու Մարաստան: Սա նշանակում է, որ աշխարհագրական այս միջավայրում Հայաստանը չէր կարող համարվել չնվաճված: Նրա այս տեղեկությունը, սակայն, համարվել է անվստահելի⁴, որի համար հիմքեր չկան: Նշենք նաև, որ Հուստինոսը Կապադովկիան, Պափլագոնիան, Պոնտոսը, Բյութանիան, Հայաստանը (Մեծ ու Փոքր Հայքերը) համարել է երկրներ, որոնք Ալեքսանդրը և նրա հաջորդները չեն նվաճել⁵: Սակայն հարկ է հաշվի առնել այն իրողությունը, որ Աքեմենյան վարչական բաժանման համակարգի տեսանկյունից այս կամ այն երկրի նվաճումը նշանակում էր տիրապետել նաև միևնույն սատրապությունում ընդգրկված մյուս երկրներին և ժողովուրդներին: Օրինակ՝ գրավելով Փոյուզիան՝ Ալեքսանդրը կարող էր ամեն դեպքում նվաճած համարել նաև

«Բանբեր հայագիտության» (այսուհետև՝ «ԲՀ»), 2015, թիվ 2, էջ 48-49), որն Ալեքսանդրի նվաճումների շրջանում հիմնականում ընդգրկված էր Կապադովկիայի տարածքում:

¹ Տե՛ս **Խորիկյան Հ.**, Հայաստանը և Այսրկովկասը Աքեմենյան Պարսկաստանի վարչական բաժանումներում (պատմաաշխարհագրական ուսումնասիրություն), Երևան, 2014, էջ 46:

² Ինչպես, ասենք, պափլագոնացիները ինքնակամ ենթարկվեցին Ալեքսանդրին (տե՛ս **Արիանոս**, նշվ. աշխ., էջ 57):

³ Տե՛ս **Ռուփոս**, նշվ. աշխ., էջ 411; **Rufus Curtius Quintius**, History of Alexander, with an English transl. by John C. Rolfe, vol. II, Cambridge-Massachusetts-London, 1946, Loeb Classical Library, VI, III, 3-4, p. 24:

⁴ Տե՛ս **Մանանդյան Հ.**, նշվ. աշխ., էջ 97:

⁵ Տե՛ս Pompei Trogi Fragmenta, collegit O. Seel, Lipsiae, 1961, Lib. 38, Frg. 152, p. 170:

Պափլագոնիան և այլն, երբ նկատի ունենանք նախկին III սատրապության վարչական կառուցվածքը¹՝ անկախ տվյալ ժամանակաշրջանի պատմա-աշխարհագրական և վարչաքաղաքական իրողություններից:

Հարցի իմաստն այն է, որ Ալեքսանդր Մակեդոնացին երբեք չի հետապնդել դեպի այն երկրներն անձամբ արշավելու նպատակ, որտեղ Աքեմենյան տիրապետությունը շատ թույլ էր: Մյուս կողմից հարկ է չմոռանալ, որ Գավգամելայի ճակատամարտից հետո բոլոր այդ երկրները պետք է կամավոր ենթարկված լինեին նրան, ինչը միանգամայն տրամաբանական է: Սակայն Հայաստանի պարագայում եթե Ալեքսանդրը սատրապ էր նշանակում Միթրենեսին, ապա կարելի է միայն ենթադրել, որ նա Օրոնտեսին կա՛մ սատրապ չի համարել, կա՛մ Հայաստանը, իրոք, սատրապ չի ունեցել, իսկ վերջինս եղել է պարզապես գորահրամանատար²: Բացառված չէ նաև այն հանգամանքը, որ Հայաստանի սատրապ Օրոնտեսը չի ընդունել մակեդոնացի աշխարհակալի տիրապետությունը: Ի. Դրոյզենը ևս այն կարծիքն է հայտնել, որ Գավգամելայի ճակատամարտից հետո պարսիկ մեծատոհմիկներն անցել են Ալեքսանդրի կողմը, իսկ նրանցից մեկը՝ Միթրենեսը, ստացել է միշտ կարևոր համարվող Հայաստանի սատրապությունը³: Չնայած աղբյուրագիտական տվյալների բացակայությանը՝ հակված ենք ենթադրելու, որ Գավգամելայի ճակատամարտից հետո Օրոնտեսը չի ճանաչել Ալեքսանդր Մակեդոնացու իշխանությունը, և հավանաբար Միթրենեսը Հայաստան է ուղարկվել Օրոնտեսին ընդդիմադիր ավագանու հրավերով:

Ալեքսանդր Մակեդոնացու կողմից Հայաստանը նվաճելու վերաբերյալ հետաքրքիր են նաև հույն աշխարհագետ Ստրաբոնի տեղեկությունները: Վերջինս հայտնում է, որ Հայաստանին տիրել են պարսիկներն ու մակեդոնացիները⁴. նա նույնիսկ կասկած իսկ չի տածում, որ Հայաստանը ենթարկվել է մակեդոնացիներին, այն է՝ Ալեքսանդր Մակեդոնացուն (մակեդոնացիների անվան տակ պետք չէ նկատի ունենալ Սելևկյաններին)⁵: Սակայն կարծում ենք, որ հարկ է մակեդոնական տիրապետությունը թվագրել ոչ թե մ. թ. ա. 312, այլ մ. թ. ա. 331 թվականից՝ Գավգամելայի ճակատամարտում պարսկական բանակի կրած պարտությունից ի վեր:

Ստրաբոնի մեկ այլ կարևոր տեղեկությունից հայտնի է, որ Ալեքսանդր

¹ Տե՛ս **Հերոդոտոս**, Պատմություն ինը գրքից, թարգմանությունը Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1986, III, էջ 90: Հմմտ. **Шахермайр Ф.**, Александр Македонский, М., 1986, с. 120:

² Հմմտ. **Կրկյաշարյան Ս.**, Հին Հայաստանի պետական կառուցվածքը (մ. թ. ա. VI- մ. թ. IV դդ.), Երևան, 2005, էջ 74: Նկատի ունենանք, որ Աքեմենյան տիրապետության ընթացքում սատրապներն աստիճանաբար իրենց ձեռքում կենտրոնացրին նաև ռազմական իշխանությունը:

³ Տե՛ս **Дройзен И.**, История эллинизма, т. I, Ростов-на-Дону, 1995, с. 265:

⁴ Տե՛ս **Страбон**, География в 17 книгах (այսուհետև՝ **Страбон**), перевод, статья и комментарии г. Стратановского, Л., 1964, с. 500:

⁵ Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, հ. I, Երևան, 1971, էջ 501:

Մակեդոնացին իր գորավարներից Մենոնին ուղարկել է Սյուսպիրիտիս՝ ոսկու հանքերը գրավելու, սակայն վերջինիս սպանել են հայերը¹: Ենթադրել այս տեղեկությունից, թե Ալեքսանդր Մակեդոնացուն չի հաջողվել նվաճել Հայաստանը, կարծում ենք՝ ճիշտ չէ: Ստրաբոնի հաղորդած այս տեղեկության առնչությամբ՝ առաջարկել են Սյուսպիրիտիսը չշփոթել Սպերի հետ, քանի որ այն գտնվել է Միջագետքի հարևանությամբ: Սյուսպիրիտիսն առանց հստակ տեղորոշման տեղադրվել է Հայաստանի հարավ-արևելքում² կամ նույնացվել սեպագիր արձանագրությունների Շուպրիային՝ Սասնա լեռներում³: Սակայն, մեր կարծիքով, Սյուսպիրիտիսը Սպերն է⁴, քանի որ Սասնա լեռներում տեղորոշվելու դեպքում հազիվ թե Միջագետքը նվաճած մակեդոնացիները արշավելու նոր փորձեր չձեռնարկեին:

Ալեքսանդր Մակեդոնացու մահից հետո Հայաստանում, կարծես թե, փորձում էր ամրապնդվել Նեոպտոլեմոսը⁵, ինչը վկայում է այն մասին, որ Հայաստանը Ալեքսանդրի օրոք, հիրավի, նրա տերության մասն է կազմել: Ռուփոսը Ալեքսանդրի մահից հետո տերության բաժանման հատվածում չի նշում Հայաստանի մասին⁶, ինչը, թերևս, վկայում է, որ այդ ժամանակ այն արդեն անկախ էր: Այս մասին գրում է նաև Դիոդորոս Սիկիլիացին, որը նույնպես չի հիշատակում, թե Հայաստանն ում էր բաժին հասել, սակայն թողել է մի շատ կարևոր հավելում: Այսպես, Պերդիկկասը Եվմենեսին տալիս է Պափլագոնիան, Կապադովկիան և դրանց սահմանակից այն բոլոր երկրները (ըստ Պլուտարքոսի՝ Սև ծովի հարավային ափերը մինչև Տրապիզոն⁷), որտեղ Ալեքսանդր Մակեդոնացին տարբեր գործերի շտապ իրականացման պատճառով հնարավորություն չի ունեցել ներխուժել՝ ձգտելով արագ ավարտին հասցնել պատերազմը Դարեհ Գ-ի հետ⁸: Ամենայն հավանականությամբ Հայաստանը, և ոչ թե միայն հետագա Փոքր Հայքի տարածքը, պետք է որ լիներ այն սահմանակից երկրներից մեկը, որն Ալեքսանդրն անձամբ չնվաճեց: Ստացվում է այնպես, որ Նեոպտոլեմոսը Հայաստանը փորձում էր անջատել Եվմենեսի իշխանությունից, որին Պերդիկկասը նշանակել

¹ Տե՛ս **Страбон**, նշվ. աշխ., էջ 499:

² Տե՛ս **Hammond N.G.L.**, Alexander and Armenia // «Phoenix», 1996, vol. 50, n° 2, p. 134:

³ Տե՛ս **Հարությունյան Բ.**, Մեծ Հայքի վարչա-քաղաքական բաժանման համակարգն ըստ «Աշխարհացոյց»-ի (Արևմտյան և հարավային աշխարհներ), Երևան, 2001, էջ 75:

⁴ Տե՛ս **Ադոնց Ն.**, Հայաստանը Բ. ա. IV-I դարերում // **Ադոնց Ն.**, Երկեր, հ. Դ, Երևան, 2009, էջ 435:

⁵ Տե՛ս Plutarch's Lives, with an English translation by B. Perrin, vol. VIII, Cambridge-Massachusetts-London, 1959, Loeb Classical Library, Eumenes, IV, 1, p. 88 (այսուհետև՝ **Eumenes**):

⁶ Տե՛ս **Ռուփոս**, նշվ. աշխ., էջ 596:

⁷ Տե՛ս **Eumenes**, III, 2, p. 84:

⁸ Diodori Bibliotheca Historica, ed. L. Dindorfius, vol. III, XVIII, 3, p. 228. Հմմտ. **Ռուփոս**, նշվ. աշխ., էջ 596:

էր «Հայաստանի և Կապադովկիայի գորքերի հրամանատար»¹, իսկ մակեդոնացիների տիրապետությունն այս տարածքներում այնքան էլ ամուր չի եղել²: Նշենք, որ Աքեմենյանների տիրապետությունը Հայաստանի զգալի մասում և XIX սատրապության տարածքում թույլ էր կամ ընդհանրապես չկար մ. թ. ա. 401-400 թվականներին, երբ հունական բյուրն անցնում էր այս տարածքներով³: Ուսումնասիրողները Նեոպտոլեմոսին համարել են Փոքր Հայքի կառավարիչ-սատրապ⁴, սակայն հնարավոր է, որ նա փորձում էր գրավել հենց Մեծ Հայքը, բայց անհաջողության մատնվեց:

Ըստ ուսումնասիրողների՝ Գավգամելայի ճակատամարտում հայկական զորքի հրամանատարներից Օրոնտեսը⁵ կարողացել է պահպանել Հայաստանի անկախությունը Ալեքսանդր Մակեդոնացու օրոք և նրանից հետո⁶: Դիոդորոս Միկիլիացին Օրոնտեսին հիշատակում է որպես Հայաստանի սատրապ⁷, սակայն այստեղ կասկածելի է ոչ միայն պատմիչի նշած Օրոնտեսի նամակի հարցը⁸, այլև այն հանգամանքը, որ վերջինս անկախ է եղել. սատրապի⁹ կարգավիճակը չի վկայում անկախության մասին: Ընդ որում Դիոդորոս Միկիլիացու մեկ այլ տեղեկություն ևս վկայում է Հայաստանի՝ սատրապություն լինելու մասին¹⁰:

Հետաքրքիր է, որ մասնագիտական գրականության մեջ ընդունված է համարել, որ այս Երվանդ-Օրոնտես սատրապը¹¹ Դարեհ Գ-ի պարտություն-

¹ Տե՛ս **Eumenes**, V, 1-2, p. 90:

² Տե՛ս Նույն տեղում, III, 2, էջ 84: Նկատենք, որ Ալեքսանդր Մակեդոնացին նվաճել էր Հարավային Կապադովկիան, իսկ Հյուսիսայինը մնացել էր աննվաճ (**Илaxepmaйp Փ.**, նշվ. աշխ., էջ 120; «The Cambridge Ancient History», vol. VI, Cambridge University Press, 1994, p. 805, 861):

³ Այդ մասին մանրամասն տե՛ս **Խորիկյան Հ.**, նշվ. աշխ., գլուխ Ա, Գ:

⁴ Տե՛ս **Կրկյաշարյան Ս.**, նշվ. աշխ., էջ 68:

⁵ Տե՛ս **Արիանոս**, նշվ. աշխ., էջ 97:

⁶ Հայաստանի հարակից երկրների պատմություն, հ. I, Հին շրջան, Երևան, 2013, էջ 455; **Մովսիսյան Ա.**, Դիտարկումներ Հայաստանի Ք. ա. V-III դարերի պատմության շուրջ // Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. XXIX, Երևան, 2014, էջ 87; **Toumanoff C.**, The Orontids of Armenia // Studies in Christian Caucasian History, Washington, 1963, p. 288-289; **Hammond N.G.L.**, նշվ. աշխ., էջ 132:

⁷ Diodori Bibliotheca Historica, ed. L. Dindorfius, Vol. IV, Lipsiae, 1847, XIX, 23, p. 35; Polyaeus's Stratagems of War, by R. Shepherd, London, 1793, Eumenes, IV, 8, 3, p. 169.

⁸ Հմմտ. **Ադոնց Ն.**, նշվ. աշխ., էջ 439:

⁹ Հետաքրքիր է, որ հայերեն նախարարը (տե՛ս «Պատմություն Ալեքսանդրի Մակեդոնացու», Վենետիկ, 1842, էջ 52) անգլերեն տեքստում թարգմանված է սատրապ (տե՛ս The Romance of Alexander the Great by Pseudo-Callisthenes, Transl. from the Armenian Version with an Introduction by A. M. Wolohojian, Columbia University Press, New York, London, 1969, p. 60), ինչը միանգամայն ընդունելի է և համապատասխանում է հունարեն բնագրին (տե՛ս Der griechische Alexanderroman von Adolf Ausfeld, Leipzig, 1907, S. 70):

¹⁰ Diodori Bibliotheca Historica, ed. L. Dindorfius, vol. III, XVIII, 5, p. 231.

¹¹ Հնդիրանական էթնիկական տարրը Հայկական լեռնաշխարհի հարավարևմտյան և հարավային որոշ շրջաններում հաստատվել էր առնվազն մ. թ. ա. II հազարամյակի երկրորդ

նից հետո հռչակվել է թագավոր¹, սակայն անտիկ սկզբնաղբյուրները նրան շարունակում են անվանել սատրապ մ. թ. ա. 317 թվականին:

Պլինիոս Ավագը ևս հայտնում է, որ Ալեքսանդր Մակեդոնացին անցել է Հայաստանով²՝ Կովկասը շփոթելով Պարոպամիսի հետ: Իհարկե, Ալեքսանդրը Հայաստան չէր մտել, սակայն բացառված չէ, որ Պլինիոս Ավագի նման հավաստի հեղինակը նկատի է ունեցել նրա՝ Հայաստանը նվաճած լինելու հանգամանքը:

Ցանկացած պարագայում մակեդոնացիների իշխանությունը Հայաստանում երբեք ամուր չի եղել, իսկ Հայաստանի թագավորները միշտ ակտիվորեն միջամտում էին Առաջավոր Ասիայի քաղաքական անցուղարձեղին: Օրինակ, մ. թ. ա. III դարի 70-ական թվականներին հայոց թագավոր Արդուատես-Օրոնտեսի գորքերի օգնությամբ Կապադովկիայի թագավոր Արիարաթես Բ-ն վերականգնում է իր իշխանությունը³:

Ամփոփելով քննությունը՝ կարող ենք եզրակացնել, որ Ալեքսանդր Մակեդոնացին Հայաստանն անձամբ չի նվաճվել, այն է՝ չէր կարող Հայաստանը համարել «նիզակով նվաճված երկիր»: Սակայն Հայաստանը ենթարկվել է մակեդոնացի աշխարհակալին, որի իշխանությունն այստեղ երբեք ամուր չի եղել և սահմանափակվել է սոսկ դրա հարավային հատվածով:

Оганиес Хорикян – Александр Македонский и Армения

В специальной литературе имеются разногласия по вопросу, завоевал или не завоевал Александр Македонский Армению. Согласно исследователям, Оронту – главнокомандующему армянскими войсками в битве при Гавгамелах – удалось сохранить независимость Армении во времена Александра Македонского и после него. Армения не была завоевана Александром Македонским, то есть он не мог считать ее «страной, завоеванной копьем». Тем не менее, Армения подчинялась македонскому завоевателю, власть которого в Армении никогда не была сильной и ограничивалась лишь ее южной частью.

կեսից, որից ծագում էր, թերևս, Օրոնտեսի նախնի Հյուդարները (տե՛ս **Քոսյան Ա.**, Հայոց վաղ պետականության պատմության մի խնդրի շուրջ // «ԲՀ», 2014, թիվ 1, էջ 5-25):

¹ **Կրկյաշարյան Ս.**, նշվ. աշխ., էջ 43, 46: Ըստ Լ. Շահինյանի՝ Խորենացու հիշատակած Վահեի (**Մովսես Խորենացի**, Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը և ներածութիւնը Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, լրացումները Ա. Բ. Սարգսեանի, Երևան, 1991, էջ 86), որին սպանում է Ալեքսանդր Մակեդոնացին, նույնանում է Արիանտսի նշած Միթրաուստեսին (**Arrian**, նշվ. աշխ., III, 8, 5, էջ 246), Միհրվահիշտին՝ Մեծ Հայքի թագավորին, որի մահից հետո Օրոնտեսը հավանաբար Ալեքսանդր Մակեդոնացու կողմից նշանակվում է ամբողջ Հայաստանի սատրապ (տե՛ս **Շահինյան Լ.**, Մովսես Խորենացու «Պատմության» մեջ հիշատակվող Վահեի մասին // «ՊԲՀ», 1973, թիվ 4, էջ 172-178; **Մովսիսյան Ա.**, նշվ. աշխ., էջ 85-87):

² Տե՛ս **Pliny**, Natural History, vol. II, with an English translation by H. Rackham, Cambridge-Massachusetts-London, 1961, Loeb Classical Library, IV, 39, p. 146:

³ Diodori Bibliotheca Historica, ed. L. Dindorfius, vols. II, Pars II, Lipsiae, 1829, III, XXXI, 19-20, p. 39. Հավանաբար այս նույն Արդուատեսն էր, որ մ. թ. ա. մոտավորապես 260 թվականին ապաստան է տալիս Բյուրանիայի մահացած թագավոր Նիկոմեդեսի որդիներից Զիաեկասին (տե՛ս **Կրկյաշարյան Ս.**, նշվ. աշխ., էջ 71):

Hovhannes Khorikyan – *Alexander of Macedon and Armenia*

The question whether Alexander of Macedon conquered Armenia or not caused various disagreements in academic literature. According to researchers at the Battle of Gaugamela Orontes one of the commanders of Armenian troops struggled for the preservation of the independence of Armenia during and after the reign of Alexander of Macedon. Armenia wasn't conquered by Alexander of Macedon himself, that is to say, Armenia couldn't be considered a «country conquered by the spear». But Armenia was subjected to Macedonian Conqueror, whose power over Armenia had never been strong and was limited to the southern territory of Armenia.

Հ. Ավետիսյան, Ա. Գնունի, Ա. Բոբոխյան, Գ. Սարգսյան, *Բրոնզ – երկաթեդարյան Սյունիքի սրբազան լանդշաֆտը: Հնագիտական հետազոտություններ, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2015, 230 էջ*

Վերջին տասնամյակներում մասնագիտական գրականության մեջ մեծ տեղ է հատկացվում սրբազան լանդշաֆտին վերաբերող հասկացություններին: Խնդրին առնչվող նոր մոտեցումներ են առաջ քաշվում միջմասնագիտական բնագավառում, քանի որ ծիսական աշխարհագրություն եզրույթը գտնվում է տարբեր գիտակարգերի՝ փիլիսոփայության, կրոնագիտության, աշխարհագրության, մշակութաբանության, հնագիտության տիրույթում: Այս առումով արդիական է պատմական Սյունիքի ուսումնասիրությունը, որի տարածքը, չնայած հնագիտական հետազոտությունների հարյուրամյա պատմությանը, դեռևս բազմաթիվ հարցականներ է պարունակում: Համահեղինակների ներկայացրած սույն մենագրությունը նվիրված է պատմական Սյունիքի սրբազան լանդշաֆտի ձևավորմանը և կազմակերպմանը մ. թ. ա. III-I հազարամյակներում:

Առաջին գլխում հեղինակները նախ և առաջ դիտարկում են բնապատմական միջավայրին առնչվող հիմնահարցերը, տարածքը քննարկում հնագույն ճանապարհների և հաղորդակցության ուղիների համատեքստում, այնուհետև ներկայացնում Սյունիքի հնագիտական հետազոտության պատմությունը սկսած XIX դարի վերջից: Ընդամին, նրանք մեծապես արժևորում են նաև XIX դարի վերջում և XX դարի սկզբում Ե. Լալայանի, Ս. Լիսիցյանի և այլոց կատարած հետազոտությունները, որոնք տարբեր պատճառներով մոռացության էին մատնվել: Նշենք, որ 2014-2015 թթ. ուղեգծային արշավների ժամանակ ձեռք բերված նյութերի հիման վրա հեղինակները դիտարկումներ են կատարել ՀՀ Գեղարքունիքի, Վայոց Ձորի, Սյունիքի մարզերում, ինչպես նաև ԼՂՀ Քաշաթաղի և Շահումյանի շրջաններում գտնվող մի քանի տասնյակ նորահայտ հուշարձաններում:

Այս գլխի երկրորդ մասը նվիրված է սրբազան լանդշաֆտ հասկացության կառուցվածքին: Հեղինակները փորձել են պատմագիտական, մշակութաբանական, կրոնագիտական, աշխարհագրական բնույթի դիտարկումներ կատարել: Արդյունքում ձևավորվում է եռաստիճան մի համակարգ, որն ընդգրկում է «սրբազան տարածքը», պատմամշակութային որոշակի միջավայրում հանդես եկող և կրոնապաշտամունքային ոլորտին վերաբերող տարրերը, սրբազան վայրը: Դիտարկվում են նաև սրբազան լանդշաֆտը ձևավորող

գործոնները, այդ թվում՝ մոտակայքում բնակավայրի առկայությունը, պրոֆան տարածքից առանձնացված լինելը, վերջինիս տնտեսական ենթակառուցվածքը: Այնուհետև հեղինակները վերլուծում են պաշտամունքային վայր հասկացությունը, ընդգծում սահմանի, կենտրոնի և ճանապարհի դերը այդ համակարգում:

Սրբավայրերի դասակարգմանը նվիրված երկրորդ գլխում նախ քննարկվում են հարթակները: Սրբավայրերի այս տիպը հեղինակները բաժանում են մի քանի խմբերի՝ հարթակ-կառույցներ, որոնք կարող էին տեղադրված լինել բնակավայրերում (Ալի Բայրամալի, Միծեռնավանք, Մելիքեն Դուզ), դամբարանադաշտեր (Շադատ, Կապան, Կերեն) և ժայռային կառույցներ, ժայռաբեկորներ ու քարաբեկորներ: Նրանք վերլուծում են Հ. Մարտիրոսյանի՝ ժայռապատկերները որպես յուրատեսակ պաշտամունքային հարթակներ լինելու տեսակետը: Այս համատեքստում առաջին անգամ հրատարակվում են 1968 թ. ժայռապատկերներն ուսումնասիրող արշավախմբի լուսանկարները՝ դրա անդամ Ռ. Թորոսյանի արխիվից: Առանձին դիտարկվում են նաև դոլմենատիպ հուշարձանները՝ դոլմենները (Գյաուր Դամեր, Անգեղակոթ, Ախլաթյան), կեղծ թաղով թաղումային կառույցները (Լճաշեն, Կապան, Կերեն) և կոթողային հուշարձանները: Վերջիններս վերլուծվում են տեխնիկական ներգործության՝ փորագրության, հարթաքանդակի և բարձրաքանդակի տեսանկյունից, և տրվում են քանդակների ու քանդակագարդ կոթողների առանձնահատկությունները:

Գրքում առանձին ենթագլուխ է նվիրված մենհիրներին: Հատկանշական է, որ բոլոր հուշարձանները ներկայացվում են առաջին անգամ (չափագրվել են Հարժիսի բոլոր մենհիրները): Վերլուծելով դրանց քանդակի առանձնահատկությունները, տեղադրությունը՝ հեղինակները հանգում են այն եզրակացության, որ Հարժիսի կոթողները բրոնզ-երկաթեդարյան քանդակի նմուշներ են: Առաջին անգամ շրջանառության մեջ են դրվում նաև Ալ լճի, Դադի վանքի, Մելիմի լեռնանցքի մենհիրների մասին ուշագրավ տեղեկությունները:

Վիշապաքարերին նվիրված ենթագլխում հեղինակները ներկայացնում են Հայկական լեռնաշխարհում վիշապների առաջացումը և դրանց տարածման օրինաչափություններն ու ուղիները, վերլուծում դրանց ներկայացնող քանդակների առանձնահատկությունները և տեղայնական տիպերը: Դրվատանքի է արժանի այն փաստը, որ Քարեձիի և Ռինդի վիշապաքարերն առաջին անգամ են ներկայացվում հանրությանը:

Մենագրության երրորդ գլուխը նվիրված է սրբավայրերի տեղադրությանը: Սակրալ միջավայրերը կարող են տեղադրված լինել բարձունքի վրա (Նովլու, Ղալաջիք, Շուռնուխ, Շրվական): Ընդամին, հեղինակները նկատում են այն օրինաչափությունը, որ դամբարանը՝ որպես նախնիների պաշտամունքի գլխավոր վայր, իր շուրջը ձևավորում էր սրբագործված միջավայր, որը տարածքական առումով պետք է իշխող լիներ շրջակայքում:

Սրբավայրերի հաջորդ խումբը տեղադրված է բնական սարահարթերին (Արվական, Ղարաբուլաղ, Ծղուկ, Նախիջևան): Ճանապարհի և կիրճի համադրությունում ներկայացվում է Խնածախ գյուղից ոչ հեռու գտնվող Վանքի ձոր վայրի հուշարձանախումբը, ինչպես նաև թասաձև փորվածքով գոհասեղանը: Ա. Իվանովսկու, Ե. Լալայանի և այլոց հետազոտությունների հիման վրա հեղինակներն արժևորում են ջրի դերը պաշտամունքային տարածքի ձևավորման գործում: Հատկանշական է, որ նրանք հիմնավորում են իրենց վարկածները դիցաբանական և բանահյուսական տվյալներով:

Հենվելով լանդշաֆտի յուրացման հիմնական սկզբունքների վրա՝ հեղինակներն առաջարկում են հուշարձանների տեղագրական-գործառությային նշանակության քննության համակարգ, դիտարկում երեք հիմնական բաղադրատարրեր՝ կենտրոն, ճանապարհ, սահման: Նրանք նշում են, որ կենտրոնը, լինելով տվյալ հուշարձանի «սրբություն սրբոցը», փաստորեն եղել է նաև դրա միջուկային գոտին: Նրանց կարծիքով՝ այդօրինակ կենտրոնի դեր կարող էին ունենալ ինչպես բնական գոյացությունները՝ ժայռը, քարայրը, աղբյուրը, գոհասեղանները, այնպես էլ ձեռակերտ կառույցները՝ կուռքերը, դամբարանները: Սահմանի ընդգծման առումով ևս դիտարկվում են բնական (աղբյուր, բլրի բնական ուրվագիծ) ու ձեռակերտ գործոնները (Կապան) կամ դրանց համադրությունը (Բերդիկ): Երրորդ բաղադրատարրը դեպի հուշարձան տանող ճանապարհն է: Այս գործառույթը կարող էին կատարել ինչպես լեռնաբազուկները, լեռնանցքները և կիրճերը, այնպես էլ քարաշեն ճանապարհները:

Նշենք, որ հիմնական տեքստից բացի՝ գրքում ընդգրկված են նաև այլ հեղինակների մի շարք հոդվածներ, 50 աղյուսակ լուսանկարներ ու գրչանկարներ, որոնք կատարել է ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտի հնագիտության գիտահետազոտական լաբորատորիայի աշխատակից Ա. Դավթյանը:

Սույն մենագրությունը Հայաստանում սրբազան լանդշաֆտի հետազոտության առաջին փորձն է, որում շոշափված հիմնահարցերից յուրաքանչյուրը կարող է դառնալ հետազոտության առանձին թեմայի հիմք:

ԵՐՎԱՆԴ ԳՐԵԿՅԱՆ

Բաբկեն Հարությունյան, Հայոց արևելից կողմերի և Ադվանքի պատմության ու պատմական աշխարհագրության հարցեր: Հոդվածների ժողովածու, կազմող՝ Ս. Ս. Եղիազարյան, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2016, 348 էջ

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, գիտության վաստակավոր գործիչ Բաբկեն Հարությունյանը (1941-2013) հայրենական պատմագիտական մտքի վերջին տասնամյակների ակադեմիկոս ներկայացուցիչներից է: Նրա աշխատությունները վերաբերում են գլխավորապես հին և միջին դարերի Հայաստանի քաղաքական պատմության ու պատմական աշխարհագրության հիմնահարցերին: Բ. Հարությունյանի հոդվածների մի զգալի մասը, ոչ պատահաբար, նվիրված է Հայոց արևելից կողմանց ու բուն Ադվանքի պատմության վերոհիշյալ հիմնահարցերին և դրանով իսկ աղբյուրաբանական պատմափոփոխությունների՝ Հայաստանի ու Արևելյան Այսրկովկասի և ընդհանրապես տարածաշրջանի պատմության անօրինակ նենգափոխումների ու կեղծիքների փաստարկված բացահայտմանը:

Հայաստանի դեմ Ադրբեջանի հայտարարած քարոզչական պատերազմով պայմանավորված՝ նշված հարցերին գիտական անդրադարձը հույժ հրատապ է: Այս ամենի հաշվառմամբ՝ գրախոսվող ժողովածուն մեծ կարևորություն ունի, քանզի դրանում ի մի են բերված Բ. Հարությունյանի՝ Հայոց արևելից կողմանց, բուն Ադվանքի և Արևելյան Այսրկովկասի պատմությանն ու պատմական աշխարհագրությանն առնչվող հոդվածները, որոնք հընթացս մերկացնում են աղբյուրաբանական պատմաշինարարների՝ տասնամյակներ շարունակվող և աստիճանաբար ավելի անհեթեթ դարձող պնդումների սնանկությունը:

Ժողովածուն կազմվել է նախկինում հրատարակված նյութերի տեքստային ձևերի պահպանումով և էջակալումով, ինչը հետազոտողին հնարավորություն է ընձեռում դրանք հղել առանձնաբար (ըստ տարբեր հանդեսներում հրատարակված էջերի) կամ ըստ սույն ժողովածուի էջերի: Նախաբանում ժողովածուն կազմող, պատմական գիտությունների դոկտոր Արման Եղիազարյանը ներկայացրել է Բ. Հարությունյանի գիտական կենսագրությունը, ինչպես նաև նրա գործունեության հիմնական ուղղությունները (գիտակրթական, հասարակական և այլն): Այն հույժ արժեքավոր է նաև մատենագիտական առումով, քանզի այդտեղ համակարգված ներկայացված են հեղինակի հետազոտություններն ըստ բնագավառների:

«Հայոց արևելից կողմերի պատմության և պատմական աշխարհագրու-

թյան հարցեր» խորագիրը կրող առաջին բաժնում գետեղված են Բ. Հարությունյանի՝ հայերենով և ռուսերենով այն ուսումնասիրությունները, որոնք նվիրված են Արցախի, Ուտիքի և Փայտակարանի պատմությանն ու պատմական աշխարհագրությանը, ինչպես նաև Մեծ Հայքի թագավորության հյուսիսարևելյան նահանգների վարչաքաղաքական կազմությանը 387-451 թթ. ու Սասանյան Իրանի այսրկովկասյան տիրույթների վարչական բաժանմանը: Այստեղ ընդգրկված հինգ հոդվածներից յուրաքանչյուրը, գիտական արժեքից բացի, օժտված է նաև քաղաքական նշանակությամբ, քանզի Հայաստանի արևելյան հատվածի պատմության միջնադարյան շրջափուլը ներկայումս աղբյուրազանգի պատմագիտության կեղծարարության թիրախներից է:

Երկրորդ՝ «Աղվանքի պատմության և պատմական աշխարհագրության հարցեր» բաժնում համաբերված են Բ. Հարությունյանի՝ Կուր գետից մինչև Կովկասյան մեծ լեռնաշղթա տարածվող բուն Աղվանքի պատմությանն ու պատմական աշխարհագրությանը նվիրված հոդվածները: Հեղինակը դրանցում անդրադարձել է բուն Աղվանքի էթնիկ ու քաղաքական պատմության հիմնահարցերին, սահմաններին, տարածքին ու գավառաբաժանմանը, ինչպես նաև ներկայացրել սկզբնաղբյուրներում հիշատակվող Լփինք երկրամասի տեղադրությունը: Այս բաժնի կարևորությունն այն է, որ աղբյուրազանգի պատմահեղինության ծավալուն կեղծիքի պայմաններում դրանց պարունակած գիտական նյութը, ինչպես նաև հեղինակի փաստարկված դիտարկումները պատմական իրողությունների բացահայտման ու ներկայացման կարևոր հենք են:

Երրորդ բաժնում, որը նվիրված է հայոց պատմության նենգափոխմանը, ներկայացված են աղբյուրազանցի որոշ հեղինակների աշխատություններին նվիրված Բ. Հարությունյանի գրախոսությունները, ինչպես նաև երկլեզվյան (հայերեն ու ռուսերեն) ընդարձակ մի գրախոսություն, որը, փաստորեն, պատասխան է ոչ թե մեկ աղբյուրազանցի հեղինակի՝ Ռաուֆ Մեհթիսի, այլ գործնականում հայոց պատմությունը յուրովի «հետազոտող» աղբյուրազանգի ամբողջ «գիտական» շրջանակի կեղծարարություններին: Այն սկզբում գրվել ու հրատարակվել է հայերեն, սակայն էլնելով դրա նաև հույժ քաղաքական կարևորությունից՝ թարգմանաբար հրատարակվել է նաև ռուսերենով:

Մեր իրականության մեջ նման ժողովածուի հրատարակությունը խիստ շահեկան է, քանի որ մի կողմից մեկ հատորում ամբողջացվել են վաստակաշատ պատմաբանի՝ Հայաստանի արևելյան աշխարհներին և բուն Աղվանքին նվիրված հետազոտությունները, իսկ մյուս կողմից այն հայագետների նոր սերնդի ներկայացուցիչների ուշադրությունը կրկին բևեռում է պատմական ու քաղաքական առումներով անչափ հետաքրքրական և կարևոր հիմնահարցերի վրա:

Բ. Հարությունյանի հոդվածների ժողովածուի լույսընծայման կապակցությամբ հարկ է երախտիքի խոսք ուղղել ԵՊՀ ռեկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից

անդամ Արամ Սիմոնյանին և ԵՊՀ պատմության ֆակուլտետի գիտական ու հրատարակչական խորհուրդներին՝ դրանում ընդգրկված նյութն արժևորելու և հրատարակությունը կազմակերպելու համար: Դա փաստում է մեր մայր բուհի նպատակամղվածությունը՝ Մեծ Հայքի արևելյան աշխարհների և բուն Աղվանքի պատմության ուսումնասիրությունն ամուր հենքի վրա խորացնելու ուղղությամբ: Ինչ խոսք, սույն ժողովածուի հրատարակման գործում Բ. Հարությունյանի երախտապարտ աշակերտ և գործը շարունակող Ա. Եղիազարյանի վաստակն անուրանալի է:

ԱՐՏԱՇԵՍ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

Կարինե Մելիքյան, Հայոց եկեղեցու դիրքն Ընդհանրական քրիստոնեական եկեղեցու համակարգում IV-VI դարի I կեսին, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2016, 263 էջ

Հայոց եկեղեցու IV-VI դարերի պատմությանը, դավանաբանությանը վերաբերող որևէ խնդրի վերլուծությունը բավականին բարդ է, քանզի մեզ սակավաթիվ տեղեկություններ են հասել: Քանի որ քրիստոնեության արշալույսին դժվար է Հայոց եկեղեցին պատկերացնել Ընդհանրական եկեղեցու ծիրից դուրս, ուստի Կարինե Մելիքյանը սույն գրքում ընդգրկել է նաև այն հարաբերությունների պատմությունը, որոնք մեր եկեղեցին ունեցել է Ընդհանրական եկեղեցու այլ աթոռների հետ: Նա այս հարցերն ամենայն մանրամասնությամբ քննարկել է աղբյուրագիտական փաստերի հիման վրա: Նման մոտեցմամբ ի մի են բերված տվյալ ժամանակաշրջանին առնչվող կցկտուր պատմությունները: Գրքում հատկապես կարևորվում են Հայոց եկեղեցու հարաբերությունները քրիստոնեական աթոռների հետ: Դավանաբանական, ծիսական և այլ հարցերը Հայոց եկեղեցին հաստատում էր և պահպանում Ընդհանրական եկեղեցու աթոռների հետ շփումների և սերտ հարաբերությունների միջոցով՝ մոռացության չմատնելով առաքելահիմն բազմաթիվ ավանդույթները:

Առաջին գլխում, որը նվիրված է IV դարում Ընդհանրական քրիստոնեական եկեղեցու համակարգում Հայոց եկեղեցու դիրքին, Կ. Մելիքյանն անդրադառնում է Հայոց եկեղեցու և պետության հարաբերություններին, նշում այն գործընթացները, որոնք պայմանավորում էին քրիստոնեության մուտքը Հայաստան: Նա ներկայացնում է Հռոմեական կայսրությունում և Հայաստանում քրիստոնեության ընդունման ու տարածման էական տարբերությունները:

Հաջորդ խնդիրը, որն արծարծում է հեղինակը, Գրիգոր Լուսավորչի տոհմի կաթողիկոսության հարցն է: Նա վերհանում է այն խնդիրները, նպաստավոր պայմանները, որոնք նպաստում էին կաթողիկոսության հիմքերի ամրապնդմանն ու շարունակմանը: Վիճարկելի է Կ. Մելիքյանի այն դրույթը, թե կաթողիկոսական իշխանության գործությունը «պայմանավորված էր առաջին հերթին նրանով, որ այն, արդարև, շարունակությունն էր հեթանոսական շրջանի քրմապետության» (էջ 39): Չնայած Գրիգոր Լուսավորչի ձեռնադրած եպիսկոպոսները քրմերի զավակներն էին, իրականում նրանք այլևս որևէ կապ չունեին հեթանոսական քրմության հետ: Ազաթանգեղոսն այդ առիթով գրում է. «Եւ զոմանս յորդոց քրմացն առեալ իւր՝ զառաջեաւասունս ձեռնասունս առնէր. փոյթ ուսման ի վերայ ունէր՝ ընդ հոգևոր

խնամով և երկիրդի սնուցանել: Որ յաստիճան եպիսկոպոսութեան լինէին արժանի կալոյ, առեալ ձեռնադրութիւն ի նմանէ»¹: Քրմերի որդիներից արժանավորները, ովքեր ուսանում էին Գրիգոր Լուսավորչի հիմնադրած դպրոցներում և ձեռնադրվում նրա կողմից, քրիստոնեության ջատագովներ և կրթված մշակներ էին, որոնք արդեն հեռու էին հեթանոսական գաղափարախոսությունից: Հայաստանում կազմավորվել էր քրիստոնեական եկեղեցի, երկիրը պետականորեն ընդունել էր քրիստոնեությունը, եկեղեցական ու պետական պաշտոնյաները կրթվում և առաջնորդվում էին քրիստոնեական նոր սկզբունքներով: Քրիստոնեության ընդունումը դարակազմիկ ժամանակաշրջան էր Հայաստանի համար, որն ամուր հիմքեր էր ձգում եկեղեցական և պետական ոլորտներում: Չպետք է նաև նսեմացնել համաքրիստոնեական Սուրբ Գրիգոր Լուսավորչի անունն ու գործը, քանի որ այնքան մեծ էր նրա ավանդը և այնքան գորավոր նրա վկայությունը, որ հայոց քրիստոնեական պատմությունը կարիք չուներ նրան վերագրել այլոց վաստակը (էջ 32), առավել ևս, որ նա հենց Ավետարան քարոզելով և բազում չարչարանքներով էր ձեռք բերել այդ բարձր դիրքն ու հարգանքը հայոց մեջ և աշխարհում (էջ 41):

«Հայոց եկեղեցու հարաբերությունները Կեսարիայի արքեպիսկոպոսության հետ» ենթավերնագրում, կարծում ենք, նյութն առավել ընդգրկուն կդառնար, եթե հեղինակն անդրադարձ կատարեր Վ. Զաքարյանի և Մ. Շիրինյանի հոդվածներին²: Կ. Մելիքյանը քննում է այն հարցը, թե ինչու Գրիգոր Լուսավորիչը Կեսարիայում ձեռնադրություն ընդունեց, իսկ իրեն հաջորդող երկու որդիներին ինքը եպիսկոպոս ձեռնադրեց, և նրանք հաջորդաբար նստեցին կաթողիկոսական աթոռին: Նա մեջբերում է Ն. Մելիք-Թանգյանի կարծիքը, թե «կարծես ինքն է առաջինը քանդում այս սահմանը՝ ձեռնադրելով որդիներին իր փոխարեն հայոց հայրապետ», և հանգում այն եզրակացության, որ այդ քայլը Կեսարիայի հետ հարաբերությունների խզում էր նշանակում: Սակայն հեղինակն ինքն է նաև նշում, որ Հայոց եկեղեցին, ի դեմս Կեսարիայի աթոռի, չուներ որևէ ենթադասության պարտավորություն և իբրև ինքնագլուխ ու ինքնակա աթոռ ազատ էր իր գործողություններում, ինչի մասին վկայում է այն փաստը, որ հետագայում այլ կաթողիկոսներ ձեռնադրվեցին Կեսարիայում: Անդրադառնալով այս հարցին՝ Վ. Զաքարյանը հստակորեն ընդգծում է այն կանոնական իրավունքի սահմանը, որն այդ

¹ Ագաթանգեղոս, Հայոց պատմություն, աշխարհաբար թարգմ. և ծնթ.՝ Ա. Տեր-Ղևոնդյանի, Երևան, 1983, էջ 470/1:

² Տե՛ս **Զաքարյան Վ.**, Գերագահության (εξουσία) հարցը Վաղարշապատի և Կեսարիայի աթոռների փոխհարաբերության մեջ (Կանոնագիտական ուսումնասիրություն) // Լևոն Խաչիկյան. 90. Նյութեր Սատենադարանի հիմնադիր տնօրենի ծննդյան իննսունամյակին նվիրված միջազգային գիտաժողովի (9-11 հոկտեմբերի 2008 թ.), Երևան, 2010, էջ 80-89, **Մ. Է. Շիրինյան**, Հնդիանրական եկեղեցու առաքելական աթոռների վարդապետության ձևավորումը և զարգացումը // Նույն տեղում, էջ 90-99:

դարերում գործում էր, և *գերագահությունը* բնավ չուներ իշխելու իմաստ, այլ *սովորության իրավունքի* տեսանկյունից դիտելիս այն ընդամենը հեղինակության բարձրացման խնդիր էր ենթադրում: «Եթե նույնիսկ Վաղարշապատի աթոռը ենթակա լիներ Կեսարիային, – գրում է նա, – ապա միննույն է, Հայոց եպիսկոպոսները ըստ կանոնների, պետք է ընտրվեին և ձեռնադրվեին տեղական եպիսկոպոսական ժողովի կամ սինոդի որոշմամբ, ինչպես որ Աղվանից և Վրաց եպիսկոպոսների ընտրությունները և ձեռնադրությունները տեղի էին ունենում իրենց տեղական որոշումների համաձայն»¹:

Ցանկանում ենք հավելել, որ ըստ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու կանոնների՝ կաթողիկոսին ձեռնադրում էին տասներկու եպիսկոպոսներ: Գրիգոր Լուսավորչի՝ Կեսարիա մեկնելը և այնտեղ ձեռնադրություն ստանալը կարող էին շատ պարզ պատճառ ունենալ. չկային տասներկու եպիսկոպոսներ: Ագաթանգեղոսը նշում է, որ Գրիգոր Լուսավորիչը հայրապետ դառնալուց հետո ձեռնադրում է տասներկու եպիսկոպոսների²: Քանի որ Հայոց եկեղեցու և Կեսարիայի միջև ենթակայության խնդիր չկար, և արդեն կային ձեռնադրված տասներկու եպիսկոպոսներ, ուստի եպիսկոպոսական-հայրապետական ձեռնադրությունների համար պարտադիր չէր Կապադովկիա (Կեսարիա) մեկնել:

Կ. Մելիքյանն ամենայն մանրամասնությամբ վերլուծում է նաև Հայոց եկեղեցու հարաբերությունները Վրաց և Աղվանից եկեղեցիների հետ, քրիստոնեական եկեղեցիներում սկզբնավորվող դավանաբանական տարակարծությունները, Երուսաղեմի պատրիարքության հետ Հայոց եկեղեցու հարաբերությունները: Նա անդրադառնում է նաև Նիկեայի առաջին տիեզերածոդովին Հայոց եկեղեցու մասնակցությանը և այնտեղ ընդունված Նիկեական Հանգանակին: Առաջին գլուխն ավարտվում է Աշտիշատի ժողովին առնչվող նյութերով, նրա սահմանած կանոնների քննությամբ և ժողովի կարևորության շեշտադրումով:

Երկրորդ՝ «Հայոց եկեղեցու դիրքն Ընդհանրական քրիստոնեական եկեղեցու համակարգում V դարում» խորագիրը կրող գլխում հեղինակը քննարկում է հայոց այբուբենի ստեղծման, քրիստոնեության ամրապնդման հանգամանքները և ընդգծում քրիստոնեական արժեքների պահպանման գործում այբուբենի կարևորությունը: Այնուհետև նա անդրադառնում է Կոստանդնուպոլսի պատրիարքության հետ Հայոց եկեղեցու հարաբերություններին, ինչպես նաև դավանաբանական բանավեճերի նկատմամբ նրա դիրքորոշմանը: Մանրամասն անդրադարձ է կատարվում Պրոկղ Կոստանդնուպոլսեցու և Ակակ պատրիարքի թղթակցությանը հայերի հետ՝ Թեոդորոս Մոպսուեստացու վարդապետության շուրջ, ինչպես նաև Շահապիվանի

¹ Տե՛ս **Ջաքարյան Վ.**, նշվ. աշխ., էջ 85:

² Տե՛ս **Ագաթանգեղոս**, նշվ. աշխ., էջ 470/1:

տեղական ժողովին, V դարի երկրորդ կեսին Հայոց եկեղեցում տեղի ունեցած իրադարձություններին:

Երրորդ գլխում, որը նվիրված է VI դարի I կեսին Հայոց եկեղեցու դիրքին Ընդհանրական քրիստոնեական եկեղեցու համակարգում, Կ. Մելիքյանն անդրադառնում է Դվինի առաջին և երկրորդ ժողովներին, դրանց ընդունած դավանաբանական որոշումներին, հայ-ասորական եկեղեցական հարաբերություններին, անապականության խնդրին: Օգտագործելով բազմաբնույթ և այլալեզու գրականություն՝ նա մանրամասն վերլուծում է այն նախապայմաններն ու ընթացքը, որ ունեցել են տեղական եկեղեցական հիշյալ ժողովները, ևս մեկ անգամ շեշտում դրանց նշանակությունն ու կարևորությունը Հայոց եկեղեցու դավանաբանական-աստվածաբանական հարցերի ձևակերպման և անադարտ պահպանման գործում: «Դվինի 1-ին ժողովը» ենթադրվում հեղինակը «հոռոմք» անվան տակ նկատի ունի հույներին (էջ 184-185), մինչդեռ կարծում ենք, որ խոսքը վերաբերում է Բյուզանդական եկեղեցու հետևորդներին ընդհանրապես: Այս գլխի «Ս. Երրորդության երգասացությանը «որ խաչեցար վասն մեր» հավելման ընդունումը» ենթավերնագիրը կարևոր տեղեկություններ է հաղորդում դավանաբանական վեճերի ու անհանդուրժողականության, փոխադարձ դատապարտությունների և բանադրանքի այն ալիքի մասին, որն առաջացել էր երկաբնակների և միաբնակների միջև:

«Երեքսրբյան»¹ երգասացության հավելման մասին հետաքրքիր դիտարկում ունի նաև Ն. Մառը, ուստի սույն գիրքն ավելի կշահեր, եթե հեղինակն օգտագործեր նրա աշխատությունը²: Այս գլուխը եզրափակվում է Երու-

¹ Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցին և Ընդհանրական եկեղեցին Սուրբ Պատարագի և Ժամերգությունների ժամանակ գործածում են հետևյալ սրբասացությունը. «Սուրբ Աստուած, Սուրբ և Հզոր, Սուրբ և Անմահ, որ **հարեար ի մեռելոց**, ողորմեայ մեզ», որը երբեմն անվանվում է «Երեքսրբյան» կամ «Սուրբ Աստված»: Անտիոքի պատրիարք Պետրոս Թափիչի առաջարկած «...**որ խաչեցար վասն մեր...**» հավելումը Դվինի Բ ժողովը կանոնականացնում է, թեպետ երգասացության այս տարբերակը Հայոց եկեղեցու ծիսակարգում գործածվել է V դարի վերջից (տե՛ս նաև **Շահէ արք. Աճեմեան**, Մեր հաւատքը, Սբ. Էջմիածին, 2001, էջ 60), և «Երեքսրբյան» երգասացությունը Հայոց եկեղեցում երբեմն հնչում է՝ «...որ **հարեար ի մեռելոց...**», երբեմն՝ «...որ **խաչեցար վասն մեր...**» (ըստ օրվա խորհրդի): Սուրբ Ծննդյան և Աստվածհայտնության, Պայծառակերպության (Այլակերպության) և Աստվածածնի Վերափոխման տոներին այն երգում են այլ հավելումներով:

Այս հավելումը դավանաբանական լուրջ խնդիր էր առաջացրել երկաբնակների և միաբնակների միջև: Ըստ երկաբնակների՝ «Սուրբ Աստուած»-ը վերաբերում էր Սուրբ Երրորդությանը, և երբ միաբնակներն ավելացնում են «...որ խաչեցար»-ը, ստացվում էր, որ վերականգնում էին սաբելիոսականությունը, մինչդեռ, ըստ միաբնակների, այն վերաբերում էր Քրիստոսի միավորյալ մեկ բնության անքակտելի գործունեությանը, մարմնացած, մարդացած Աստծո խաչելությանը:

² Տե՛ս **Март Н.**, Аркаун, монгольское название христиан в связи с вопросом об армянах-халкедонитах // «Византийский временник», СПб., 1905, т. 12, вып. 1-2, с. 35: Տե՛ս նաև հայերեն

սաղեմի պատրիարքության հետ դավանաբանական միաբանությունից հրաժարման անդրադարձով:

Գրախոսվող մենագրությունն աչքի է ընկնում գիտական շարադրանքով, բազմալեզու գրականության օգտագործմամբ, իսկ լեզվական առումով այն հստակ է և կառուցիկ: Գրքի վերջում գետեղված են օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության, անձնանունների և տեղանունների ցանկեր: Սակայն երբեմն որոշ անձնանունների տառադարձումները միօրինակ չեն. Peeters ազգանունը հայերենում հիշատակվում է Պետտերս (էջ 259) և Պետերս (էջ 92), Գելգերը (էջ 28, 257)՝ Գելցեր (էջ 52), Բյուզանդը (էջ 50)՝ Բուզանդ (էջ 66) ձևերով:

Կ. Մելիքյանը հնարավորինս մանրամասն վերլուծել և ընթերցողի ուշադրությանն է ներկայացրել IV-VI դարերի Հայոց եկեղեցու պատմության իրադարձությունները՝ չշրջանցելով Ընդհանրական եկեղեցու հետ փոխհարաբերությունները, դավանաբանական-աստվածաբանական հիմնարար խնդիրներն ու հակասությունները: Նրա գիրքն ուշագրավ է իր բնույթով, առավել ևս, որ նա կարողացել է իր առջև դրված խնդիրներին լուծում տալ ամբողջությամբ: Այն, անտարակույս, օգտակար կլինի Հայոց և Ընդհանրական եկեղեցիների պատմությունն ու աստվածաբանությունն ուսումնասիրողների և ընթերցող լայն շրջանակների համար:

ԷԼՅԱ ՄԱՐԻԲԵԿՅԱՆ

Гюнтер Леви, *Армянский вопрос в Османской империи: мифы и реальность*, Москва, «РОССПЭН», 2016, 360 с.

Գյունթեր Լևի, *Հայկական հարցը Օսմանյան կայսրությունում. տառապելներ և իրականություն*, Մոսկվա, «ՌՈՍՍՄԵՆ», 2016, 360 էջ

Среди ангажированных западных исследователей Армянского вопроса периодически появляются отдельные личности, заявляющие о своем якобы аполитичном, наднациональном и объективном подходе к Геноциду армян в Османской Турции. Они выражают свое стремление восстановить «историческую правду», независимо от «симпатии к туркам, а также из симпатии к армянам»¹, возбудить «спор» об истине, чтобы её выявить².

Данный подход поддерживается и поощряется азерпропом, проводящим установки информационной войны, представляющим так называемых объективистов в качестве академических исследователей, борцов против подхода армянских историков³; они преподносятся зеркалом истины западной ученой среды, глаголящих истину в конечной инстанции⁴. При этом издательство «Азернершер», «внося посильный вклад в разоблачение беспредельных по своей лживости измышлений армянских идеологов, представило на суд читателей серию книг как по карабахскому конфликту, так и по истории армяно-тюркских отношений в целом»⁵.

На самом деле издательство продолжило издание книг, направленных против признания «Геноцида армян»⁶. Как писал один из его руководителей А. Агаларов, «в 1915 году исполняется сто лет со времени так называемого «геноцида армян» в Османской Турции. Вся пропагандистская машина армянского государства, а также многочисленной армянской диаспоры за рубежом, и прежде отличающаяся активностью, ныне направлена на то, чтобы придать правовой статус, узаконить в сознании всей мировой общественности факт массовой гибели армян в Турции. И, следует сказать, безуспешно. Под влиянием этой ведущейся уже десятилетиями злонамеренной пропагандистской акции парламентами ряда стран Европы и даже далекой Латинской Америки приняты резолюции, не признающие «геноцида армян» в Турции в годы Первой мировой войны.

Именно исходя из этого, наше издательство запланировало издание серии

¹ **Жорж де Малевил**, Армянская трагедия 1915 года, Баку, 1990, с. 10.

² Там же, с. 11.

³ **Брюс Фейн**: Армянам придется извиниться за историческую ложь.- <http://kavkasia.net/World/2013/1362516537.php>

⁴ **Айтен Мустафа-заде**. Геноцид армян – крах ложной аргументации: по следам зарубежных ученых. - <http://www.1news.az/authors/oped/20160420013556023.html>

⁵ Вместо предисловия [без автора] // **Маккарти Дж., Маккарти К.**, Тюрки и армяне. Руководство по Армянскому вопросу, Баку, 1996, с. 5.

⁶ См.: **Малевил Ж. де**, Армянская трагедия 1915 года, Баку, 1990, 2-е издание, Баку, 2013.

книг на русском, английском, французском и немецком языках армянских и зарубежных авторов, в которых дается объективная оценка событий, происходивших на территории Турции в 1915 году»¹.

Речь, естественно, идет о фальсификаторах истории Геноцида армян, среди которых почетное место занимает один из ангажированных мифотворцев – «друг Турции» Гюнтер Леви, политолог, профессор Массачусетского университета, который в 2005 г. опубликовал монографию «Армянские погромы в Османской Турции: спорный геноцид»². Несмотря на «дискуссионность» работы³, она была переведена усилиями азерпропа и появилась на русском в 2012 г.⁴

Очередное издание осуществлено в Москве в 2016 г., но под новым заголовком – «Армянский вопрос в Османской империи: мифы и реальность». Перелицовка работы объясняется оскудением творческого запала азерпропа в условиях признания Геноцида Папой Римским Франциском I в 2015 г.⁵ и резолюции бундестага ФРГ от 2 июня 2016 г., когда из присутствующих парламентариев лишь один проголосовал против, а другой воздержался⁶.

Обновление заголовка⁷ учитывает также осуждение Геноцида армян (в 1915-1922 годах) Государственной Думой Российской Федерации в 1995 г. и в 2005 г.⁸ В ноябре 2015 г. в Государственную Думу был внесен законопроект о криминализации отрицания Геноцида армян, последовавший за сбитием российского бомбардировщика Су-24 на территории Сирии со стороны турецкого истребителя F-14⁹. Государственная Дума Российской Федерации выразила сочувствие «братской Армении» и по случаю 100-летия Геноцида армян¹⁰.

Новый заголовок работы Г. Леви, которую сразу стали представлять в

¹ **Агаларов А.**, От издательства // **Малевил Ж. де**, Армянская трагедия 1915 года, Баку, 2013, с. 5.

² **Lewy G.**, The Armenian Massacres in Ottoman Turkey: A Disputed Genocide, University of Utah Press, 2005. Американский профессор Гюнтер Леви в своей книге опровергает «геноцид» армян. - <http://erevan.gala500.com/page/251.html>

³ **Dadrian V.**, Reply to Guenter Lewy // «Հայոց ցեղասպանության պատմության և պատկերասրահի հարցեր», 2006, № 12, էջ 15-27, **Шиманьски А.**, Армянская резня в Османской Турции: спорный геноцид. Польский институт международных дел, 2007, № 1, т. 7. - <http://www.pism.pl/zalaczniki/Europa/22recenzje.pdf>

⁴ Армянские погромы в Османской Турции: Спорный Геноцид. Гюнтер Леви, 2005, издательство The University of Utah Press, перевод «Вестника Кавказа», 2012. - <http://vestikavkaza.ru/ap.pdf>

⁵ Франциск назвал убийство армян первым геноцидом XX века. - <http://www.bbc.com/russian/international/2015/04/150412>

⁶ Парламент Германии принял резолюцию о Геноциде армян в Османской империи. - <http://tass.ru/mezhdunarodnaya-panorama/3333861>

⁷ О книге Гюнтера Леви «Армянский вопрос в Османской империи: мифы и реальность» на портале «Вестник Кавказа». - <http://www.rosspen.su/ru/news/view/id/623>

⁸ Тесты заявлений Государственной Думы РФ об осуждении Геноцида армян. - <http://nasha.sreda.ru/zayavleniya-gosudarstvennoj-dumy-o-genocide-armyan>

⁹ Вице-спикер Госдумы РФ пояснил, почему законопроект о криминализации отрицания Геноцида армян внесли в ГД именно сейчас. - <http://www.panarmenian.net/rus/news/201296>

¹⁰ Госдума РФ приняла заявление в связи со 100-летием Геноцида армян. - <http://rus.azatutyun.am/a/26976086.html>

интернет-пространстве как достижение «неангажированного исследователя»¹, сохранил в неизменности мифотворческую начинку по отрицанию Геноцида армян. Основные компоненты пропагандируемой позиции «антиполитицизма» Леви в Армянском вопросе и Геноциде армян имеют следующий вид.

Таблица № 1

Утверждения	Исторические реалии
1. Обстренность отношений между Турцией и Арменией.	1. Причина – отказ Турции признать Геноцид армян.
2. Ключевой момент спора – наличие и релизация замысла Геноцида.	2. Геноцидное общество в Турции и политический.
3. Наличие разных подходов в отношении двух этносов.	3. Незаинтересованность турецкой элиты в признании геноцида.
4. Массовые депортации армян - результат армянского восстания.	4. Депортация – составная часть программы Геноцида.
5. Исчезновение важных турецких документов о происшедшем.	5. Соккрытие и невыявленность документов.
6. Неэффективность турецких сборников документов.	6. Значимость донесений консульств и миссионеров.
7. Произвольная интерпретация исторических фактов.	7. Ангажированный подход к используемым материалам.
8. Двусмысленность терминологии.	8. Четкость определении геноцида (с. 5-8).

Краеугольным положением сочинения Г. Леви является Геноцид армян, преимущественно начального времени, охватывающего депортацию 1915-1916 гг. Им указано: «Ради подробного изучения я сузил рамки своего исследования до событий 1915-1916 гг., которые, бесспорно, унесли большинство жизней и стали камнем преткновения между Турцией и Арменией» (с. 7). События 1917-1918 гг. и время Севрского договора удостоились в 1920 г. «беглого описания».

Именно такой подход диктует внимание к трактовке Геноцида армян со стороны Г. Леви. Конвенция о предупреждении преступления геноцида и наказания за него, принятая Генеральной Ассамблеей ООН от 9 декабря 1948 г., отмечает в первой статье возможность геноцида в мирное либо военное время. Вторая статья определяет следующие признаки действий по полному либо частичному уничтожению любой национальной, этнической, расовой и религиозной группы по следующим признакам: а) убийство представителей этой группы; б) нанесение «серьезных телесных или умственных расстройств»; с) организация жизненной среды для полного или частичного уничтожения; d) пресечение воспроизводства деторождения; е) вычленение детей этнической группы в состав другой. Статья третья предусматривает наказание против человечности в виде геноцида,

¹ О книге Гюнтера Леви «Армянский вопрос в Османской империи...»- <http://www.rosspen.ru/ru/news/.view/id/623/>

его подготовки, подстрекательства и участия к совершению¹.

Давал ли армянский народ основания для геноцида? Как нация он включен в состав десятка древнейших народов мира, который проживает в регионе с 3 тысячелетия до н. э. Столица Армении основана в 782 г. до н. э. царем Аргишти-хинили, а общепринятое внешнее название страны представлено в Бихистунской надписи 521 г. до н. э.² Христианство в качестве официальной религии Великой Армении принято в 301 г. нашей эры³.

Как политолог Г. Леви подходит к армяно-турецким отношениям с позиции этнополитического конфликта, порожденного расхождением интересов между армянским этносом и господствующей турецкой нацией в процессе модернизации Османской Турции: «До начала XIX в. армяне не подвергались систематическому угнетению. Они были гражданами второго сорта, обязанными платить специальные налоги и носить отличительный головной убор» (с. 12). Этносоциальный статус второсортности определялся конфессиональным признаком «гявур» (неверный), который запрещал христианам обладать и носить оружие, давать свидетельские показания против мусульман и пр. Весь этот процесс Г. Леви определяет понятием «Историческая ситуация», которая стартует с гибелью Византии.

Действительно, в 1461 г. в Османской империи был создан армянский Константино-польский патриархат, ставший духовно-светским представителем армянского этноса, а также выражавший интересы древневосточных православных церквей – коптской, эфиопской, малагарской, сиро-яковитской. Армяне были вписаны в систему миллетов. До итогов русско-турецкой войны 1877-1878 гг. армянская община имела почетное прозвище «миллет-ас-садик» (верная община).

Распад одряхлевшей Османской державы обусловил её превращение в «больного человека» Европы. Под давлением западных стран началась эпоха танзимата в 1839 и 1856 гг. в Турции, когда султанский режим предпринял реформы по развитию страны, уравниванию прав мусульманского и христианского населения. Пиком явилось провозглашение конституции 1876 г. султаном Абдул-Гамидом II (с. 12, 13). Однако все реформы имели эфемерный характер. «Зулум» – протогеноцид 1895-1896 гг. – обернулся гибелью до 300 тыс. армян⁴.

Ջ. Մաքարթին առանձին գլուխ է հատկացնում նաև քեմալական շարժման առաջին տարիներին հայ-թուրքական լարված իրադարձություններին: Հետևելով թուրք պատմաբանների օրինակին՝ նա այդ փուլն անվանում է «Անտանտի և նրա դաշնակիցների դեմ մղված անկախության պատերազմի ժամանակաշրջան»՝ լուրջյան մատնելով այն փաստը, որ թուրք ազգայնական քեմալականները, ըստ էության, հայության նկատմամբ շարունակեցին իրենց նախորդների՝ իթթիհադականների ցեղասպան քաղաքականությունը: Ընդհակառակը, նա երկրի արևելքում և Կիլիկիայում հայ բնակչության ինքնապաշտպանական կռիվները ներկայացնում է որպես մուսուլմանների նկատմամբ կազմակերպված ջարդեր և սպանություններ:

Բացարձակ լուրջյան մատնելով քեմալականների կազմակերպած կիլիկիահայության զանգվածային կոտորածը՝ հեղինակը լկտիաբար պնդում է, որ այնտեղ հայերը առավելապես մահացել են հիվանդություններից և քաղցից: Այստեղ ևս հավատարիմ մնալով իր սկզբունքին՝ նա պնդում է, որ այդ նույն պատճառներով մահանում էին նաև մուսուլմանները: Հավասարության նշանի ջատագով պատմաբանը, այնուհետև տարվելով հաշվապահությամբ, բերում է կեղծ թվերի մի ամբողջ հեղեղ՝ փորձելով դրանց միջոցով նախ համոզել, որ Թուրքիայում ոչ մի ցեղասպանություն տեղի չի ունեցել, և եթե այնտեղ այլևս հայեր չկան, դրա պատճառն այն է, որ նրանք հեռացել են տարբեր երկրներ (էջ 240):

Այնուհետև անցնելով հռետորաբանությանը՝ հեղինակը հարց է տալիս, թե «ինչո՞ւ այդքան մեծ թվով մարդիկ երկար ժամանակ հավատում էին, որ թուրքերը զանգվածաբար կոտորել են հայերին»: Իբրև պատասխան՝ նա թվարկում է երեք պատճառ՝ «փաստերին չտիրապետելը, նախապաշարմունքը և քարոզչությունը» (էջ 243): Առաջին պատճառը նա բացատրում է եվրոպացիների ու ամերիկացիների անգրագիտությամբ ու անգիտությամբ (էջ 243): Իսկ այն հարցին, թե ինչու տևական ժամանակ թուրքերը հակահարված չեն տվել այն «նախապաշարմունքին կամ նախատրամադրվածությանը», որ իրենք իբր կազմակերպել են հայերի զանգվածային ջարդեր, Ջ. Մաքարթին պատասխանում է նույնքան տարօրինակ ձևով. «Թուրքերը զբաղված էին իրենց ավերված երկրի վերականգնման գործով և ցանկություն չունեին քրքրելու անցյալը» (էջ 244): Որպես դրա հիմնավորման լրացուցիչ կովան նա բերում է ևս մեկ անհեթեթ փաստարկ. «Բախվելով թուրքերի

շրջանում տարածում գտած իռեդենտիզմի հետ, որով ներշնչվելով նրանք երազում էին վերադարձնել Եվրոպայում և Ասիայում կորցրած հողերը, կառավարությունը աշխատում էր կանխարգելել Առաջին համաշխարհային պատերազմի և թուրքերի անկախության պատերազմի ժամանակ տեղի ունեցած դեպքերի վերաբերյալ խոսակցությունները» (էջ 244): Միննույն ժամանակ Ջ. Մաքարթին ցավով արձանագրում է, որ այդ դեպքերի մասին «ուրիշները չէին մոռանում», իսկ հակաթուրքական քարոզչությունը շարունակվում էր մնալով անպատասխան: «Այն դարձավ ժամանակակից հայ ազգայնականների համար կոման թուրքերի նկատմամբ հավակնություններ ներկայացնելու նպատակով» (էջ 244):

Ջ. Մաքարթին ոչ միայն հրաժարվում է Հայոց եղեռնը անվանել «ցեղասպանություն/գենոցիդ», այլև պնդում է, որ Թուրքիայի «կենտրոնական կառավարությունը չէր պատրաստվում սպանել բոլոր հայերին»: Դա հիմնավորում է նրանով, որ «տարագրված հայերի նշանակալից մեծամասնությունը կենդանի է մնացել»: «Ըստ էության, – գրում է նա, – արժե միայն նայել այսօր ամբողջ աշխարհում ապրող միլիոնավոր հայերին. եթե օսմանցիները ցանկանային սպանել նրանց նախնիներին, այդ հայերի մեծ մասը լույս աշխարհ չէր գա» (էջ 253-254): Ըստ նրա՝ այն, ինչ տեղի է ունեցել հայերի հետ, անշուշտ աղետ էր, որից, սակայն, բաժին էր հասել Օսմանյան կայսրության բոլոր ժողովուրդներին: Նա այն տեսակետի կողմնակիցներից է, որ «գենոցիդ» կարելի է անվանել միայն հրեական հոլոքոստը:

Ջ. Մաքարթիի լկտիությունը հասնում է նույնիսկ այն աստիճանի, որ հայերին է մեղադրում Արևմտյան Հայաստանում և Ադրբեջանում մուսուլմանական բնակչության զանգվածային կոտորածներ կազմակերպելու համար. «Մի թե հայերը մեղավոր չեն գենոցիդ կազմակերպելու մեջ» (էջ 254):

Արևմտահայության ողբերգության վերաբերյալ նրա եզրափակիչ դատողությունը հետևյալն է. իրական պատմությունը վկայում է, որ աշխարհավեր փոթորիկների ժամանակ տեղի են ունեցել փոխադարձ ջարդ և կոտորած: «Այդ դեպքերի մեջ չկան ոչ բացարձակ անմեղներ և ոչ էլ կատարյալ մեղավոր կողմեր, և տեղի ունեցած հանցագործությունները ոչ մի կերպ չի կարելի անվանել միակողմանի: Դա ոչ թե գենոցիդ էր, այլ պատերազմ» (էջ 256):

Ջ. Մաքարթիի հավաքական կերպարը հառնում է որպես մոլեգին հայատյացությամբ, ինչպես նաև ժողովուրդների միջև ասելություն և թշնամական զգացումներ բորբոքելու մարմաջով տարված մարդ: Սակայն, միաժամանակ, նրա կամքից ու ցանկությունից անկախ, սույն գրքի էջերում հայ ժողովրդի հասցեին թունոտ դատողությունների վերաբերյալ տողերի արանքում անթաքույց ու հստակ ի հայտ են գալիս մեր ժողովրդի դյուցազնական ոգին, նրա մաքառելու և արարելու անկոտրում ու անսահման կորովը:

ՎԱՀԱՆ ԲԱՅԲՈՒՐՅԱՆ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՊԱՐԲԵՐԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ս. թ. ապրիլի 13-ին և 14-ին Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի նիստերի դահլիճում տեղի ունեցավ «Հայոց պատմության նոր պարբերացման խնդիրները» թեմայով քննարկում ԵՊՀ ռեկտոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Արամ Սիմոնյանի նախագահությամբ: Այն կազմակերպել էր «Հայաստանի պատմագետների միությունը» հասարակական կազմակերպությունը՝ ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի, միջազգային հարաբերությունների և պատմության ֆակուլտետների, ՀՀ ԳԱԱ պատմության, հնագիտության և ազգագրության, արևելագիտության ինստիտուտների, Հայաստանի պետական մանկավարժական, Հայ-ռուսական (Մլավոնական), Վանաձորի և Արցախի պետական համալսարանների, ՀՀ ազգային արխիվի հետ գործակցությամբ և ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի աջակցությամբ: Գիտաժողովի նպատակն էր վերանայել Հայոց պատմության դասական պարբերացումը և նոր ձևաչափեր մշակել Հայոց պատմությունը համաշխարհային պատմության համատեքստին հարմարեցնելու համար: Ստորև ներկայացվում են գիտաժողովի մասնակիցների ելույթները:

Արամ Սիմոնյան
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

Հարգարժան գործընկերներ

«Հայաստանի պատմագետների միությունը» նախաձեռնել է մի գործընթաց, որը Խորհրդային Միության տարիներին պատմագիտության բնագավառում շատ տարածված էր և, ցավոք, մոռացության է մատնվել անկախությունից հետո: Պատմագիտության այն հարցերը, որոնք պահանջում էին նոր մոտեցումներ կամ նույնիսկ հակասական կարծիքներ էին պարունակում, քննարկվում էին կլոր սեղաններում և գիտաժողովներում, որտեղ տարակարծությունների քննությամբ պատմաբանները հանգում էին ընդհանուր եզրակացության: Այսօր մենք փորձում ենք վերսկսել հին ավանդույթը մեր միության շրջանակներում:

Այսօրվա քննարկումը ամբողջությամբ ձայնագրվում է, և ելույթները մտադիր ենք մանրամասն ներկայացնել ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի «Հայագիտության հարցեր» հանդեսում: Քննարկման թեմա ենք ընտրել Հայոց պատմության նոր պարբերացման խնդիրը: Չափազանց ցած չեմ լինի, եթե ասեմ, որ այն մեզ միշտ հետաքրքրել է և մշտապես տեղիք է տվել հակասական կարծիքների: Մեր պատմության պարբերացման վերաբերյալ մոտեցումների բազմազանությունը մի իսկական շփոթ է առաջացրել պատմագիտության մեջ, քանի որ միշտ եղել են տարբեր մոտեցումներ: Խորհրդային շրջանում այս խնդիրը շատ դյուրին լուծում էր ստացել շնորհիվ Կարլ Մարքսի «պատմական ֆորմացիաների տեսության», որը պարզ ու հասկանալի էր բոլորի համար: Այսօր, երբ մենք թնակոխել ենք այսպես կոչված IV արդյունաբերական հեղաշրջման ժամանակաշրջանը, Մարքսի տեսությունը վերջնականապես անցել է պատմության գիրկը, բայց, ցավոք, պատմության պարբերացման մասին միասնական, բոլորի կողմից ընդունելի տեսություն, չնայած բազմաթիվ փորձերին, առ այսօր գոյություն չունի: Մենք հստակ ըմբռնում ենք, որ Հայոց պատմությունը, լինելով համաշխարհային պատմության օրգանական մասը, ենթարկվում է նրա զարգացման տրամաբանությանը, բայց մյուս կողմից ունի իր առանձնահատկությունները, և դրանց մասին կարիք կա այսօր մանրամասն խոսելու: Շատ մարդիկ կարծում են, որ, ի տարբերություն ֆիզիկայի, քիմիայի, սոցիոլոգիայի, աշխարհագրության, պատմությունը գիտություն չէ, այլ հեքիաթանման պատումների մի շարան, որի մասին բոլորը կարող են հայտնել մասնագիտական կարծիք: Նման պարզունակ և հակագիտական մոտեցումը ոչ միայն վիրավորական է պատմաբանների համար, այլև մեծապես վնաս է հասարակության զարգացման տեսակետից, որովհետև մերժում է այն փաստը, որ պատմությունը որպես գիտության ճյուղ ունի իր տեսությունը, իր մեթոդը, հետազոտական իր մոտեցումները և վերջապես իր օրինաչափությունները, որոնց տիրապետելը պարտադիր է պատմությունը ընկալելու և հասկանալու համար: Շատ և շատ մասնագիտությունների տեր մարդիկ իրենց իրավունք են վերապահում ոչ միայն «արհեստավարժ» կարծիք հայտնել պատմական այս կամ այն իրադարձությունների վերաբերյալ, այլև գրում են ստվարածավալ գրքեր, որոնք, իրենց կարծիքով, մինչ այժմ գոյություն ունեցող պատմագիտության քարը քարի վրա չեն թողնում: Դրա լավագույն ապացույցներից է անցած դարի 80-90-ական թթ. «սենսացիոն» հայտարարությունների տխրահռչակ հեղինակ Ֆոմենկոն: Նման փորձերը շարունակվում են նաև այսօր՝ մեծագույն վնաս բերելով պատմագիտությանը: Ահա թե ինչու մենք՝ պատմաբաններս, ամենայն վճռականությամբ պետք է ասենք մեր մասնագիտական խոսքը, դրսևորենք պրոֆեսիոնալ կամք և խստություն՝ կանխելու նման արկածախնդիրների անպատասխանատու, երբեմն նույնիսկ անգրագետ գործունեությունը, որը Հայոց պատմության դեպքում շոշափելի վնաս է հասցնում մեր ժողովրդի շահերին, որովհետև պատմագիտությունը եղել է, կա և մնալու է քաղաքական

գիտություն և ժողովրդի քաղաքական շահերի արտահայտիչը: Վերջապես, մենք վճռականորեն պետք է պայքարենք մեր մասնագիտական պատվի համար ոչ պակաս, քան այլ մասնագիտությունների շատ ու շատ ներկայացուցիչներ են դա անում:

Պավել Ավետիսյան *ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ*

Տասնհինգ տարի առաջ ակադեմիկոս Լենդրուշ Խուրշուդյանի նախաձեռնությամբ հրավիրվեց գիտաժողով՝ հայոց պատմության պարբերացման հարցերը քննարկելու համար: Ըստ էության դա Հայաստանի պատմաբանների առաջին և առ այսօր միակ փորձն էր՝ ուղենշելու և հստակեցնելու հետխորհրդային հայ պատմագիտության անելիքներն ու նպատակները: Այդ ֆորումի կարևոր արդյունքներից մեկը պետք է համարել այն, որ արձանագրվեց հայոց պատմության համար հնգանդամ ֆորմացիոն տեսության անընդունելի լինելը: Միաժամանակ առաջադրված պարբերացման կոնկրետ սխեմաների բազմազանությունը, տերմինաբանությունը, դարաշրջանների առանձնացման համար բերված հիմնավորումները հստակ ցույց են տալիս, որ պարբերացման նոր համակարգի առաջադրման համար դեռևս շատ անելիքներ ունենք ինչպես հայոց պատմության փիլիսոփայության ու հայեցակարգերի մշակման, այնպես էլ պարբերացման, փուլաբաժանման համակարգերի, սխեմաների ձևավորման ուղղություններում:

Այս կապակցությամբ ձեր ուշադրությանն եմ ներկայացնում հետևյալ դիտարկումներս:

Ազգային պատմությունների ձևավորման վաղ փուլում՝ XVIII-XIX դարերի սահմանագծից սկսած, պատմագիտության մեջ արմատավորվեցին երկու հիմնական պրակտիկաներ, որոնցից յուրաքանչյուրը խիստ որոշակի սոցիալական պատվեր կատարող էր: Մի դեպքում պատմագիտության միջոցով փորձ էր արվում կերտելու ազգային անցյալը, պատմագիտությունը դիտվում էր որպես ազգային ինքնության ձևավորման գործիք և միջոց: Այն է՝ առաջնային էր համարվում պատմագիտական շարադրանքի սոցիալական գործառույթը: Խոսքս այն մոտեցումների մասին է, որոնց Գ. Վ. Հեգելը խմբավորում էր «պրագմատիկ պատմագրություն» անվանումով: Արդի պատմագիտության մեջ հաճախ այս պրակտիկան գնահատվում է որպես գիտության և քաղաքականության միջև միջանկյալ դիրք գրավող մտավոր գործունեության ձև: Սրան զուգահեռ՝ աստիճանաբար տիրապետող էին դառնում այն մոտեցումները, որտեղ շեշտվում էր, որ պատմագիտությունը՝ որպես գիտակարգ, իմաստ ունի միայն այն դեպքում, երբ գիտականության

գործառույթը գերակա է սոցիալականի նկատմամբ: Նկատի ունեն պատմագիտության իրատեսական ուղղությունը, որի շրջանակներում ձևավորվեցին պատմագիտության մեջ ներկայումս տիրապետող դարձած պատմագիտական հետազոտության չափորոշիչներն ու պատմագիտական ուսումնասիրությունների շարադրման կանոնները: Հետխորհրդային երկրների պատմագիտական մտքի ներկայիս վիճակը գնահատողները հատկապես շեշտում են այն հանգամանքը, որ հետխորհրդային և Արևելյան Եվրոպայի բազմաթիվ երկրներում պատմությունը՝ որպես գիտակարգ, պատմությունը՝ որպես միֆ և պատմությունը՝ որպես գաղափարախոսություն, միախառնվել են, ինչն իր բացասական ազդեցությունն է թողնում պատմագիտական որոշակի ուսումնասիրությունների որակի ու արժանահավատության վրա: Նման վիճակը արդեն տիրապետող է դարձել նաև մեզանում: Այս մոտեցումներից յուրաքանչյուրը պատմության կառուցվածքի, տարածական և ժամանակային ընդգրկումների, դեպքերի, դեմքերի, պատմական այս կամ այն անցուդարձի արժևորման, համակարգման, այդ թվում՝ պարբերացման իր տրամաբանությունն ունի:

Ասելիքս այն է, որ քանի դեռ չենք հստակեցրել, թե հայաստանյան պատմագիտությունը ներկայիս պայմաններում սոցիալական ինչ գործառույթի կրող պետք է լինի, պարբերացման ինչ համակարգ էլ առաջադրենք, հիմնավորումներն անկատար ու խնդրահարույց են լինելու:

Հաջորդ կարևոր խնդիրը, կարծում եմ, ազգային պատմության և համաշխարհային պատմության պարբերացման համակարգերի փոխհարաբերության և փոխհամաձայնության հարցն է:

Մինչև XX դարի կեսերը ընդհանուր պատմության հնգանդամ պարբերացման մարքս-ստալինյան համակարգից ավելի տարածված էր պատմության եռանդամ կամ քառանդամ պարբերացումը՝ հին, միջին, նոր դարեր սխեմայով: Եվրոպական պատմագիտության մեջ զգալի տարածում գտած փուլաբաժանման այս համակարգի հիմքում դժվար չէ տեսնել Կոտեսիասի ասորեստանյան, մարական, պարսկական «երեք թագավորությունների դարաշրջանների», Տրոգոս Պոմպեոսից սկսած և միջնադարում լայն տարածում գտած (Օտտոն Ֆրեյդլինհեյնցի) «չորս թագավորությունների դարաշրջանների» (ասսուրական, մարական, մակեդոնական և հռոմեական կայսրություններ) տեսակետները: Վերածննդի դարաշրջանի և լուսավորության դարաշրջանի ականավոր ներկայացուցիչներն արդեն փուլաբաժանման նույն սկզբունքներն օգտագործեցին աշխարհիկ պատմության ձևավորման համար, որը տարբեր մոդիֆիկացիաներով կիրառվում է մինչև մեր օրերը: 1992 թ., ըստ էության, կոչ արվեց առաջնորդվելու հայոց պատմության ստորաբաժանման այս համակարգով: Կարծում եմ, որ այսօր արդեն այս մոտեցումը պետք է համարել ժամանակավրեպ և փորձել հայոց պատմության հիմնախնդիրները քննարկել պարբերացման բոլորովին նոր համակարգի շրջանակներում:

Հատկապես եթե նկատի ունենանք, որ XX դարի կեսերից պատմության կառուցվածքի ու բովանդակության նոր հոլովույթների կիրառությունները հանգեցրին համաշխարհային պատմության փուլաբաժանման նոր համակարգերի ձևավորմանը, ինչպես օրինակ ավանդական՝ մինչկապիտալիստական հասարակություններ, կապիտալիստական հասարակություններ, մինչինդուստրիալ հասարակությունների պարբերացման մոդելը կամ լայն տարածում ստացած Ուոլտ Ռոստոուի՝ հնգաստիճան զարգացումով ներկայացված «տնտեսական աճի փուլերի տեսությունը» և այլն:

Ես այսօր նպատակ չունեմ խոսելու արդի փուլում շրջանառվող տեսությունների ու տեսակետների, ասենք, օրինակ, նորէվոլյուցիոնիստների, մոդեռնիստական և պոստմոդեռնիստական մոտեցումների մասին: Դա առանձին թեմա է: Կցանկանայի միայն փաստագրել, որ մեր օրերում շատ ավելի տարածված են տեղային քաղաքակրթությունների տեսության շրջանակներում առաջադրվող փուլաբաժանման համակարգերը և պատմական համակարգերի ձևավորման ու զարգացման «աշխարհ-համակարգային» վերլուծությունները:

Ֆ. Բրոդելի, Ի. Վալերստայնի, Գ. Ֆրանկի և սոցիալ-հումանիտար գիտությունների ժամանակակից տեսաբանների մշակած «աշխարհ-համակարգային» վերլուծությունների մեթոդաբանության առավելությունն այն է, որ այն հնարավոր է կիրառել ինչպես գլոբալ, համաշխարհային պատմության զարգացման ընթացք, այնպես էլ տարածաշրջանային և ազգային պատմությունները փուլայնացնելու առումներով:

Եթե համեմատենք համաշխարհային պատմության պարբերացման ընկալումներն ու մոտեցումները և 1992 թ. հայ պատմաբանների առաջարկած պարբերացման նոր չափանիշները կամ այսօր դրանց դրվագային կիրառությունները, հստակ կընդգծվի, թե ինչ մեծ հակասություն կա ինչպես նախկինում, այնպես էլ ներկայիս համընդհանուր ընդունելություն ստացած համաշխարհային պատմության պարբերացման ելակետային չափանիշների, հիմնականում հասկացությունների ու հայոց պատմության պարբերացման համար որպես հիմք հայտարարված չափանիշների ու երևույթների միջև:

Մյուս կողմից, եթե հիմք ընդունենք համաշխարհային պատմության պարբերացման չափանիշները, ապա հայոց պատմության զարգացման ընթացքի մի հսկայական մասը ակնհայտորեն ձուլվելու և մաս է կազմելու հարևան ժողովուրդների, պետականությունների պատմությանը, մեր հանրության համար անցանկալի, ես կասեի անընդունելի երանգներով: Այսինքն՝ ազգային պատմությունը իր կարևոր սոցիալական գործառնություններից մեկը, այն է՝ ազգային ինքնության և նոր պետականություն կերտող հանրության կոլեկտիվ հիշողության ձևավորողի գործառնությո՞ւյթը, որն այսօրվա գլխավոր հասարակական պատվերներից մեկն է, չի կատարելու կամ ցանկալի չափով չի կատարելու:

Ես կարծում եմ, որ այս հակասության հաղթահարման համար «աշ-

խարհ-համակարգային» վերլուծությունների մեթոդաբանությունը մեծ հնարավորություններ է տալիս: Մասնավորապես «աշխարհ-համակարգերի» սահմաններում առանցքային տեղ զբաղեցնող միջուկային գոտի-միջանկյալ գոտի-պերիֆերիա բաժանումներում Հայաստանն ու հայկական ինքնությունը կրող տարրը պատմության տարբեր հոլովոյթներում ու պայմաններում կարևոր դերակատարում են ունեցել ժամանակի քաղաքակրթական կենտրոններն ու պերիֆերիաներն իրար կապելու, տարբեր քաղաքակրթությունների ու պատմական համակարգերի սահմանային գոտիները ձևավորելու գործում: Այս ընկալումների սահմաններում մշակված փուլաբաժանումների պարբերացման համակարգը թույլ կտա համադրելու համաշխարհային պատմության և ազգային պատմության համար սկզբունքային համարվող չափանիշները՝ առանց մեղանչելու պատմության, գիտականության և ազգային ինքնության առաջնահերթությունների առաջ:

Խոսքս ամփոփեմ՝ ներկայացնելով հնագույն մշակույթների վերլուծություններով առաջադրվող փուլաբաժանման մի համակարգ: Այն կազմելիս հիմք ենք ընդունել «աշխարհ-համակարգային» վերլուծություններում ընդունված որոշ մոտեցումներ, ինչպես նաև անցումային փուլերի հայեցակարգի որոշ դրույթներ՝ բնական միջավայրի, ժողովրդագրության, արտադրական-տեխնոլոգիական, մշակութային միջավայրի ձևավորման և տրանսֆորմացման, նորագոյացումների դիֆուզիայի տարածման գործոնների հաշվառմամբ:

Հոլոցենի վաղ փուլերից մինչև Վանի թագավորության շրջանը դիտարկելի լեռնաշխարհի պատմամշակութային իրողությունները համարում ենք, որպես մի մեծ փուլ՝ «Հնագույն Հայաստան» խորագրով, որն իր հերթին կարելի է ստորաբաժանել երեք ենթափուլերի՝

- 1) Վաղ երկրագործաանասնապահական հասարակություններ՝ մ. թ. ա. XI/X հազարամյակ – մ. թ. ա. IV հազարամյակի կես,
- 2) Կոմպլեքսային հասարակություններ՝ մ. թ. ա. IV հազարամյակի կես – III հազարամյակի կես,
- 3) Պետական վաղ կազմավորումներ՝ մ. թ. ա. III հազարամյակ – մ. թ. ա. II/I հազարամյակ:

Աշոտ Մելքոնյան
ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս

Հայոց պատմության պարբերացման խնդիրն այսօր ևս շարունակում է մնալ հայ պատմաբանների հետաքրքրությունների կիզակետում: Հաճախ հարց է ծագում, թե պարբերացման խնդրում ինչը պետք է դնել յուրաքանչյուր դարաշրջանի հիմքում՝ սոցիալ-տնտեսական զարգացման հան-

գամանքը, ինչպես արել էր Կարլ Մարքսը, մշակութային⁹ մակարդակը, թե՞ պետականության գոյության փաստը կամ մեկ այլ նախապայման:

Զգիտես ինչու մեզանում դասագրքային ճշմարտություն է դարձել այն սխալ թեզը, թե մենք դարեր շարունակ պետականություն չենք ունեցել: Այդ իմաստով նկատի ենք ունեցել հատկապես 1045 թվականից մինչև 1918 թվականն ընկած ժամանակահատվածը, երբ մայր հայրենիքում 1045 թ. կորցրել ենք Անիի Բագրատունյաց թագավորությունը, և պետականությունը վերականգնել միայն 1918 թ.: Այս ձևակերպումը մենք շատ ենք կրկնել՝ առիթ տալով մեր հարևաններին՝ պնդելու, որ հայերը փաստում են դարեր շարունակ իրենց պետականության բացակայությունը:

Պետականության խնդիրներն ուսումնասիրելիս հանգում ենք այն համոզման, որ իբրև ազգի գոյության և զարգացման թիվ մեկ նախապայման այդ կարգավիճակը դասական իմաստով, իր բոլոր հատկանիշներով (ատրիբուտներով) պարտադիր չէ, որ մշտապես առկա լինի: Վերցնենք մեր դասական պետականության օրինակը՝ Բագրատունյաց Հայաստանը, զարգացած միջնադարում: Փորձենք, օրինակ, Աշոտ Երրորդ Ողորմածի կամ Գագիկ Առաջինի Հայաստանը համեմատել Ֆրանսիայում Լյուդովիկոս XIV-ի կամ Լյուդովիկոս XV-ի ժամանակաշրջանների հետ: Դրանք անհամեմատելի են: Կպարզվի, որ Բուրգունդիայի կամ Տոսկանայի դուքսերն ավելի զորեղ են եղել՝ չլինելով թագավորներ: Այնպես որ, թագավորի կարգավիճակը նկատի ունենալով՝ հնարավոր չէ հստակորեն տալ պետականության սահմանումը:

Հետազոտությունները բերում են այն համոզման, որ համաշխարհային պատմության հետ հայոց պատմությունը ոչ միայն շատ ընդհանուր աղերսներ ունի, այլև բազմաթիվ հարցերում ուղենիշ է դառնում նրա համար: Համաշխարհային պատմության պարբերացման հարցում գիտնականների մեծագույն մասը համերաշխվում է գոնե մեկ հարցում, այն է՝ կա հնադար՝ հին դարեր, միջնադար, նոր շրջան և նորագույն: Գուցե նորագույնի հետ խնդիրներ կան, երբ եվրոպական պատմագիտության մեջ նրանք նորն ու նորագույնը տեսնում են մեկ ընդհանուր շղթայում, դրանք չեն բաժանում միմյանցից: Բայց միաժամանակ նորագույն պատմություն, որպես այդպիսին, արևմտյան պատմագրության մեջ ևս օգտագործվում է:

Պարբերացման խնդրին հայ հեղինակներից անդրադարձել են Ղուկաս Ինճիճյանը, Ղևոնդ Ալիշանը, Անտոն Գարագաշյանը, Ստեփան Պալասանյանը և ուրիշներ: Նրանց կարծիքով՝ դասական բաժանումը հետևյալն է. հին Հայաստան, միջնադար և նոր շրջան: Նորագույնի գաղափարը խորհրդային ժամանակներում հասկանալի է, որ կապվեց Ռուսաստանում 1917 թ. հեղափոխության, մեզանում՝ 1920 թ. նոյեմբերի 29-ից Հայաստանի խորհրդայնացման գործընթացի հետ: Խորհրդային ժամանակաշրջանում հին պատմությունը հասցվում էր մինչև V դարի սկիզբը: V դարից սկսվում էր միջնադարը, որը տևում էր մինչև XVIII դարի վերջը, ավելի ստույգ՝ 1801 թվականը: Ինչպես հայտնի է՝ 1801 թ. Հյուսիսային Հայաստանի մի քանի գավառներ

Լոռին, Շամշադինը, Ղազախը, Փամբակը, անցան ռուսական տիրապետության տակ. կործանվեց վրացական՝ Քարթլի-Կախեթի թագավորությունը: Ստացվում էր, որ մեր հարևան ժողովրդի ողբերգությունը դարձել էր մեր պատմության նոր ժամանակաշրջանի սկիզբը:

Նոր պարբերացումն արմատապես տարբերվում է խորհրդային ժամանակներում առաջարկվողից: Մինչ պետականության ժամանակահատվածը, բնականաբար, նախնադարն է: Ք. ա. III հազարամյակից սկսվում է պետական կազմավորումների դարաշրջանը: Շատ ուրախալի է, որ պատմաբանների, հնագետների, լեզվաբանների մոտեցումներն այդ հարցում միմյանցից էականորեն չեն տարբերվում: Ընդունված է, որ այդ կազմավորումները համադաշնությունների ձևով էին հանդես գալիս արդեն Ք. ա. III-II հազարամյակներում, ինչպես Արատտան, Էթիունին, Դիաուխին, Նաիրին, Հայասա-Ազգին, Արմե-Շուբրիան և այլն: Հայկական լեռնաշխարհում Ք. ա. IX դարում ասպարեզ իջած Արարատյան թագավորությունը (Ուրարտու, Վանի թագավորություն, Բիայնիլի) դառնում է առաջին միասնական պետությունը:

Միասնական պետականությունների պատմությունը հարատևում է մինչև 387 թ. Հայաստանի բաժանումը կամ 428 թ. Արշակունյաց արքայատոհմի անկումը: Բայց պետականությունը չի վերանում, մասնավորապես վաղ միջնադարում: Հայտնի է, որ համաշխարհային պատմության մեջ հին շրջանն ավարտվում է 476 թվականով՝ Հռոմեական կայսրության անկումով, և ապա սկսվում է միջնադարը: Մեզանում միջնադարն ավելի վաղ է սկսվում՝ քրիստոնեության ընդունումով: Գաղափարական նոր դաշտ է ի հայտ գալիս, և ամենակարևորը՝ սոցիալ-տնտեսական առումով փոփոխություն է տեղի ունենում. կա արդեն ավատատիրությունը, որն ուսումնասիրել և փառահեղ ձևով ներկայացրել է Նիկողայոս Ադոնցը: Այստեղ խնդիր չկա, որ միջնադարը մեզանում սկսում է IV դարում:

Վաղ միջնադարում պետականությունը 428 թ. հետո չի վերանում: Այն թագավորից անցնում է նախարարներին, ինչպես վկայում է Եղիշեն, այնուհետև գոյատևում VI-VII դարերում՝ մինչարաբական ժամանակահատվածում, և ինչու չէ՝ նաև արաբական շրջանում՝ հատկապես 652 թվականից հետո: Ինքնավար Հայաստանը պահպանում է իր գոյությունը Արմինիա-Էրմենիստան վարչական միավորի տեսքով: Այդ պարագայում պետականության շատ ու շատ հատկանիշներ պահպանվում են, և դրանք չեն վերանում ընդհուպ IX դարի կեսերը, այսինքն՝ լիարժեք պետականության թագավորության տեսքով նրա վերականգնումը:

X-XIV դարերը զարգացած միջնադարի ժամանակաշրջանն են: XIV դարի վերջին Կիլիկիայի հայկական թագավորության կործանումով ավարտվում է հայոց պետականության և միջնադարի զարգացած ժամանակահատվածը: Ուշ միջնադարը՝ XVI դարից մինչև XVII դարի կեսերն ընկած օտար տիրապետությունների ժամանակահատվածը, իսկական մղձավանջի շրջափուլ է: Դրանով ավարտվում է միջնադարը:

Գիտենք, որ համաշխարհային պատմության նոր շրջանի սկիզբը կապում են կա՛մ XVI դարի երկրորդ կեսի նիդեռլանդական, կա՛մ XVII դարի 40-60-ական թվականների անգլիական հեղափոխությունների հետ: Մեզանում երկար քննարկումներից հետո ընդունվեց այն տեսակետը, որի համաձայն՝ ինչպես համաշխարհային, այնպես էլ հայոց պատմության ընդգրկած ժամանակահատվածի կապակցությամբ մոտեցումները համընկնում են. միջնադարի և նոր շրջանի սահմանագիծը XVII դարի կեսն է: Մեր պարագայում՝ ավարտվում են թուրք-պարսակական արյունալի ու երկարատև պատերազմները, որոնցից հետո ծավալվում են հայ ազգային-ազատագրական շարժումները, որոնք հատկապես նոր թափ են ստանում 1677 թ.՝ Հակոբ Զուղայեցի կաթողիկոսի Էջմիածնում հրավիրած գաղտնի ժողովից հետո:

Հատկանշական է, որ նոր ժամանակներում, մասնավորապես XVII-XVIII դարերում հայոց պետականությունը մեղիքությունների տեսքով ունենում է իր նոր, բայց շատ հստակ դրսևորումները: 1724 թ. Սյունիքի Դավիթ Բեկի իշխանությունը ճանաչվում է պարսից շահ Թահմազ Երկրորդի կողմից: 1736-1747 թթ. Նադիր շահը Արցախի հինգ մեղիքությունները միավորում է մեկ՝ Խամսայի մեղիքության մեջ: XVIII դարի երկրորդ կեսին հայ ազգային-ազատագրական շարժման գաղափարախոսությունը հասնում է այնպիսի մակարդակի, երբ ժամանակի նշանավոր գործիչները (Մովսես Սարաֆյան, Հովսեփ Արղության, Հովհաննես Լազարև, Հովսեփ Էմին, Շահամիր Շահամիրյան, Մովսես Բաղրամյան) առաջ են քաշում հայկական պետականության վերականգնման վերաբերյալ նախագծեր: Ընդ որում, հայ ազատագրական միտքն առաջադրում է նաև աշխարհում այդ ժամանակ եզակի՝ կառավարման հանրապետական համակարգ ստեղծելու գաղափարներ:

Նոր դարաշրջանի փուլերից է XIX դարի երկրորդ կեսը, երբ Արևելյան Հայաստանում պետականությունների շառավիղներն իսպառ վերանում են: Ռուսական տիրապետության ժամանակ հայկական ինքնավարության վերջին նշույլներն ու շառավիղները վերանում են 1840 թ. Հայկական մարզի վերացումով, որը, այնուամենայնիվ, որոշ ինքնավարության տարրեր պարունակող միավոր էր. ուներ դրոշ, զինանշան, հայկական անուն և այլն: 1849 թ. Երևանի նահանգի ստեղծումով Արևելյան Հայաստանում վերջնականապես արմատախիլ են արվում պետականության բոլոր, անգամ նվազագույն դրսևորումները: Բայց որքան անհավատալի է, Արևմտյան Հայաստանում՝ Մոկսում, Շատախում, Սասունում, ինչպես նաև Կիլիկիայում, հատկապես Զեյթունում, դրանք ինքնավարությունների ձևով դեռևս պահպանվում են:

Ե՛րբ է ավարտվում պատմության նոր դարաշրջանը. եթե համաշխարհային պատմության մեջ այն 1918 թ. նոյեմբերի 11-ին կնքված Կոմպիենյան հաշտությամբ Առաջին աշխարհամարտի ավարտն է, ապա հայոց նոր պատմության պարագայում տրամաբանական է այդ ժամանակը համարել 1918 թ. մայիսի երկրորդ կեսը՝ Սարդարապատի, Բաշ-Ապարանի ու Ղարաքիլիսայի հերոսամարտերը: Հենց այդ հերոսական կռիվների բոցերում մայի-

սի 28-30-ին Հայաստանի Հանրապետության ծնունդը պետք է դիտել իբրև նորագույն պատմության սկզբնավորում:

Վերջապես, 1918 թ. մայիսի 18-ից սկսված նորագույն ժամանակաշրջանը կարելի է տրոհել երեք փուլի՝ Առաջին հանրապետության շրջանի (1918-1920), որն անկախ պետականության փուլն է: Երկրորդը՝ անկախ, սոցիալիստական հանրապետության շրջանն է (1920 թ. դեկտեմբերի 2-1922 թ. մարտի 12), երբ սոցիալիստական խորհրդային Հայաստանը հարաբերականորեն անկախ պետություն էր, ուներ անգամ արտաքին քաղաքականություն վարելու որոշ հնարավորություններ: Բայց այդ հարաբերական ինքնությունությունը վերացվեց 1922 թ. մարտի 12-ին Անդրդաշնության, ապա վերջինիս կազմում՝ նույն տարվա վերջին ԽՍՀՄ-ում Հայաստանի ընդգրկմամբ:

Պայմանականորեն Խորհրդային Հայաստանի պատմության հաջորդ շրջափուլը կարելի է համարել 1936-1991 թթ., երբ այն ձեռք բերեց միութենական հանրապետության կարգավիճակ և որոշ չափով ապահովեց ներքին ինքնուրույնությունը:

Հայոց նորագույն պատմության արդի փուլի սկիզբը նշանավորվեց 1990 թ. օգոստոսի 23-ին Գերագույն խորհրդի կողմից անկախության հռչակագրի ընդունումով, որի տրամաբանական զարգացումը հանգեցրեց 1991 թ. սեպտեմբերի 21-ի անկախության հանրաքվեին ու սեպտեմբերի 23-ին անկախության հռչակմանը: Հայոց նորագույն պատմության արդի փուլը կարևորվեց նաև 1991 թ. սեպտեմբերի 2-ին Լեոնային Ղարաբաղի Հանրապետության հռչակումով:

Երվանդ Մարգարյան

պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքները նոր էջ բացեցին համաշխարհային պատմության մեջ: Հսկայական քաղաքակրթական շերտեր տեղաշարժ եղան, կատարվեց այն, ինչ, ըստ Արիստոտելի, երբեք չէր կարող լինել. Արևմուտքն ու Արևելքը միաձուլվեցին: Աշխարհը հայտնվեց արմատական փոփոխությունների շեմին, որոնց, ինչպես ցույց տվեց ժամանակը, Արևելքն ավելի պատրաստ էր, քան Արևմուտքը: Այդ փոփոխությունների արդյունքում Արևելքում անշեղորեն սկսեց ձևավորվել նոր՝ համադրական (իր առանձին դրսևորումներում՝ էկլեկտիկ) քաղաքակրթություն, որը պատմագիտության մեջ հայտնի է «հելլենիստական» անվամբ: Դրան հակառակ Հելլադան, իր մեջ արմատական վերափոխման և ինքնարարման ուժ չգտնելով, անընդունակ գտնվեց դիմակայելու նոր դարաշրջանի մարտահրավերներին: Պոլիսային արժեքների վրա խարսխված Pax Hellenica-ն սկսեց դանդաղ ընթանալ դեպի

մայրամուտ, մի բան, որ օրինաչափ էր և անխուսափելի: Հունական քաղաք-պետությունների բնակչության ստեղծագործ հատվածը սկսեց լքել հայրենիքը և տեղափոխվել Արևելք, որտեղ կերտվում էր նոր աշխարհը: Հունական մտա-հոգևոր աշխարհն իր հետագա գոյննթացը շարունակեց գլխավորապես Արևելքում: Ալեքսանդրիան, Անտիոքը, Պերգամոնը, Դուռա-Եվրոպոսը, Տիգրիսի Սելևկիան, Պալմիրան, Սամոսատը, Մաժակը, Արտաշատն ու Տիգրա-նակերտը դարձան «հոգևոր Աթենքի» արժանի ժառանգորդները:

Ու թեև Հելլադայի թոշնումից հետո Արևմուտքում գոյացած քաղաքակրթական բացը մասամբ լրացրեց աշխարհակալ Հռոմը, որն իրեն հռչակել էր հելլենական մշակութային ավանդույթների իրավահաջորդ, Արևելքը շարու-նակում էր թողարկել արժեքներ, որոնց ներագդեցությունը աշխարհի մտա-հոգևոր դաշտի վրա նույնքան մեծ էր, որքան Պլատոնի և Արիստոտելի, Սո-փոկլեսի և Եվրիպիդեսի, Ֆիդիասի և Պրաքսիտելի աղդեցությունը: Թեև Հռո-մեական կայսրության լայնարձակումը խիստ բացասական հետևանքներ ու-նեցավ Արևելքի տնտեսական և մշակութային կյանքի համար՝ ժամանակավո-րապես խաթարելով հելլենիստական քաղաքակրթության սահուն ընթացքը, այնուամենայնիվ արևելյան քաղաքակրթություններն ավելի կենսունակ գտնվեցին և հետագայում շարունակեցին իրենց բնականոն զարգացումը:

Արդեն Բ. ա. I դարում նվաճված հելլենիզմն ինքը սկսեց նվաճել նվաճող հռոմեացիներին մշակույթի և տնտեսական ավելի արդյունավետ համակար-գի շնորհիվ: Հռոմեական օպտիմատական գործիչներն անընդհատ տրտնջում էին, որ հունաարևելյան բարքերը քայքայիչ ազդեցություն են ունենում հռո-մեական ոգու և ավանդական արժեհամակարգի վրա: Սակայն Արևմուտքի աստիճանական յուրացումը հելլենիզմի կողմից կասեցվեց բարբարոս ցեղերի գավթողականության պատճառով: Նվաճելով Արևմտյան Հռոմեական կայս-րության գրեթե ամբողջ տարածքը՝ գերմանները մերժեցին հելլենիստական քաղաքակրթության համարյա բոլոր ձեռքբերումները (բացառությամբ քրիս-տոնեության)՝ պահպանելով, սակայն, ապագա Հռոմի ոգին սերունդների հա-մար: Դրանով Արևմուտքը վերջնականապես հակադրվեց Արևելքին: Ինչ վե-րաբերում է Արևելքին, ապա այստեղ «քաղաքակրթական ձեղքում» (split civilization) տեղի չունեցավ, և հելլենիզմը ոչ միայն պահպանեց իր երբեմնի դերակատարությունը, այլև շարունակեց Էվոլյուցիոն ընթացքը՝ ծնելով նոր քաղաքակրթական երևույթներ: Այսպես, հելլենիստական մայր քաղաքա-կրթության հիմքից անջատվեցին մի քանի դուստր քաղաքակրթություններ և ենթաքաղաքակրթություններ: Սրանց մեջ առանձնանում են այնպիսի քրիս-տոնեական քաղաքակրթություններ, ինչպիսիք են բյուզանդական, ասորա-կան, միջնադարյան հայկական, ռուսական և մի քանի այլ համադրական քա-ղաքակրթություններ: Սակայն պատմության որոշ տեսաբաններ հելլենիստա-կան մայր քաղաքակրթությունից արտադրյալ երևույթ են համարում նաև ա-րաբական իսլամական քաղաքակրթությունը:

Նախահելլինիզմ

Մեր կարծիքով հելլենիզմի պատմական հոլովույթը կարելի է բաժանել չորս փուլերի: Առաջին փուլը պայմանականորեն անվանեցինք **հունա-մակեդոնական** կամ **դասական հելլենիզմ**: Այն ընդգրկում է Ք. ա. IV-II դդ. (մոտավորապես՝ 333-189 թթ.): Դա հունա-մակեդոնական և արևելյան քաղաքակրթական ավանդույթների պարզ փոխազդեցության և փոխներթափանցման շրջան էր: Այդ ընթացքում ձևավորվեցին քաղաքակրթական նոր ձևեր, որոնք ապահովեցին սահուն անցում հաջորդ՝ երկրորդ փուլին: Այն ընդգրկում է Ք. ա. II-I դդ. (189-31 թթ.): Այս փուլը կարելի է բնորոշել որպես դասական հունա-մակեդոնական հելլենիզմի աստիճանական մարման դարաշրջան, որին գալու էր փոխարինելու հելլենիզմի մեկ այլ ձև, որը մենք պայմանականորեն անվանում ենք **արևելյան** կամ **տեղային**: Այդ դարաշրջանի բնորոշ դրսևորումներից է արևելյան և նախորդ շրջանում ձևավորված հելլենիստական քաղաքակրթական արժեքների համադրությունը: Դարաշրջանը համընկավ Առաջավոր Ասիայում հռոմեական էքսպանսիայի բարձրակետի և դասական Հռոմեական հանրապետությունը պրինցիպատի վերաճելու գործընթացի հետ: Այդ ժամանակ ավելի վառ, քան երբևիցե, դրսևորվեցին հելլենիզմի գլխավոր քաղաքակրթական առանձնահատկությունները՝ համադրականության և այլացման ձգտումը: Վերջիններս արտահայտվեցին մարդկային գործունեության գրեթե բոլոր ոլորտներում՝ քաղաքական, իրավական, տնտեսական և հոգևոր: Հելլենիզմի այս փուլը մենք անվանել ենք **հռոմեա-հելլենիստական** (Ք. ա. 31-Ք. հ. 313 թթ.):

Հոգևոր համադրականության և այլացման բնորոշ օրինակներից էր միհրականությունը՝ ժամանակի թերևս ամենահզոր կրոնափմաստասիրական շարժումներից մեկը: Միհրականությունը ձևավորվել և շատ թե քիչ ավարտուն ձև է ստացել Հռոմեական աշխարհի սահմանային գոտում և սահմանային դարաշրջանում՝ Ք. ա. I-Ք. հ. I դդ.: Ընդհուպ IV դարի երկրորդ կեսը այդ կրոնաբարոյախոսական համակարգը իր հավասարը չի ունեցել ամբողջ Հռոմեական աշխարհում: Լինելով հելլենիստական դարաշրջանի ծնունդ՝ տվյալ հոգևոր շարժումը ներառել է արևելյան շատ պաշտամունքների ավանդույթները և հունական գնոստիցիզմի որոշ տարրեր: Միհրականության գերիշխումը համընկավ հելլենիստական դարաշրջանի երրորդ փուլի հետ, որն անվանել ենք հռոմեական հելլենիզմ, այսինքն՝ հելլենիզմ ներքաշված Pax Romana-ի շրջանակների մեջ: Այն ավարտվում է վերջին միհրական կայսր Հուլիանոս Ուրացողի մահվամբ: Հունական դրամայի հերոսի նման նա ի սկզբանե գիտակցում էր իր աստվածամարտության ունայնությունն ու դատապարտվածությունը: Նրա մահը ամբողջ աշխարհում ընկալվեց որպես միհրական հերոսական «կոդա» և անտիկ հելլենիզմի մայրամուտ: Դրանից հետո այլևս ոչ ոք ոչինչ չէր կարող կասեցնել մեկ այլ՝ ծագմամբ նույնպես հելլենիստական կրոնաբարոյախոսական համակարգի՝ քրիստոնեության հաղթական երթը, որով սկսվում է հելլենիզմի չորրորդ՝ **վաղ քրիստոնեական փուլը** (313-451 թթ.): Սա-

կայն միհրականության երկար և բարդ ուղին նշանակալի հետք թողեց պատմության մեջ և դարձավ ժամանակակից շատ կրոնական համակարգերի կարևոր բաղադրամասը:

Արտաշես Շահնազարյան *պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ*

Հայոց պատմությունը համաշխարհային պատմության բաղկացուցիչ մասն է և աշխարհի քաղաքակիրթ ժողովուրդների անցած պատմական ուղու հետ բազմաթիվ աղերսներ ու ընդհանրություններ ունի: Մակայն, մեր ժողովուրդը, արտաքին գործոններով պայմանավորված, իբրև էթնիկ հանրություն ձևավորվելուց ի վեր, հաճախ զուրկ է եղել իր պատմությունն ինքնուրույն և բնականոն հունով կերտելու հնարավորությունից: Դա ոչ միայն խոչընդոտել է նրա պատմական տրամաբանական զարգացումը, այլև հաճախ այն հետ նետել: Այս իրողությունը, ի թիվս այլ գործոնների, մեծապես դժվարացնում է Հայոց պատմության գիտական պարբերացումը, ինչի վկայությունն են դրա շուրջ մինչ այժմ (1925, 1947, 1951, 1992 թթ.) տեղի ունեցած բանավեճերն ու այսօրվա գիտաժողովը:

Չնայած իմ բուն ասելիքը Հայոց միջնադարյան պատմության ժամանակագրական սահմաններին ու պարբերացմանն է նվիրված, հիմնահարցի համապարփակ քննության շահերից ելնելով, ինձ թույլ եմ տալիս հպանցիկ անդրադառնալ դրան նախորդող հին ժամանակաշրջանին սերտորեն աղերսվող այնպիսի կարևորագույն խնդրի, ինչպիսին Հայաստանում ստրկատիրական հասարակարգի գոյությունն է: Եթե Ն. Ադոնցը, Խ. Սամվելյանը և ուրիշներ ժխտում էին հին Հայաստանի ստրկատիրական երկիր լինելը, ապա Ս. Երեմյանը գտնում էր, որ այդ ժամանակ Հայաստանն իր տնտեսական և սոցիալական բնույթով առաջավորասիական ստրկատիրական հասարակության մասն էր, որի բնորոշ կողմն էր արևելյան համայնքը:

Վերջին հանգամանքը վկայում է, որ այդ ժամանակ Հայաստանում գոյության ունեին ստրկատիրական հարաբերություններ, որոնք հեռու էին դասական համարվելուց: Մինչև IV դարի սկզբները Մեծ Հայքի՝ ըստ աշխարհների վարչական բաժանումը ևս, ինչպես ճիշտ նկատել է Բ. Հարությունյանը, հիմք է տալիս պնդելու, որ այդ ժամանակ հասարակության բնույթն ընդհանուր առմամբ ստրկատիրական էր: Այդ վարչական բաժանումը ճեղքեր տվեց IV դարի սկզբներին՝ քրիստոնեությունը պետական կրոն հռչակվելուց շատ չանցած, և Խոսրով II Կոտակի (330-338) օրոք ավատատիրական հասարակությանը հատուկ վարչական բաժանման համակարգը, որի հիմքում ընկած էր նախարարական տիրույթը, տիրապետող էր դարձել:

Անշուշտ, այդ իրողությունը բնավ չի նշանակում, թե մինչև IV դարը Հայաստանում ավատատիրական հարաբերությունները նախորդ հասարակության ընդերքում չէին զարգանում: Դրանք ոչ միայն զարգանում էին, այլև հատկապես արագացան Արշակունիների, իսկ III դարի երկրորդ կեսին՝ Հայաստանում իշխած Սասանյան արքայատոհմի ներկայացուցիչների ոչ ժառանգական գահակալման ժամանակ ու հետևանքով: Հայաստանում իրենց դիրքերն ամրապնդելու նպատակով նրանք ստիպված էին լինում Հայոց ավագանուն առանձնաշնորհումներ տալ: Այդ պատճառով աստիճանաբար ժառանգական էին դառնում ոչ միայն արքունի պաշտոնները, այլև ավագանուն որպես ավատ տրված երկրամասերն ու ի կառավարումն հանձնված գավառները, որոնք վերածվում էին տոհմական տիրույթների: Դրանց բնակիչները, հողին ամրացվելով, իրենց հերթին հայտնվում էին կախյալ իրավիճակում: Այսպիսով, ավատատիրական հարաբերությունները Հայաստանում քայլ առ քայլ խորանում էին և հաղթանակեցին III-IV դարերի սահմանագծին: Այդ իրողության փաստումն էր IV դարի սկզբին քրիստոնեության պետականորեն ընդունումը, ինչը, ի թիվս այլ խնդիրների, նպատակ ուներ գաղափարապես հիմնավորելու երկրում ավատատիրական հարաբերությունների հաստատումը և դրանով իսկ փաստելու Հայոց պատմության թևակոխումը միջնադարի ժամանակաշրջան: Մծբինի 298 թ. 40-ամյա պայմանագրով երկրում հաստատված խաղաղությունն իր հերթին նպաստեց ավատատիրության հետագա զարգացմանը:

Հարկ է նաև նկատել, որ ավատատիրական հարաբերությունները Հայաստանում ավելի արագ զարգացան, քան հարևան երկրներում, ինչն ավատատիրական անջատողականությամբ պայմանավորված, ի թիվս այլ գործոնների, խիստ բացասաբար ազդեց Հայոց պետականության ապագայի վրա:

Իմ կարծիքով՝ Հայոց պատմության միջնադարի ժամանակաշրջանը բաժանվում է երեք շրջափուլի՝ 1. վաղ միջնադար (III-IV դարերի սահմանագիծ-IX դարի կեսեր), 2. զարգացած միջնադար (IX դարի կեսեր-XIV դարի կեսեր), 3. ուշ միջնադար (XIV դարի կեսեր-XVIII դարի կեսեր): Այդ շրջափուլերն իրենց հերթին բաժանվում են երեքական ենթափուլերի: Վաղ միջնադար՝ ա) III-IV դդ. սահմանագիծ-428 թ. (քրիստոնեության ընդունում, գրերի ստեղծում, հայ մշակույթի աստիճանական ազգայնացում ու ինքնուրույնացում, բնատնտեսության հաստատում, քաղաքային կյանքի անկում, նախարարական համակարգի կազմավորում ու զարգացում, Հռոմի ու Պարսկաստանի միջև Հայաստանի բաժանում, պետականության անկում), բ) 428-700 թթ. (հայ մշակույթի ոսկեդար, նախարարական համակարգի ամրապնդում, ազատագրական պայքարի ծավալում, Բյուզանդիայի ու Պարսկաստանի միջև Հայաստանի բաժանում, երկրի ներքին ինքնուրույնության վերականգնում), գ) 700 թ.-IX դարի կեսեր (արաբական տիրապետություն, ազատագրական պայքար, նախարարական համակարգի աստիճանական

քայքայում, ինչը նկատելի է անգամ ժամանակի պատմիչների երկերում «նախարար» եզրույթն աստիճանաբար «իշխան»-ով փոխարինվելով):

2. Զարգացած միջնադար՝ ա) IX դարի կեսեր-XI դարի կեսեր (պետականության վերականգնում, ավատատիրական հարաբերությունների բնականոն զարգացում ու խորացում, ավատատիրական մասնատվածություն, տնտեսական վերելք, քաղաքային կյանքի զարգացում, աշխատանքի հասարակական բաժանում), բ) XI դարի կեսեր-XII դարի վերջ (սելջուկյան տիրապետության հաստատում, երկրի բնականոն զարգացման խաթարում, ավատատիրական հարաբերությունների հետընթաց, իշխանական տների քայքայում, Ռուբինյանների իշխանության առաջացում, թագավորության հռչակում, Կիլիկիայում ավատատիրական հարաբերությունների զարգացում), գ) XII դարի վերջ-XIV դարի կեսեր (նոր իշխանական տների առաջացում ու վերելք և Զաքարյանների իշխանության ստեղծում, առևտրավաշխառուական կապիտալի առաջացում, Կիլիկիայում և Հայաստանում ավատատիրական հարաբերությունների հետագա խորացում, մոնղոլական տիրապետության հաստատում, հայ իշխանական տների աստիճանական քայքայում ու պարոնտիրության ինստիտուտի առաջացում, Կիլիկիայի հայկական թագավորության և Իլխանության անկում):

3. Ուշ միջնադար՝ ա) XIV դարի կեսեր-XVI դարի կեսեր (եկվոր քոչվորական ցեղերի տիրապետություն և նրանց խորթ ու հետամնաց ռազմավատատիրական կացութաձևի պարտադրում, տնտեսական խոր անկում, 1441 թ. կաթողիկոսական աթոռի՝ Էջմիածնում վերահաստատում, 1460-ական թթ. հայոց պետականության վերականգնման փորձեր, գրատպության սկիզբ, Էջմիածնի 1547 թ. ժողով, հայ պետականության մնացուկների առկայություն, թուրք-պարսկական պատերազմների առաջին փուլ Օսմանյան Թուրքիայի և Սեֆյան Պարսկաստանի միջև, Հայաստանի առաջին բաժանում), բ) XVI դարի կեսեր-XVII դարի կեսեր (Սեֆաստիայի 1562 թ. ժողով, թուրք-պարսկական պատերազմների երկրորդ փուլ, բռնագաղթ, երկրի տնտեսական հետագա անկում, Օսմանյան Թուրքիայի և Սեֆյան Պարսկաստանի միջև Հայաստանի երկրորդ բաժանում), գ) XVII դարի կեսեր-XVIII դարի կեսեր (համեմատաբար խաղաղ պայմաններ, տնտեսական ու մշակութային կյանքի աշխուժացում, առևտրական կապիտալի առաջացում ու զարգացում, Կանդիայի պատերազմ, Էջմիածնի 1677 թ. ժողով, Իսրայել Օրի, հայ ազատագրական շարժման աշխուժացում և դրա՝ արևմտյան կողմնորոշումից ռուսականին անցնելու առաջին քայլեր, 1720-1730-ական թթ. սկզբներին ազատագրական պայքար, ինքնավար հայկական մելիքությունների ու իշխանությունների առկայություն):

Մրանով հայոց պատմության միջնադարի ժամանակաշրջանն ավարտվում է, որին հաջորդում է նոր պատմության փուլը: Դրա հայտանիշներն են XVIII դարի երկրորդ կեսին (ավելի ստույգ՝ 1770-1780-ական թթ.) հայոց սոցիալ-տնտեսական, քաղաքական ու հոգևոր-մշակութային կյանքն արտա-

ցոլող պատմագրության՝ միջնադարից նոր շրջան անցնելը, երբ հայ պատմագրության մեջ աստիճանաբար արմատավորվում են պատմության շարադրման միջնադարյան ժամանակաշրջանից էապես տարբերվող սկզբունքներ: Դրա վառ վկայությունն են Մովսես Բաղրամյանի «Նոր տետրակ, որ կոչի յորդորակը» և Միքայել Զամչյանի «Հայոց պատմությունը», որոնք զգալիորեն հեռու են միջնադարյան աշխարհընկալումից և կրում են ժամանակի արևմտաեվրոպական հասարակական-քաղաքական ու գիտական մտքի ակնհայտ ազդեցությունը: Եթե բուն երկրում ազատագրական շարժումը, մի շարք գործոններով պայմանավորված, 1730-ական թվականներից հետո վայրէջք ապրեց, ապա Հնդկաստանի և Ռուսաստանի հայկական գաղթօջախներում, որտեղ կենտրոնացած էին հայության գործարար և առաջադեմ շերտերը, այն, 1760-ական թվականներից բուռն վերելք ապրելով, որակական նոր փուլ թևակոխեց:

Հովսեփ Էմինի, Հովնան Եպիսկոպոսի, Մովսես Սարաֆյանի, Մադրասի խմբակի անդամների, Հովհաննես Լազարյանի, Հովսեփ Արղությանի և այլոց ջանքերով հայ ազատագրական շարժումը, ի տարբերություն միջնադարյան ժամանակաշրջանի, վերջնականապես կողմնորոշվեց դեպի Ռուսաստան, ինչն ավելի իրատեսական էր: Գաղթաշխարհի հայ առևտրական կապիտալն առաջին քայլերը կատարեց արդյունաբերականի վերածվելու գործում: Ինչպես ճիշտ նկատել է Վ. Դիլոյանը, գաղութահայ բուրժուազիան գրատպության գործն իր ձեռքը վերցրեց և հրատարակությունների միջոցով սկսեց մշակել ու տարածել սեփական շահերից բխող գաղափարներ, որոնք տվյալ ժամանակահատվածի համար առաջադիմական ու բնութագրական էին: Դրա շնորհիվ հատկապես հնդկահայ գաղթաշխարհում արմատավորվեցին եվրոպական լուսավորական գաղափարները՝ ի դեմս «Նոր տետրակ, որ կոչի յորդորակի», «Որոգայթ փառացի» ու «Նշավակի»: Դրանց և հատկապես «Որոգայթ փառացի» արձարժած դրույթների հիման վրա Շահամիր Շահամիրյանը մշակեց հայ-ռուսական դաշնագրի իր նախագիծը, որը նախատեսում էր Ռուսաստանի օգնությամբ հանրապետական կարգերով հայկական բուրժուական պետության ստեղծում, ինչը բնորոշ է նոր ժամանակաշրջանին: Ուշագրավ է, որ «Նշավակը», հայապահպանության նպատակներ հետապնդելուց զատ, ազգությունը դիտարկում է այդ հասկացության ոչ թե միջնադարյան, այլ նոր ժամանակների ընկալմամբ՝ դավանանքից բացի հաշվի առնելով ազգային ինքնության մյուս բաղադրամասերը: Բնութագրական է, որ Հովհաննես Լազարյանի մասնակցությամբ կամ առնվազն գիտությամբ, ըստ Հովսեփ Արղությանի կազմած նախագծի, Ռուսաստանի հովանու ներքո ստեղծված հայկական պետությունը չնայած թագավորություն էր լինելու, սակայն այնտեղ ճորտատիրական հարաբերությունները բացառվելու էին: Ասվածը հիմք է տալիս պնդելու, որ հայոց պատմությունն իր զարգացման նոր ժամանակաշրջան է թևակոխել XVIII դարի կեսերին:

Միջնադարում համաշխարհային պատմության ամբողջ ընթացքը դիտարկվում էր չորս միապետությունների տեսքով՝ ասորա-բաբելական, միդա-պարսկական, հունա-մակեդոնական և հռոմեական: XV-XVI դարերում իտալական հումանիստներն առաջին անգամ ձևակերպեցին միջնադար (medium oevum) հասկացությունը՝ ի հակադրություն անտիկ (antiquitas) դարաշրջանի, և առաջ քաշեցին նոր ժամանակի սկզբնավորման մասին գաղափարը: XVII դարի երկրորդ կեսում արևմտաեվրոպական համալսարաններում համաշխարհային պատմության բաժանումը անտիկ, միջնադար և նոր ժամանակների դարձավ ավանդական, թեպետ վերջինիս սկիզբը պատմագիտական քառուղիներում ընկալվում էր տարբեր կերպ: Մասնավորապես, եկեղեցական և պահպանողական ազնվականական գրականությունում, շնորհիվ գերմանացի պատմաբան Քրիստոֆ Բելլերի աշխատությունների, երկար ժամանակ գերիշխող էր այն կարծիքը, որ նոր ժամանակը սկսվում է 1453 թ.՝ Կոստանդնուպոլսի գրավմամբ և Բյուզանդիայի անկմամբ:

XIX դարի սկզբում գերմանացի ականավոր փիլիսոփա Գ. Հեգելը նոր ժամանակի (Die neue Zeit) սկիզբը համարում էր Ռեֆորմացիան¹: Նախահեղափոխական ռուսական լիբերալ պատմագրությունը, ի դեմս Ն. Ի. Կարենի, նոր ժամանակի սկիզբը նույնպես համարում էր Հումանիզմն ու Ռեֆորմացիան: XIX դարում, հատկապես ամերիկյան պատմագրությունում համաշխարհային պատմության պարբերացման ձևավորված մոտեցումներից մեկը նոր ժամանակի սկիզբը համարում էր աշխարհագրական մեծ հայտնագործությունները: Նման ձևով էր սույն հարցը դիտարկվում նաև ռուս աշխարհագետ, պատմաբան և սոցիոլոգ Լ. Ի. Մեչնիկովը:

Ֆրանսիական պատմագիտությունում ամրագրված է այն կարծիքը, որ XVIII դարի ֆրանսիական հեղափոխությանը հաջորդած ժամանակաշրջանը հարկ է համարել ժամանակակից պատմություն:

Անգլիական պատմական գիտությունում մեր օրերում նոր ժամանակների պատմության վերաբերյալ գործածվում են հետևյալ եզրույթները՝ «Modern history» (նոր պատմություն), «Contemporary history» (ժամանակակից պատմություն) և «Recent history» (օրերս տեղի ունեցած պատմություն, վերջերս կատարված պատմություն):

Ժամանակակից պատմական գիտությունում նոր և նորագույն պատմության պարբերացման վերաբերյալ շրջանառվում են չորս հիմնական տեսություններ՝ մարքսիստական, քաղաքակրթությունների, տեխնոգեն քաղաքակրթությունների և աշխարհաքաղաքական:

¹ См. у Гегель, Сочинения, М.-Л., 1955, т. VIII:

Մարքսիստական պատմագրությունը նոր պատմությունը բաժանում է երկու փուլի. 1640-1871 թթ.՝ անգլիական հեղափոխությունից մինչև Փարիզի կոմունա, և 1871-1917 թթ.՝ Փարիզի կոմունայից մինչև հոկտեմբերյան հեղափոխություն:

Քաղաքակրթությունների կամ կենսական փուլերի տեսությունը համաշխարհային պատմության պարբերացումը ներկայացնում է միմյանց հաջորդող հետևյալ փուլերով՝ ծագում, զարգացում, ծաղկում և անկում: Այս տեսությունը նոր պատմության սկիզբը համարում է XV-XVI դարերը, երբ տեղի է ունենում ինդուստրիալ քաղաքակրթության տարրերի սաղմնավորում միջնադարյան ավանդական քաղաքակրթության համակարգի ծաղկման և դրան հաջորդող ճգնաժամի փուլում:

Տեխնոգենային քաղաքակրթության տեսությունը ևս համաշխարհային պատմության նոր ժամանակի սկիզբը համարում է XV-XVI դարերը, որոնք դիտարկում են որպես տնտեսական կացութաձևի և սեփականության ձևի ավանդական հավասարակշռության ձևափոխման, նոր տնտեսության ի հայտ գալու, տնտեսական նոր հոգեբանության, կուտակման և շահույթի ոգու ժամանակաշրջան:

Աշխարհաքաղաքական տեսությունը համաշխարհային պատմությունը պարբերացնում է գիտական շրջանառության մեջ դնելով ավանդական աշխարհաքաղաքականություն, նոր աշխարհաքաղաքականություն (աշխարհատնտեսություն) և նորագույն աշխարհաքաղաքականություն (աշխարհափիլիսոփայություն) հասկացությունները¹:

Այս տեսությունը նույնպես համաշխարհային պատմության մեջ նոր ժամանակի սկիզբը համարում է XV դարի վերջ-XVI դարը, այն է՝ աշխարհագրական մեծ հայտնագործությունների և առաջին գաղութային տերությունների ժամանակաշրջանը:

Նոր պատմության սկզբնավորման վերաբերյալ վերը նշված չորս տեսությունների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ նրանցից միայն մարքսիստական կացութաձևային տեսությունն է նոր ժամանակի սկիզբը համարում XVII դարի անգլիական հեղափոխությունը: Մյուս երեքը միակարծիք են այն հարցում, որ միջնադարի, նոր և ժամանակակից պատմությունների ժամանակագրական սահմանները պայմանավորված չեն մեկ իրադարձությամբ: Այս տեսությունները սկզբունքային նշանակություն են տալիս բացառապես համաշխարհային պատմության այդ փուլերի իմաստային մեկնաբանությանը՝ նոր ժամանակի սկիզբը համարելով XV-XVI դարերը:

Համաշխարհային պատմության մեջ նոր ժամանակի սկզբնավորման հարցում գոյություն ունի որոշակի ընդհանրություն թե՛ Արևմուտքի և թե՛

¹ Տե՛ս Дергачев В. А., Геополитика, М., 2004:

Արևելքի երկրների համար: Ընդհանուր առմամբ դա գաղութային համակարգի ձևավորումն է, որի շրջանակներում Արևմուտքի մի խումբ երկրներ և Արևելքի կախյալ երկրների ճնշող մասը մարդկության պատմության մեջ առաջին անգամ կազմեցին միասնական համաշխարհային տնտեսություն՝ միասնական համաշխարհային տնտեսական ձևավորող շուկայի հենքի վրա:

Այս մոտեցումը բավականաչափ տարածված և ընդունված է արևմտյան պատմական գիտությունում: Այն նոր ժամանակի միասնական պատմական տարածության սկզբնավորումը համարում է աշխարհագրական մեծ հայտնագործությունների, կապիտալի նախնական կուտակման, Վերածննդի և Ռեֆորմացիայի ազդեցության տակ ավանդական սոցիոմշակութային միջավայրի կերպարանափոխության դարաշրջանը: Այս շրջանում աշխարհն էապես փոխվեց, տեղի ունեցան տնտեսական, քաղաքական, սոցիոմշակութային հսկայական առաջընթաց և նոր զարգացումներ: Նման տեսակետն ընդունելի է դարձել նաև ռուսական ժամանակակից պատմագիտությունում և տեղ գտել Եվրոպայի և Ամերիկայի երկրների նոր պատմությանը նվիրված բուհական դասագրքերում¹, որոնցում համաշխարհային պատմության նոր ժամանակը սկզբնավորվում է XV-XVI դարերով: Ինչ վերաբերում է նոր ժամանակի ավարտին, ապա արևմտյան պատմագիտությունը դա համարում է XIX-XX դարերի սահմանաբաժանը՝ մոնոպոլիստական կապիտալիզմի կամ իմպերիալիզմի դարաշրջանը:

Ժամանակակից եվրոպական, ռուսական և հայ պատմագետները հատկապես նոր և նորագույն պատմությունների սահմանաբաժան են համարում Առաջին աշխարհամարտի վերջը: Եթե այլոց համար դա 1918 թ. նոյեմբերն է, ապա հայ պատմագիտության համար՝ 1918 թ. մայիսը՝ Հայաստանի Հանրապետության հռչակումը: Անվիճելի է, որ հայոց պատմությունը համաշխարհային պատմության բաղկացուցիչ մասերից է: Հետևաբար, նրա պարբերացումը պետք է համահունչ լինի համաշխարհային պատմության այն պարբերացմանը, որն ընդունված է ժամանակակից արևմտյան պատմագիտությունում: Այս իմաստով հայոց պատմության նոր ժամանակի սկիզբը XV-XVI դարերով դիտարկելը միանգամայն տրամաբանական է, թեպետ աշխարհագրական հայտնագործությունները և Ռեֆորմացիան մեր պատմության հետ անմիջական առնչություններ չեն ունեցել: Դա պայմանավորված է նրանով, որ Հայաստանը ծովային երկիր չէ և աշխարհագրական հայտնագործությունների ոլորտում ընդգրկվել չէր կարող: Բացի այդ, Հայաստանն աշխարհի հնագույն քաղաքակրթություններից մեկն է, որտեղ կրոնական շար-

¹ Ст'я Пономарев М. В., Смирнов С. Ю., Новая и новейшая история стран Европы и Америки, ч. 1, М., 2000; Новая история стран Европы и Америки. XVI-XIX века, ч. 1, под ред. А. М. Родригеса, М. В. Пономарева, М., 2005; Новая история стран Европы и Америки, под ред. И. М. Кривогуза, М., 2005:

ժումներ (պավլիկյան, թոնդրակյան) տեղի են ունեցել ավելի վաղ, քան Ռեֆորմացիան Եվրոպայում: Չնայած դրան՝ հայոց պատմության նոր ժամանակի պարբերացումը համաշխարհային պատմության հետ միևնույն դարաշրջանում ներկայացնելն անհրաժեշտություն է: Այնպես որ հայոց նոր ժամանակի պատմության սկզբնավորման հարցն անհրաժեշտ է վերանայել: Մի բան, որը մեզանում, պայմանավորված պատմագիտական մտքի տվյալ ժամանակի մակարդակով և մոտեցումներով, քանիցս քննարկվել է, և կատարվել են դիրքորոշման փոփոխություններ:

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի «Հայոց պատմության» 2010 թ. հրատարակության երրորդ հատորում «Հայոց նոր պատմության ժամանակաշրջանի» սկիզբը համարվում է XVII դարի երկրորդ կեսի հայկական ազգային-ազատագրական շարժումը, որը, ըստ հեղինակների, սկզբնավորվել է 1677 թ. Էջմիածնի ժողովով¹:

Այս մոտեցման հետ համամիտ են 2012 թ. ԵՊՀ հրատարակած՝ «Հայոց պատմություն» բուհական դասագրքի հեղինակները: Նրանք նոր ժամանակն անվանում են նոր դարեր, որի սկզբնավորումը հայ ժողովրդի կյանքում նույնպես համարում են «Ս. Էջմիածնի 1677 թվականի գաղտնի խորհրդածրվը»²: Դասագրքի հեղինակների կողմից «նոր պատմության» փոխարեն «նոր դարեր» հասկացությունն օգտագործելը միանգամայն արդարացված է և նպատակահարմար: Այս իմաստով ժամանակն է պատմական գրականությունում, ինչպես նաև բուհական ու դպրոցական դասագրքերում գործածությունից հանել «նոր պատմություն» և «նորագույն պատմություն» հասկացությունները: Դրանք ավելի շատ խորհրդային պատմաբանների մտքի արգասիքն են, բայց սովորույթի ուժով շրջանառվում են ռուսական և հայկական ժամանակակից պատմագիտություններում: Կարծում ենք՝ ճիշտ կլինի արևմտյան պատմագրության օրինակով «նոր պատմության» փոխարեն օգտագործել «նոր ժամանակ», իսկ «նորագույն պատմության» փոխարեն՝ «ժամանակակից պատմություն» հասկացությունները:

Ինչ վերաբերում է հայոց պատմության նոր ժամանակին, ապա այս հարցում կարող ենք մեր պատմության XV-XVI դարերի առանցքային իրադարձությունները համապատասխանեցնել համաշխարհային պատմության տվյալ ժամանակաշրջանի՝ իրենց նշանակությամբ դարակազմիկ դեպքերին: Մասնավորապես, XV դարի հայոց պատմության նշանակալից անցքերից մեկը կարող ենք համարել հայոց թագավորության վերականգնման փորձը, որը կատարվեց 1465 թ. սկզբներին, երբ Աղթամարի Սուրբ Խաչ մայր եկեղեցում հայոց կաթողիկոս Ստեփանոս Դ. Տղան հայոց մեծամեծերի և բարձրաստիճան հոգևորականության ներկայությամբ Սմբատ Արծրունի-Սեֆե-

¹ Տե՛ս Հայոց պատմություն, հ. III, գիրք առաջին, Երևան, 2010, էջ 3:

² Տե՛ս Հայոց պատմություն, դասագիրք բուհերի համար, խմբագրությամբ պրոֆեսոր Հր. Ռ. Միմոնյանի, Երևան, 2012, էջ 195:

դինյանին հանդիսավորությամբ օծեց թագավոր: Ճիշտ է, նրա թագավորությունը կարճ տևեց և «ավելի շատ հոգեբանական ու ազգային ինքնագիտակցության արժեք ունեւ, քան պետական որևէ իմաստ»¹, այնուամենայնիվ մեզանում նոր ժամանակի ձևավորման, նոր մտածողության ու գործելակերպի սկիզբ էր:

XVI դարի սկզբի համար հայոց պատմության արժանահիշատակ ու մեծագույն կարևորություն ունեցող իրադարձություններից է հայկական տպագրության սկզբնավորումը 1512 թ., որը նոր հեռանկարներ բացեց հայ ժողովրդի գիտական, կրթական և մշակութային զարգացման ու հետագա առաջընթացի ապահովման համար:

Վերջերս, ըստ մեր պատմագիտությունում տեղ գտած մոտեցման, հայոց նոր պատմության սկիզբ են դիտարկվում XVII դարի հայկական ազգային-ազատագրական շարժումները: Միանգամայն համամիտ լինելով այս մոտեցման հետ՝ միաժամանակ գտնում ենք, որ հայոց նոր ժամանակի սկզբնավորման առաջնահերթ իրադարձությունը ոչ թե 1677 թ. Էջմիածնի գաղտնի խորհրդաժողովն էր, այլ 1547 թ. Էջմիածնի ժողովը: Պատմական իրողությունը այն է, որ հայ ժողովրդի ազատագրական գաղափարն առաջին անգամ քննարկվել է 1547 թ. Ամենայն հայոց կաթողիկոս Ստեփանոս Ե Սալմաստեցու նախաձեռնությամբ կայացած ժողովում:

Եվրոպական միապետերին հայոց կաթողիկոսների հղած հինգ «Աղերսագրերը» ու նրանց բանակցությունները Հայաստանի ազատագրման վերաբերյալ և այդ գործընթացի շուրջ 40 տարվա տևողությունը հիմք են տալիս պնդելու, որ գործ ունենք ձևավորված գաղափարի հետ: Այն 130 տարի անց կրկին փորձեց իրականացնել Իսրայել Օրին: Հետևաբար, եթե մեզ համար ընդունելի է հայոց պատմության նոր ժամանակի սկզբնավորումը համարել հայ ազատագրական պայքարի ձևավորումն ու այդ ուղղությամբ ձեռնարկված առաջին քայլերը, ապա պետք է իբրև այդպիսին դիտարկել XVI և ոչ թե XVII դարը: Այս մոտեցումը հնարավորություն կտա հայոց նոր ժամանակի պատմությունը հիմնովին համապատասխանեցնել համաշխարհային պատմության նույն ժամանակաշրջանի հետ:

¹ Նույն տեղում, էջ 139:

Իմ զեկուցման թեման նվիրված է նոր պատմության պարբերացման խնդրին Անդրկովկասում: Այստեղ արդեն ասվեց, որ նոր պատմություն կամ նոր ժամանակ հասկացությունը պայմանական է՝ առաջարկված XV դարում հումանիստների կողմից, որի նպատակն էր տարանջատել միջնադարն ու ընթացիկ ժամանակաշրջանը, վերականգնել անտիկ շրջանի հոգևոր արժեքները, և այդ առումով նոր ժամանակը համապատասխանում էր հոգևոր մշակույթի պահանջներին: Հասկացությունը նոր էր և ժամանակի համար ճիշտ ընտրված: Այդ ժամանակաշրջանից ի վեր՝ ձևավորվում է եվրոպակենտրոն հայեցակարգը, ստեղծվում են նոր հարաբերություններ, սկսվում է եվրոպական քաղաքակրթության տարածումը դեպի մյուս մայրցամաքներ¹:

Այս մոտեցումը յուրահատուկ մեկնաբանեց Մ. Ներսիսյանը: Նա փաստում է, որ XVIII դարի երկրորդ կեսին հայ ժողովրդի մեջ սկսվում են երկու նոր շարժումներ՝ լուսավորչական, որը խարսխվում էր հակաֆեոդալական բուրժուադեմոկրատական գաղափարախոսության հիման վրա, և ազգային-ազատագրական: Սրանք ունեին իրենց յուրահատկությունը, քանզի ի հայտ եկան ոչ թե բուն Հայաստանում, այլ Հնդկաստանի հայկական գաղութներում՝ Մադրասում և Կալկաթայում²:

Ինչ վերաբերում է պարբերացմանը, ապա չեմ ցանկանում կրկին խոսել 1453, 1517, 1640 թվականների մասին: Պարբերացումներ կան նաև Ռուսաստանի Դաշնությունում, որտեղ որպես մեկնարկ են ընդունում Միխայիլ Ռոմանովի գահակալությունը 1613 թ., Ուկրաինայի վերամիավորումը Ռուսաստանին 1654 թ., Պետրոս Ա-ի բարեփոխումները, և հասնում մինչև 1917 թ.: Այստեղ իբրև տարակարծությունների հիմք հանդես է գալիս հենց տեսության պատմությունը, քանզի այն պարունակում է զարգացման տարբեր պարադիգմներ՝ կրոնական տեսությունը, Մոնտեսպիոյի աշխարհագրական դետերմինիզմը, ֆորմացիոն տեսությունը և քաղաքակրթական տեսությունը, որոնք հիմնականում առաջացնում են տարակարծություններ: Ամենադժվարինն այստեղ ֆորմացիոն տեսությունն է, որը պարզ է, սակայն դժվարին, և առ այսօր մենք չենք կարող ասել, թե երբ է կապիտալիստական դարաշրջանը հաստատվել Ռուսաստանում, Հայաստանում կամ Անդրկովկասում: Նշվում է, որ ավատատիրությունը հաստատվել է XVIII դարում, կապիտալիզմն սկսվել է XIX դարում՝ անմիջապես Պավել Ա-ի սպանությունից հետո՝ 1801 թ.³:

¹ Ст'ю Гроссул В. Я., Периодизация Всемирной и Отечественной истории // «Российская история», 2007, № 3, с. 122, 123.

² Ст'ю Ներսիսյան Մ. Ֆ., Հայ ժողովրդի նոր պատմության էջերից, Երևան, 1982, էջ 11:

³ Ст'ю Орлов А. С., Георгиев Н. Г., Сивохина Т. А., История России, М., 2006, с. 268:

Հարց է ծագում, թե ինչպիսին էր իրավիճակը Հայաստանում և Անդրկովկասում, այսինքն՝ կապիտալիզմն ի հայտ է գալիս XIX դարի երկրորդ կեսին, թե՞ XX դարի սկզբին: Ըստ Վ. Ռշտունու՝ Անդրկովկասում XIX դարի 60-ական թթ. մենք ընդհուպ մոտեցել ենք կապիտալիստական հարաբերությունների զարգացմանը թե՛ արդյունաբերությունում և թե՛ գյուղատնտեսությունում¹: Վ. Պարսամյանը գտնում էր, որ ավատատիրական հարաբերությունների և կապիտալիզմի զարգացումը Հայաստանում տեղի է ունեցել XIX դարի երկրորդ կեսին², իսկ Մուշեղ Ադոնցն ընտրում էր 1870 թվականը՝ իբրև Հայաստանում անցման շրջան դեպի կապիտալիզմ³: Մի խումբ պատմաբաններ, այդ թվում Վ. Դիլոյանը, 1860-ական թվականները համարում էին կապիտալիստական հարաբերությունների ձևավորման շրջան Արևմտյան Հայաստանի համար⁴:

Պարբերացման խնդիրը հրատապ է նաև մեր հարևանների համար. օրինակ՝ Ադրբեջանում առկա է պատմության պարբերացման նոր հայեցակարգ, ըստ որի՝ XVII-XVIII դարերը կրում են նոր շրջանի վաղ շրջան անվանումը⁵: Գոյություն ունի առաջարկություն համալրել այդ պատմությունը Սեֆյան պետության իրանացմամբ (իրանизация), այն է՝ որպես նոր ժամանակի մեկնարկ ընտրել Սեֆյան Իրանի պատմության XVI դարը⁶, որն այսօր ստացել է նոր՝ Սեֆյան ադրբեջանական կայսրություն անվանումը⁷: Ուստի ստուգեցի 1995-2005 թթ. ադրբեջանցի հեղինակների աշխատությունները, և պարզ դարձավ, որ այդ տարիներին նրանք գրում էին Սեֆյան ադրբեջանական պետության մասին⁸, իսկ այսօր արդեն՝ կայսրության:

Սակայն կա նաև խառնաշփոթ, որի պատճառը Հեյդար Ալիևի 1998 թ. մարտի 26-ի հրովարտակն է, ըստ որի՝ հռչակվում էին «Ադրբեջանական ժողովրդի ցեղասպանությունը» և Ադրբեջանի բաժանումները 1813 թ. Գյուլիստանի և 1828 թ. Թուրքմենչայի պայմանագրերով⁹: Այս խառնաշփոթը հաղթահարելու համար առաջարկվում է այդ նոր ժամանակը լրացնել «ադրբե-

¹ Տե՛ս **Րշտունի В.**, Крестьянское движение в Армении в XIX в., Ереван, 1948, с. 118:

² Տե՛ս **Պարսամյան Վ. Ա., Հարությունյան Շ. Ռ.**, Հայ ժողովրդի պատմություն (1801- 1978 թթ.), Երևան, 1979, էջ 139:

³ Տե՛ս **Бадалян А.**, Исследование об экономическом развитии Восточной Армении в XIX в., с. 86.- [http://basss.asj-oa.am/1551/1/1958-2\(85\).pdf](http://basss.asj-oa.am/1551/1/1958-2(85).pdf)

⁴ Տե՛ս **Дилоян В. А., Казарян Г. М., Мурадян Д. А.**, Историографический очерк Новой истории Армении, с. 32.- <http://iraber.asj-oa.am/1128/1/24.pdf>

⁵ Տե՛ս Предложена новая концепция периодизации азербайджанской... - abc.az/rus/news/91020.html

⁶ Տե՛ս Периодизация истории Северного Азербайджана. - <http://www.disput.az/?app=forums&module=forums&controller=topic&id=30297>

⁷ Տե՛ս История Азербайджана. - <http://313news.net/forum/topic/196/>

⁸ Տե՛ս История Азербайджана с древнейших времен до начала XX века, Баку, 1995, с. 130, **Махмудов Я.**, Азербайджан: краткая история государственности, Баку, 2005, с. 14:

⁹ Տե՛ս Указ президента Азербайджанской Республики о геноциде азербайджанцев. - <http://1905.az/ru>

ջանականությամբ» (азербайджанизм): Այսպես, Կովկասի կենտրոնի պատմության դեկավարներից մեկը՝ Ռիզվան Հուսեյնովը, գտնում է, որ ԽՍՀՄ կործանումից հետո սկսվել է պատմության վերանայման խնդիրը: Այստեղ նա առաջարկում է պայքարել եվրոպակենտրոնական մոտեցման դեմ, քանզի այն հստակորեն ներկայացնում է յուրաքանչյուր ժողովուրդի դերն ու մշակույթը պատմության ընթացքում: Այս պարագայում եվրոպացիները բարձրացնում են Հայաստանի դերն ու մշակույթը և երկրորդական դեր են հատկացնում Ադրբեջանին, ինչպես նաև միջինասիական ժողովուրդներին: Ռ. Հուսեյնովը նշում է. «Պետք է, որ բոլոր թուրք և մուսուլման ժողովուրդներն արևելյան քրիստոնյա մշակույթի կործանիչներն ու կողոպտիչներն են, իսկ Վրաստանը, Հայաստանն ու սլավոնական ժողովուրդների մի մասը ներկայանում են որպես առաջադեմ ժողովուրդներ, որոնք ստիպված են եղել պայքարել ընդդեմ թուրքերի և մուսուլմանների, իսկ արդյունքում մենք ունենք այն, ինչ ունենք այսօր՝ Հայաստանի ագրեսիան ընդդեմ Ադրբեջանի»¹:

Ինչ վերաբերում է մեր հարևան Վրաստանին, ապա նշեմ հետևյալը. Վահուշտի Բագրատիոնին ժամանակին առաջարկել է Վրաստանի պատմության երկու փուլային պարբերացումներ՝ հնագույն ժամանակաշրջանից մինչև 1469 թ. և XV դարից մինչև XVIII դարը²: Հետագայում ավելացել են Վրաստանի միացումը Ռուսաստանին, վրացական հանրապետության կարճատև գոյությունը 1918-1921 թթ., խորհրդային և հետխորհրդային ժամանակաշրջանները: Այսինքն՝ այստեղ նրանք սկսել են օգտագործել պարբերացման փաստագրական մոտեցում՝ Գամսախուրդիայի, Սաակաշվիլու, Իվանիշվիլու ժամանակաշրջաններ: Արդյունքում ստացվում է շատ հետաքրքիր իրավիճակ. առանձնացվում են յուրաքանչյուր կառավարչի ժամանակաշրջանները, քանզի նրանք են որոշում իրենց կառավարման բովանդակությունը³: Կա նաև կարծիք, ըստ որի՝ 1783 թվականը Վրաստանի նոր պատմության սկիզբն է, քանզի այդ շրջանում է սկսվում նրա գաղութացումը Ռուսաստանի կողմից⁴: Կա նաև մեկ այլ մոտեցում. Վրաստանի նոր ժամանակը սկսվել է Ռուսաստանի կայսրության կազմում՝ XIX դարում և XX դարի սկզբից⁵:

Իսկ ինչ վերաբերում է հայերին, ապա պարբերացումը շատ կարևոր է, դա ընտրության հարց է. ո՞ւմ հետ ենք մենք՝ Արևելքի, թե՞ Արևմուտքի, եվրոպակա՞ն, թե՞ ասիական քաղաքակրթության: Լեոն 1917 թ. իր «Հայոց պատմության» հրատարակության կապակցությամբ հստակ առանձնացնում

¹ Տե՛ս Ռիզվան Գուսեյնով, директор Центра истории Кавказа: «Нам нельзя оставаться в стороне от идущей в мире глобальной ревизии истории». - <http://www.azeri.ru/papers/azerizvaz/81499>

² Տե՛ս **Багратиони В.**, История царства Грузинского, Тбилиси, 1976, с. 3:

³ Տե՛ս История Грузии. - <https://turmag.com.ua/219-srochnie-vizi/4653-istoriya-gruzii.htm>

⁴ Տե՛ս Новая история Грузии в изложении Саакашвили. - <http://313news.net/forum/topic/196>

⁵ Տե՛ս Разделение и взаимодействие ветвей власти. - <http://www.hyno.ru/tom1/591.html>

է միջին դարերն ու նոր պատմությունը: Միջին դարերն սկսվում էին V դարից, իսկ նոր ժամանակը՝ XVI դարից և հասնում մինչև XIX դար, սակայն 1927 թ. նա առաջարկեց ուշադրություն դարձնել նաև XX դարի պատմությանը: Ըստ նրա՝ XIX-XX դարերը հայերի բնաջնջման ամենասարսափելի էջերն էին, այսինքն՝ նա փաստորեն առաջարկեց այդ ժամանակահատվածները դարձնել նորագույն պատմություն¹:

Հենվելով Լեոյի կարծիքի վրա՝ Վ. Պարսամյանը ևս նշեց XIX-XX դարերի կարևորությունը մեր ազգային պատմության համար: Սակայն նոր ժամանակը նա շաղկապեց XIX դարի հետ. հայ ժողովուրդը XIX դարում մուտք գործեց իր պատմության նոր դարաշրջան՝ ինչպես նախկինում ազատությունից զրկված և քաղաքական կյանքից անկախ²: Այնուհետև Գ. Գալոյանն առաջարկեց նոր ժամանակ համարել XVII դարի վերջը-XVIII դարի սկիզբը, երբ ի հայտ է եկել ազգային-ազատագրական պայքարի նոր փուլը³: XIX դարի վերաբերյալ գերիշխում էր նաև ռուս-հայկական հարաբերությունների առնչվող մի տեսակետ⁴: Այսպես, Վ. Միքայելյանը նշում էր, որ Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին թույլ տվեց հայերին ազատ շնչել և զարգանալ առանց խոչընդոտների⁵: Այս հայացքը ժամանակավորապես գերիշխեց:

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն Ա. Մելքոնյանն այստեղ հայտնեց, որ մենք նոր ժամանակի սկիզբը խորհրդային ժամանակաշրջանում համարում էինք 1801 թվականը: Այդուհանդերձ, Վ. Դիլոյանն առաջարկել էր նոր ժամանակի պարբերացումն սկսել XVII դարի երկրորդ կեսից և շարունակել մինչև 1918 թվականը: Այս մոտեցումը հիմք է դարձել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի «Հայոց պատմության» քառահատորյակի համար⁶: Իսկ ինչո՞վ է պատճառաբանվում այդ մոտեցման ընտրությունը: Նրանով, որ 1639 թ. ավարտվում է թուրք-պարսկական պատերազմը, երկիրը սկսվում է վերականգնվել, հանդես է գալիս ազգային-ազատագրական շարժման նոր փուլը, 1677 թ. տեղի է ունենում Էջմիածնի եկեղեցական ժողովը, փոխվում է տոմարը՝ Ջատկի շրջանը, հայերը պատվիրակություն են ուղարկում Եվրոպա, Պետրոս Ա-ն կայսրություն է ստեղծում, ռուսները պատրաստվում են գրավել Միջին Ասիան՝ հասնելով մինչև Հեռավոր Արևելք, և

¹ Տե՛ս Լեո, Հայոց պատմություն, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1967, էջ 7, 13:

² Парсамян В. А., История армянского народа, Ереван, 1972, с. 5.

³ Տե՛ս Գալոյան Գ. Ա., Պատմության քառուղիներում, Երևան, 1982, էջ 77, 79:

⁴ Տե՛ս Нерсисян М. Г., История Армянского народа. Раздел Третий. Новое Время. Армения в начале XIX в., Ереван, 1980, с. 140. -http://www.bulgari-istoria-2010.com/booksRu/Nersesya_Istoria_Armyanskogo_Naroda.pdf

⁵ Տե՛ս Армения и Азербайджан // Национальные истории в советском и постсоветских государствах, М., 2003, с. 98:

⁶ Տե՛ս Մելքոնյան Ա. Ա., Խայտառակության կոթողը, Երևան, 2017, էջ 17, 18 - <http://www.academhistory.am/images/Norutyunner/Patm.-inst.-patasxan-DEMOYANIN.pdf>

ամենակարևորը, որ այդ մոտեցումը համընկնում է նաև եվրոպական պարբերացման ասպարեզում անգլիական հեղափոխության ունեցած մեծ դերի հետ: Եվս մի կարևոր հանգամանք. թուրքերը 1683 թ. պարտություն են կրում Վիեննայի պաշարման ժամանակ, և սկսվում է նրանց հետդարձը¹:

Այսպիսով, նոր ժամանակի պարբերացման տարբեր մոտեցումները, մեր կարծիքով, օրինաչափ են, նրանք թելադրված են տարբեր ժողովուրդների մտայնությամբ և կացութաձևով, նրանց կյանքի առանձնահատկություններով և ընդհանուր զարգացման մակարդակով: Միննույն ժամանակ, նույն վիճակը մեզ կսպասի 20, 30, 50 տարի հետո, երբ կվերանայեն մեր մոտեցումները: Բայց այսօր մեզ համար անհրաժեշտ է ճշգրիտ մոտեցում, որը թույլ կտա ներկայացնել մեր ազգի վիճակը և գնահատել ժամանակի մարտահրավերները:

Ամատունի Վիրաբյան

պատմական գիտությունների դոկտոր

Հարգարժան նախագահություն, հարգելի՛ գործընկերներ, որպեսզի մեզ համար պարզ լինի Խորհրդային Հայաստանի պատմության պարբերացման հարցերը, նախ ես ցանկանում եմ ներկայացնել, թե ինչպես ենք պատկերացրել Խորհրդային Հայաստանի պատմության ժամանակահատվածը, ինչպես ենք մոտեցել այդ հիմնահարցին, ի՞նչ ունենք այժմ, և իմ առաջարկները, որոնք կարելի է ընդունել կամ չընդունել: Որպեսզի պատասխանենք «ի՞նչ ենք ունեցել հարցին», ներկայացնենք «Հայ ժողովրդի պատմություն» ակադեմիական ութհատորյակի վերջին երկու հատորները:

1967 թ. լույս տեսած յոթերորդ հատորում Խորհրդային Հայաստանի պատմությունը սկսվում է 1917 թվականից: Բնականաբար այդպես պետք է լիներ: Հայաստանի Հանրապետություն չկար, և առաջին գլուխը, որ վերնագրված է «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը և սովետական իշխանության հաղթանակն ու ամրապնդումը Հայաստանում», սկսվում է 1917 թ. հոկտեմբերյան հեղափոխությամբ: Ես այն տերմիններն եմ օգտագործում, որոնք կան այդ գրքում, և գլուխը եզրափակվում է 1921 թ. հուլիսին քաղաքացիական կռիվների ավարտով, որով և՛ Զանգեզուրը փաստացի դարձավ Խորհրդային Հայաստանի մի մաս, և՛ Գարեգին Նժդեհն ու Փրկության կոմիտեն տասը հազար գաղթականներով հեռացան Պարսկաստան, թեպետ հետագայում նրանց մեծ մասը վերադարձավ: Երկրորդ բաժի-

¹ Вена. История. Легенды. Предания. - <http://ah.milua.org/wien-part4-turkish-threat>

նը, որը, ըստ պարբերացման, անվանված է «Սովետական Հայաստանը ժողովրդական տնտեսության վերականգնման ժամանակաշրջանում», սկսվում է 1921 թ. քաղաքացիական կռիվների ավարտով, ՆԷՊ-ի ընդունումով, և նյութն ընդգրկում է մինչև 1925 թ., որովհետև այդ թվականը համարվում էր ժողովրդական տնտեսության վերականգնման ավարտ: Իհարկե այստեղ հարկ է ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ «ժողովրդական տնտեսության վերականգնման ավարտ» հասկացության տակ հեղինակները նկատի ունեին, որ համախառն արտադրանքը հասավ 1913 թվականի՝ նախապատերազմյանի մակարդակին, ինչպես ընդունված էր այն ժամանակ: Սակայն եթե մենք դիտարկում ենք բնակչության կենսամակարդակի տեսանկյունից, ապա այն դեռ երկար տարիներ, նույնիսկ գյուղական որոշ տարածաշրջաններում մինչև 1960-ական թվականների սկիզբը չէր գերազանցում 1913 թ. մակարդակը: Բնակչության կենսամակարդակի լավագույն որոշիչը նրա մեկ անդամի հաց օգտագործելն էր, որը 1913 թ. Հայաստանում ավելի շատ է եղել, քան 1950-ական թվականներին, կրկնում եմ, քաղաքը հասել էր դրան, Արարատյան դաշտը ևս, բայց Սյունիքը, Շիրակը, Սևանի ավազանը 1913 թ. մակարդակին չէին հասել նույնիսկ 1960-ական թվականների սկզբներին:

Հաջորդ՝ «Սովետական Հայաստանը ժողովրդական տնտեսության վերականգնման և սոցիալիզմի տնտեսական հիմքերի ստեղծման ժամանակաշրջանում» բաժինը ընդգրկում է 1926 թվականից մինչև 1932 թվականն ընկած ժամանակահատվածը, որը համարվում էր ոչ միայն կոլեկտիվացման, այլև առաջին հնգամյակի պլանների կատարման ավարտը: Ինչպես տեսանք, երկրորդ բաժինը կապված էր ժողովրդական տնտեսության որոշակի փուլի հետ: Նույն մոտեցումն առնչվում է երրորդ բաժնին, այլ կերպ ասած՝ պատմության պարբերացման հիմքում դրված է ժողովրդական տնտեսությունը: Զորրորդ՝ «Սովետական Հայաստանը ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման ավարտի և սոցիալիզմի հաղթանակի ամրապնդման ժամանակաշրջանում (1933-1941 թթ.)» խորագիրը կրող բաժինը ևս կապված է ժողովրդական տնտեսության հետ: Ընդունված էր, որ սոցիալիզմը Խորհրդային Միությունում, բնականաբար նաև Հայաստանում, հաղթանակեց 1937 թ., ապա սկսվում է դրա ամրապնդման ժամանակաշրջանը, որը տևում է մինչև 1941 թ.: Այսպիսին է յոթերորդ հատորը:

Ութերորդ հատորը սկսվում է «Հայ ժողովուրդը Հայրենական մեծ պատերազմի տարիներին» բաժնով: Բնականաբար այն սկսվում է 1941 թ. հունիսով և ավարտվում 1945 թվականով: Ներքին պարբերացումն ունի այսպիսի պատկեր՝ 1941-1942 թթ. նահանջի ժամանակաշրջանից մինչև 1942 թ. նոյեմբեր՝ Ստալինգրադի պաշտպանական մարտերը: Արմատական բեկումն՝ 1942 թ. նոյեմբերից մինչև 1943 թ. ավարտը և պատերազմի հաղթական ավարտ՝ 1944-1945 թթ.: Հայրենական մեծ պատերազմից հետո, ըստ Խորհրդային Միության պատմության պարբերացման, հաջորդ բաժինը

վերնագրված է «Սովետական Հայաստանը սոցիալիզմի լիակատար և վերջնական հաղթանակի ժամանակաշրջանում» և ընդգրկում է 1946-1955 թթ. ժամանակահատվածը: Ընդունված իրողություն էր համարվում, որ սոցիալիզմը 1955 թ. արդեն Խորհրդային Միությունում լիակատար և վերջնականապես հաղթանակել էր, և, բնականաբար, սրան հետևում է հաջորդ՝ «Սովետական Հայաստանը կոմունիստական շինարարության ծավալման ժամանակաշրջանում» բաժինը, որն ընդգրկում է 1956-1965 թվականները: 1970 թ. լույս տեսած ութերորդ հատորը սրանով ավարտվում է: Հետագայում՝ 1970-ական թվականների վերջերին, երբ պարզ դարձավ, որ կոմունիստական շինարարությունը մնաց իբրև 1961 թ. ՍՄԿԿ XXII համագումարում ընդունված կոմունիստական կուսակցության երրորդ ծրագրի ընդամենը գեղեցիկ երազանք, ընդունվեց զարգացած սոցիալիզմ հասկացությունը: Իսկ 1970-1980-ական թվականներին բուհական դասագրքերում ավելացվում էին նոր հնգամյակային բաժիններ մինչև 1985 թվականը: Սա այն է, ինչ ունեինք:

Իսկ ի՞նչ ունենք այժմ: Ինչպես իմ շատ գործընկերներ, ես ևս որպես հիմք ընդունում եմ Հայոց պատմության ակադեմիական չորս հատորները, որի չորրորդ հատորի առաջին գիրքը լույս է տեսել, իսկ երկրորդը գտնվում է տպագրության ընթացքում: Այսինքն՝ Խորհրդային Հայաստանի ժամանակաշրջանի շարադրանքն ավարտված է, և ես կարող եմ այն ներկայացնել: Չորրորդ հատորի առաջին գրքում Խորհրդային Հայաստանը ներկայացված է երկրորդ բաժնում, և սկսվում է վեցերորդ գլխով: Բնականաբար Սոցիալիստական Խորհրդային Հայաստանի պատմությունը, ի տարբերություն նախորդ ակադեմիական հրատարակության, սկսվում է 1920 թ. դեկտեմբերով և հասցվում մինչև 1922 թ. Խորհրդային Միության ստեղծումը: Այս հատվածը բաժանված է չորս ենթագլխի՝ Խորհրդային իշխանության հաստատումը, 1921 թվականի փետրվարյան ապստամբությունը, Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության տարածքային-սահմանային հիմնախնդիրը 1921 թվականին: Այս ենթագլխում ներկայացված են Լոռու փետրվարյան ապստամբության, Ջանգեզուրի, Մոսկվայի և Կարսի պայմանագրերի, Լեռնային Ղարաբաղի և այլ հիմնահարցեր, ինչը հայտնի է բոլորիդ: Վերջին ենթագլխում ներկայացված են Խորհրդային Հայաստանի ամրապնդման, ՆԷՊ-ի քաղաքականությանն անցման, Անդրդաշնության և ԽՍՀՄ կազմավորման հիմնահարցերը: Այսինքն՝ 1922 թվականը ավարտվում է ՆԷՊ-ի, Անդրդաշնության և ԽՍՀՄ իրողությամբ:

«Սոցիալ-տնտեսական դրությունը և հասարակական-քաղաքական կյանքը (1923-1929 թթ.)» խորագրով յոթերորդ գլխի հեղինակ Վլադիմիր Ղազախեցյանը այն սկսել է 1923 թվականից և հասցրել մինչև 1929 թվականը ներառյալ: Ի տարբերություն նախորդ պարբերացման, երբ առկա էր 1921-1925 թթ. և 1926-1932 թթ. թեմատիկ բաժանումը, այստեղ պարբերացումը փոխված է, և 1920-ական թվականները համարվում են որպես մի ժամանակաշրջան՝ իր երկու հիմնախնդիրներով՝ տնտեսության վերականգնում, կո-

մունիստական մենատիրության հաստատում: Հաջորդ բաժնի սկիզբն ընդունված է 1930 թվականը՝ երկրում կոլեկտիվացման ծավալումով և առաջին հնգամյակի մեկնարկով:

Ութերորդ գլուխը վերնագրված է «Սոցիալ-տնտեսական վերափոխումները: Խորհրդային ամբողջատիրության հաստատումը (1930-ական թթ.)»: Բնականաբար՝ 1930 թ. մինչև 1939 թվականը: Ըստ այս պարբերացման, ի տարբերություն նախորդի, հայ ժողովուրդը և՛ Երկրորդ աշխարամարտի, և՛ Հայրենական մեծ պատերազմի մասնակիցն է, ու գրքի համապատասխան գլուխը սկսվում է 1939 թվականով և հասցվում մինչև 1945 թ.:

Հատորի երկրորդ գիրքը, որը, ինչպես նշեցի, գտնվում է տպագրության ընթացքում, սկսվում է «Հայաստանը հետպատերազմյան տարիներին» գլխով և ընդգրկում 1945-1965 թթ., ունի թեմատիկ երեք բաժանում՝ սոցիալ-տնտեսական դրությունը, հասարակական-քաղաքական կյանքը և ազգային հիմնախնդիրները: Հաջորդ երկու գլուխները թեմատիկ վերնագրեր չունեն և ընդգրկում են 1965-1985 և 1985-1990 թվականները՝ Խորհրդային Հայաստանը նշված թվականներին ընդհանուր վերնագրով: Այստեղ 1985 թ., բնականաբար, գորբաչովյան վերակառուցման ծրագրի սկզբնավորումն է, իսկ 1990 թ. կապված է նույն թվականի օգոստոսյան հռչակագրի հետ, երբ Հայկական Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունը վերանվանվեց Հայաստանի Հանրապետություն:

Ես մինչև իմ ներկա ելույթը պարբերացման վերաբերյալ բավականին ուսումնասիրել եմ արդի Ռուսաստանում լույս տեսած գրականությունը, թե ինչպես են նրանք պարբերացնում, այսպես անվանեմ, նախկին Խորհրդային Միության կամ ներկա Ռուսաստանի պատմությունը: Ասեմ, որ այն սկսվում է 1917 թվականից, որը համարվում է հեղափոխության տարի: Այս առումով կա երկու տեսակետ. պատմաբանների մի մասը փետրվարից հոկտեմբերը կամ նոյեմբերը ընդունում է որպես մեկ հեղափոխություն, որպես շարունակական հեղափոխություն, պատմաբանների մի այլ խումբ գտնում է, որ դրանք երկու առանձին հեղափոխություններ են:

«Քաղաքացիական պատերազմ, 1918-1920 թվական» բաժնին հաջորդում է «Խորհրդային պետությունը 1920-ական թվականներին» բաժինը, որը սկսվում է 1921 թվականով, հասցվում մինչև 1927 թվականը ներառյալ: Մեզ մոտ, ինչպես հիշում եք, 1929 թվականն էր: Ինչու՞ 1927 թվական: Ինչպես գիտեք, 1928 թ. հացի հիմնահարցի պատճառով Ստալինը, փաստորեն, կասեցրեց ՆԷՊ-ի հետագա ընթացքը: Դրա համար հաջորդ բաժինը սկսվում է 1928 թվականից, որը ներառում է արդյունաբերության մոդեռնիզացումը, կոլեկտիվացումը կամ գյուղի հեղաշրջումը վերևից՝ «Революция с верху в советской деревне», 1930-ական թվականների քաղաքական վարչակարգը և պատերազմի նախօրյակը: Այնուհետև Հայրենական մեծ պատերազմ և հետպատերազմյան տարիներ:

Ներկայումս Ռուսաստանում խորհրդային շրջանի միատեսակ ընդուն-

ված պարբերացում գոյություն չունի: Տարբեր գրքեր, տարբեր բուհական դասագրքեր ունեն տարբեր պարբերացում, բայց հիմնականը, որ կարելի է, այն է, որ Հայրենական մեծ պատերազմը առանձին չի ներկայացված, չկա առանձին հատված, այլ մեկ բաժնով են ներկայացված և՛ պատերազմը, և՛ հետպատերազմյան տարիները՝ մինչև 1953 թվականը: Բնականաբար հաջորդ բաժինն ընդգրկում է 1953 թվականից մինչև 1985 թվականը՝ Խրուշչովից մինչև Գորբաչով, և 1985 թվականից մինչև 1991 թվականը՝ վերջին՝ գորբաչովյան ժամանակաշրջանը, որն այսպիսի վերնագիր ունի «Перестройка и распад СССР» կամ «Кризис и распад СССР»:

Ես ներկայացրի այն, ինչ ունենք Հայաստանում, և ինչ այսօր կա Ռուսաստանում, որովհետև, վերջին հաշվով, մենք կապված ենք միմյանց հետ: Ես առաջարկում եմ Խորհրդային Հայաստանի պարբերացման մի տարբերակ, որն առանձնապես շատ բանով չի տարբերվում նրանից, ինչ որ կա չորրորդ հատորի երկու գրքերում, բայց որոշակի նկատառումներ ունեմ: Ինչպես հիշում եք, ես ասացի, որ Խորհրդային Հայաստանի պարբերացման առաջին բաժինը նշված հատորում սկսում է 1920 թվականով և ավարտվում Խորհրդային Միության կազմավորումով: Ես, օրինակ, այդ հատվածի առաջին բաժինը կհասցնեի ոչ թե մինչև Խորհրդային Միության կազմավորումը, այլ Անդրկովկասյան Միության ստեղծումը՝ 1922 թ. մարտի 12-ը: Ինչու: Որովհետև, վերջին հաշվով, երբ որ պատմական հատվածի որոշակի բաժանում ենք կատարում, պետք է հաշվի առնենք նաև վերնախավի միջավայրը: Եթե 1921 թ. քաղաքացիական կռիվների ավարտից հետո Խորհրդային Հայաստանի վերնախավում բանասարկություն չկար, ապա 1922 թ. մարտին Ալեքսանդր Մյասնիկյանի՝ Անդրկովկասի Միութենական խորհրդի կառավարության նախագահի տեղակալ ընտրվելով այն սկսվեց: Երկար ժամանակ, մինչև մայիսի կեսը նա մնացել է Հայաստանում, որովհետև չէին կարողանում նրան փոխարինող գտնել: Վերնախավը բաժանվել էր երկու-երեք մասերի, և ամեն մեկն իր թեկնածուն ուներ, մի մասը, հատկապես երիտասարդները, Ավիա Նուրիջանյանի ղեկավարությամբ կողմնակից էր Անաստաս Միկոյանին հրավիրելուն: Համեմատաբար ավագ գործիչները բաժանվել էին երկու մասի. մի մասը Ասքանազ Մռավյանի կողմնակիցն էր, մյուս մասը՝ Սարգիս Լուկաշինի, և Անդրկովկասի սոցիալիստական խորհրդային հանրապետությունների միության կազմավորումը, փաստորեն, վերնախավի վրա ազդեցություն ունեցավ: Հունիսին, երբ ժողկոմխորհի նախագահ ընտրվեց Ս. Լուկաշինը, վերնախավի մի մասը Հայաստանից ստիպված հեռացավ: Դրա համար ես առաջարկում եմ Խորհրդային Հայաստանի անկախության կորուստը կապել 1922 թ. մարտի հետ, երբ ստեղծվեց Անդրկովկասյան Միությունը, և ամենակարևոր ժողկոմատները՝ ռազմական գործերի, արտաքին գործերի, ֆինանսների, աշխատանքի, արտաքին առևտրի, փաստորեն, լուծարվեցին: Դրանք միավորվեցին Անդրկովկասյան միասնական ժողկոմատներում: Հայկ Բժշկյանի՝ Գայի մասին. երբ հաճախ

նշվում է, թե նա ռազմական գործերի ժողկոմ է եղել, այդպես չէ, իրականում նա եղել է զինվորական կոմիսար:

Երկրորդ բաժինն առաջարկում եմ սկսել 1922 թ. մարտից, որը համարում եմ Խորհրդային Հայաստանի «դե յուրե» անկախության կորուստ, և հասցնել մինչև 1936 թվականը, երբ Անդրկովկասյան Դաշնությունը լուծարվեց, և Խորհրդային Հայաստանը՝ որպես միութենական հանրապետություն, ընդգրկվեց Խորհրդային Միության կազմում:

Երրորդ բաժինն առաջարկում եմ համարել նախապատերազմյան ժամանակաշրջան՝ սկսած 1937 թվականից: Հատկապես ցանկանում եմ խոսել այդ թվականի մասին, երբ հասարակ բնակչության հետ միասին տուժեց ամբողջ վերնախավը, որը, փաստորեն, ոչնչացվեց, և այս հանգամանքը որոշակի դեր խաղաց հետագա զարգացումների ընթացքում: 1941-1945 թվականներն առաջարկում եմ չընդունել որպես առանձին բաժին՝ հաշվի առնելով, որ Հայաստանում ռազմական գործողություններ չեն ծավալվել, Հայաստանը միայն տնտեսապես և մարդկային ռեսուրսներով է մասնակցել պատերազմին: Ես առաջարկում եմ պատերազմական և հետպատերազմյան ժամանակաշրջանները միավորել մինչև 1965 թվականը, երբ սկսվեց ազգային զաթոնքը, նշվեց Հայոց ցեղասպանության 50-ամյակը, և մենք փողոցում տեսնում էինք այլևս այլ տեսակի՝ արդեն ինչ-որ տեղ առանց վախի, իր ազգային արժեքը գիտակցող խորհրդային մարդու: Վերջին բաժնում առաջարկում եմ ընդգրկել 1966-1990 թվականները: Ոչ թե մինչև Խորհրդային Միության քայքայումը, որը տեղի ունեցավ 1991 թվականի դեկտեմբերին, այլ 1990 թվականի Գերագույն խորհրդի առաջին ազատ ընտրությունները, և նստաշրջանի բացումով՝ Հայաստանի Հանրապետության հռչակագրի ընդունումը օգոստոսի 23-ին: Այսքանը, եթե հարցեր կան, սիրով կպատասխանեմ:

Ա. Միմոնյան – Հարցեր կա՞ն: Համեցե՛ք:

Պ. Ավետիսյան – Խորհրդային Հայաստանի պատմության պարբերացման հարցում խորհրդային նախկին հանրապետությունների և հատկապես Ռուսաստանի հետ մեր տարբերությունները որո՞նք են:

Ա. Վիրաբյան – Որոշակի տարբերություններ կան: Օրինակ՝ 1922 թ. մարտը: Մարտը Անդրկովկասի երեք հանրապետությունների համար նույնն էր: Այն չկա Ուկրաինայում և Բելառուսում: 1936 թվականը ևս մեզ համար էական էր, որովհետև խորհրդային երկրորդ սահմանադրության ընդունումով մենք դարձանք միութենական հանրապետություն, և Թբիլիսիի գործոնը մեջտեղից դուրս եկավ: Մնացածը, փաստորեն, նույնն է: Ես առաջարկում եմ 1941 թվականից մինչև 1965 թ. ընդունել որպես մեկ ժամանակաշրջան: Վերջին հաշվով 1953 թ. Ստալինի մահից հետո վերնախավն էր միայն սկսված փոփոխությունները զգում: Ներքևում առաձնապես շատ փոփոխություններ չեն եղել, ուղղակի ողբացել են Ստալինի մահը: Բնակչության՝ հատկապես գյուղի, կենսամակարդակը սկսեց փոխվել 1960-ական թվականներին, երբ,

ինչպես ասում են, հայկական գյուղը սկսեց շնչել փոխաբերական առումով: 1950-ական թվականներին իմ ծննդավայրում նույն՝ XIX դարի տներն էին, և այդպես է ոչ միայն մեր, այլև ամբողջ տարածաշրջանի գյուղերում: Անմշակ քարից կառուցված տներ. մինչև 1965 թվականը:

Վ. Թունյան – Խոպանի ժամանակաշրջանը ինչպե՞ս ենք ներկայացնելու:

Ա. Վիրաբյան – Խոպանի իրացումը սկսվեց 1954 թվականից, և Հայաստանից 50-ական թվականներին կազմակերպված խմբեր էին միայն գնում, անհատական, արտագնա աշխատանքը սկսվեց 1960-ական թվականները, և այդ աշխատանքից ստացված գումարը որոշակի ազդեցություն ունեցավ հայկական գյուղի վերափոխման վրա. 1965 թվականից գյուղում սկսվեց նոր տների կառուցումը: Երբ որ մենք գյուղի կենցաղում զգացինք փոփոխություն, դա 1960-ական թվականներին էր:

Պ. Ավետիսյան – Ես կրկին շարունակություն ունեմ: Ինչո՞ւ հարցը տվեցի: Ինչպես ես պատկերացնում եմ, խորհրդային շրջանի պատմությունը պետք է ունենա նոր կառուցվածք՝ ավելի մեծ գլուխներ, հետո ավելի երկար ենթագլուխներ:

Ա. Վիրաբյան – Այո՛, այո՛, դա ընդունում եմ:

Պ. Ավետիսյան – Ես կարծում եմ, որ այն, ինչ տեղային է, առանձնահատկություն է, այսինքն՝ խորհրդային մեծ երկրի մասին ենթահարցերում պետք է դա առանձնացնել: Իսկ մեծ ոլորտները պետք է ընդհանրականի տակ դրվեն: Ես այդ իմաստով էի հարցը տալիս:

Ա. Վիրաբյան – Ընդունում եմ այդ տարբերակը, իհարկե՛:

Ա. Միմոնյան – Համեցեք, պարոն Եղիազարյան:

Ա. Եղիազարյան – Ինձ մի բան է հետաքրքրում Սփյուռքի հետ կապված: Մեծ հայրենադարձությունից հետո Խորհրդային Հայաստանի քաղաքային կյանքում որոշակի փոփոխություններ տեղի ունեցան, որևէ փուլային կամ ենթափուլային հարթության վրա սա երևալո՞ւ է, թե՞ ոչ:

Ա. Վիրաբյան – Տեսեք, ես Սփյուռքի մասին չխոսեցի, որովհետև, անկեղծորեն ասած, այդքան խորացած չեմ այդ հիմնախնդրում: Ինչպես բաժանել, ասենք, սփյուռքահայության հետեղեռնի շրջանի պատմությունը 1920 թվականից հետո, երբ հին գաղութները մեծանում էին, միաժամանակ ստեղծվում նորերը: Կարեն Խաչատրյանը գիտի, առանձին ենթահարց ունենք 1946-1948 թթ. մեծ ներգաղթի և նրա հետևանքների մասին: Եվ կապված է նաև 1949 թ. աքսորի հետ, որովհետև առաջ՝ 1990-ական թվականներին, շատ էին ասում՝ բերեցինք, աքսորեցինք: Իրականում 89500 հայրենադարձ ենք ունեցել, բայց Ալթայ ուղարկվել է այդ հայրենադարձներից շուրջ 1200 հոգի, որը կազմում է մեկ տոկոսից մի փոքր ավելի:

Ա. Միմոնյան – Պարո՛ն Վիրաբյան, այսպիսի մի հարց, երկու նկատառում: Առաջինը, այնուամենայնիվ, դուք պնդում եք, որ 1941-1945 թվականները մենք առանձնացնենք, այսինքն՝ մնա Հայրենական մեծ պատերազմ, այլ ոչ թե Երկրորդ համաշխարհային հասկացությունը: Դրանով մենք վերստին

մեզ սահմանազատում ենք համաշխարհային պատմության ուղուց: Բայց, այնուամենայնիվ, որքան քիչ մասնակցած լինենք, գոյություն ունեն սփյուռքահայություն Ֆրանսիայում, ռազմակալված երկրներում, Իտալիայում, որտեղ եթե շուրջ տասը պարտիզան էլ եղել է հայ, այնուամենայնիվ Միսակ Մանուշյանի մասին չեմ ասում, արժե՞, արդյոք, որ մենք անջատվենք դրանից: Մենք ուզում ենք մոտենալ:

Ա. Վիրաբյան – Պատասխանեմ, պարո՛ն Սիմոնյան: Գիտե՞ք ինչ, այսօր ընդունված է, որ չորրորդ հատորում ևս սփյուռքահայության բաժինն առանձին է: Այնտեղ չեմ պնդում, կարելի է նաև 1939 թվականը համարել հերթական պարբերության սկիզբ:

Ա. Սիմոնյան – Դե եթե մենք համարվում ենք ցրված ժողովուրդ, ուրեմն պետք է 1939 թ. համարենք պատերազմի սկիզբ, նամանավանդ, ճիշտ է ասում Ֆելիքս Մովսիսյանը, որ մենք մոռանում ենք շատ հաճախ խորհրդային պատերազմը Ֆինլանդիայի հետ, որտեղ հայերը բավականին մասնակցություն ունեցան: Սա 1941 թվականից այն կողմն է: Երկրորդ հարցը. դուք ասում եք, օրինակ եք բերում ձեր գյուղը, ձեր տները և այլն, դա հասկանալի է, բայց մենք պետք է պարբերացման սկզբունքի տակ դնենք ուրիշ բան: Գուցե ասենք, օրինակ, ես հիմա դրա մասին լավ չեմ մտածել, նոր խոսում էինք պարոն Աշոտ Մելքոնյանի հետ, օրինակ, աշխօրային համակարգի վերացումը 1970-ականների սկզբներին, կամ գուցե՝ 1965 թվական: Հիշո՞ւմ եք, «Ինչու է աղակում գետը» ֆիլմում ասվում է՝ «Ես աշխօր պետք է վաստակեմ»: Աշխօր վաստակում էր նա բամբակով, մեղրով, հացահատիկով և այլն: Ե՛րբ սկսվեց արդեն գումարով, ես չեմ հիշում դա:

Ա. Վիրաբյան – Այն գյուղերում, որտեղ մնացին կոլտնտեսություններ, դրանցում բնաթերթից գումարով վարձատրության անցման որոշումը ընդունվել է 1971 թ. և կամաց-կամաց կիրառվել է, և 1973 թվականից արդեն մեկ աշխօրի բնաթերթի գումարային արժեքին համապատասխան դրամ էր տրվում: Իսկ 1960-ական թվականների կեսերին Հայաստանի գյուղերի կոլտնտեսությունների շուրջ 50 տոկոսը վերածվեց սովխոզների, և այնտեղ հաստատագրված աշխատավարձեր արդեն կային:

Ա. Սիմոնյան – Մի հանգամանք, որը ևս վկայում է 1960-ականների կեսերի կամ սկզբի օգտին. դա այն է, որ շատ լեռնային գյուղեր վերացվեցին, եկան դաշտեր, միացան, 1950-ականների վերջից մինչև 1965 թվականը դարձան խոշոր:

Ա. Վիրաբյան – Դրա համար ես առաջարկում եմ 1941 թվականից մի մեծ բաժին՝ մինչև 1965 թվականը. այնտեղ արդեն մենք ենթահարցեր կարող ենք դնել:

Ա. Սիմոնյան – Դրա համար ես առաջարկում եմ 1939 թվականը:

Ա. Վիրաբյան – Դա, ինչպես ասացի, քննարկման խնդիր է:

Ա. Սիմոնյան – Շատ լավ, ուրիշ հարցեր: Չկա՞ն: Շնորհակալ եմ:

Հարգելի՛ գործընկերներ, երեկ արդեն մենք հիշեցինք 1992 թ. տեղի ունեցած՝ մեր պատմության պարբերացման խնդիրներին նվիրված քննարկման մասին: Ես և սերնդակիցներս՝ որպես երիտասարդ գիտնականներ, ներկա էինք այդ քննարկմանը և լսում էինք մեր ավագ գործընկերներին, ովքեր ստեղծել էին «Հայ ժողովրդի պատմություն» ակադեմիական ութհատորյակը: Մեծ ավանդ ներդնելով հայոց պատմության ուսումնասիրության մարքսիստական փուլում՝ նրանք, ըստ էության, նախապատրաստեցին նաև մեր պատմագիտության հաջորդ փուլը, որը սկիզբ առավ Խորհրդային Միության փլուզումից և մարքսիզմի դիրքերի թուլացումից հետո: Պատահական չէ, որ դրանից քառորդ դար անց մենք արդեն ունենք հայ ժողովրդի պատմությանը նվիրված ակադեմիական նոր հրատարակություն, որն իրականացրել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտը: Փա՛ռք ու պատի՛վ այդ աշխատության հեղինակներին, որոնք, հենվելով հայ ժողովրդի ակադեմիական պատմության նախորդ հրատարակության վրա, նյութը ներկայացրել են՝ ըստ մեզանում ի հայտ եկած պատմագիտական նոր միտումների:

Սակայն պետք է նայենք նաև առաջ: Ես տեսնում եմ, որ դահլիճում նստած են երիտասարդներ, որոնք այժմ լսում են մեզ, և համոզված եմ, որ նրանք հետո սեղանին են դնելու հայոց պատմության ակադեմիական մեկ այլ՝ նոր հրատարակություն: Ամեն ինչ շարունակվում է, և ոչ մի բան չի ավարտվում. պետք է իրատես լինենք: Դրանից ելնելով՝ կարծում եմ, որ մեր քննարկումները շատ կարևոր են, քանի որ մի փուլ արդեն ավարտվում է. ավարտին է մոտենում հայ ժողովրդի պատմության քառահատոր ակադեմիական հրատարակությունը: Ժամանակն է, որ առաջ նայենք, ինչպես երեկ շատ ճիշտ նշվեց, և փորձենք ճանապարհներ ցույց տալ երիտասարդներին, քննարկումների մթնոլորտ ստեղծենք, որի վրա հիմնվելով՝ նրանք հետագայում առաջ կգնան:

Պատմագիտությունը, ըստ էության, պատմական իրադարձությունների նկարագրությունն է, և այս առումով, կարծում եմ, կարևոր է, որ մենք կարողանանք մեր պատմությունը ներկայացնել ժամանակակից աշխարհում ընկալելի պատմագիտական լեզվով և այնպես, որ այն բխի մեր ժողովրդի անցած ուղու առանձնահատկություններից: Ուստի պետք է հիշեցնեմ, որ պատմագիտությունը կոնվենցիոնալ բնույթի գիտություն է. հիմնականում փաստերի մեկնաբանության վերաբերյալ համաձայնության արդյունք է. այնպես չէ, որ որևէ փաստի մեկնաբանություն բացարձակ ճշմարտություն է:

Շարունակելով իմ գործընկերների արդեն հնչեցրած մտքերը՝ ես կփորձեմ մեր պատմության հոլովույթը նկարագրելիս առաջ քաշել արդիականության փուլի գոյության վերաբերյալ վարկածը: Հիշեցնեմ, որ արդիականության հայեցակարգը կարևոր տեղ է գրավում ժամանակակից համաշխար-

հային պատմագիտական մտքի քննարկումներում:

Իմ այս մոտեցումը պայմանավորված է այն մտահոգությամբ, որ երիտասարդ գիտնականների մոտ աստիճանաբար ավելի աղուտ են դառնում Արևմտյան Հայաստանի մասին պատկերացումները: Կարծես թե միջնադարում և նոր պատմության դարաշրջանում չի եղել Արևմտյան Հայաստան, այլ այն եղել է ընդամենը Թուրքիայի տարածք, որտեղ հայեր են ապրել, իսկ այժմ՝ նորագույն պատմության դարաշրջանում, մենք ունենք Հայաստանի Հանրապետություն: Երկրորդ՝ ինձ համար կարևոր հանգամանք է և այն, որ երբ մենք հիմնվում ենք մեր պատմության ավանդական պարբերացման վրա՝ միջին, նոր և նորագույն, ապա մի տեսակ թուլանում է մեր ազգային-ազատագրական շարժման և Հայկական հարցի նշանակությունը: Պատահական չէ, որ երեկվա մեր քննարկումների ընթացքում ելույթներում ոչ մի անգամ չինչեց Հայկական հարց եզրույթը. կարծես նման բան չի եղել:

Ես կարծում եմ, որ մեր պատմության երրորդ դարաշրջանը, որն ավանդաբար անվանվում է նոր դարաշրջան, կարող է ընդլայնվել. նրա շրջանակներում կարելի է ընդգրկել միջին դարերի պատմության վերջին հատվածը և նորագույն պատմության դարաշրջանը ամբողջությամբ ու վերաձևակերպել դրա անվանումը որպես հայոց պատմության արդիական դարաշրջան: Դրա հիմքում պետք է դրվի պայքարը պետականության վերականգնման համար, այն է՝ ազատագրական շարժումները և ազատագրական գաղափարների առաջացումը: Դրանից բխում է, որ արդիականության շրջանը սկսվում է այն ժամանակներից, երբ սկսել են ձևավորվել ազատագրական գաղափարները, և սկիզբ են առել ազատագրական շարժումները: Ազատագրական գաղափարները և շարժումները զարգանալով, ընդլայնվելով վերաճում են ազգային-ազատագրական շարժման: Հիմնվելով ակադեմիկոս Մ. Ներսիսյանի մոտեցումների վրա՝ կարող ենք արձանագրել, որ այն տեղի է ունեցել 1862 թ. Զեյթունում, քանի որ զեյթունցիների ապստամբությունն ունեցել է համազգային նշանակություն:

Ելնելով վերոնշյալից՝ առաջարկում ենք ազատագրական գաղափարների առաջացումը XVI դարում ընդունել որպես վաղ արդիական դարաշրջանի՝ «early modernity»-ի սկիզբ:

XIX դարի 60-ական թվականներից սկիզբ է առնում «հասուն» արդիականության շրջանը, որն ընդգրկում է ազգային-ազատագրական շարժումը, Հայկական հարցը, հայոց պետականության վերականգնումը, ինչպես նաև կվազիպետականության առաջացումը և հասնում մինչև 1990-1991 թթ.: Դրանից հետո սկսվում է մեր պատմության արդիական դարաշրջանի ներկա փուլը՝ ուշ արդիականության շրջանը կամ ժամանակակից պատմությունը:

Մոտավորապես այսպիսին է իմ մոտեցումը: Ցանկանում եմ նաև ընդգծել, որ ժամանակակից պատմությունը սկսվում է ոչ միայն Երրորդ հանրապետության առաջացմամբ, այլև մեր ազգային-ազատագրական պայքարի նոր փուլով՝ Արցախի ազատագրական պայքարով, որը շատ կարևոր

է, քանզի մենք կապ ենք հաստատում մեր նախորդ ազգային-ազատագրական շարժումների հետ:

Ա. Միմոնյան – Պարոն Ռ. Սաֆրաստյանի առաջարկները միանգամայն տարբերվում են նախորդ ելույթ ունեցողների՝ ընդհանուր և նոր շրջանի պատմությանն առնչվող առաջարկներից:

Ա. Շահնազարյան – Հայկական հարցի սկիզբը դուք ո՞ր ժամանակաշրջանին եք թվագրում:

Ռ. Սաֆրաստյան – Ըստ ակադեմիկոս Լ. Խուրշուդյանի՝ Հայկական հարցը՝ որպէս միջազգային դիվանագիտական հարց, գոյություն ունի Սան Ստեֆանոյից:

Պ. Ավետիսյան – Պարո՛ն Սաֆրաստյան, այն, ինչ դուք ասացիք, փայլուն օրինակ է, թե ինչպէս պետք է ձեռքագատվենք միակից՝ էվոլյուցիոն տեսություններից, և մեր պատմության զարգացման ընթացքը իրականությանն ավելի համապատասխան ներկայացնենք: Եթե մենք ունենք միջին դարեր հասկացությունը և ձեր առաջարկած արդիական դարաշրջանը, ինչպե՞ս ենք փոխհարաբերվելու միջինի ու նորի հետ, ինչպե՞ս ենք դրանք շաղկապելու միմյանց, քանի որ դուք գաղափարական մոտեցմամբ եք դասավորել պարբերացումը:

Ես միանշանակ ընդունում եմ Ձեր մոտեցումը, ինձ շատ հոգեհարազատ է դա, ուղղակի այդ դեպքում միջնադարի վերին սահմանը մինչև ո՞ր է հասնում:

Ռ. Սաֆրաստյան – Արդիականությունը սկզբունքորեն նոր փուլ է մարդկության պատմության մեջ, որը Եվրոպայում արտահայտվել է մի ձևով, մեզ մոտ արտահայտվել է, իմ ընկալմամբ, մեկ այլ ձևով՝ ազգային-ազատագրական գաղափարների առաջ քաշումով, ինչը որակապես տարբերություն է առաջացնում միջնադարի և արդիականության միջև: Արդիականություն եզրույթը կրում է այն իմաստը, որ մենք դրա մեջ ենք, իսկ միջնադարը մեզնից հեռու է:

Պատասխանելով Ձեր հարցի երկրորդ հատվածին՝ նշեմ, որ միջնադարն ավարտվում է այն ժամանակ, երբ XVI դարում սկսվում են առաջ քաշվել ազատագրական գաղափարները, ուստի մեզ համար արդիականությունն այստեղից է սկսվում, քանզի մենք այդ ժամանակ գիտակցեցինք, որ հայ ժողովուրդը կարող է լինել պետականություն ունեցող ժողովուրդների թվում՝ որպէս այդ ժողովուրդներին հավասար: Դա նոր՝ արդիական մտածելակերպ էր:

Է. Մինասյան – Ժամանակակից պատմության վերաբերյալ: Նրա սկիզբը համարեցինք 1991 թ., սակայն արցախյան համաժողովրդական պայքարը սկսվում է 1988 թվականին: Երրորդ հանրապետության պատմության մեջ ինչպե՞ս ներառենք:

Ռ. Սաֆրաստյան – Ճիշտն ասած՝ այս խնդրի շուրջ մանրամասնեցված

կարծիք հայտնել չեմ ցանկանում, պարո՛ն Մինասյան, որովհետև այստեղ կան մասնագետներ, որոնք կպատասխանեն նման հարցերի:

Ա. Վիրաբյան – Պարո՛ն Սաֆրաստյան, ժամանակակից փուլը դուք արդիականի մե՞ջ եք մտցնում, թե՞ առանձին՝ չորրորդ փուլ եք համարում:

Ռ. Սաֆրաստյան – Տարբեր մոտեցումներ կան, պարոն Մովսիսյանը երեկ ներկայացրեց մի քանի տեսություններ: Համենայն դեպս, դա պետք է ուսումնասիրել: Իմ կարծիքով, մենք դեռ գտնվում ենք արդիականության դարաշրջանում, սակայն թևակոխել ենք նրա ժամանակակից պատմության շրջանը:

Խոսելով ժամանակակցի ու արդիականի մասին տերմինաբանական տեսանկյունից՝ նշեմ, որ դրանք արևմտյան պատմագիտության մեջ ևս տարբերվում են՝ «modern history» («արդիական պատմություն») և «contemporary history» («ժամանակակից պատմություն»): Դրանք պատմագիտության մեջ ընդունված տերմիններ են, ուստի դրանց օգտագործումը հայերենում ևս հնարավոր է:

Արման Եղիազարյան

պատմական գիտությունների դոկտոր

Սկսենք այն հարցադրումից, թե պետք է արդյոք պատմության պարբերացո՞ւմ, թե՞ ոչ: Հարցադրման հիմքում այն մտավախությունն է, որ ցանկացած պարբերացում եթե լինի միակը և բաղկացած հստակ ընդգծված ժամանակահատվածներից, գուցե ոչ թե նպաստի պատմագիտության զարգացմանը, այլ սահմանափակի դրա հնարավորությունները: Ելնելով պատմագիտության ներկայիս զարգացման դիրքերից՝ կարելի է պնդել, որ պարտադիր չէ ունենալ միայն մեկ՝ պարբերացման այսպես կոչված «պաշտոնական» մոտեցում և յուրաքանչյուր դեպքում հետազոտությունը «տեղադրել» դրա շրջանակներում: Այսքանաբար, հայոց պատմության պարբերացումները կարող են լինել տարբեր տեսանկյուններից (քաղաքական, ընկերային-տնտեսական, մշակութային, քաղաքակրթական և այլն): Դրա հիմամբ մեզանում կձևավորվեն պատմագիտական դպրոցներ՝ համապատասխան տեսամեթոդական մոտեցումներով:

Նշված տրամաբանության մեջ առաջանում է լուրջ խնդիր. հայկական գաղթաշխարհի (IV-XX դարի սկիզբ) և սփյուռքի (Հայոց ցեղասպանությունից հետո մինչև մեր օրերը) պատմության պարբերացումը և հայոց պատմության ընթացքի հետ դա կապելու անհրաժեշտությունից բխող դժվարությունը:

Նախկինում արդեն առաջարկել են պարբերացման մի ձևաչափ¹։ Գաղթաշխարհի՝ որպես ամբողջության պատմությունը կապել Հայաստանի պատմության հետ՝ հաշվի առնելով պարբերացման քաղաքակրթական սկզբունքները։ Նման պարբերացում առաջադրելիս ունեի նաև հույժ էական հակափաստարկ։ 1992 թ. ՀՀ ԳԱԱ-ում տեղի ունեցավ հայոց պատմության պարբերացման խնդիրներին նվիրված գիտաժողով², որտեղ պարբերացման չափանիշները որոշելիս ակադեմիկոս Մ. Զուլայանի առաջարկով գաղթաշխարհի գործոնը բացարձակապես հաշվի չառնվեց։ Նրա մոտեցումը հանգում էր այն բանին, որ հայ ժողովրդի պատմության ընթացքը գաղթաշխարհը չի որոշել, այլ Հայաստանը³։ Հետևաբար ամբողջ այդ հայաշխարհը դուրս մնաց հայոց պատմության պարբերացման տրամաբանությունից։ Փաստորեն կատարվեց ոչ թե հայոց կամ հայ ժողովրդի պատմության պարբերացում, այլ Հայաստանի պատմության պարբերացում⁴։

Փաստորեն այժմ առկա է այդ մեծ բացը՝ կապված հայկական գաղթաշխարհի և սփյուռքի պատմությունը հայոց պատմության պարբերացման մեջ ներառելու հետ։ Առաջին հերթին թե՛ հայոց պատմությունն ընդհանրապես և թե՛ գաղթաշխարհի պատմությունը մասնավորապես ենթարկվում են մեկ միասնական մեծ պարբերացման՝ նախքան Հայոց ցեղասպանությունը և դրանից հետո։ Մյուս կողմից, առկա է մի երևույթ, որը նպաստում է Հայաստանի և գաղթաշխարհի միջև սերտ փոխկապակցվածությամբ պարբերացում կատարելուն։ Խոսքն այստեղ գաղթերի պայմաններում Հայաստանում հայության նվազմանը զուգընթաց գաղթաշխարհի հայության թվաքանակի ավելացման և հընթացս հնուց ի վեր ձևավորված գաղթավայրերում տեղի ունեցող որակական փոփոխությունների մասին է։ Բացի այդ, հայրենիքից նորանոր գաղթական խմբերի հեռանալուն զուգահեռ՝ ավելի հայաշատ դարձող գաղթավայրերն աստիճանաբար և անհրաժեշտաբար սկսում են մտորել Հայաստանի ապագայի վերաբերյալ՝ այդպիսով ազդելով հայրենիքի քաղաքական ճակատագրի վրա։ Նման կապը հնարավոր չէ հաշվի չառնել հայոց պատմությունը պարբերացնելիս։

Իր հերթին պարբերացված չէ նաև գաղթաշխարհի պատմությունը։ Գաղթավայրերի կամ ընդհանուր առմամբ գաղթաշխարհի մասին առկա բոլոր գիտական հետազոտություններում «պարբերացումը» կատարվել է ոչ թե ժամանակագրական, այլ «տարածաշրջանային-գուգահեռ» սկզբունքով, այ-

¹ Տե՛ս **Եղիազարյան Ա.**, Հայ գաղթաշխարհի պատմության պարբերացման փորձ // «Սփյուռքագիտություն», տարեգիրք, Երևան, 2013, էջ 3-28։

² Տե՛ս **Հովհաննիսյան Պ.**, Հայ ժողովրդի պատմության պարբերացման հիմնահարցին նվիրված համաժողով // «ԼՀԳ», 1993, թիվ 4, էջ 148-161։

³ Տե՛ս նույն տեղում, էջ 152։

⁴ Տե՛ս ամփոփիչ պարբերացումը՝ ներկայացված Լ. Խուրշուդյանի կողմից։ Տե՛ս նույն տեղում, էջ 161։

սինքն՝ գաղթաշխարհին ըստ առանձին երկրների գաղթավայրերի պատմության ներկայացնելու դիրքերից: Մինչև վերջերս փորձ չի արվել գաղթաշխարհը որպես մեկ ամբողջություն ներկայացնելու և նրա պատմությունը համապատասխան պարբերացման ենթարկելու ուղղությամբ:

Վերոհիշյալ հոդվածում, որով փորձ էի կատարել լրացնելու այդ բացը, անհրաժեշտաբար պատասխանել եմ մի շարք հարցերի: Դրանցից առաջինը վերաբերում էր գաղթաշխարհի սկզբնավորմանը, որն ավանդաբար կապում են Հայաստանի 387 թ. բաժանման պատճառով տեղի ունեցած գաղթի հետ, մինչդեռ այն տեղի է ունեցել Արևելահայկական թագավորությունից Արևմտահայկական թագավորություն, իսկ որոշ ժամանակ անց գաղթածների մեծ մասը վերադարձել է: Եթե գաղթաշխարհի առաջացման հիմքում դնենք այն հիմնահարցը, թե հատկապես երբ է հայրենիքից դուրս ձևավորվել մեկից ավելի գաղթավայր, ապա պետք է շեշտադրումը կատարենք 368 թ. իրադարձությունների վրա, երբ պարսկական զորքի կողմից բռնագաղթեցված տասնյակ հազարավոր հայեր բնակեցվեցին Պարսկաստանում և Ասորիքում: Այդուհետ մինչև արաբական տիրապետության վերջնական հաստատման ժամանակաշրջանը (VIII դարի սկիզբ) համարել եմ հայկական գաղթաշխարհի ձևավորման փուլ, որն ուղղակիորեն առնչվում է հայոց պատմությանը, քանի որ Հայաստանի հյուծմանը և բնակչության նվազմանը զուգահեռ՝ աճում էր գաղթաշխարհը, և ձևավորվում էին հետագայում իրենց բնակչության երկրներում կամ երկրամասերում կշիռ ձեռք բերող հայկական գաղթավայրերը:

Հաջորդ փուլում՝ VIII-XI դարերում, գաղթաշխարհում տեղի են ունենում երկու զուգահեռ գործընթացներ, որոնք պատմագիտության մեջ խորությամբ ուսումնասիրված չեն: Գաղթերի հետևանքով Հայաստանի հարակից շրջաններում ձևավորվել են ոչ թե պարզ գաղթավայրեր, այլ հայկական պետական միավորներ (իշխանապետություններ), ինչպես նաև տարբեր երկրներում հայության ներկայացուցիչները բազմել են տեղի գահերին: Գործընթացներ, որոնք թե՛ այդ և թե՛ հետագա ժամանակաշրջաններում իրենց ազդեցությունն են թողել Հայաստանի քաղաքական զարգացումների վրա:

Քաղաքակրթության տեսություններում առկա են մոտեցումներ, որոնք առնչվում են քաղաքակրթությունների զարգացման և անկման փուլերին, և որոնցից առաջինի դեպքում քննարկվում է «քաղաքակրթության գրոհը», իսկ երկրորդում՝ «քաղաքակրթության նահանջը»: Այսակի մոտեցումներից առաջինը ցուցանում է զարգացած քաղաքակրթություն կրողների ազդեցությունը շրջապատող՝ համեմատաբար թերզարգացած միջավայրերի վրա, իսկ երկրորդը՝ անկում ապրող քաղաքակրթության վերաբերմունքը շրջապատող՝ համեմատաբար զարգացած քաղաքակրթությունների նկատմամբ: Առաջին դեպքում այն իր տրամաբանությանն է ենթարկում շրջապատը, իսկ երկրորդում՝ ընդունում պաշտպանական կեցվածք՝ վերածվելով կոնսերվացված համակեցական միջավայրի: Գաղթաշխարհի պատմության տրամաբանու-

թյան մեջ Հայաստանի հարակից երկրներում հայերի կուտակումը, որ VIII-XI դարերում հանգեցրել էր հայկական պետականատիպ միավորների (իշխանապետությունների) և ի վերջո նաև Կիլիկիո հայոց թագավորության ստեղծմանը, ցույց է տալիս, որ գործ ունենք հայկական քաղաքակրթության գրոհային տրամաբանության հետ: Նշյալ՝ VIII-XI դարերի պարբերափուլը հստակորեն կապվում է Հայաստանի պատմության զարգացումների հետ, քանի որ այդ հայկական իշխանությունները և Կիլիկիո հայոց թագավորությունը փաստորեն շարունակում էին պետականակերտման այն ավանդույթները, որոնք կային Հայաստանում, իսկ մյուս կողմից երբեմն իրենց վրա էին վերցնում հայրենիքի քաղաքական ճակատագրի պատասխանատվությունը: Արդեն Կիլիկիո հայոց թագավորության կործանումից հետո՝ XV դարում, սկիզբ է առնում քաղաքակրթական նահանջի գործընթացը հայկական գաղթավայրերում, երբ դրանք ընթանում են կոնսերվացման ճանապարհով՝ հիմնականում կենտրոնանալով ազգային ինքնության և արժեքների պահպանության վրա: Հայրենիքում օտար տիրապետությունների ծանրագույն պայմաններում, երբ քաղաքակրթական կյանքն այնտեղ գրեթե կանգ էր առել, հենց գաղթավայրերում է, որ այն պահպանվում է ու նաև զարգացում ապրում:

Հայոց պատմության այն շրջափուլի հետ կապված, երբ հայ իրականության մեջ ի հայտ են գալիս Հայաստանի ազատագրման գաղափարներ և ստեղծվելիք հայկական պետության պետական կարգի մոդելներին նվիրված ծրագրեր, չպետք է մոռանալ, որ նշված գաղափարների և ծրագրերի գերակշիռ մասը ծնվել և սնվել է հայկական արտասահմանում և ուղղորդվել այնտեղից, որով գաղթաշխարհի պատմության այս շրջափուլը ևս հստակորեն կապվում է հայոց պատմության հետ:

Ի վերջո վրա է հասնում ազատագրական շարժման ծաղկունքի շրջանը, երբ XIX դարի երկրորդ կեսին ծնվում են հայկական կուսակցությունները՝ հիմնական թիրախում ունենալով հայրենիքի ազատագրությունը: Դրանցից հիմնականները ստեղծվել են գաղթաշխարհում, մեկը՝ Ժնևում, մյուսը՝ Թիֆլիսում:

Այսպիսով՝ ակնհայտ է, որ հայկական գաղթաշխարհի պատմությունը ոչ թե զարգացել է Հայաստանի պատմությունից առանձին, այլ եղել է նրա բաղկացուցիչ-փոխաձանցյալ մասը, հետևաբար հայոց պատմության պարբերացման տրամաբանության մեջ լիովին և օրինաչափորեն տեղադրելի է:

Հայոց ցեղասպանությունից հետո զգալիորեն դժվարանում է Հայաստանի և հայկական արտասահմանի պատմության ուղեկցումը, բայց կա մի կարևոր երևույթ, որի վրա հարկ է կատարել համապատասխան շեշտադրում: Հայտնի է, որ գաղթաշխարհում ցեղասպանությունից հետո ի հայտ եկավ նոր իրավիճակ, որով հիմնավորվում է հայկական արդի սփյուռքի՝ Հայոց ցեղասպանության հետևանք լինելու իրողությունը: Նոր իրավիճակը բնորոշվում է հետևյալ հենքային փոփոխություններով.

ա) եթե նախկինում գաղթականները հնարավորություն ունեին վերադառնալու հայրենիք, ապա այժմ նրանք զրկվեցին այդ հնարավորությունից, ուստի արտերկրում հայտնված հայության զանգվածները, որոնք 1930-ական թթ. զրկվեցին նաև Խորհրդային Հայաստան տեղափոխվելու հնարավորությունից, աստիճանաբար սկսեցին իրենց ընկալել իբրև հայրենազրկված մեկ ամբողջության՝ սփյուռքի բաղկացուցիչ մաս,

բ) Հայոց ցեղասպանությունից հետո գրեթե քառապատկվեց արտասահմանի հայության թվաքանակը, որը գաղթաշխարհում հանգեցրեց ոչ միայն քանակական, այլև որակական փոփոխությունների՝ ստեղծելով նոր գաղթավայրեր, իսկ նախկիններում էապես փոխելով իրավիճակը,

գ) Հայոց ցեղասպանությունից հետո գրեթե քառապատիկ ընդլայնվեց նաև գաղթաշխարհի աշխարհագրությունը,

դ) Հայոց ցեղասպանությունից հետո տեղի ունեցած զարգացումները հանգեցրին նաև գաղթաշխարհի՝ որպես ամբողջական ու միասնական օրգանիզմ (սփյուռք) հանդես գալուն, քանի որ ի դեմս մի շարք համագաղթավայրային կառույցների ձևավորման՝ ընդհանրական-ամբողջական դիմագիծ հաղորդվեց գաղթաշխարհին, և ներդրվեցին գաղափարական միասնականության և զարգացման ընդհանրական հեռանկարի ընկալումներ գաղթավայրային իրականության մեջ:

Նշվածի հիման վրա կարելի է փաստել, որ ինչպես ներկայիս Հայաստանի Հանրապետությունը՝ իր սահմաններով, բնակչությամբ և ներուժով, այնպես էլ հայկական արդի սփյուռքը իրենց վրա կրում են Հայոց ցեղասպանության հետևանքները:

Երբ Խորհրդային Հայաստանն իր կապերը խզեց սփյուռքի այն հատվածի հետ, որին համարում էր հետադիմական (խոսքը ՀՅԴ-ի մասին է), նրա այդ քայլն այնտեղ առաջ բերեց կարևոր իրողություններ: Սոցիալ-դեմոկրատ հնչակյան և Ռամկավար-ազատական կուսակցությունները Խորհրդային Հայաստանի հետ սերտ կապերի պայմաններում (արտասահմանյան ՀՕԿ-երի և այլ միջոցներով) խորությամբ չանդրադարձան իրենց տեղական կազմակերպական միջավայրերի ձևավորմանը մինչև 1930-ական թթ., փոխարենը ՀՅԴ-ն անմիջապես անցավ սեփական ներազգային կենսագործունեության միջավայրի ձևավորման աշխատանքներին, որի ընթացքում ծնվեց «սփյուռքյան/անհայրենիք պետության»՝ «Հոգևոր Հայաստանի» գաղափարը: Սփյուռքում անհող կամ անհայրենիք պետության գաղափարի ծնունդը թվագրվում է 1923-1924 թվականներով, այսինքն հայրենիքի հետ կապերի սահմանափակման պայմաններում սփյուռքի որոշ շրջանակներ, դրանից ազդվելով, դիմում են մասնակի ինքնակազմակերպման գործընթացի: Այդպես կվարվեն նաև նշված երկու կուսակցությունները և Հայկական բարեգործական ընդհանուր միությունը, երբ Խորհրդային Հայաստանի հետ կիսգլխի հարաբերություններն արդեն 1930-ական թթ.: Դրան կհաջորդի մեծ հայրենադարձության փուլը (1946-1949 թթ.), երբ սփյուռքի որոշ համայնքներ

րի թուլացման հաշվին ավելանում էր Խորհրդային Հայաստանի ազգաբնակչությունը:

1965 թ. Հայաստանի ազգային մեծ վերելքը սփյուռքում նպաստեց ազգային մտքի վերելքին, իսկ վերջինիս հետևանքով առաջացան քաղաքական և ռազմաքաղաքական բնույթի շարժումներ, ակտիվացավ սփյուռքահայ կյանքը, և սերտացան կապերը հայրենիքի հետ:

Ի վերջո, 1991 թվականից Հայաստանից տեղի ունեցող արտագաղթի պայմաններում սփյուռքյան որոշ համայնքներ ոչ միայն թարմանում են, այլ զորանում: Մյուս կողմից, Արցախյան ազատամարտին սփյուռքի մասնակցության, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության հասարակական-քաղաքական կյանքին սփյուռքահայ կազմակերպությունների ինտեգրման, ՀՀ-ի կողմից սփյուռքի նկատմամբ պետական քաղաքականության որդեգրման պայմաններում հայրենիք-սփյուռք հարաբերություններն այնքան սերտացան, որ հայոց նորագույն պատմության պարբերացումը ևս օրինաչափորեն ընդգրկելու է նաև սփյուռքի պատմության հենքային շրջափուլերը:

Ըստ էության, այն մոտեցումները, որ ներկայացվեցին, փորձ էին գաղթաշխարհի և արդի սփյուռքի պատմության պարբերափուլերն ընդգրկելու հայոց պատմության համատեքստում, որի անհրաժեշտությունը կա: Ուստի հարկ է իրականացնել հայ ժողովրդի պատմության (ոչ թե միայն Հայաստանի պատմության) պարբերացում՝ համապատասխան չափորոշիչների ընտրությամբ:

Արտակ Մովսիսյան

պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Հայոց պատմության հնագույն և հին շրջանների պարբերացման մասին ցանկանում եմ մի քանի դիտարկում ներկայացնել: Բնականաբար կողմ եմ համադրական մոտեցմանը և՛ քաղաքակրթական, և՛ սոցիալ-տնտեսական առումներով, նաև կարևորում եմ աղբյուրագիտական գործոնը, որի մասին այսօր, չգիտես ինչու, գրեթե չի բարձրաձայնվում: Ի վերջո, մենք՝ պատմաբաններս, առանց աղբյուրագիտության չենք կարող առաջ գնալ:

Միջնադարին նախորդող ժամանակաշրջանը, կարծում եմ, կարելի է երեք մեծ դարաշրջանների բաժանել: Առաջինը, սովորաբար, ընդունված է կոչել «նախնադար», «նախապատմություն»: Անկեղծ ասած՝ այդ եզրույթն ինձ այնքան էլ դուր չի գալիս. «նախապատմություն», «նախնադար»-ից ես ավելի կնախընտրեի «վաղնջական պատմություն» եզրը: Մենք հայերենի համար, սկսած Գևորգ Զահուկյանից, գործածում ենք «վաղնջական հայերեն», «հնագույն հայերեն», «հին հայերեն» եզրերը, այսինքն՝ դա նաև փորձարկված

եզրաբանություն է, որը շատ գեղեցիկ է հնչում:

«Վաղնջական Հայաստանին» կհաջորդի «Հնագույն Հայաստանը», ապա՝ «Հին Հայաստանը»: Ընդ որում, ես ցանկանում եմ (Պ. Ավետիսյանի հետ մասամբ համաձայնվելով, մասամբ՝ ոչ, քիչ անց կնշեմ, թե որ կետում չհամաձայնվելով) իմ դիտարկումների շեշտը դնել աղբյուրագիտական հենքի վրա: Առաջին՝ վաղնջական պատմության շրջանը, իհարկե, ունի հնագիտական-աղբյուրագիտական հիմք: Կարծում եմ, որ «վաղնջական շրջանը» կարելի է բաժանել երկու մեծ դարաշրջանների. մեկը՝ իսկապես նախնադար՝ իր վաղ և միջին քարեդարյան փուլերով, երկրորդը (լիովին համաձայն եմ Պ. Ավետիսյանի հետ) «վաղ երկրագործական մշակույթ»՝ Ք. ա. XI հազարամյակից IV հազարամյակի կեսերը, այսինքն՝ մինչև Ք. ա. XXXV դարը, հնագիտական պարբերացմամբ՝ մինչև վաղ բրոնզի դարը: Մի կետում այստեղ հնագետների մոտ ևս տարակարծություն կա: Վաղ բրոնզի դարը՝ Ք. ա. XXXV-XXIV դարերը, Պ. Ավետիսյանը «կոմպլեքսային հասարակություն» բնորոշելու կողմնակից է, իսկ մեր հնագետներից, օրինակ, Հակոբ Միմոնյանը և Արտակ Գնունին իրենց հրապարակումներում «վաղ պետականության» ժամանակաշրջան են կոչում: Երբ դիտարկում ենք աղբյուրագիտական տեսանկյունից, գրավոր աղբյուրներում ունենք հաղորդումներ Հայաստանում Ք. ա. XXVIII-XXVI դարերի վաղ պետականությունների մասին: Այսինքն՝ իրավացի են վաղ բրոնզի դարում վաղ պետականություն տեսնողները: Այս առումով «Հնագույն Հայաստանը», կարծում եմ, կարելի է համապատասխանեցնել համաշխարհային պատմության «Հին Արևելքի» պատմաշրջանի հետ, որը սկսվում է Եգիպտոսում և Միջագետքում վաղ պետական կազմավորումներով և (այստեղ ևս աղբյուրագիտական գործոնով արդարացված) Ք. ա. IV հազարամյակից հասցվում է մինչև Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքները՝ հելլենիզմի դարաշրջանը: Մեր դեպքում «Հնագույն Հայաստանը» ամբողջությամբ կարող է համապատասխանել «Հին Արևելքին»՝ իր ենթափուլերի բաժանումով: Ի դեպ, ինչպես «Հին Արևելքի», այնպես էլ «Հնագույն Հայաստանի» ուսումնասիրության աղբյուրագիտական հիմքը հիմնականում սեպագիր և հիերոգլիֆ սկզբնաղբյուրներն են:

Ք. ա. III-II հազարամյակների գրավոր աղբյուրներով վերականգնվող պատկերը թույլ է տալիս այն համարել մեր պատմության վաղ պետականությունների դարաշրջան, որը «Հնագույն Հայաստանի» առաջին փուլն է: Եթե հնագետները հետագա ուսումնասիրություններում հանգեն փոխհամաձայնության, որ վաղ բրոնզի դարում «կոմպլեքսային հասարակության» փոխարեն կարելի է տեսնել վաղ պետականություններ, և վաղ բրոնզի դարի սկիզբը՝ Ք. ա. XXXV դարը, դնեն սկզբնագիծ, ապա առաջին փուլը կարելի է համարել Ք. ա. XXXV դարից մինչև Ք. ա. I հազարամյակի սկիզբը, մինչև Վանի (Բիայնիլի, Ուրարտու, Արարատ) թագավորություն, այսինքն՝ մինչև առաջին համահայկական միասնական թագավորություն:

«Հնագույն Հայաստանի» երկրորդ փուլը միասնական համահայկական

պետականությունների դարաշրջանն է, որն ընդգրկում է Վանի (Բիայնիլի, Ուրարտու, Արարատ) թագավորությունը, այնուհետև՝ Հայկագուն-Երվանդականների միասնական պետությունը, որը Ք. ա. 521 թ. նվաճվում է Աքեմենյանների կողմից՝ վերածվելով տերության XIII սատրապության (մինչև Ք. ա. 331 թ.): Սրանով «Հնագույն Հայաստան» ավարտվում է, և «Հին Հայաստանը» սկսում է Մակեդոնական արշավանքների ժամանակ Հայաստանի անկախացումով:

Այս սահմանագծից առաջ և հետո, հետաքրքիր է, որ ունենք նաև որակական տարբերություն: Եթե «Հնագույն Հայաստանի» երկրորդ փուլում ունենք միասնական մեկ ընդհանուր Հայաստան, ապա դրանից հետո այլևս մենք չունեցանք միասնական մեկ Հայաստան, և «Հին Հայաստանում» արդեն մենք ունենք մեկից ավելի հայկական թագավորություններ՝ Ք. ա. 331 թվականից մինչև քրիստոնեության պետական կրոն հռչակումը: Սկզբնաղբյուրներն այստեղ գերազանցապես հունա-հռոմեական են:

Այս ժամանակաշրջանը, բնականաբար, իր հերթին կարելի է բաժանել փուլերի.

- 1) Ք. ա. 331 թվականից մինչև 201 թվականը՝ Մեծ և Փոքր Հայքերի թագավորություններ,
- 2) Ք. ա. II-I դարեր. սա Մեծ Հայքի Արտաշեսյան և կրտսեր թագավորությունների շրջանն է,
- 3) Ք. ծ. I-III դարեր՝ մինչև քրիստոնեության պետական կրոն հռչակումը: Այստեղ ունենք Մեծ Հայքի թագավորության քաղաքական անկախությունը I դարի առաջին կեսին, Փոքր Հայքի և Կոմմագենեի կիսանկախ վիճակը մինչև 72 թվականը, երբ Հռոմի Վեսպասիանոս կայսրը վերացրեց այդ կիսանկախ թագավորությունները: Եվ, իհարկե, այստեղ հիմնականում պետք է կենտրոնանք Մեծ Հայքի Արշակունյաց թագավորության վրա (մինչև քրիստոնեության պետական կրոն հռչակումը):

Ահա այսպիսի պարբերացում և ենթապարբերացումային ժամանակագրական աղյուսակ եմ ես տեսնում, որը կուզենայի ներկայացնել քննարկման՝

- ա) «Վաղնջական Հայաստան» – սկզբից մինչև Ք. ա. XXXV դար,
- բ) «Հնագույն Հայաստան» – Ք. ա. XXXV դարից մինչև Ք. ա. 331 թ.,
- գ) «Հին Հայաստան» – Ք. ա. 331 թ. մինչև Ք. ծ. 201 թվական:

Երեք պատմաշրջաններն իրենց հերթին ունեն ենթաբաժանումներ, որոնք ներկայացրեցինք մեր խոսքում:

Մեծարգո՝ համանախագահողներ, հարգելի՛ գործընկերներ, նախ շնորհակալություն պետք է հայտնել բոլոր զեկուցողներին և ելույթ ունեցողներին, ովքեր համարձակորեն առաջ քաշեցին և հիմնավորեցին իրենց տեսակետները: Հատկապես կցանկանայի շնորհակալություն հայտնել պարոն Վ. Թունյանին, ով, կարծում եմ, շատ ճիշտ հարցադրում արեց: Ի վերջո, ինչո՞ւ ենք քննարկում Հայոց պատմության պարբերացման խնդիրները. որպեսզի շարադրվի պատմությունը և ներկայացվի հասարակությանը: Այսօր սեղանի վրա են դրված Հայոց պատմության դպրոցական դասագրքերը, որոնց երկու գլխավոր խմբագիրներն են պարոնայք Ա. Միմոնյանը և Ա. Մելքոնյանը: Նաև հրատարակվել են Հայոց պատմության ակադեմիական բազմահատորյակի հինգ գրքերը, շուտով կհրատարակվի վեցերորդը, որոնք ընդգրկում են պատմական մի մեծ ժամանակաշրջան: Դրանց հեղինակներն են մեր հանրապետության առաջատար մասնագետները: Հարկ է նշել, որ հատորներում շատ հստակ ներկայացված է Հայոց պատմության միջին, նոր և նորագույն ժամանակաշրջանի պատմության պարբերացումը՝ նկատի ունենալով նաև համաշխարհային պատմության պարբերացումը, և ես մինչ օրս չեմ լսել, որ որևէ սկզբունքային առարկություններ լինեն:

Մյուս կողմից, նման քննարկումներն իրոք անհրաժեշտ են և օգտակար: Խորապես համոզված եմ, որ, իհարկե, մենք պետք է հենվենք մեր ժողովրդի պատմության վրա և ըստ այդմ առաջնորդվենք: Որովհետև, այո՛, մենք համաշխարհային քաղաքակրթության մասն ենք, բայց, այստեղ շատերը ճիշտ նշեցին, մեր պատմությունը իր յուրահատկություններն ունի, որոնք բարի պետք է լինենք հաշվի առնել: Ես միանշանակ համաձայն եմ այն ելույթ ունեցողների հետ, ովքեր արտահայտեցին այն միտքը, որ պետականության փուլերը պետք է պարբերացման հիմքում լինեն, առավել ևս որ նորագույն շրջանում մենք այստեղ խնդիր չունենք, և երկրորդը, կարծում եմ՝ միջին և նոր շրջաններում նաև հիմքում պետք է լինի հայ ազգային-ազատագրական գաղափարախոսությունը՝ մինչև պայքար և պետականություն: Այստեղ պարոն Վիրաբյանը ևս այդ մասին նշեց, մենք պարոն Սաֆրաստյանի հետ ևս խոսել ենք, ես ինքս վերջնականապես կողմնորոշված չեմ, բայց կարծում եմ՝ կարող ենք պարբերացման հիմքում ազգային-ազատագրական ամբողջ փուլը վերցնել՝ գաղափարախոսության առաջացումից մինչև գործնական՝ ազգային-ազատագրական պայքար, ապստամբական շարժումներ և այլն:

Առավել կարևորում եմ (նաև պարոնայք Մովսիսյանը և Ավետիսյանը այստեղ այդ մասին խոսեցին) մեր պատմության հնագույն և հին շրջանի պարբերացման խնդրի քննարկումները: Գիտեք, որ Հայոց պատմության առաջին հատորի երկու գրքերը դեռ լույս չեն տեսել, և ահա այստեղ է, որ ներկա քննարկումները իրոք կունենան, կարծում եմ, գործնական նշանա-

կություն: Մենք միասին, բոլորիս ջանքերով պետք է առաջին հատորը դնենք սեղանին, որովհետև դա պատվի հարց է, մենք հապաղելու տեղ չունենք:

Վերջում անդրադառնամ այն խնդրին, որից այսօր սկսեց պարոն Միմոնյանը, կիսում եմ նրա մտավախությունները: Այո՛, մենք պետք է տեր կանգնենք մեր պատմությանը, մեր մասնագիտությանը՝ պատմագիտությանը: Վերջին շրջանում մեր պատմության կարևոր դրվագներին, հայազգի պատմական նշանավոր գործիչներին հրապարակայնորեն անդրադառնում են ով ասես՝ լուրջ կեցվածքով և հաստատական իրենց տեսակետներում: Այսօր շատ մոդայիկ է դարձել հատկապես Հայոց նորագույն ժամանակաշրջանի պատմության և անհատների մասին խոսելը: Ամբողջ զավեշտը այն է, որ այդ մարդիկ ո՛չ հայոց պատմության ակադեմիական հատորյակներին են ծանոթ, ո՛չ մասնագետ պատմաբանների աշխատություններին և այլն և նույնիսկ չեն ցանկանում այդ մասին լսել: Նրանք ոչ մի առարկություն չեն ընդունում, իրենց մոտեցումները, անգամ հիմնավորված փաստերի ներքո, չեն փոխում: Ամեն ինչ մերժում են, ինչ ասում ես՝ ասում են այդպես չէ, այլ այսպես է: Հասկանո՞ւմ եք՝ «որակական աճ է» արձանագրվել, եթե նախկինում շարքային քաղաքացիներ փորձում էին ակադեմիական շրջանակներում հիմնավորել իրենց սին տեսակետները մեր պատմության հնագույն ժամանակաշրջանի վերաբերյալ, ապա այսօր արդեն գիտական այլ ոլորտների՝ շատ դեպքերում հարգված մասնագետներ՝ գիտության թեկնածուներ, դոկտորներ թողել են իրենց բուն մասնագիտական պարտականությունները և դարձել «խորագիտակ պատմաբաններ»: Ամենուր նրանք են՝ մամուլ, ռադիո, հեռուստատեսություն, արտասահմանյան գրանտներով «խորը պատմագիտական ուսումնասիրություններ» և այլն: Նրանք շատ դեպքերում կեղծում են պատմության ինչ-ինչ դրվագներ, ամեն ինչ ներկայացնում միակողմանի, բացառապես սև գույներով և դրանով, կներեք, ջուր լցնում մեր հակառակորդների ջրաղացին: Օրինակ, սևացնում, ազգի դավաճան են ներկայացվում հայազգի այն գործիչները, որոնց վարկաբեկելով՝ օր ու գիշեր զբաղված են մեր հակառակորդները: Բոլորդ գիտեք այդ անունները: Դա անընդունելի է, դատապարտելի, և մենք՝ պատմաբաններս, այստեղ դեռևս շատ անելիքներ ունենք և պետք է հետևողական ու ակտիվ լինենք:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ազատյան Արա	ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի հայցորդ (arazatyan@mail.ru)
Ավետիսյան Պավել	ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր
Բայբուրդյան Վահան	ԵՊՀ միջազգային հարաբերությունների և դիվա- նագիտության ամբիոնի պրոֆեսոր, պատմական գիտությունների դոկտոր (vbayburdyan1933@gmail.com)
Գրեկյան Երվանդ	Խ. Աբովյանի անվան Հայկական պետական ման- կավարժական համալսարանի համաշխարհային պատմության և մեթոդիկայի ամբիոնի դոցենտ, պատմական գիտությունների դոկտոր (ervandgr@yahoo.com)
Եղիազարյան Արման	ԵՊՀ սփյուռքագիտության ամբիոնի վարիչ, պատ- մական գիտությունների դոկտոր (armyegh@yahoo.com)
Զոհրաբյան Ելենա	ԵՊՀ ՀՀԻ ավագ լաբորանտ (elenazohrabyan@gmail.com)
Թադևոսյան Հասմիկ	ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի գիտաշխատող, բա- նասիրական գիտությունների թեկնածու (hasrm79@mail.ru)
Թունյան Վալերի	Ռուսաստանի տուրիզմի և սերվիսի պետական համալսարանի Երևանի մասնաճյուղի պրոֆեսոր, պատմական գիտությունների դոկտոր (tunyanvalery@rambler.ru)
Խաչատրյան Ասյա	ԵՊՀ միջազգային հարաբերությունների դիվանա- գիտական ծառայության և մասնագիտական հա- ղորդակցման ամբիոնի դասախոս (asyakhachatryan@gmail.com)
Խաչատրյան Կարեն	ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի փոխտնօրեն, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (history@sci.am)

Խորհիկյան Հովհաննես	ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ (hovhkhhor78@mail.ru)
Կոնինյան Մանե	ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ լաբորանտ (koninyan.mane@yandex.ru)
Հայրապետյան Կարեն	ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնի դասախոս, պատմական գիտությունների թեկնածու (k.hayr58@rambler.ru)
Հայրունի Աշոտ	ԵՊՀ ՀՀԻ առաջատար գիտաշխատող, ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի պրոֆեսոր, պատմական գիտությունների դոկտոր (ahayruni@yahoo.de)
Հարությունյան Ավետիս	Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի հայոց պատմության ամբիոնի դոցենտ, պատմական գիտությունների թեկնածու (avharutunyan@mail.ru)
Մարգարյան Երվանդ	Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի համաշխարհային պատմության և արտասահմանյան տարածաշրջանային ուսումնասիրությունների ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (margar.erv@mail.ru)
Մելքոնյան Աշոտ	ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (ashamelk@yahoo.com)
Մովսիսյան Արտակ	ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (movsart@mail.ru)
Մովսիսյան Ֆելիքս	Վանաձորի պետական համալսարանի պատմության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (felmov@mail.ru)
Շահնազարյան Արտաշես	ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի միջին դարերի պատմության բաժնի վարիչ, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ
Պետրոսյան Գեղամ	ԵՊՀ միջազգային հարաբերությունների ֆակուլտետի դեկան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (gegham.petrosyan@ysu.am)
Սարգսյան Համլետ	ԵՊՀ ՀՀԻ Բ. Հարությունյանի անվան Հայաստանի պատմական աշխարհագրության և քարտեզագրության լաբորատորիայի ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու (hsargsyan46@mail.ru)

Սարիբեկյան Էյա	Մաշտոցի անվան Մատենադարանի ավագ գիտաշխատող, պատմական գիտությունների թեկնածու (elenmagistros@yahoo.com)
Սաֆրաստյան Ռուբեն	ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (ruben.safrastyan@fulbrightmail.org)
Սիմոնյան Արամ	ԵՊՀ ռեկտոր, ԵՊՀ ՀՀԻ տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր (rector@ysu.am)
Սիմոնյան Լևոն	Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի հայոց պատմության ամբիոնի դոցենտ, պատմական գիտությունների թեկնածու
Վիրաբյան Ամատունի	ՀՀ Ազգային արխիվի տնօրեն, պատմական գիտությունների դոկտոր (amatun@yahoo.com)
Քոսյան Լիլիթ	ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի կրտսեր գիտաշխատող (l.qosyan@gmail.com)

СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ

Аветисян Павел	Директор института археологии и этнографии НАН РА, член-корреспондент НАН РА, доктор исторических наук
Азатян Ара	Соискатель Института истории НАН Армении (arazatyan@mail.ru)
Айрапетян Карен	Преподаватель кафедры истории армянского народа ЕГУ, кандидат исторических наук (k.hayr58@ Rambler.ru)
Айруни Ашот	Профессор кафедры истории армянского народа ЕГУ, ведущий научный сотрудник Института арменоведческих исследований ЕГУ, доктор исторических наук (ashot.hayruni@ysu.am)
Арутюнян Аветис	Доцент кафедры истории армянского народа Армянского государственного педагогического университета имени Х. Абовяна, кандидат исторических наук (avharutunyan@mail.ru)
Байбурдян Ваган	Профессор кафедры международных отношений и дипломатии ЕГУ, доктор исторических наук (vbayburdyan1933@gmail.com)
Вирабян Аматуни	Директор Национального архива РА, доктор исторических наук (amatun@yahoo.com)
Грекян Ерванд	Доцент кафедры всемирной истории и методики Армянского государственного педагогического университета имени Х. Абовяна, доктор исторических наук (ervandgr@yahoo.com)
Егиазарян Арман	Заведующий кафедрой диаспороведения ЕГУ, доктор исторических наук (armyegh@yahoo.com)
Зограбян Елена	Старший лаборант Института арменоведческих исследований ЕГУ (elenazohrabyan@gmail.com)
Конинян Мане	Лаборант Института истории НАН Армении (koninyan.mane@yandex.ru)
Косян Лилит	Младший научный сотрудник Института истории НАН РА (l.qosyan@gmail.com)
Маргарян Ерванд	Заведующий кафедрой всемирной истории и зарубежного регионоведения Российско-Армянского (Славянского) университета, доктор исторических наук, профессор (margar.erv@mail.ru)
Мелконян Ашот	Директор Института истории НАН РА, академик НАН РА, доктор исторических наук, профессор (ashamelk@yahoo.com)

Мовсисян Артак	Заведующий кафедрой истории армянского народа ЕГУ, доктор исторических наук, профессор (movsart@mail.ru)
Мовсисян Феликс	Заведующий кафедрой истории Ванадзорского государственного университета, доктор исторических наук, профессор (felmov@mail.ru)
Петросян Гегам	Декан факультета международных отношений ЕГУ, доктор исторических наук, профессор (gegham.petrosyan@ysu.am)
Сарибекян Эля	Старшая научная сотрудница Матенадарана имени Маштоца, кандидат исторических наук (elenmagistros@yahoo.com)
Саркисян Гамлет	Старший научный сотрудник лаборатории исторической географии и картографии имени Б. Арутюняна Института арменоведческих исследований ЕГУ, кандидат исторических наук (hsargsyan46@mail.ru)
Сафрастян Рубен	Директор Института востоковедения НАН РА, академик НАН РА, доктор исторических наук, профессор (ruben.safrastyan@fulbrightmail.org)
Симонян Арам	Ректор ЕГУ, директор Института арменоведческих исследований ЕГУ, член-корреспондент НАН РА, доктор исторических наук, профессор (rector@ysu.am)
Симонян Левон	Доцент кафедры истории армянского народа Армянского государственного педагогического университета имени Х. Абовяна, кандидат исторических наук
Тадевосян Асмик	Научный сотрудник Института языка НАН Армении, кандидат филологических наук (hasrm79@mail.ru)
Тунян Валерий	Профессор Ереванского филиала Российского государственного университета туризма и сервиса, доктор исторических наук (tunyanvalery@rambler.ru)
Хачатрян Ася	Преподаватель кафедры дипломатической службы и коммуникации ЕГУ (asyakhachatryan@gmail.com)
Хачатрян Карен	Заместитель директора Института истории НАН РА, доктор исторических наук, профессор (history@sci.am)
Хорикян Оганнес	Ведущий научный сотрудник Института востоковедения НАН Армении, кандидат исторических наук, доцент (hovhkhoh78@mail.ru)
Шахназарян Арташес	Заведующий отделом истории средних веков Института истории НАН РА, кандидат исторических наук, доцент

INFORMATION ABOUT THE AUTHORS

Avetisyan Pavel	Corresponding Member of NAS RA, Director of the Institute of Archeology and Ethnography of NAS RA, Doctor of History
Azatyan Ara	PhD student at the Institute of History of NAS RA (arazatyan@mail.ru)
Bayburdyan Vahan	Doctor of Historical Sciences, Professor at the Chair of International Relations and Diplomacy of YSU (vbayburdyan1933@gmail.com)
Grekyan Ervand	PhD in History, Associate Professor at the Chair of Universal History and Methodology of Armenian State Pedagogical University after Kh. Abovyan (ervandgr@yahoo.com)
Harutunyan Avetis	Professor at the Chair of History of Armenia of Armenian State Pedagogical University after Kh. Abovyan, PhD in History (avharutunyan@mail.ru)
Hayrapetyan Karen	PhD in History, Lecturer at the Chair of Armenian History of YSU (k.hayr58@rambler.ru)
Hayruni Ashot	Doctor of Historical Sciences, Senior Researcher at the Institute for Armenian Studies of YSU, Professor at the Chair of Armenian History of YSU (ashot.hayruni@ysu.am)
Khachatryan Asya	Lecturer at the Chair of Diplomatic Service and Communication, YSU (asyakhachatryan@gmail.com)
Khachatryan Karen	Deputy Director of the Institute of History of NAS RA, Doctor of History, Professor (history@sci.am)
Khorikyan Hovhannes	PhD in History, Associate professor, Leading Researcher at the Institute of Oriental Studies of the National Academy of Sciences of Armenia (hovhkhori78@mail.ru)
Koninyan Mane	Senior Laboratory Assistant at the Institute of History of NAS RA (koninyan.mane@yandex.ru)
Margaryan Ervand	Head of the Department of World History and Area Studies at the Armenian-Russian (Slavonic) University, Doctor of History, Professor (margar.erv@mail.ru)
Melkonyan Ashot	Full Member of the NAS RA, Director of the Institute of History of NAS RA, Doctor of History, Professor (ashamelk@yahoo.com)
Movsisyan Artak	Head of Chair of the History of Armenia of YSU, Doctor of History, Professor (movsart@mail.ru)
Movsisyan Felix	Head of the Chair of History of Vanadzor State University, Doctor of History, Professor (felmov@mail.ru)

Petrosyan Gegham	Dean of the Faculty of International Relations of YSU, Doctor of History, Professor (gegham.petrosyan@ysu.am)
Qosyan Lilit	Junior Researcher at the Institute of History of NAS RA (l.qosyan@gmail.com)
Sargsyan Hamlet	PhD in History, Senior Researcher at the Laboratory of Historical Geography and Cartography of Armenia after B. Harutyunyan of the Institute for Armenian Studies of YSU (hsargsyan46@mail.ru)
Saribekyan Elen	PhD in History, Senior researcher at the Matenadaran after Mashtots (elenmagistros@yahoo.com)
Safrastyan Ruben	Full Member of the NAS RA, Director of the Institute of Oriental Studies of NAS RA, Doctor of History, Professor (ruben.safrastyan@fulbrightmail.org)
Simonyan Aram	Rector of YSU, Director of the Institute for Armenian Studies of YSU, Corresponding Member of the NAS RA, Doctor of History, Professor (rector@ysu.am)
Simonyan Levon	PhD in History, Associate Professor at the Chair of History of Armenia of Armenian State Pedagogical University after Kh. Abovyan
Shahnazaryan Artashes	PhD in History, Head of the Department of History of Middle Ages at the Institute of History of the NAS RA, Associate Professor
Tadevosyan Hasmik	PhD, Researcher at the Institute of Language of the National Academy of Sciences (hasrm79@mail.ru)
Tunyan Valery	Professor at the Yerevan branch of Russian State University of Tourism and Service, Doctor of History (tunyanvalery@rambler.ru)
Virabyan Amatuni	Director of the National Archive of RA, Doctor of History (amatun@yahoo.com)
Yeghiazaryan Arman	Head of the Chair of Diaspora of YSU, Doctor of History (armyegh@yahoo.com)
Zohrabyan Elena	Senior laboratory assistant at IAS of YSU (elenazohrabyan@gmail.com)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀՈԴՎԱԾՆԵՐ

Համլետ Սարգսյան

Բաքվի նահանգի էթնոժողովրդագրական գործընթացները
1859-1916 թթ.....3

Լիլիթ Քոսյան

Գերմանական միսիոներների որբախնամ գործունեությունը
XIX դարի երկրորդ կեսին31

Ավետիս Հարությունյան, Լևոն Միմոնյան

Հայ-քրդական հողային վեճերը Վանի նահանգում 1908-1914 թթ. և
իշխանությունների դիրքորոշումը42

Մանե Կոնինյան

1918 թ. Օսմանյան կայսրությունում Հայոց ցեղասպանության
քննարկումների շուրջ57

Աշոտ Հայրունի

«Հայաստանի օգնության գերմանական միությունը»
և նրա հայանվեր գործունեությունը (գերմաներեն)66

Գեղամ Պետրոսյան

Անդրկովկասի արտաքին քաղաքական դրությունը Բաթումի
դիվանագիտական բանակցության նախօրեին (1918 թ. ապրիլ)90

Արա Ազատյան

1920 թ. օգոստոսի 10-ի հայ-ռուսական համաձայնագրի
գնահատականը հայ պատմագրության մեջ97

Կարեն Հայրապետյան

Արևմտահայ փախստականների տեղավորման քաղաքականությունը
նորաստեղծ Հայաստանի առաջին Հանրապետությունում112

Ելենա Զոհրաբյան

Ապրիլյան պատերազմի լուսաբանումը միջազգային
լրատվամիջոցներում122

Հասմիկ Թադևոսյան

Կազմախոսական նորաստեղծ տերմինները XII դարի
բժշկարաններում (Մխիթար Հերացի, Աբուսայիդ)132

Ասյա Խաչատրյան

Առաձների և ասացվածքների սերվանտեյան «խմբագրումները»
քնագրում և դրանց հայերեն թարգմանությունները142

ԲԱՆԱՎԵՃ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Հովհաննես Խորիկյան

Ալեքսանդր Մակեդոնացին և Հայաստանը 154

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Երվանդ Գրեկյան

Հ. Ավետիսյան, Ա. Գնունի, Ա. Բոբոխյան, Գ. Սարգսյան, Բրոնզ –
երկաթեդարյան Սյունիքի սրբազան լանդշաֆտը 161

Արտաշես Շահնազարյան

Բաբկեն Հարությունյան, Հայոց արևելից կողմերի և Աղվանքի
պատմության ու պատմական աշխարհագրության հարցեր 164

Էլյա Սարիբեկյան

Կարինե Մելիքյան, Հայոց եկեղեցու դիրքն Ընդհանրական
քրիստոնեական եկեղեցու համակարգում IV-VI դարի I կեսին 167

Վալերի Թունյան

Գյունթեր Լևի, Հայկական հարցը Օսմանյան կայսրությունում.
առասպելներ և իրականություն (ռուսերեն) 172

Վահան Բայբուրդյան

Զասթին Մաքարթի, Թուրքերը և հայերը: Ազգայնամոլությունը և
հակամարտությունը Օսմանյան կայսրությունում 186

ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ

Հայոց պատմության նոր պարբերացման խնդիրները 194

Տեղեկություններ հեղինակների մասին 240

СОДЕРЖАНИЕ

СТАТЬИ

Гамлет Саркисян	
Этнодемографические процессы населения Бакинской губернии в 1859-1916 гг.	3
Лилит Косян	
Деятельность немецких миссионеров по уходу за сиротами во второй половине XIX века.	31
Аветис Арутюнян, Левон Симонян	
Армяно-курдские земельные споры в Ванской губернии в 1908-1914 гг. и позиция властей.	42
Мане Конинян	
К вопросу об обсуждениях Геноцида армян, развернувшихся в Османской империи в 1918 г.	57
Ашот Айруни	
Немецкий союз помощи Армении и его армянофильская деятельность (на немецком языке).	66
Гегам Петросян	
Внешнеполитическая ситуация в Закавказье в преддверии батумских дипломатических переговоров (апрель 1918 г.)	90
Ара Азатян	
Оценка армяно-российского соглашения 10 августа 1920 г. в армянской историографии	97
Карен Айрапетян	
Политика устройства западноармянских беженцев во вновь образованной Первой Республике Армения (1918-1920 гг.)	112
Елена Зограбян	
Освещение апрельских событий в международных СМИ.	122
Асмик Тадевосян	
Новые анатомические термины в лечебниках XII века (Мхитар Гераци, Абусаид).	132
Ася Хачатрян	
Сервантесовские «редактирования» пословиц и поговорок в подлиннике и их армянские переводы.	142

ДИСКУССИЯ И ОБСУЖДЕНИЕ

Оганнес Хорикян	
Александр Македонский и Армения	154

РЕЦЕНЗИИ

Ерванд Грекян

Г. Аветисян, А. Гнуни, А. Бобохян, Г. Саргсян, Сакральный ландшафт
Сюника эпохи бронзы и железа 161

Арташес Шахназарян

Бабкен Арутюнян, Вопросы истории и исторической географии
восточных регионов Армении и Агванка..... 164

Эля Сарибекян

Карине Меликян, Статус армянской церкви во вселенском
христианском церковном мире в IV-первой половине VI вв. 167

Валерий Тунян

Гюнтер Леви, Армянский вопрос в Османской империи: мифы и
реальность (на русском языке) 172

Ваган Байбурдян

Джастин Маккарти, Турки и армяне. Национализм и конфликт в
Османской империи 186

НАУЧНАЯ ЖИЗНЬ

Новые задачи периодизации армянской истории..... 194

Сведения об авторах 240

COTENTS

ARTICLES

Hamlet Sargsyan	
The Ethno-Demographic Processes in Baku Province from 1859 to 1916.....	3
Lilit Kosyan	
Activities of German Missionaries for the Care of Orphans in the Second half of the XIX Century	31
Avetis Harutyunyan, Levon Simonyan	
Armenian-Kurdish Land Disputes in Van Province in 1908-1914 and the Position of the Authorities	42
Mane Koninyan	
On the Discussions over the Armenian Genocide of 1918 in the Ottoman Empire.....	57
Ashot Hayruni	
«German Union for Armenian Aid» and Its Armenophil Activity (in German).....	66
Gegham Petrosyan	
The Foreign Policy of Transcaucasia on the eve of Batumi Diplomatic Negotiations (April 1918).....	90
Ara Azatyan	
Evaluation of Armenian-Russian Treaty (August 10, 1920) in the Armenian Historiography	97
Karen Hayrapetyan	
The Policy of Accommodation of Refugees in the Newly Created First Republic of Armenia (1918-1920)	112
Elena Zohrabyan	
Coverage of the April War in the International Media	122
Hasmik Tadevosyan	
New Anatomical Terms in the Medical books of XII Century (Mkhitar Heratsi, Abusaid).....	132
Asia Khacharyan	
Cervantes's «Editings» of Proverbs and Sayings in the Original Text and Armenian Translations.....	142

DEBATE AND DISCUSSION

Hovhannes Khorikyan	
Alexander of Macedon and Armenia.....	154

REVIEWS

Ervand Grekyan

H. Avetisyan, A. Gnuni, A. Bobokhyan, G. Sargsyan, Sacral Landscape of Syunik in Bronze and Iron Ages..... 161

Artashes Shahnazaryan

Babken Harutiunyan, Issues of History and Hostorical Geography of Eastern Armenian Regions and Albania..... 164

Elia Saribekyan

Karine Melikyan, Status of the Armenian Church in the Ecumenical Christian Church World from the IV to the First Half of the VI Centuries 167

Valery Tunyan

Gunter Lewy, The Armenian Question in the Ottoman Empire: Myths and Reality (in Russian) 172

Vahan Bayburdyan

Jastin Mccarthy, Turks and Armenians. Nationalism and Conflict in the Ottoman Empire..... 186

SCIENTIFIC LIFE

Problems of New Periodicity of Armenian History 194

Information about the Authors 240

ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ՀԱՆԴԵՍ
3 (12)

Սրբագրիչ՝ Վ. Դերձյան
Համ. ձևավորումը՝ Ա. Աղուզումցյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Ստեփանյանի

Չափսը՝ 70x100 1/16:
Տպագրությունը՝ օֆսեթ: Թուղթը՝ օֆսեթ:
Տպաքանակը՝ 300:

ԵՊՀ հրատարակչություն, Երևան, Ալ. Մանուկյան 1

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ

Հոդվածները ներկայացնել էլեկտրոնային կրիչով (տեքստը՝ Word, նկարները՝ TIFF կամ բարձրորակ JPG): Հիմնական լեզուն հայերենն է, ընդունվում են նաև ռուսերեն, անգլերեն, ֆրանսերեն, գերմաներեն հոդվածներ, որոնք պետք է ունենան ամփոփում (հայերեն տեքստի դեպքում՝ անգլերեն և ռուսերեն, այլ լեզուների դեպքում՝ հայերեն և ռուսերեն, շուրջ 300 բառ):

Չափանիշներն են՝

1. Տառատեսակը հայերեն՝ Sylfaen, այլ լեզուներինը՝ Times New Roman:

2. Տառաչափը՝ 12, միջտողային բացատը՝ 1.5:

3. Հոդվածի սկզբում դրվում է հեղինակի անուն, ազգանունը (զվխատառերով), վերնագիրը (զվխատառերով), հոդվածի վերջում նշվում է հեղինակի գիտական աստիճանն ու կոչումը, աշխատանքի վայրը, պաշտոնը, հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի անվանումը (հեռախոսահամարը և էլիոստի անվանումը տպագրվում են հեղինակի համաձայնությամբ):

4. Հղումները տրվում են տողատակում՝ աճման կարգով, տառաչափը՝ 10, նշվում է աղբյուրի հեղինակը, վերնագիրը, հատորը, հրատարակության տեղը, տարեթիվը (մամուլի դեպքում՝ նաև համարը) և էջը:

5. Տալ բանալի բառեր:

Հոդվածները ներկայացնել՝

ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտ, Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ 2-րդ մասնաշենք, 5-րդ հարկ, 511 սենյակ, «Հայագիտության հարցեր» հանդեսի խմբագրություն (*hands@armin.am*), հեռ.՝ +374 60 710092

NOTICE FOR THE AUTHORS

The articles should be represented in USB flash drive (text should be in Microsoft Word Document, pictures – TIFF or JPG). The main language of the article is Armenian (with summary in English and in Russian, about 300 words), if the articles are in Russian, English, French, German there should be a summary in Armenian and in Russian (about 300 word).

The criteria are the following:

1. Theme font – Sylfaen (in Armenian), Times New Roman (in other languages)

2. Font Size – 12, Line Space – 1.5

3. At the beginning of the article there should be the name and surname of the author (uppercase), the title (uppercase), at the end of the article there should be the academic degree of the author, workplace, position, telephone number and E-mail (telephone number and e-mail are published according the author's agreement)

4. The references should be footnoted; font size- 10, the author, the title, volume, place and date of publication (also the number, if the article was published in magazine) and the page should be mentioned.

5. To write key words.

The articles are accepted in the Institute for Armenian studies of YSU, Alex Manoogian 1, YSU 2nd annex, 5th floor, room N 511, the editorial office of the bulletin “Armenological Issues” (*hands@armin.am*), tel.: +374 60 710092

К СВЕДЕНИЮ АВТОРОВ

Статьи необходимо представлять на электронном **флеш-накопителе** (текст – Word, фотографии – TIFF или JPG в высоком качестве). Основной язык – армянский, принимаются также статьи на русском, английском, французском и немецком языках, которые должны иметь резюме (в случае армянского текста – на английском и русском языках, в случае других языков – на армянском и русском, около 300 слов).

Параметры

1. Шрифт армянского языка - Sylfaen, других языков - Times New Roman.

2. Размер шрифта – 12, межстрочный пробел - 1.5.

3. В начале статьи дается имя и фамилия автора (заглавными буквами), заголовок (заглавными буквами), в конце статьи отмечается ученая степень автора, место работы, должность, номер телефона и адрес электронной почты (номер телефона и адрес электронной почты печатается с согласия автора).

4. Ссылки даются под строкой в порядке возрастания, размер шрифта - 10, дается автор источника, заголовок, том, место и год издания (в случае прессы также и номер) и страница.

5. Дать ключевые слова.

Статьи принимаются в

Институте арменоведческих исследований ЕГУ,

Алека Манукяна 1, 2 корпус ЕГУ, 5-й этаж, комната 511, редакция журнала «Вопросы арменоведения» (*hands@armin.am*), тел.: +374 60 710092

